



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА

Вазген Г. Амбарцумян

АРМЯНСКИЙ И КЕЛЬТСКИЕ ЯЗЫКИ
(Сравнительно-типологическая вариативность)

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
2020

===== 0 =====

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA
INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN

Vazgen G. Hambardzumyan

ARMENIAN AND CELTIC
(Comparative-typological Variativity)

YEREVAN
“GITUTHYUN” PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2020

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԸ

ԵՎ

ԿԵԼՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ

(Համեմատական-տիպաբանական
տարբերակայնություն)

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2020

ՀՏԴ 809. 198. 1

ԳՄԴ 81.2

ՀՀ 205

Տպագրվում է

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝

Բանասիր. գիտ. թեկնածու, դոցենտ Վ. Զ. Պետրոսյան

Գրախոս՝

Բանասիր. գիտ. թեկնածու, դոցենտ Ն. Մ. Սիմոնյան

Համբարձումյան Վ. Գ.

Հ 205 Հայերենը և կելտական լեզուները (Համեմատական-տիպաբանական
տարբերակայնություն) / (Պատ. խմբ.՝ Վ. Զ. Պետրոսյան) . - Ե. : ՀՀ
ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020, 272 էջ:

Աշխատությունն ընդգրկում է հայերենի և կելտական լեզուների քննու-
թյունը համեմատական-տիպաբանական տարբերակայնության տեսանկյու-
նից, բաղկացած է ներածությունից և առանձին գլուխներից, որոնցից առաջի-
նում և երկրորդում բնութագրվում են երկու տիպի լեզուները և նրանց բար-
բառները, երրորդում քննվում է այդ լեզուների ծագումնային առնչու-
թյունների հարցը, հաջորդ երկու գլուխներում ներկայացվում են դրանց
հնչյունական և բառային զուգաբանությունները, իսկ վերջին գլխում
առանձնացվում են բառային զուգաբանությունների իմաստային (թեմատիկ)
խմբերը՝ ըստ ընդունված բաշխման:

Աշխատությունը կարող է օգտակար լինել լեզվաբան համեմատաբանե-
րին, առհասարակ բանասերներին, հնագույն պատմության և մշակույթի
հարցերով հետաքրքրվողներին:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2020 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայերենի և կելտական լեզուների ծագումնային առնչությունների և նրանց տարբերակային հավաստիության (վերիֆիկացիայի) հարցերը հնդեվրոպական լեզուների համեմատական ուսումնասիրության տեսանկյունից կարևոր են և ունեն ուշադրության արժանի որոշակի եզրեր:

Ընդհանուր առմամբ ցեղակից լեզուների ծագումնային առնչությունները քննության են առնվում նաև ըստ այնմ, թե դրանք տարածքային ինչ հատկանիշներ են պարունակում, և որոնց հիման վրա կարելի է այնպիսի զուգահեռներ անցկացնել, որոնք ենթադրաբար ծագած լինեն այդ լեզուների նախնական վիճակից, եթե ոչ նաև հնարավորություն ստեղծեն խոսելու այդ նախնականից բխող հետագա առանձին զարգացումների մասին:

Լեզվաբանական այդ մոտեցումը համեմատաբար նոր է, ունի քննության իր սկզբունքները, տեսական վերլուծության եղանակները: Այս առումով այն գիտական ուսումնասիրության նորություն է առաջ քաշված հարցերից յուրաքանչյուրի քննարկման և պարզաբանման մեջ¹:

2. Հ. Աճառյանի մոտեցումը հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների բարբառային (արեալային) տարբերակվածության հարցում, ընդ որում ոչ այլ կերպ, քան զուգաբանությունների («զուգաձայնների». isoglosses) միջոցով, սոցորված է Ա. Մեյլեի այն տեսությամբ, որ դրված է վերջինիս՝ հնդեվրոպական բարբառների առանձնացմանը նվիրված գրքում, ինչպես նաև հայերենի բարբառային դիրքի բնութագրմանը վերաբերող աշխատանքներում²: Ավելին, Աճառյանը «Հայոց լեզվի պատմություն» (I մաս) գրքի Ա գլուխը («Հնդեվրոպական նախաշրջան») շարադրում է հիմնականում Ս. Ֆայստի, շատ քիչ դեպքերում այլ հեղինակների տեսակետների հիման վրա, իսկ Բ գլուխը («Հնդեվրոպական բարբառները և հայերենի դիրքը նրանց միջև»), կարելի է ասել, ամբողջովին գրված է Մեյլեի՝ հնդեվրոպական բարբառների վերաբերյալ տեսության հետևությամբ³: «Այդ աշխատության մեջ,- գրում է Աճառյանը,- «երևան հան-

¹ Հմմտ. *Э. А. Макаев, Общая теория сравнительного языкознания, М., 1977, էջ 154-176:*

² *A. Meillet, Position dialectale de l'arménien // «Mémoires de la Société de linguistique de Paris», X, 1896, էջ 149-155: Նույնի՝ L'introduction de l'étude comparative des langues indo-européennes, Paris, 1903, 7^{me} ed., 1934, էջ 418-423 (= A. Meillet, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938, էջ 386-415) և այլն:*

³ *A. Meillet, Les dialectes indo-européens, Paris, 1908:*

ված և քննված են բազմաթիվ գուգակցություններ (իմա՝ գուգաբանություններ – Վ. Ն.), որոնք կարելի է ամփոփել այստեղ հետևյալ ձևով¹: Եվ առանձին կետերով (թվով՝ 16) բերվում են դրանք, որոնցից միայն 2-րդը («հե. հետնալեզվային խուլ *k-ի երկակի արտացոլում»), 3-րդը («հե. *a, *o ձայնավորների պահպանում»), 6-րդը («հե. *bh, *dh և այլն շնչեղ ձայնեղների արտացոլում») և 14-րդը («հե. *-bh հոլովական մասնիկի պահպանում») ունեն «գուգակցություն» հայերենի և կելտական լեզուների միջև²:

3. Հայտնի է, որ հայերենի տվյալները օգտագործված են մ. թ. 5-րդ դ. գրական հուշարձանների հիման վրա, որոնք մեզ են հասել ոչ վաղ, քան 9-րդ դ. ձեռագրերի հետագա գրչագրական ընդօրինակումներով: Չի բացառվում, որ դրանք ժամանակի ընթացքում «կանոնարկվել» են գրական լեզվի ընդհանուր նորմայի հիմունքով: Այլ կերպ ասած՝ միջանկյալ ժամանակի ընթացքում, տարբեր «գրչությունների» բերումով հնարավոր էին լեզվական փոփոխություններ, մանավանդ իբրև շեղումներ 5-րդ դ. գրական նորմայից, որպիսով էլ հետագայում դրանք կարող էին դիտվել իբրև հավասարապես կանոնավոր, ըստ այդմ՝ նաև ընդունելի: Այս հարցը բավականին կնճռոտ է, ուստի, ինչպես գիտենք, երբևէ չի եղել հատուկ ուսումնասիրության առարկա: Եվ այսօր միայն բանասիրական-ձեռագրագիտական ծավալուն աշխատանքի միջոցով է, թերևս, հնարավոր ուրվագծելու նախորդ (մինչև 5-րդ դ. և ավելի վաղ՝ նախագրային) ժամանակներում եղած վիճակների վերաբերող գիտական պատկերացումը: Իսկ դա լեզուների, ինչպես նաև մեկ լեզվի տարբեր փուլերի միջև համեմատական-տիպաբանական քննության ոլորտ է, որ հայերենի դեպքում նույնպես ունի իր սահմանները:

Դասական համեմատաբանությունը հետքրիստոնեական մատենագրության լեզվի տվյալներով է հնարավորություն ունեցել հայերենը համեմատելու ցեղակից մյուս լեզուների համապատասխան տվյալների հետ, սահմանելու՝ հնչյունների որակի, արմատի բնույթի և քերականական ձևերի (հազվադեպ՝ բանաստեղծական խոսքի, տեքստի) վերաբերյալ սահմանելի օրինաչափություններ, նշելու նկատելի բացառություններ: Եվ պատահական չէ, որ հետագա ուսումնասիրությունները տարբեր կարգի փորձեր են եղել վերանայելու և ճշգրտելու նախկինում եղածի այս կամ այն մասը:

¹ Ն. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, I մաս, Ե., 1940, էջ 24:

² Հմնտ. նույն տեղում, էջ 24-27:

Հայերենի համեմատական ուսումնասիրությունը, կարելի է ասել, լիովին առաջնորդվել է Հ. Հյուբշմանի և Ա. Մեյեի տեսական հիմնադրություններով: Հագվադեպ է եղել դրանց վերաբերյալ քննադատական մոտեցում՝ վերանայման առաջարկներ, ճշգրտման նկատառումներ և այլն:

Հին գրական հայերենի բարբառային հիմքի ուրվագծումը, բնականաբար, ենթադրում է մատենագրական երկերի ավելի մանրամասն, անգամ գրչագրական տարբերությունների նկատառումով քննություն՝ ըստ հնարավորին ավելի իրական պատկերացում կազմելու լեզվի ընդհանուր բարբառային վիճակի ինչպիսին լինելու վերաբերյալ¹:

4. Հայտնի է նաև, որ դեռևս 1960-ական թթ. կեսերին Է. Մակակը հանդես եկավ Ա. Մեյեի այն մոտեցումների նկատմամբ թերահավատությամբ, որոնք ժամանակին հիմք էին հանդիսացել ոչ միայն Աճառյանի, այլև հետագա գրեթե բոլոր ուսումնասիրողների համար: Նա նկատում է, որ «համեմատաբանների մեծ մասը եղել է և շարունակում է համոզված լինել, որ հայերենը այնքան էլ նպատակային չէ հնդեվրոպական վերականգնման համար, քանի որ, ինչպես բազմիցս ընդգծել է Ա. Մեյեն, հայերենը բավականին երկար ժամանակ եղել է կովկասյան լեզուների հետ հարևանության մեջ, ուստի զգալիորեն հեռացել է հնդեվրոպական լեզվական տիպից»²:

Իր հողվածում Մակակը նման մի շարք դիտարկումներ ունի, որոնք այդպես էլ, ինչպես գիտենք, մնացին աննկատ, հակառակ դեպքում կարող էին, իրենց հերթին, էական դեր խաղալ հայերենի ընդհանուր, հատկապես համեմատական-տիպաբանական ուսումնասիրությունների ուղղվածության համար:

¹ Հին գրական հուշարձանների տարբեր «գրչությունները» ներառված են Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ի մեջ, ցանկի ձևով բերվում են հեղինակի «Լիակատար քերականության» մեջ (հ. VI, Ե., 1971, էջ 773-822), և իբրև «ստուգաբանական կրկնակներ»՝ մասամբ քննված են Գ. Ջահուկյանի տարբեր աշխատություններում [«Очерки по истории дописменного периода армянского языка» (Երևան, 1967, с. 300-313), «Об этимологических дублетах и параллелях в армянском языке» // «Международный симпозиум по армянскому языкознанию. Ереван, 21-25 сентября 1982 г., Доклады», Երևան, Изд. АН Арм. ССР, 1984, с. 146-160: «On Etymological Doublets and Parallels of Armenian» // «Annual of armenian linguistics», vol. 4, 1983, p. 23-34]: Ավելի ուշ երևան եկած, այլև քննական բնագրերով հայտնի դարձած գրական հուշարձանները, բնականաբար, դուրս են մնացել այդ ցանկից, ուստի և ստուգաբանական քննությունից, որոնց անդրադարձնալը հետագայի խնդիր է:

² Հմմտ. Ծ. А. Макаев, նշվ. աշխ., էջ 155:

Այսպես, նա գտնում է, որ, օրինակ, «հայերենի համար ոչ պակաս բնորոշ է դերանվանական ծագման ցուցական (դեյկտիկ) մասնիկների լայն կիրառությունը, որոնք աշխարհաբարում ծառայում են տարածական բնութագրերի կոնկրետացմանը, այլև համապատասխան բառերի կրավորական (պասիվ) հարաբերության արտահայտմանը: Ուստի կարելի է որոշակիորեն նշել, որ ցուցական (դեյկտիկ) բառերի նման գործածությունն ամբողջովին զարգացել է աշխարհաբարում, ոչ թե նորամուծություն է, այլ հանդիսանում է հնդեվրոպական ֆրագային հատվածների կառուցվածքի շարունակությունը և տարածումը»¹: Այսպես նաև հետևյալը՝ «Բառի կառուցվածքային ձևակերպումը հայերենում զարմանալիորեն մոտ է բառի կառուցվածքի հնդեվրոպական կադապարին (մոդելին), և այս առնչությամբ հայերենի (ինչպես գրաբարի, այնպես էլ աշխարհաբարի) տվյալներն ունեն ոչ պակաս նշանակություն, քան հին հնդկերենի կամ հունարենի (տվյալները)»²: Նույնը վերաբերում է բայական համակարգի հարացույցների հնատիպությանը. «Հայերենի բայական հարացույցի այս առանձնահատկության մեջ ևս (տե՛ս իր տեղում - Վ.Հ.) նկատելի է ընդհանուր համահնդեվրոպական բայի հարացույցի ոլորտում կադապարման (մոդելավորման) ամբողջովին հնատիպ գծերի պահպանումը (կոնսերվացումը)»³:

5. Վերանայման հարցը, ինչպես գիտենք, առաջ է քաշվում հետազայում, օրինակ՝ հայերենի պայթական բաղաձայնների առավել հին (արխաիկ) գծեր ունենալու հետ կապված, որ մյուս որոշ լեզուների այլ տվյալների հետ միասին հիմք է հանդիսանում առանձին տեսության առաջադրման համար:

19-րդ դ. 2-րդ և 20-րդի 1-ին կեսին երևան են գալիս պատմահամեմատական լուսաբանմամբ աշխատություններ հայերենի հնչյունաբանության, ձևաբանության, բառապաշարի, բառակազմության, այլև ստուգաբանության վերաբերյալ: Ճիշտ է նկատված, որ «բոլոր այդ աշխատություններին բնորոշ է եղել այն, որ հայերենին մոտեցել են որպես հնդեվրոպական կողմնական (բառացի՝ «լուսանցքային», մարզինալ) լեզվի»⁴:

Կարելի է մտածել, որ շատ հետաքրքիր պիտի լիներ, եթե հնդեվրոպական ընդհանրությունից առանձնացած հայերենի նախագրային ժամանակաշրջանի համար ըստ արտալեզվական հանգամանքների (լեզվական շփումներ և այլն)

¹ Նույն տեղում, էջ 169:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 174:

⁴ Նույն տեղում, էջ 156:

և լեզվական յուրահատկությունների ուրվագծվեին կոնկրետ շրջաններ, ըստ այդմ ձևակերպվեք ընդհանուր հայերենի մի այնպիսի վիճակ (կոնտինուում), որը հնարավորություն կտար համեմատական-տիպաբանական վերլուծությամբ ցույց տալու անցումը 5-րդ դ. հայերենի վիճակին՝ իբրև գրավոր-գրական լեզու, բարձրացած հայտնի բարբառների հիմքի վրա: Մա բավականին դժվարին և տևական աշխատանք է պահանջում, որի իրականացումը մասամբ կարող էր բավարարում տալ Է. Մակասի և այլ ուսումնասիրողների նման հացադրումներին՝ հնդեվրոպական մյուս լեզուներին ցեղակից հայերենի ընդհանուր համեմատական քննության տեսանկյունից:

Գ. Ջահուկյանը, օրինակ, քննում է հայերենի բարբառների համեմատության հարցը գրաբարի կամ նոր գրական հայերենի հետ՝ նշելով միայն Լ. Մսերյանցին և Յ. Հանուշին, որոնք նախագրաբարյան վիճակի հետ են փորձել համեմատել նոր հայերենի՝ Մուշի բարբառի կամ լեհահայոց մի հատվածի լեզվական որակը (Հանուշի աշխատությունը գրված է լեհերեն, ընդամենը՝ 16 էջ): Նա հատուկ աշխատություն է նվիրել հայերեն ձեռագիր հիշատակարանների հին բարբառային (խոսակցական) ձևերի քննությանը²:

Նկատենք, որ եղել են նաև այլ մոտեցումներ. հնդեվրոպական լեզվաբանության այլ դպրոցների ներկայացուցիչներ, անհատ ուսումնասիրողներ (Հ. Պեդերսեն, Է. Մակաս, Օ. Շիրոկով, Թ. Գամկրելիձե, Վյաչ. Իվանով, Գ. Կլիչկով, Վ. Տոպորով, Ժ. Դյումեզիլ և ուրիշներ) հայերենի տվյալները քննության են առել ավելի լայն ընդգրկումով, նույնիսկ նկատի ունենալով, որ այն ունի առավել վստահելի օրինակներ ընդհանուր հնդեվրոպական նախաստիպի («նմուշ») վերականգնման և բնութագրման առումով, նրան այսօր հատկացվում է ավելի լայն ուշադրություն, քան որ տրվել է դասական համեմատաբանության մեջ:

6. Սույն աշխատանքը գրված է ոչ միայն դասական համեմատաբանության ձեռքբերումների, մանավանդ փաստական նյութի լիովին ընդգրկմամբ, այլև հայերենի հարցում նոր մոտեցումների և տեսությունների ըստ հնարավորին օգտագործմամբ, իսկ որոշ հարցերի դեպքում առաջ են քաշվել այնպիսի

¹ Տե՛ս, օրինակ, Этюды по армянской диалектологии Левона Мсерианца, часть II, выпуск I: Сравнительная морфология Мушского диалекта в связи с морфологией габара и среднеармянского, М., 1901: Sur la langue des arméniens Polonais par J. Hanusz. I. Mots recueillis à Kuty au Bord du Czeremosz, Cracovie, 1886.

² Գ. Բ. Ջահուկյան, Բարբառային երկույթներ հայկական հիշատակարաններում, Ե., 1997:

պարզաբանումներ կամ տրվել մեկնաբանումներ, որոնք այս կամ այն չափով կարող են նպաստել հարցերի առավել հավանական և հարաբերականորեն վերջնական լուծմանը:

Աշխատանքն ընդգրկում է տարբեր գլուխներ, որոնք վերաբերում են քննության առարկա լեզուների ինքնակա և առնչակցային բնութագրումներին. առաջին գլխում ուշադրության առարկա են գրական հայերենի և բարբառների, երկրորդ գլխում՝ կելտական լեզուների և բարբառների հարցերը, իսկ երրորդ գլուխը նվիրված է հայերենի և կելտական լեզուների ծագումնային առնչությունների հարցերին:

Հիշյալ երեք գլուխները մի տեսակ ամփոփում են հնդեվրոպական ցեղակցային կապվածություն ունեցող լեզուներից հիշյալ երկու տիպի լեզուների մերձավորության (*resp.* հեռավորության) պարզաբանման խնդիրը, և լեզվաբանական հետազոտման աշխատությունների հեռանկարում կարելի է ցույց տալ, որ իրենց հնավանդությամբ (արխաիկությամբ) միմյանցից այնքան էլ հեռու չեն հայկականը և կելտականը, որքան որ դիտվել է դասական համեմատաբանության մեջ (ամենից առաջ՝ իբրև իտալակելտական մերձավորություն):

Չորրորդ գլուխը նվիրված է հնչյունական, իսկ հաջորդ երկու գլուխները (5-6-րդ) բառային և (բառ)իմաստային («թեմատիկ») զուգաբանություններին, ընդ որում եթե հնչյունականը աշխատանքում քննվում է ըստ տվյալ համակարգի բաղադրիչ միավորների (ձայնավորների, ձայնորդների, երկհնչյունների և բաղաձայնների) զուգաբանական դրսևորումների՝ իրենց ոչ միայն օրինաչափությունների, այլև բացառությունների մեջ, ապա բառայինը ուշադրության առարկա է միայն ըստ զուգաբանական ցանկերի, որոնք այս կամ այն չափով տեղ են գտել դասական և ժամանակակից համեմատաբանությանը վերաբերող հայտնի աշխատություններում, ինչպես նաև մենք փորձում ենք խմբավորել զուգաբանությունների հիմնական մասն այդ նույն մակարդակում:

Վերջում բերվում են հիմնական եզրակացությունները:

Նկատի ունենալով թեմայի կարևորությունը հնդեվրոպական լեզուների համեմատական և տիպաբանական ուսումնասիրության մեջ՝ հարկ ենք համարել աշխատանքի վերջում տալ ռուսերեն և անգլերեն լեզուներով ամփոփումներ, այլև օգտագործված (նաև հարակից) գրականության և առարկայական ցանկեր:

Հայերենի լեզվական նյութի քննության ընթացքում օրինակները հիմնականում բերվում են ավանդական, անհրաժեշտության դեպքում նոր նշա-

նակումներով՝ նկատի ունենալով դրանց հնչյունական կազմի (արտահայտության պլանի) ճշգրտության պահպանման կարևորությունը:

Հեղինակն իր շնորհակալությունն է հայտնում ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի աշխատակիցներին՝ աշխատանքի ձեռագիրը քննարկելու և ըստ այդմ՝ տպագրության երաշխավորելու, պատասխանատու խմբագիր ք. գ. թ., դոց. Վ. Զ. Պետրոսյանին և գրախոս ք. գ. թ., դոց. Ն. Մ. Սիմոնյանին՝ աշխատանքը խմբագրելու և գրախոսելու, կարևոր դիտողությունների և նկատառումների համար:

Սույն աշխատությունը հայերենի և կելտական լեզուների համեմատական-տիպաբանական քննության առանձին փորձ է՝ ուրույն մեթոդիկայով և սկզբունքների կիրառմամբ, ուստի որոշ հարցերի վերաբերյալ կարող են լինել առարկություններ, նկատառումներ, որոնք հաշվի կառնվեն մեր հետագա աշխատանքներում¹:

¹ Հայտնի են կելտական և հնդեվրոպական մյուս լեզուներից հնաբալկանյան, ինչպես նաև բալթյան լեզուների առնչությունների վերաբերյալ տարբեր բնույթի և ծավալի աշխատություններ: Տե՛ս *B. П. Герознак*, Палеобалканские и кельтские ономастические параллели // «Кельты и кельтские языки», М., «Наука», 1974, էջ 42-50: Մեզանում ևս գրվել են նման ուսումնասիրություններ՝ նվիրված հայ-իտալյան (Մ. Աղաբեկյան), հայ-հնդիրանական (Ե. Խաչատուրովա), հայե-բենի և սլավոնական լեզուների (Լ. Սարաջևա), հայերենի և հունարենի (Օ. Հա-րությունյան) բառային առնչություններին, որոնց անդրադառնում ենք մեր այս աշխատանքում (տե՛ս ստորև):

Գլուխ առաջին
ՀԻՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ
ԲԱՐԲԱՌՆԵՐԸ

1. Հնդեվրոպական լեզուների մեջ (չհաշված ալբաներենը) միայն հունարենն է, որ առանձին լեզու է, ունի չորս հիմնական բարբառներ՝ ատտիկյան, դորիական, էոլյան և հոնիական: Եթե այդ բարբառների ներսում ևս կատարվեր հայերենի նման վերլուծություն, ասենք՝ բազմահատկանիշ դասակարգման բնույթի, ապա հնարավոր կլիներ առանձնացնել հայերենից թերևս պակաս, բայց անպայման չորսից ավելի բարբառներ, էլ չենք ասում խոսվածքների մասին: Սա նշանակում է, որ հայերենի բարբառների առանձնացման կամ տարածքային տարբերակման քանակային մեծությունը լիովին պայմանավորված է հատկանիշների ընտրության քանակով:

Հայերենում այնքան էլ բավարար չէ հին, միջին շրջանների բարբառների ուսումնասիրությունը. ուշադրության կենտրոնում առավելապես եղել են նոր հայերենի բարբառները: Իսկ վերջին դեպքում այն բոլորովին այլ է, այսինքն՝ գրվել են մի քանի տասնյակից անցնող մենագրություններ, յուրաքանչյուրը նվիրված որևէ բարբառի, նույնիսկ խոսվածքի, լույս են տեսել բարբառների վերաբերյալ տեսական և ընդհանուր բնույթի աշխատանքներ (մենագրություններ, հոդվածներ և այլն), եղել են նաև դասակարգման առաջարկներ:

Հին գրական հայերենի բարբառների ընդհանուր վերլուծություն է Գ. Ջահուկյանի մենագրության երկրորդ բաժինը, որում ի մի են բերված այդ թեմային առնչվող տարբեր ուսումնասիրողների կողմից ուշադրության արժանացած իրողությունները (լեզվական փաստերը, որոնք փոքրիշատե առանձնացվում են մատենագրական երկերի հիման վրա և այլն), ինչպես նաև տրվում են բարբառային (հիմնականում ոչ գրավոր աղբյուրներում եղած) բառերի ստուգաբանություններ¹: Բուն ուշադրությունը դարձվում է ոչ այնքան համեմատական կամ պատմական բարբառագիտության, որքան հեղինակի բնորոշմամբ՝ հնդեվրոպական լեզուների և հատկապես հայերենի համեմատական քերականության տվյալներին. ըստ այդմ, ընդգծվում է այն, որ հնդեվրոպական ընդհանրությունից առանձնանալուց և ինքնուրույն հունի մեջ մտնելուց հետո հայերենում «պետք է արդեն գոյություն ունենային բարբառային մասնակի տար-

¹ Գ. Բ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 157-330:

բերություններ, և որ հայ ժողովրդի բոլոր հատվածների լեզուն հենց սկզբից էլ չէր կարող լիովին նույնական լինել: Հնարավոր է, որ այս կարգի որոշ տարբերություններ պահպանվեին բարբառներում և նույնիսկ մուտք գործեին գրական հուշարձանների մեջ»¹: Այդ տարբերությունները բնորոշելով իբրև բարբառային հնարանություններ՝ դրանց մուտք գործելու համար նշվում է երկու ճանապարհ («աղբյուր»)՝ հնդեվրոպականից եկող ձևերի ոչ միատեսակ, այլ տարբեր լինելը (օր.՝ *վեց / վաթսուն, հինգ / յիսուն, քառորդ /չորք* և այլն), ինչպես նաև գրական հուշարձաններում այս կամ այն չափով պահպանված հին («արխաիկ») ձևերի գոյությունը [օր.՝ *գեռ-/ գայր-* (*ձգեռտ, ձգռտայ, զգայրել* բառերում), *խանտ / խանդ, ցայտ / ցայթ* և այլն]: Գ. Ջահուկյանը նշում է, որ «սրանց ուսումնասիրությունը խիստ կարևոր նշանակություն ունի հայոց լեզվի (և ոչ միայն հայոց լեզվի) համեմատական քերականության համար»²: Առաջ անցնելով նկատենք, որ հայ-կելտական առնչությունների քննության դեպքում ևս հայերենի բարբառային իրողությունների օգտագործումը համեմատության մեջ ստեղծում է լրացուցիչ հնարավորություն հարցի ամբողջական ներկայացման համար:

2. Բավականին կարևոր է գրավոր ժամանակաշրջանի գրական լեզվի և նրա բարբառային հիմքի փոխհարաբերության հարցի պարզաբանումը, ինչպես նաև հնարավոր այլ բարբառների վերաբերյալ գիտական նոր ուսումնասիրությունների ձեռնամուխ լինելը: Մյուս կողմից՝ գրական լեզուները կրել են այլ լեզուներից կենդանի ազդեցություններ, ինչպես նաև արտաքին միջամտության («գրական մշակման») պայմաններում տեղիք տվել ընդօրինակումների («պատճենումների», օր.՝ ասորերենից, հունարենից և այլն), ընդ որում ոչ միայն մեծ մասամբ բառապաշարի, այլև մասամբ քերականական երևույթների, թարգմանելի բնագրերի հարուցած ոճական տարբերությունների ձևով:

Այսպես, «վիպասանական հայերեն»-ը մեզ ներկայանում է գրական մշակմամբ՝ կատարված Մովսես Խորենացու ձեռքով, իսկ մինչ այդ այն անցել է երկարատև ճանապարհ՝ մի քանի հազարամյակ, բանավոր փոխանցմամբ, առաջին դեպքում՝ ենթարկվել է ժամանակի գրական հայերենի («գրաբարի») կանոնարկմանը («նորմային»), թեև, այնուամենայնիվ, տեղ են գտել նաև ոչ գրական ձևեր (հմմտ. ընկեց *ի սէջք*. ցաւեցոյց *զսէջք* և այլն), իբրև խոսակցականի հետ-

¹ Նույն տեղում, էջ 161-162:

² Նույն տեղում, էջ 162:

ևանք («սպրդում»), իսկ երկրորդ դեպքում՝ նկատելի են հին գրականից առաջ («մինչգրաբարյան») ժամանակներից եկող երևույթներ [հմտ. *մարգարիտ* բառի գործածությունը, որն անպայման հին է, քան որ կարծում է Աճառյանը. Մագիստրոսի մոտ *ծխան* բառը բոլորովին այլ («ամսանուն», նոր անվանումով՝ «մարտի վերջ-ապրիլի սկիզբ», ըստ Լ. Խաչիկյանի) իմաստով] և այլն¹: Նման առանձնացումն, առհասարակ, հնարավոր է ոչ միայն հայերեն բանավոր հատվածների («վիպասանական» հատակտոբների) դեպքում, այլև, ինչպես հայտնի է, կատարվում է հնդեվրոպական լեզուների այլ բնագրերի վերաբերյալ (օրինակ՝ հնդկական Վեդաների և այլն)²:

Գրավոր ժամանակաշրջանի հայերենի տարբերակվածության հարցը քննվել է ժամանակի, կառուցվածքի և գործառության հիմունքներով: Ժամանակինը անհամեմատ հեշտ է, քան մյուս երկուսինը, որովհետև վերջինների դեպքում պարտադիր է գրական հուշարձանների մանրամասն, առանձին-առանձին վերլուծություն և տվյալների արձանագրություն, որոնք լեզվի ներքին բնույթի հետ են կապված, այնինչ ժամանակինը, մի տեսակ, արտալեզվական հանգամանքով է հայտնի, մանավանդ որ սահմանվում է ըստ երևույթին ուսումնասիրողի այս կամ այն պատկերացման:

3. Հայ ինքնուրույն և թարգմանական գրականությունը, ասենք, լայն քննության առարկա է եղել ամենից առաջ պատմագիտության, բանասիրության, սակայն ոչ նույնպիսի ընդգրկմամբ լեզվի պատմության բնագավառում. մեծ ուշադրություն է դարձվել բնագրերի բովանդակության (պատմագիտական, բանասիրական-բնագրագիտական և այլն), քան արտահայտության (լեզվական) պլանին³. Թերևս նման առանձնացման բացառություն են հունարան հայերենի

¹ Վ. Գ. Համբարձումյան, Հայերեն *մարգարիտ* բառի ծագման մասին // «Ձառուկյանական ընթերցումներ», Ե., 2019, էջ 106-113:

² Տե՛ս Թ. Ե. Էլիզարենկովա, Սանսկրիտ // "Сравнительно-историческое изучение языков разных семей: Задачи и перспективы", М., "Наука", 1982, էջ 12:

³ Տե՛ս Հ. Մանանդյան, Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները. քննական ուսումնասիրություն, Վիեննա., 1928: Ս. Ս. Սրնշատյան, Հնագույն հայկական թարգմանությունները և նրանց պատմամշակութային նշանակությունը // «Պատմաբանասիրական հանդես», 1973, 1, էջ 23-37: Շ. Շ. Արեւատյան, Формирование философской науки в древней Армении (V-VI вв.), Ереван, 1973: Նույնի՝ К истории философских школ средневековой Армении (XIV в.), Ереван, 1980: Լ. Տեր-Պետրոսյան, Հայ հին թարգմանական գրականություն, Ե., 1984:

տերմինաբանությանը, գրաբարի ընդհանուր պատմությանը վերաբերող ուսումնասիրությունները¹:

Այսպես, մեզանում հունաբան կամ ասորաբան դպրոցը հատկանշվում է 4-5-րդ դդ. և հետագայում երևան եկած (մի ժամանակ բանավոր, այնուհետև՝ գրավոր) թարգմանություններով, կոնկրետ ժամանակի մեջ: Այնինչ, թե՛ թարգմանական և թե՛ ինքնուրույն գրական հուշարձանների բառապաշարի, քերականական կառուցվածքի, ինչպես նաև գործառության (ժանրի և ոճի) հարցերը մնում են կարոտ լիարժեք քննության: Մինչև այժմ կատարվածը, թեկուզ հսկայական, հնարավորի, անելիքի մի մասն է միայն. մեզ հասած բնագրերի լեզուն, կարելի է ասել, ընդհանուր ձևով է ուսումնասիրված, ոչ թե ըստ ամենայնի (ի մասնավորի):

Հայերենի պատմության առանցքային խնդիրներից է բնագրերի մանրամասն, ըստ ամենայնի ուսումնասիրումը, որպիսով համեմատաբար ավելի պարզ է լինելու ոչ միայն հին, այլև հետագա ժամանակների լեզվական վիճակը՝ առնված գրականի և խոսակցականի (բարբառների) փոխհարաբերության մեջ: Լ. Հովսեփյանը ճիշտ է նկատել, որ «մենք այստեղ գործ ունենք ոչ միայն և ոչ այնքան ժամանակագրական հաջորդականության հետ, այլ միաժամանակ գոյություն ունեցած երկու դպրոցի, գրական լեզվի մշակման երկու ուղղության հետ՝ հունաբան (ավելացնենք՝ նաև ասորաբան, ուստի երեք – Վ. Հ.) և, եթե կարելի է այսպես կոչել, հայկաբան»²:

Հարցի լուծման առումով, իրոք, կարևոր է նաև հեղինակի հետևյալ բնորոշումը, որն առհասարակ ունի լեզվական տարբերակների զարգացման վերաբերյալ բարեշրջական («էվոլյուցիոն») տեսության կնիք. «Ամբողջությամբ վերցրած հին հայերենի զարգացման փուլերի հաջորդականությունը պարզելու համար անհրաժեշտ է վերը նշված կառուցվածքային և գործառական չափանիշների հետ միասին (տե՛ս իրենց տեղում.- Վ. Հ.) հաշվի առնել և լեզվի գրական,

¹ Տե՛ս *Ս. Ն. Մուրադյան*, Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Ե., 1971: *Է. Բ. Աղայան*, Գրաբարի պատմության շրջանաբաժանումը // «Բանբեր Երևանի համալսարանի», 1972, 2, էջ 58-81:

² Լ. Ս. Հովսեփյան, Հին հայերենի պատմության շրջանաբաժանման մասին // «Միջազգային հայերենագիտական գիտաժողով. Երևան, 21-25 սեպտեմբերի, 1982 թ. (Զեկուցումներ)», Ե., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1984, էջ 380-381: Ճշգրտման նպատակով ավելացնենք, որ երկու դպրոց կարելի է ընդունել միայն թարգմանական և «հայկաբան» առանձնացման համար:

խոսակցական և բարբառային տարբերակների փոխհարաբերության բնույթը: Այդպիսի չափանիշ կարող է հանդիսանալ գրական (գրավոր) և խոսակցական (բանավոր) տարբերակների միջև եղած խզման աստիճանը»¹:

4. Չհաշված մինչև նոր ժամանակներն ընկած գրական հուշարձաններում (քերականություններում և այլն) մեջընդմեջ նշումները բարբառային (խոսվածքների) ինչ-ինչ իրողությունների մասին, հարցի գիտական ուսումնասիրության սկիզբ են համարվում 19-րդ դ. կեսերը, ուստի ոչ այնքան հին գրական հայերենի համար, որքան առհասարակ բարբառների վերաբերյալ արվում են ամենից առաջ տարածքային (տերիտորիալ) հատկանիշով առանձնացումներ:

Այսպես, Ա. Այտընյանը նշում է բարբառների չորս խումբ, ընդ որում ոչ ամենին առանց դրանցից մեկ-երկուսի մշակութային կենտրոն լինելու հանգամանքի՝ 1) *միջին գավառական* (կամ բուն Հայաստան՝ Վան, Միջագետք և այլն), 2) *Կոստանդնուպոլիս, Փոքր Ասիա*, 3) *արևմտյան* (Լեհաստան, Առտեալ), 4) *արևելյան* (Աստրախան, Պարսկաստան. «որ կը ձգուի Ռուսաստանէն մինչեւ Հնդկաստան»), ինչպես նաև ուշադրություն դարձնում բարբառային հիմքի, լեզվական որոշ հատկանիշներին վրա²:

Ի տարբերություն Ա. Այտընյանի՝ Ք. Պատկանյանն ավելի մեծ տեղ է տալիս լեզվական հատկանիշներին՝ մասնակիորեն հիմնված տարածքայինի վրա. ընդունելով շուրջ մեկ տասնյակ լեզվական հատկանիշներ (բայի սահմ. եղ. ներկայի և անց. անկատարի, գոյականի ներգոյ. հոլովի, հոգն, սեռ. հոլովի կազմություն և այլն), տալիս է ոչ միայն ձևաբանական դասակարգում, այլև ըստ այդմ նկարագրում մեկ տասնյակից ավելի (թվով՝ 12) բարբառներ (Աստրախանի, Երևանի, Թիֆլիսի, Ագուլիսի, Ղարաբաղի, Խոյի, Ջուղայի, հավելվածաբար՝ Մուշի, լեհահայոց և այլն)³: Ուստի պատահական չէ, որ Պատկանյանն է մեզանում, իրավամբ, համարվում հայ բարբառագիտության հիմնադիրը («հայրը» բնորոշումը՝ հ. Ն. Տաշյանի):

¹ Նույն տեղում, էջ 382:

² Հ. Ա. Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 166 և հջ. : Հմմտ. Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 16-18: Վերջին երկուսը այդպես էլ մնում են տարածքային դասակարգման միջին օղակ, որ միանգամայն արտալեզվական հատկանիշ է:

³ Կ. Ստեփանով, Исследование о составе армянского языка, СПб., 1864: Նույնի՝ Исследование о диалектах армянского языка, СПб., 1869: Ըստ հեղինակի՝ նշվածներից առաջինը «ինչ-որ չափով» լրացնում է երկրորդին (նույն տեղում, էջ 1):

Հայ բարբառների խմբավորումն ուրիշ է, դասակարգումը՝ միանգամայն այլ. Ստ. Սյունեցին, Հովհ. Երզնկացին և մյուսները, կարելի է ասել, խմբավորել են, Այտընյանը՝ տարանջատել, իսկ Պատկանյանը դասակարգել է. տարբերությունը տեսական առումով նկատելի է. «Գլխավորը, որ մինչև այժմ իր վրա չի գրավել գիտնականների ուշադրությունը, հայոց լեզվի բարբառներն են: Լեզվում շատ բան բացատրվում է միայն բարբառների մանրամասն ուսումնասիրության դեպքում»¹: Նա միաժամանակ կարծում է, որ «նոր հայերենի բարբառներն ըստ էության այլ բան չեն, քան հնագույն բարբառների հետնորդներ»²:

Այնուհետև, հին (եթե ոչ նաև միջին) շրջանի հայերենի գրական և բարբառային տարբերակվածության հարցը, ինչպես հայտնի է, բախվում է նաև մեզ հասած գրական հուշարձանների լեզվի ուսումնասիրության ընթացքում ծագած այն դրույթին, որ այդ երկերը, ամենից առաջ լինելով երկու կարգի՝ ինքնուրույն և թարգմանական, առանձնանում են իրենց գործառության հատկանիշով («ժանրային», ոճական համակարգերով): Գրեթե նույն ժամանակում բանասիրական մեկ այլ դպրոցի ներկայացուցիչներ (Ա. Բագրատունի. Թ. Թոռնյան և ուրիշներ) կատարում են հին հայերենով ավանդված գրական հուշարձանների (բացի մեկերկուսից) խմբավորում՝ ըստ ոճերի («դասերի»)³: Թ. Թոռնյանը նշանակում է չորս «դաս»՝ 1) *ազաթանգեղյան* (Ազաթանգեղոսի և մյուսների երկերը), 2) *կյուրեղյան* (Կյուրեղ Երուսաղեմացու և մյուսների երկերը), 3) *եզնիկյան* (Եզնիկ Կողբացու և մյուսների երկերը և 4) *եփրեմյան* (Եփրեմ Ասորու և մյուսների երկերը), որը որոշ վերափոխումով, (հերթականության կամ «տեղերի») վերադասավորմամբ ընդունում են Ն. Բյուզանդացին, այնուհետև Հ. Աճառյանը⁴ :

¹ *К. Патканов, Исследование о составе армянских диалектов, էջ XIII: Ք. Պատկանյանի բարբառագիտական հիմնական աշխատության նաև ֆրանսերեն թարգմանությանը տեղյակ լինելու պարագայում էր, որ Հ. Հյուբշմանը ուսանող Աճառյանին հորդորում էր զբաղվել հայերենի բարբառներով, համարելով այն շատ կարևոր թերևս ամենից առաջ համեմատական լեզվաբանության համար:*

² Նույն տեղում, էջ XV:

³ Ա. Բագրատունու դասակարգումը ոչ այնքան հետևողական է, որքան, օրինակ, Թոռնյանինը, մանավանդ որ նկատի է առնվում գրաբարի (հին գրական հայերենի) ողջ պատմության ընթացքում ստեղծված գրական (գրավոր) արտադրանքը: Տե՛ս Հ. *Արսեն Բագրատունի*, Հայերեն գրաբար լեզուի յստակութեան վրայ //«*Բազմավեպ*» (ամսագիր), 1846, թ. ԺԶ, էջ 196-204:

⁴ Թ. *Թոռնեան*, Հատընտիր ընթերցուածք, Վիեննա, 1866: Ն. *Բիզանդացի*, Կորին վարդապետ եւ նորին թարգմանութիւնք, Տիֆլիս, 1900, էջ 16-35: Հ. *Աճառյան*, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Ե., 1951, էջ 76-93: Ի դեպ՝ հայերենագիտական որոշ

5. Սույն թեմայի առնչությամբ ոչ պակաս կարևոր է լեզվական՝ հնչյունական և քերականական իրողությունների հարցը՝ ոչ միայն հին, այլև միջին շրջանի գրականի և բարբառների փոխահարաբերության տեսանկյունից: Հին գրավոր աղբյուրներում մասնակիորեն նկատելի, միջին և նոր շրջանի գրականի հայերենի բարբառների առավել նկատելի տվյալները կարող են քննության առարկա լինել ոչ միայն ինքնին, այլև պատմականորեն՝ ընդհուպ նախագրային ժամանակաշրջանը¹:

Հայերենի հին բարբառների ավանդաբար հայտնի տվյալներին, ինչպես վերը նշվեց, անդրադարձել է Գ. Ջահուկյանն իր «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ՝ նպատակ ունենալով նոր բարբառների համաժամանակյա-վիճակագրական վերլուծությունը ամբողջացնել տարածամանկյա հնարավոր քննությամբ, այդպիսով փորձելով ավելի լայն շրջանակ ապահովել հայ բարբառագիտության տեսության համար՝ իբրև մուտք²: Բարբառային հիմնական նյութը համեմատության մեջ է դրված հնդեվրոպական վերականգնելի նախաձևերի հետ, որոնք էլ ամրապնդվում են ցեղակից, ամենից առաջ «դասական»՝ հին հնդկերեն, հին պարսկերեն, հունարեն, լատիներեն և այլն լեզուների ունեցած տվյալներով³:

Հայ. (բբբռ.) - կելտական (հին իռլանդերեն, բրետոներեն, կիմրերեն և այլն) առնչություններին վերաբերող օրինակները հիմնականում հետևյալն են.

արիք «հասակ, տարիք» - հիռլ. *rīm* «թիվ» (< հե. *ari-),

բնձոր «մի քիչ, մի կտոր» - հիռլ. *bocht* «աղքատ, խեղճ» (< հե. *bhengi-),

բողոց «վերք» - կիմր. *bail* «համաճարակ» (< հե. *bholdh̥o-),

բռալ «գոռալ. բառաչել» - հիռլ. *būriud* «գոռալ. բղավել» [< հե. *bhə(l)- (?)],

գեղմն - կիմր. *gwian* «բուրդ» [< հե. *(H)uel- (?)],

դրինգ «ձեռքի ափ» - հիռլ. «բռունցք. ձեռք» (< հե. *der- /*dor-, այլև *dōr- / *dər- «թիզ. ճկույթի և բուրի բացվածք»),

դուրզն - հիռլ. *droch* «անիվ» [< հե. *dhrg̥h- (?)],

աշխատություններում թյուրիմացաբար այդ խմբավորման (ոճական չորս «դասերի» առանձնացման) հեղինակ է ճանաչվում Հ. Աճառյանը:

¹ Տե՛ս, օրինակ, *Ս. Ե. Խաչատրյան*, Հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի հարցեր // «Երկրորդ հայերենագիտական միջազգային գիտաժողով (21-23 սեպտեմբեր, 1987)», Ե., ՀՀ ԳԱ հրատ., 1993, էջ 102-118:

² Գ. Բ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 157-330:

³ Նույն տեղում, էջ 248-259, այլև 277-330:

լակ «թույլ, փչացած (ձու)» - հիւնլ. *lacc* «թույլ, կակուղ, տկար» (< հե. *lǝg-),
լկել «հալչել, սկսել հալչել» - հիւնլ. *leaim* «լուծվել, հալչել» (< հե. *lǝg-),
խուրձն - կիւր. *p'ris* «պուրակ» [< հե. *khur(s)-to-],
կին - հիւնլ. *ben* (< հե. *g^henā),
հերթ «հերթ, կարգ» - հիւնլ. *sreth* (*srtā) «ընդլայնում. տարածում, շարք»,
կիւր. *serth* «անատակ» (< հե. *ser- «կողք կողքի շարել, միացնել»),
մայթ «սալահատակ. մայթ» - միւնլ. *methas* «սահմանանիշ» [< հե. *mei-,
*me(i)t-, *mait-, *mit- «ամրացնել»],
մլլալ «ծխալ, միսալ» (*մլլլալ* «ծխի հանդարտ բարձրանալը») - միւնլ. *smāl*,
smōl, *smual* «կրակ, ջերմություն, մոխիր» (< հե. *smōl),
մնիկ «շատ մանր. փոքր» - հիւնլ. *menb* «փոքրիկ» (< հե. *men-),
յանգ «մի տեսակ մահացու վերք» - իւնլ. *écht* «մահացու հարված» [< հե.
*ank- (?)],
շղտուկ «գորտուկ. կոծիծ» - միւնլ. *sceliān* «սերմ, հատիկ, միջուկ», կիւր.
caili, (հոգն. թ.) *ceillian* «ամորձիք» [< հե. *(s)kel- «կտրել»],
շուր «շուրջ, պտույտ» - հիւնլ. «շրջան» [< հե. *(s)ker- «պտտել, շրջել,
ծռել»],
ողջ - հիւնլ. *oil*- «լրիվ. մեծ» (< հե. *oljo-),
ոսի «մի տեսակ փշոտ բույս» - գալլ. (լատ.) *opulus* «թխկի» (< հե. *ok'-),
սագ - գալլ. (լատ.) *cvannus* (< հե. *k'auā),
սեռ (< *սեռն*) «ողնաշար. լեռան ջրբաժան. այն բարձր մասը, որից
սկսվում է թեքությունը» - բրետ. *kern* «գագաթ, գլխի վերին մասը» [< հե.
*k'erson (?)],
սլել «սահել, սայթաքել» - հիւնլ. *slemun* «ողորկ, սահուն» [< հե. *(s)lei-
«լորձնոտ, լպրծուն. սահել»],
սղալել «կոկել, հարդարել. շոյել, շոշափել» - հիւնլ. *slemun* «հարթ, ողորկ,
սահուն» [< հե. *(s)lei- «լորձնոտ, լպրծուն. սահել»],
տան «ժամանակ» - հիւնլ. *tan* «ժամանակ» (< հե. *ten- «ձգել, լարել, քաշել»),
տուտուկ «հետևի մաս» - միւնլ. *tōn*, կիւր. *tin* [*tūknā (?)] «հետևի մաս» (< հե.
*teu- «ուռչել»),
ցոթկել «ցնկնել» - հիւնլ. *fo-cerdaim* «նետում եմ» (< հե. *skēr-th-)
քթել (*քիթել*) «հոգնել» - իւնլ. *scīth* «հոգնած» (< հե. *kēth-),

քնթել «ծառի մանր՝ ավելորդ ճյուղերը կտրատել. էտել» - հիոյ, scaindrim «ճեղքում եմ, պատռում եմ» [$<$ հե. *(s)k(h)e(n)d- «ճեղքել, պատռել, ցրել»],

քոռ «ցեխ» - հիոյ. «ճահիճ» [$<$ հե. *kors- (?)]:

6. 1960-ական թթ. հետո միջին հայերենի՝ գրական լեզու և բարբառ առնչության լավագույն ուսումնասիրող Մ. Մուրադյանը գրում է. «Հին շրջանի լեզվական հուշարձանների մանրակրկիտ զննումը հանգեցնում է գլխավորապես հնչյունային և բառապաշարային տարբերությունների բացահայտման, իսկ քերականական տարբերությունները, կարելի է ասել, աննշան են: Միջին շրջանի լեզվական հուշարձանների քննությունը բավականին ընդլայնում է հնչյունային և բառապաշարային զուգաբանությունների ցանցը, միաժամանակ ասպարեզ հանում զգալի տարբերություններ քերականական համակարգում: Պարզվում է նաև, որ առանձին բարբառների ազդեցությամբ միջին գրական լեզուն ենթարկվել է տարածքային տարբերակման»¹:

Եվ ըստ այդմ՝ հեղինակը բերում է միջին հայերենին առավել բնորոշ տարբերակումներից մի քանիսը. օրինակ.՝ «*w* ձայնավորի տարբերակումը», որ ներկայացվում է մի քանի տեսքով. «*U > ɹ // ø* փոփոխությունը միջին հայերենում համատարածքային² միտում է և մեծ կամ փոքր ծավալով դրսևորվում է ամենուրեք՝ անգամ այն վայրերում, ուր *w* ձայնավորը հաստատ պահելու ձգտում է նկատվում՝ Գուգարք, Տայք, Մուշ, Կարին, Բասեն, Վանանդ, Արագածոտն, Շիրակ (Անի քաղաքով հանդերձ)»³: Այնինչ՝ «*w > ı̆ - (o)* և *w > ü̆ - (t)* փոփոխությունները մասնատարածքային⁴ միտումներ են և դրսևորվում են առանձին վայրերում: *U > o* փոփոխություն վկայվում է կիլիկյան միջին հայերենում՝ գործիական հոլովի *ı̆* ոճային միավորից առաջ. *ձկօւմ, ոսպօւմ* (Մ. Հերացի), *անձօւմ, ձէռօւմ* («Ասիզք Անտիոքայ»): Այս օրինակներն օգնում են կռահելու, որ աստիճանաբար *w* ձայնավորի շրթնայնացումը գործիական հոլովի ոլորտից պետք է

¹ Մ. Հ. Մուրադյան, Բարբառային տարբերակվածությունը հայերենի զարգացման միջին շրջանում // «Միջազգային հայերենագիտական գիտաժողով, Երևան, 21-25 սեպտեմբերի, 1982թ. (Զեկուցումներ)», էջ 429:

² Այս տերմինը բարբառագիտության մեջ, որքան մեզ հայտնի է, գործածվում է հիշյալ աշխատության մեջ:

³ Նույն տեղում, էջ 431:

⁴ Հմմտ. ծանոթագր. 2-ը:

տարածվեր առհասարակ նախառնգային *ա-*-ի ոլորտ, ինչպես որ ներկայանում են Կիլիկիայի, Սվեդիայի, Համշենի նոր բարբառները»¹:

Դասական բանասիրության մեջ ընդունված է, իբրև «տեղաշարժի» դրսևորում, ձայնեղների խլացման գործընթացը, որը 20-րդ դ. 70-ական թթ. սկսած առաջ է բերել մի շարք համեմատաբանների առարկությունը²: Ավանդական մոտեցմամբ Մ. Մուրադյանը միաժամանակ կարծում է, որ նման փոփոխություն բնորոշ է Վասպուրականի, Մոկքի, Կորճայքի, Հերի, Ուրմիայի, Սյունիքի և Արցախի տարածքներին, Ուտիքի տարածքի մի մասին և այլն: Ձայնեղների խլացման երևույթը այդ տարածքների մեծ մասին բնորոշ է եղել «VII դարից առաջ, մոտավորապես V դարում, քանի որ ըստ Անանուն Մեկնիչի վկայության, VII դարում հայ բարբառներն արդեն տարբերակված էին պայթական բաղաձայների ձայնեղ - խուլ - շնչեղ խուլ հակադրությամբ (*բագուկ - պագուկ - փագուկ*)³: Ձայնեղ բաղաձայնի խլացման լավագույն օրինակ է Վան-Վասպուրականի տարածքը [օր.՝ ջ > ճ և այլն. ճոճ «մեծ. խոշոր. (բրբռ.) ջոջ»]. հմմտ. «Այն ճորտն ճոճ էր և ճապուկ» [= Այն ճորտը (գյուղացի մարդը) մեծ (խոշոր) էր ու թիկնեղ]⁴: Անվանի բարբառագետի ընդհանուր կարծիքն այս հարցում այն է, որ «հատկանիշ առ հատկանիշ վեր հանելով միջին հայերեն բարբառների փաստական տվյալները, հնարավորություն է ստեղծվում կազմել գուզաբանությունների համեմատական աղյուսակներ, որոնց հիման վրա կարելի կլինի որոշել բարբառների մերձավորության ու հեռավորության սահմանները և հիմնական գծերով ամբողջացնել նրանց նկարագիրը»⁵ :

7. Հնդեվրոպական լեզուների մի մասում (խեթերեն և այլն) հատկանշական երևույթ է բառասկզբի ձայնավորին նախորդող կոկորդային հնչյունի առկայությունը [հե. *H > խեթ. փ, հայ. փ. օր.՝ հե. *HauHO- «պապ. հոր հայր» - խեթ. փսփսա- (տույնը), փսփսա- «պապ. նախնի», հայ. հաա (տույնը)]: Հայերենի նոր բարբառներում այս երևույթի տարբեր դրսևորումները լավագույնս ուսումնասիրված են Ա. Հանեյանի աշխատության մեջ (ոչ անկախ Հ. Աճառյանից և Մ. Մուրադյանից). Ե-

¹ Նույն տեղում:

² Այստեղ դրան չենք անդրադառնում, բուն թեմայից հեռուն չգնալու պատճառով:

³ Նույն տեղում, էջ 432, ծան. 9:

⁴ *Գրիգոր Նարեկացի*, Տաղեր և գանձեր, քննական բնագիրը Ա. Քոշկերյանի, Ե., 1981, էջ 62: Հմմտ. Վ. Գ. *Համբարձումյան*, Գրիգոր Նարեկացու բառապաշարի մի քանի բառի մեկնություն և ստուգաբանություն // «Միջազգային հայագիտական գիտաժողով՝ նվիրված Պ. Մ. Խաչատրյանի ծննդյան 90-ամյակին», Վանաձոր, 2019:

⁵ Մ. Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 435:

թե գրական լեզվում պահպանված է նման մեկ ընդհանուր հնչյոթ, ապա բարբառներում այն հանդես է գալիս առնվազն երկու տարբերակով (ըստ հեղինակի՝ «*հ*՝ և *հ*՝ նիշերով»)։ «I խմբին (Մուշ, Ալաշկերտ, Բուլանուղ, Արծափ, Արարատյան, Լոռի, Կարին, Սեբաստիա, Արաբկիր, Շապին-Գարահիսար) բնորոշ է երկու հազագային հնչյունների առկայությունը՝ խուլ և ձայնեղ (հմմտ. *հաց, հին, հանել* և *հիծծուն, հովիկ, հառու*)։ Ի դեպ, նշված տարածքում այս հազագր առաջին անգամ դիտել է Հ. Աճառյանը (ունի հղում – Վ. Հ.)։ II խումբը կազմում են Մուշի և Վանի հարավային միջբարբառային սահմանակից այն խոսվածքները (Արծկե, Արճեշ, Բաղեշ, Մանազկերտ, Խլաթ, Ալաշկերտի և Բուլանուղի որոշ խոսվածքներ, Նոր Ջուղա, Բայազեղ (Կամո), Դիաղին (Վարդենիս), որոնք հին հայերենի *հ*-ի դիմաց ունեն *խ* (*հաց – խաց, հաւ – խաւ*), հետևաբար՝ սրանցում խուլ հազագի բացակայության պայմաններում ձայնեղ հազագր գործառում է իբրև իր տեսակի մեջ միակ հնչյուն։ Այս խոսվածքները ուշ շրջանի օտար և անգամ արդի հայերենից կատարած փոխառություններում խուլ *հ*-ն հնչում են ձայնեղ»¹։

Հնարավոր է այդ երևույթը դիտել հին (հնդեվրոպական կոկորդային հնչյունների՝ լարինգալների ոլորտում, թե՛ այն նոր է։ Բայց և այնպես, հեղինակը բավականին հստակ ձևակերպում է տալիս այդ երկու տարբերակային հնչյոթներին՝ հիմնված նաև փորձառական տվյալների վրա. «Փորձառական հնչյունաբանության տվյալների համաձայն (ունի հղում – Վ. Հ.), այս երկու հազագները մոտավորապես բնութագրվում են՝ ա) որպես ձայնորդային հնչյուններ՝ ընդհանուր առմամբ նման հաջորդող ձայնավորի պատկերին՝ որոշ երանգային տարբերություններով. վանկարար ձայնավորը հիմնականում մաքուր է՝ երբեմն միայն շնչով երանգավորված։ Այս որակով հնչյունը առկա է Ալաշկերտի խոսվածքում ընդհանրապես, իսկ Բուլանուղի, Բայազեղի, Շատախի խոսվածքներում՝ մասամբ, և բ) որպես բաղադրյալ հնչյուն՝ հետևյալ կազմով. բառասկզբում խուլ շունչ կամ աղմուկ + ձայնորդա-ձայնավորային հատված, կամ վանկարար ձայնավորի՝ շնչով երանգավորված մաս, որոնց հաջորդում է ձայնավորի մաքուր հատվածը (Բուլանուղ, Բայազեղ, Շատախ)»²։

¹ Ա. Ն. Հանեյան, Բարբառային ձայնեղ հազագները և նրանց աղերսը հին հայերենի բառասկզբի յ ձայնորդի հետ // «Միջազգային հայերենագիտական գիտաժողով. Երևան, 21-25 սեպտեմբերի, 1982 թ. (Ձեկուցումներ)», էջ 360-361: Նույնի՝ Ձայնեղ հպականների շնչեղության և քմայնության նախնական աղերսի շուրջը // «Երկրորդ հայերենագիտական միջազգային գիտաժողով (21-23 սեպտեմբեր, 1987)», էջ 119-127:

² Նույն տեղում, էջ 361:

8. Մոկսի բարբառի ձայնավորների, երկբարբառների և բաղաձայնների հավակարգերը ի հայտ են բերում թե՛ հնչյունախոսական և թե՛ առհասարակ հնչյունաբանական ակնհայտ առանձնահատկություններ՝ կապված այսպես կոչված քմայնացման (ավանդական բնութաբուժումով՝ հասկանալի և սովորական, մեկ այլ դեպքում՝ դեռևս ոչ այնքան պարզ, ուստի և արտասովոր) տարբերակիչ այլ հատկանիշների պարունակման, արտասանական տարբերակման և այլ երևույթների հետ¹: Այսպես, Հ. Օրբելին ժամանակին րանցել էր բարբառի հնչյունական-հնչույթային երևույթները՝ իրենց արտասանական տարբերությունների, վերջիններիս նրբերանների հետ և այլն, սակայն այդպես էլ հնարավոր չի եղել վերջնական տեսքի բերել հնչյունական րանցումների տառադարձման համակարգը, և ինչպես նշում է Մ. Մուրադյանը, «Չնայած այս հանամանքին, ուշադիր գնում կատարելու դեպքում Հ. Օրբելու նրբերանային րանցումները խիստ հետաքրքրական և նույնիսկ անսպասելի իրողությունների բացահայտման բանալի են տալիս»²: Տվյալ դեպքում մեզ առավել հետաքրքրում է Հ. Օրբելու կատարած կենդանի գրանցումը՝ հնչույթային համակարգի այն երևույթը, որն առաջին հերթին վերաբերում է ձայնավորներին, երկրորդ հերթին՝ պայթական բաղաձայններին, մանավանդ եթե նկատի ունենանք, որ հայերենի որոշ բարբառների պայթական բաղաձայնական համակարգին վերջին տարիներին համեմատական և տիպաբանական աշխատություններում տրվում է առավել հնություն, որի հիման վրա առաջարկվում է վերանայել հնդեվրոպական նախալեզվի ավանդական համակարգը³: Այս դեպքում Մոկսի բարբառը, օրինակ, ինչպիսիք լրացուցիչ հնարավորություն կարող է ստեղծել:

¹ Հմմտ. Վ. Գ. Համբարձումյան, Հ. Օրբելու ներդրումը Մոկսի և առհասարակ հայերենի բարբառների գիտական ուսումնասիրության մեջ // «Ակադեմիկոս Նիկողայոս Մառ. ծննդյան 140 և մահվան 70-ամյակների տարելիցի ժողովածու», Ե., 2005, էջ 92-98:

² Մ. Հ. Մուրադյան, Ուրվագիծ Մոկսի բարբառի // «Հայերենի բարբառագիտական առլա (ուսումնասիրություններ և նյութեր)», 1, Ե., 1982, էջ 112:

³ Հմմտ. Թ. Վ. Գամքրելիձե, Индоевропейская “глоттальная теория” и система древнеармянского консонантизма // “Международный симпозиум по армянскому языковедению (Доклады)”, Ереван, Изд. АН Арм. ССР, 1984, էջ 31-34: Թ. Վ. Գամքրելիձե, Вяч. Вс. Иванов, Лингвистическая типология и реконструкция системы индоевропейских смычных («Конференция по сравнительно-исторической грамматике индоевропейских языков (12-14 декабря)», Предварительные материалы, М., 1972, էջ 15-18: Թ. Վ. Գամքրելիձե, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, I-II, Тбилиси, Изд.

Նման մանրամասն քննությունը, ինչ խոսք, մոտենում է ընդհուպ լեզվի նախագրայինից եկող այն ժառանգությանը, որի պարզաբանումը հետաքրքիր է ոչ միայն ինքնին, այլ նաև ցեղակից մյուս լեզուների, տվյալ դեպքում կելտականի հետ հնչյունական-գուգաբանական լուծումների համար:

Այնուհետև, աճառյանական դպրոցի հետևողությամբ հատկապես 20-րդ դ. երկրորդ կեսին շարք աշխատանքներ, որոնք հիմնականում վերաբերում էին այս կամ այն բարբառի առանձին նկարա-րությանը՝ ի համեմատություն հատկապես հին շրական լեզվի (Շրաբարի), քանի որ ստեղծվել էր մի կայուն, շեղանկան անշրջանցելի ավանդույթ՝ համաձայն որի հայերենի բարբառները, որոնց թիվը շեղանկան դառնում է ուղիղ համեմատական գրվող և լույս տեսնող մենագրությունների հետ, ոչ այլ ինչ են, եթե ոչ շրական հայերենից հետո երևան եկած խոսակցական տարբերակվածության փաստ: Հակառակ մոտեցումը կամ կարծիքը կարող էր առարկության հանդիպել, և այդպես էլ լինում է: Եվ պատահական չէ, որ անցյալ դ. 50-ական թթ. վերջերին և 60-ականների սկզբներին ոչ միայն մեզանում, այլև նախկին խորհրդային իտական մամուլում տեղի ունեցավ լայն ընդգրկումով բանավեճ, որին մասնակցեցին թե՛ հայ և ռուս, թե՛ օտարազգի լեզվաբաններ: Հայերենի բարբառների համաժամանակյա (ստատիկ) նկարագրության ավանդույթն այնքան մեծ էր, որ բանավեճի ընթացքում անգամ առաջ քաշված շատ առանցքային գաղափարներ և օրինակելի վերլուծություններ (Հ. Ֆոգտի, Է. Բենվենիստի, Վյաչ. Իվանովի և ուրիշների) այդպես էլ հետագա տարիներին գրված (հատկապես մեզանում երևան եկած) բարբառագիտական աշխատանքներում որևէ արձագանք չունեցան կամ ընդունելություն չտան¹ :

Մոկսի բարբառն ունի ոչ միայն պարզ, այլև քմայնացած հետնալեզվային և այլ կարգի բաղաձայններ՝ *բ* ; *դ* , *ձ* , *ջ* , այլև *բ* , *՛* , *դ* , *ձ* , *ջ* , որոնք արժանի են հատուկ ուսումնասիրության՝ հատկապես համապատասխան տեխնիկական նոր սարքերի միջոցով: Այդ բարբառում նկատվում է «ետնալեզվային *կ*՝ բաղաձայնի առկայություն բարբառային, փոխառյալ, *երբեմն նաև գրաբարից*

Тбилисского ун.-та, 1984. О. С. Широков, Общеиндоевропейский и армянский консонантизм // “Международный симпозиум по армянскому языкознанию (Доклады)”, Ереван, Изд. АН Арм. ССР, 1984, էջ 123-135:

¹ Բանավեճի նյութերը տպագրված են 1959-1962 թթ. լույս տեսած «Պատմաբանասիրական հանդես»-ի և “Вопросы языкознания” ամսագրի էջերում, կա նաև հետագա անդրադարձ այդ նյութերին:

եկող բառերում, վերջին դեպքում՝ իբրև արդյունք *ղկ* հնչյունակապակցության ձուլման» (ընդգծումը մերն է - Վ. Հ.)¹: Հարց է առաջանում՝ այդ վերջինը կապ ունի՞ հայերենի համար առանձնացվող, այսպես կոչված, ծերպաձայնային (զլոտալ) բաղաձայն արտասանության հետ. եթե այո, ապա կարելի է մտածել, որ նման հնչյոթների տարաժամանակյա ք ն ն ությունը մեծ կարևորություն կարող է ունենալ հայերենի պատմության, այլև հնդեվրոպական լեզուների լայն նկարագրության համար²:

Այնուհետև, նկատելի է, որ արտասանական որոշակի տարբերակվածություն ունեն նաև ձայնավորները, ինչպես նաև երկբարբառները և եռաբարբառները: Ձայնավորների առավելապես բնորոշ են քմայնացումը և շրթնայնացումը, որոնք հակադրվում են սովորական արտասանություն ունեցողներին (հատկապես *ա // ւ̇ // ւ̈* հակադրությամբ և այլն): Այս բարբառի հնչյունական համակարգի գրանցման համար ևս, ինչպես ընդունված է հայ բարբառագիտական աշխատություններում, կիրառվում է մեսրոպյան այբուբենը: Այս դեպքում, կարելի է ասել, մեսրոպյան գրերը չէին կարող բավարար լինել՝ արտահայտելու այդ բարբառի հնչյունական ողջ բազան, ուստի Հ. Օրբելին իր կազմած բառարանի սկզբում դնում է հնչյունների տառադարձման մի այնպիսի «այբուբեն», որում օգտագործված են ոչ միայն մեսրոպյան գրերը, այլև օտարլեզվյան տարբեր կարգի գրանշաններ: Ընդ որում թե՛ մեկ և թե՛ մյուս կարգի գրանշանները համալրված են ինքնօրինակ տարբերիչ (դիակրիտիկ) նշաններով³:

Այսպես, օրինակ, Մոկսի բարբառում հետնալեզվային *կ* բաղաձայնը քմային (*կ̇*) և պարզ (*կ*) արտաբերությունից բացի ունի նաև «*ղ* ձայնի թույլ երանգ ով» [-արաբ. գ «կաֆ» հնչյունին մոտեցող (?)] ճ հետնալեզվային տարբերակը, այսինքն՝ պայթական մի հնչյուն, որ Հ. Օրբելու գրանցման մեջ նշանակված է այլ կերպ (*կ̇*), իսկ Մ. Մուրադյանի հիշյալ աշխատության մեջ՝ մեկ այլ կերպ (*կ̇*). օր.՝ ըստ Օրբելու՝ *կ̇ս̇լբ* // *կ̇ս̇լբ* «1. կեղծ. նմանակված, սխալ», 2. «նենգ, խարդախ» [հմմտ. բնկան // բնդկան «կեղծ (մարդ)»], նաև *հ̇օր̇օղկիլ* // *հ̇օր̇օկիլ* «առաքել, ուղարկել»,

¹ Մ. Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 130: Հմմտ. Վ. Գ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 94-95:

² Հմմտ. Վ. Գ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 95:

³ Հմմտ. նույն տեղում, էջ 96:

և ըստ Մուրադյանի՝ *կննք/կննք* «վեղծ, խարդախ», նաև *հ օրօղկիլ // հ օրօկիլ* և «ուղարկել» և այլն¹:

Ուստի կարելի է մտածել, որ տվյալ դեպքում գործ ունենք ոչ թե (ավանդական՝ Աճառյանի ժամանակից եկող բնութագրումով) նման (սովորական) որակի հնչույթի, այլ, այսպես կոչված, նախակոկորդային (ծերպաձայնային) արտասանությամբ պայթական բաղաձայնի հետ: Նման ենթադրության հիմք են տալիս հայերենի և հնդեվրոպական ուրիշ լեզուների համեմատական և տիպաբանական այն ուսումնասիրությունները, որոնք երևան են եկել հատկապես վերջին երկու-երեք տասնամյակի ընթացքում:

Հայերենը, իբրև հնդեվրոպական առանձին (ճյուղով ներկայացող) լեզու, աչքի է ընկնում բարբառային զգալի տարբերակվածությամբ: Այն ժառանգություն է ընդհանուր հնդեվրոպականից, ինչպես նաև ձեռքբերում ինքնուրույն զարգացման ընթացքում: Բարբառային ձևերը ևս կարևոր են համեմատական-տիպաբանական քննության, տվյալ դեպքում՝ հայ-կելտական առնչությունների ուսումնասիրման մեջ:

Գրական հայերենի և բարբառների փոխհարաբերության մասին կարելի է պատկերացում ունենալ նաև ըստ բառապաշարի մակարդակում կատարված այն փոփոխությունների, որոնք ամրագրված ենք գտնում հին և հետագա շրջանի գրական հուշարձաններում, և որոնք իրենց ակունքներն ունեն նախագրային հայերենում:

Այսպես, արմատի կազմության, արմատակազմիչ տարրերի և ածանցների բաղադրական միջոցների և եղանակների բառագիտական քննությունը հայոց լեզվի զարգացման պատմական ընթացքի մեջ երևան է բերում ոչ միայն ցեղակից մյուս լեզուների (տվյալ դեպքում՝ կելտական լեզուների) հետ որոշակի համընկումներ, այլև ակնհայտ տարբերություններ. վերջիններս, կարելի է ասել, ոչ այլ ինչ են, քան դրանց ինքնուրույն զարգացման, այլև հետագայում հարևան ժողովուրդների հետ ունեցած առնչությամբ պայմանավորված ձեռքբերումներ²:

Հայերենում առկա հնդեվրոպական արմատի տարբերակային քննությունը վերաբերում է ոչ միայն գրական, այլև բարբառային ձևերին, որոնք առավելապես հանդես են գալիս հնչյունական մակարդակում: Այդպիսի ձևեր

¹ *И. Орбели, Избранные труды, т. 2, Ереван, Изд.-во «Гитутюн» НАН РА, 2002, с. 210, 257, 279: Մ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 131:*

² Հմմտ. *Մ. Հ. Մուրադյան, Բառագիտություն // «Հայոց լեզվի պատմական քերականություն», հ. II, Ե., 1971, էջ 5-158:*

հանդիպում են լեզվի տարբեր փուլերի գրական հուշարձաններում, որոնց ուսումնասիրությունը թե՛ տեսական և թե՛ գործնական (բնագրերի ամբողջական ընդգրկման) առումով, կարելի է ասել, հեռու է բավարար լինելուց¹:

Նման դիտարկումը վերաբերում է հայերենի այն բարբառներին, որոնցում այս կամ այն չափով տեղ գտած հնագույն հատկանիշները լույս են սփռում հին գրական հայերենի, այլև նախագրաբարյան վիճակի շատ երևույթների նոր լուսաբանման վրա: Ուստի նկատելի է այն, որ վերջին տասնամյակներին հնդեվրոպական լեզուների համեմատական-տիպաբանական ուսումնասիրության բնագավառում (հատկապես այլ երկրների մասնագետների աշխատություններում) մեծ տեղ է տրվում հայերենի (և վերջինիս որոշ բարբառների) հնչյունական համակարգի վերաբերող տվյալներին, և ըստ այդմ առաջ են քաշվում ընդհանուր հնդեվրոպական վիճակի վերականգնման և գնահատության նոր մոտեցումներ և սկզբունքներ: Այս տեսակետից առաջ են գալիս հայերենի տարածքային տարբերակների, ընդ որում Մոկսի, Կիլիկիայի, թերևս, նաև այլ բարբառների մեջ մտնող միավորների ավելի լայն ուսումնասիրության հետ կապված խնդիրներ²:

Ոչ պակաս նշանակություն ունի լեզուների շարահյուսական մակարդակում (տեքստի) համեմատելի երևույթների քննությունը, որն առավելապես կարևոր է հնդեվրոպական բանաստեղծական խոսքի առանձնահատկությունների, դրանց՝ առանձին լեզուներում (տվյալ դեպքում՝ հայերենում և կելտական լեզուներում) ունեցած արտացոլումների տեսանկյունից:

Ուշ միջնադարյան կելտական՝ իռլանդական և մյուս լեզուներով ավանդված ասքերը (սագաները) և վիպերգերը (լեգենդները), որքան կարելի է տեղեկանալ ըստ բնագրերի, պարունակում են հայկականի համեմատությամբ զուգադիպումներ՝ պատումների, սյուժետային կառուցումների, խոսքի փոխա-

¹ Տե՛ս Վ. Գ. *Համբարձումյան*, Հնդեվրոպական ծագման հայերեն արմատի տարբերակային վերականգնման խնդիրները // «Հայկագուհիներ», Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 235-240:

² Ավելի մանրամասն տե՛ս Վ. Գ. *Համբարձումյան*, նշվ աշխ.: *Նույնի՝ Կիլիկիայի բարբառի ուսումնասիրութեան ձեռքբերումները եւ արդի խնդիրները* // «Հասկ. հայագիտական տարեգիրք», Նոր շրջան, ԺՄ տարի, 2007-2008, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 109-114:

բերացման յուրօրինակ ձևի մեջ, որոնք կարող են հիմք հանդիսանալ համեմատական-իմաստաբանական քննության համար¹:

Եթե ամփոփելու լինենք հին գրական հայերենի և բարբառների վերաբերյալ վերն ասվածը, ապա ամենից առաջ պետք է նշել հետևյալը:

Գրական լեզվի և բարբառների առնչության հարցում եղել է երեք կարգի մոտեցում. ըստ առաջինի բացառվում է հին բարբառների հնարավոր գոյությունը (Ա. Մեյե, Հ. Աճառյան և ուրիշներ), ըստ երկրորդ մոտեցման՝ եղել են այն չափով, որ առանձնապես հիմք են հանդիսացել գրական լեզվի համար, սակայն հետագայում՝ միջին շրջանից սկսած, տեղիք են տվել նոր բարբառների, ընդ որում՝ գրական լեզվի հետագա տարբերակման ճանապարհով (Է. Աղայան, Գ. Ջահուկյան և ուրիշներ), իսկ երրորդ մոտեցումն այն է, որ հայերենում միշտ էլ գոյություն են ունեցել բարբառներ, ընդ որում՝ դեռևս նախագրային ժամանակաշրջանում, բնականաբար՝ հնագույն որակի (տեսքի) մեջ, ուստի հին գրական հայերենն ավելին չէ, քան հնագույն բարբառախմբի կամ բարբառների վրա բարձրացած, կանոնարկված (նորմավորված) լեզու, մանավանդ 5-րդ դ. գրական բուռն առաջընթացի մեջ (Ք. Պատկանյան, Հ. Հյուբշման, Ա. Ղարիբյան և ուրիշներ)²:

Հին գրական հուշարձանները, որքան էլ ենթարկված կանոնականացման, այնուամենայնիվ պարունակում են հնչյունական, բառի (արմատի) բարդության կամ ածանցման այլևայլ տարբերություններ («շեղումներ» ընդհանուր նորմայից), որոնք, ի դեպ, նախկինում ըստ հնարավորին առանձնացված և բավարար չափով քննված են հայոց լեզվի պատմությունը և համեմատական քերականությունը վերաբերող աշխատություններում³:

¹Ирландские легенды и сказки (перевод с английского). Составление и предисловие Н. В. Шерешевской, М., Гослитиздат, 1960: Ирландские саги (Перевод), Вступительная статья и комментарий А. А. Смирнова, М.-Л., Гослитиздат, 1961.

² Ավելի մանրամասն՝ Վ. Գ. Համբարձումյան, Հայ բարբառագիտության տեսության հարցեր (ձեռագիր):

³ Հին գրական հուշարձանների տարբեր «գրչությունները», ինչպես վերը նշել ենք, ներառված են Հ. Աճառյանի և Գ. Բ. Ջահուկյանի համապատասխան աշխատություններում (տե՛ս տողատակի ծանոթ. 6):

Գլուխ երկրորդ

ԿԵԼՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ ԵՎ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ

1. Հնդեվրոպական լեզուների մի ճյուղը կելտական լեզուներն են, որոնք ներկայումս տարածված են Եվրոպայի արևմտյան շրջանում, ընդ որում իռլանդերենը՝ Իռլանդիայում, վալլիերենը և շոտլանդերենը՝ Մեծ Բրիտանիայում, բրետոներենը՝ Ֆրանսիայում, և մինչև վերջին ժամանակներս կենդանի մեներենը՝ Մեն կղզում (Մեծ Բրիտանիա):

Կելտական լեզուների ծագումնային միասնության վերաբերյալ ընդհանուր առմամբ գիտությանը հայտնի էր դեռևս 17-րդ դ. սկզբներից, երբ Ջ. Դևիսն իր հայտնի «Վալլիերեն–լատիներեն բառարանի» (1632 թ.) էջերում բառային գուգահեռներ էր անցկացնում բրիտական լեզուների և իռլանդերենի տվյալների հիման վրա, երբ Է. Լոյդն իր «Բրիտանական հնագիտություն» (1707 թ.) գրքում ուշադրություն է դարձնում գալլերենի վրա՝ որոշ հնչյունական համեմատություններ անցկացնելով վերջինիս և լատիներենի, նաև հին հունարենի միջև՝ բերելով բառային գուգադիպումների, այլև բնագրային համընկումների օրինակներ և այլն: Եվ ոչ միայն այդ երկու, այլև կելտական մյուս լեզուների գիտական (իմա՝ պատմական-համեմատական) քննությունը սկիզբ է առնում հատկապես Ջ. Պրիչարդի, Ա. Պիկտեի, Ֆ. Բոպի, մանավանդ Ի. Կ. Յեյսի հիշյալ բնույթի աշխատություններում¹ :

Ընդհանուր կելտական նախալեզվի հետագա բաժանումն ամենայն հավանականությամբ պիտի տեղի ունեցած լինի մ. թ. ա. 1-ին հազարամյակի կեսերին, երբ կելտական ցեղերը Գերմանիայի հարավային և Ֆրանսիայի արևելյան շրջաններից տեղաշարժվում են դեպի արևմուտք և արևելք:

Նախ՝ նկատենք, որ նյութական մշակույթի մնացորդների հնագիտական հայտնաբերումները տարբեր ժամանակներում մասնագետներին հնարավորություն են ընձեռել կելտերի պատմության փուլերի առանձնացման համար:

Այսպես, անցյալ դ. 50-ական թթ. Յ. Ֆիլիպի կողմից կատարված շրջանաբաժանմամբ, որն ամենաիրականը և ամենաընդունելին է համարվում ժամանակակից գիտության մեջ, առանձնացվում է հինգ շրջան՝ ընդգրկե-

¹ Հմնտ. *В. Н. Ярцева*, Предисловие // *Г. Льюис и Х. Педерсен*, Краткая сравнительная грамматика кельтских языков, М., 1954, էջ 3-12: *В. П. Калыгин, А. А. Королев*, Кельтские языки // "Сравнительно-историческое изучение языков разных семей: Задачи и перспективы", М., 1982, էջ 71-90:

լով մ. թ. ա. 5-րդ դ. կեսերից մինչև մ. թ. ա. 1-ին դ. վերջերը, երբ կելտերը թափանցում են Կենտրոնական Եվրոպա և Իտալիա, տեղիք տալիս էքսպանսիայի տարբեր կարգի դրսևորումների, համախմբվում և վերակազմավորվում են Կենտրոնական Եվրոպայում, այնուհետև թուլանում տնտեսական և մշակութային հետընթացի պայմաններում, որի հետևանքով ավարտին է հասնում նրանց երբեմնի ունեցած ազդեցությունը տարածաշրջանում¹:

Ըստ այսմ՝ նկատելի է, որ «կելտերը էթնիկական միասնություն չեն ներկայացրել: Նրանց զբաղեցրած տարածքը, ծաղկման շրջանում հյուսիս-արևմուտքում գտնվող Բրիտանական կղզիներից մինչև Պիրենեյան թերակղզին՝ հարավ-արևմուտքում, ժամանակակից Ֆրանսիան, հարավարևմտյան Գերմանիան, հյուսիսային Իտալիան, Դանուբին հարող տարածքները՝ Ավստրիան, Չեխոսլովակիան, Հունգարիան, մասամբ Սիլեզիան, Լեհաստանի փոքր մասը և Ուկրաինայի Անդրկարպատյան մարզը (կելտերը հասել են Սև ծովի ափերը և թափանցել են Փոքր Ասիա), սկզբնապես եղել է բավականին փոքր և սահմանափակվել է Հարավային Գերմանիայով և Չեխիայի մի մասով, այսինքն՝ Ռեյնի և Դանուբի վերին հոսանքով: Կելտերի «հայրենիքը» հենց այստեղ էլ պետք է փնտրել»²:

Այնուհետև, նշենք, որ մ. թ. ա. 1-ին հզր. և մ. թ. առաջին մի քանի դարերում կելտական լեզուները շարունակաբար տարածվում են Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայի հիմնական մասում. Պիրենեյան թերակղզում՝ կելտիբերերենը ներկայիս Ֆրանսիայի (մեծ մասամբ անտիկ Գալլիային համապատասխանող) տարածքում, այլև Գերմանիայում, Շվեյցարիայում, Բելգիայում և Բոհեմիայում, Պանոնիայում՝ գալլերենը, Իտալիայի հյուսիսում՝ լեպոնտերենը, ինչպես նաև Փոքր Ասիայում (այժմյան Թուրքիա) երբեմնի հաստատված գաղատների լեզուն, որն այլ բան չէ, քան գալլերենի մի բարբառը, իսկ Բրիտանական կղզիներում գործածվում էին ներկայումս մեռած կռռներենը և կումբրերենը:

2. Կելտական լեզուներով խոսողների թիվն այսօր այնքան էլ մեծ չէ, ըստ 19-րդ դ. 70-ական թթ. կատարված ժողովրդագրության տվյալների՝ մոտ երկուսուկես-երեք միլիոն, ընդ որում հաղորդակցական գործառնությունը հիմնակա-

¹ *М. А. Тихонова. Кельтская проблема в современной археологии // "Кельты и кельтские языки", М., "Наука", 1974, էջ 6:*

² *Տե՛ս М. А. Тихонова, նշվ. աշխ., էջ 7:*

նում տեղի է ունենում երկլեզվության պայմաններում, առաջին հերթին մայրենի լեզվի, առանձին դեպքերում՝ անգլերենին կամ ֆրանսերենին զուգահեռ¹:

Կելտական հիմնական լեզուները, հատկապես հնդեվրոպական լեզուների համեմատական և տիպաբանական ուսումնասիրությունների շրջանակում, չեն եղել պակաս ուշադրության առարկա, քան մյուս լեզուները²: Առանձնացվում են նման ուսումնասիրությունների հետևյալ շրջանները.

ա) ծագումնային ընդհանրության վերհանման, ցեղակցային հատկանիշների առանձնացման և համեմատական ուսումնասիրության սկզբնավորման շրջան (17-րդ դ. 30-ական թթ. – 19-րդ դ. 1-ին կես),

բ) ցեղակից լեզուներով պահպանված գրական հուշարձանների ինտենսիվ մշակման և հրապարակման, լեզվական եղած փաստերի համեմատական ուսումնասիրության խորացման շրջան (19-րդ դ. 2-րդ կես – 20-րդ դ. սկիզբ),

գ) լեզուների կառուցվածքի համեմատական, առավելապես համաժամանակյա ուսումնասիրության շրջան (20-րդ դ. 10-20-ական թթ. մինչև մեր օրերը):

Գիտության զարգացման արդի փուլում լեզուների համեմատական-տիպաբանական, այլև տարբերակային (վարիատիվ) ուսումնասիրության մեջ շարունակում են առանցքային նշանակություն ունենալ ոչ միայն ժամանակային գործոնը, այլև տիպաբանական վերագրումների (ռեֆերենցիայի) հարցերը³: Եվ ըստ այսմ՝ կելտական լեզուները, ինչպես գիտենք, մի կողմից՝ կոչվում են հին (կղզիների) կամ նոր (մայրցամաքային), մյուս կողմից՝ ցեղակից լեզուների նկատմամբ ունեն ընդհանուր (ժառանգված), այլև մասնավոր (ձեռքբերված) գծեր:

Այնուհետև, առանցքային նշանակություն կարող է ունենալ տեսական այն դրույթը, ըստ որի՝ ցանկացած տիպի լեզուների խումբ («լեզվաընտանիք») կամ

¹ В. П. Калыгин. Кельтские языки // “Языки мира: Германские языки. Кельтские языки”, М., “Academia”, 2000, էջ 388:

² Sté u, օրինակ, H. Pedersen, Vergleichende Grammatik der keltischen Sprachen, Bd. 1-2, Göttingen, 1909-1913: J. Vendryes, La position linguistique du celtique, Louvain, 1937: Г. Льюис и Х. Педерсен, Краткая сравнительная грамматика кельтских языков, Ы., 1954: К. Н. Jackson, Language and history in early Britain, a chronological survey of the Brittonic languages first to twelfth century, Edinburgh, 1953 և այլն:

³ Հմնտ. Г. А. Климов. О праязыковой реальности // “Актуальные вопросы сравнительного языкознания”, Л., “Наука”, 1989, էջ 5-20: А. С. Мельничук, Проблематика реконструкции в сравнительно-историческом языкознании // “Актуальные вопросы сравнительного языкознания”, էջ 21-35: Языки мира: Проблемы языковой вариативности, М., “Наука”, 1990: Վ. Գ. Համբարձումյան, Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության, պրակ 2, Ե., 2007:

առհասարակ «լեզուներ» դասակարգելիս կամ խմբավորելիս առանձնապես պետք է հաշվի առնել նրանց զարգացման արտաքին և ներքին գործոնները, կառուցվածքի տիպական բաղադրիչների արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերությունը, դրանց հարացուցային և շարակարգային շարքերի միավորների դրսևորումը, ինչպես նաև գործառական ընդգրկվածությունը¹: Ուստի կարծում ենք, որ կելտական լեզուների դասակարգման ժամանակ ևս պետք է նկատի ունենալ ոչ այնքան միայն աշխարհագրական կամ ժամանակային ընդգրկումը, որը եղել է մինչև այժմ, որքան նաև լեզվի հասարակական, տարածքային և իմաստային-գործառական դրսևորումները: Եվ ըստ այդմ՝ առանձնացնում ենք ստորակարգման (սուբորդինացիայի) տարբեր աստիճաններ ներկայացնող այնպիսի միավորներ, ինչպիսին են՝ խումբ, ենթախումբ, լեզու, բարբառախումբ, բարբառ, խոսվածքների խումբ և խոսվածք:

Ըստ այսմ՝ կելտական լեզուները հնդեվրոպական լեզուների մեջ ներկայանում են հետևյալ հերթակարգությամբ (աստիճաններով):

ա. Ավանդաբար առանձնացվող երկու խումբ՝ կղզիների և մայրցամաքային:

բ. Ենթախմբեր. առաջինում երկու՝ բրիտական և գոյդելյան, երկրորդը չունի ենթախումբ:

գ. Առանձին լեզուներ. ա) կղզիների խմբի բրիտական ենթախմբում՝ պիկտերեն, վալլիերեն, կոռներեն, բրետոներեն և կումբրերեն, բ) գոյդելյան ենթախմբում՝ շոտլանդերեն, իռլանդերեն և մեն(կ)երեն, գ) մայրցամաքային խմբում՝ գալլերեն, կելտիբերերեն և լեպոնտերեն:

դ. Բարբառախմբեր. վալլիերենի մեջ՝ հարավային և հյուսիսային, իռլանդերենի մեջ՝ մունստերյան, կոննախոտյան և ուլստերյան:

ե. Բարբառներ. վալլիերենի հարավային բարբառախմբում՝ գվինետ-գլամորգանի և դիվեոյան, հյուսիսային բարբառախմբում՝ գվինեոյան և պոուիսյան, իսկ իռլանդերենի բարբառախմբերում չկան բարբառներ:

զ. Խոսվածքների խմբեր. վաններենի բարբառին հարող ստորին վաններենի խոսվածքների խումբ և վերին վաններենի խոսվածքների խումբ:

է. Խոսվածքներ. բրիտական ենթախմբում՝ տրետերյան բարբառի պլուգրեականյան խոսվածք, գոյդելյան ենթախմբում՝ մենկերենի հարավային և հյու-

² Ավելի մանրամասն տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Լեզվի զարգացման արտաքին և ներքին գործոնների մասին // «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1978, 3, էջ 50-54: Նույնի՝ Լեզու, ոճ, խոսք // «Բանբեր Երևանի համալսարանի», 1981, 3, էջ 182-191 և այլն:

սիսային խոսվածքներ: Կելտական լեզուների առանձին խոսվածքներում չեն նշվում ենթախոսվածքներ:

Ըստ այսմ՝ կունենանք հետևյալ ստորակարգությունը (սուբորդինացիան).

ա) *լեզուների խումբ*. առանձին լեզուներ,

բ) *բարբառախումբ*. ա) առանձին բարբառներ, բ) ենթաբարբառներ,

գ) *խոսվածքների խումբ*. ա) առանձին խոսվածքներ, բ) ենթախոսվածքներ:

Ավելի մանրամասն ներկայացնենք այս բաշխումը՝ հատկապես նկատի ունենալով պատմահամեմատական լեզվաբանության ժամանակակից տվյալները:

3. Կղզիների կելտական լեզուների բրիտական ենթախմբում առանձնանում է հինգ կարգի լեզու, որոնք հաճախ նշվում են մեկից ավելի անուններով՝ պիկտերեն (կամ պիկտերի լեզու)¹, վալլիերեն [կամ կիմրերեն, ուել(ս)երեն], կոռներեն (կամ կոռնիերեն, կոռնուելերեն, կոռնվալլիերեն), բրետոներեն (կամ արմորիկյան բրետոներեն) և կումբրերեն, իսկ գոյդեյան ենթախմբում՝ երեք կարգի լեզու, որոնք ևս հայտնի են մեկից ավելի անուններով՝ շոտլանդերեն (կամ գաելերեն, գելերեն, լեոնաշոտլանդերեն, էրերեն), իռլանդերեն (կամ գելերեն) և մենկերեն (կամ մենկերեն, մենկա, Մեն կղզու լեզու):

ա) Պիկտերենն առանձին լեզու է բրիտական ենթախմբում, այժմ՝ մեռած, չի ունեցել բարբառային տարբերակներ, թեև ենթադրվում է, որ ժամանակին պիկտերը խոսելիս են եղել երկու լեզվով, մեկը՝ հնդեվրոպական (կելտական խմբի), իսկ մյուսը՝ ոչ հնդեվրոպական ցեղակցության: Պիկտերը բնակվելիս են եղել Շոտլանդիայի հյուսիսային մասերում, Հեբրիդյան, Օրկնեյական, թերևս նաև Շոտլանդական կղզիներում: Նրանց լեզուն դուրս է մղվել շոտլանդերենի, այլև սկանդինավյան բարբառների կողմից (մ. թ. 10-րդ դ.): Շոտլանդերեն և լատիներեն բնագրերում (տեքստերում) պահպանվել են առանձին գլոսաներ (բուն բնագրին կից՝ լուսանցքային մեկնաբատեր), սակավաթիվ անձնանուններ, տեղանուններ, կան նաև մի քանի տասնյակ համառոտ արձանագրություններ, որոնք այնքան էլ հստակ պատկերացում չեն տալիս լեզվի հնչյունական համակարգի և քերականական կառուցվածքի մասին² :

¹ Փակագծերում տալիս ենք կելտական լեզուների դասակարգման մեջ տարբեր ժամանակներում տվյալ լեզվին տրվող, այս կամ այն չափով ընդունելի համարված մյուս անվանումները՝ բնականաբար ելնելով տեսական քննարկման ինչ-ինչ նկատառումներից, նկատի ունենալով գիտական գրականության հետ կապված կոնկրետ հանգամանքներ:

² Տե՛ս *А. А. Королев, Пиктский язык // "Языки мира: Германские языки. Кельтские языки"* էջ 459 - 460:

բ) Վալլիերենը, ի տարբերություն պիկտերենի, այլև կոռներենի և կումբրերենի, ներկայանում է բարբառախմբերով, սրանք էլ՝ բարբառներով, իսկ բրետոներենը՝ բարբառներով, վերջիններս էլ՝ խոսվածքների խմբերով և խոսվածքներով: Գոյդելյան ենթախմբում շոտլանդերենը հայտնի է որոշակի թվով բարբառներով, իռլանդերենը՝ բարբառախմբերով, իսկ մենկերենը՝ խոսվածքներով:

Այդ լեզուն կենդանի է Ուելսում (խոսողների թիվը՝ մոտ. 500 հզր.) և Արգենտինայում (մոտ. 10 հզր.): Ուելսում այն ունի երկու՝ հարավային և հյուսիսային բարբառախումբ, ընդ որում՝ հարավային բարբառախմբի մեջ մտնում են գվենետ-գլամորգանի և դիվեդյան բարբառները, իսկ հյուսիսայինի մեջ՝ գվինետյան և պոուիսյան բարբառները, որոնք միմյանցից տարբերվում են հնչյունական, ձևաբանական, մասամբ նաև շարահյուսական հատկանիշներով: Վալլիերենը կրում է նաև կելտական լեզուներին բնորոշ հնագույն գծեր, ունի բառապաշարի որոշակի ազդեցություն այլ լեզվից, հնից եկող՝ լատիներենից, նոր ժամանակներում՝ անգլերենից և ֆրանսերենից: Լեզվի պատմության հին շրջանն ընդգրկում է մ. թ. 8-11-րդ դդ., որից գրավոր տվյալներ են հասել բացառապես բառացանկերի և հատուկ անունների տեսքով:

գ) Կոռներենը գործածվել է Կոռնուոլ իշխանությունում (Կոռնուոլ թերակղզի՝ Անգլիայի ծայր հարավ-արևմուտք), մեռած լեզու է (19-րդ դ. սկիզբ), անցել է պատմության երեք շրջան՝ հին (9-12-րդ դդ.), միջին (13-16-րդ դդ.) և նոր (17-18-րդ դդ.), 18-րդ դ. դադարել է գործածվելուց. բրետոներենի հետ միասին պատկանում է հարավարևմտյան բրիտական ենթախմբին: Հին կոռներենով պահպանվել են որոշ անձնանուններ, առանձին գլոսաներ՝ լատիներեն բնագրերում (տեքստերում), հայտնի է բավականին ծավալուն մի լատիներեն-կոռներեն գլոսարիա (մեկնաբանների բառարան), միջին կոռներենով մեզ են հասել մի շարք կրոնական պատումներ (միստերիաներ), իսկ նոր շրջանից՝ նույնպիսի դրամաներ, ինչպես Նոր կտակարանի թարգմանություն, այլև նամակներ, բանավոր զրույցներ և այլն, - այդ ամենը գրված է լատիներեն գրերով: Համեմատաբար լավ է ուսումնասիրված միջին շրջանի կոռներենը: Հին շրջանում այն թեքական բնույթի լեզու է եղել, որը գնալով իր տեղը զիջել է վերլուծական կառուցվածքի տիպին¹:

¹ Հմմտ. *А. А. Королев. Корнский язык // "Языки мира: Германские языки. Кельтские языки"*, էջ 452-455: *K. George, Cornish // "The Celtic languages"*, London-New-York, 1993:

դ) Բրետոներենը (կամ արմորիկյան բրետոներենը, Բրետոն թերակղզու հին՝ Արեմորիկա կամ Արմորիկա անվանումից) ունի երեք բարբառ՝ տրետերյան, լեոներենի և վաններենի, որոնցից առաջինի մի խոսվածքն է պլուգրեականյան խոսվածքը, իսկ երկրորդը ներառում է խոսվածքների երկու խումբ՝ ստորին վաններենի և վերին վաններենի, որոնք հավանաբար ունեն իրենց այս կամ այն կարգի խոսվածքը (կամ խոսվածքները): Առանձնանում է նաև կոռնուայերենը՝ որպես ուրույն լեզու:

Բրետոներենը, ինչպես վերը նշվեց, հիմնականում տարածված է Բրետոն թերակղզում, որտեղ մ. թ. 5-7-րդ դդ. տեղաշարժվել է բրիտական ցեղերի մի մասը, խոսողների թիվը՝ մոտ. 1 մլն.: Հնագույն գրավոր հուշարձանները (հիմնականում՝ գլոսաներ) 8-րդ դ. են, իսկ հետագայում, հատկապես 11-17-րդ դդ. դրանք մեծ թիվ են կազմում: Գրային համակարգը հիմնված է լատիներենի այբուբենի վրա: Լեզուն վերլուծական կառուցվածքի է, ձևաբանական մակարդակում առանձնացվում են բառավերջի հերթագայություն (անլաուտ), դիմավոր և անդեմ խոնարհումներ, բայական հարացույցները բավականին միօրինակ են, կա դերանվանական նախդիրների ուժեղ համակարգ, ենթական չի նախորդում բային՝ անորոշ ձևում: Բառային փոխառությունները հիմնականում լատիներենից են, իսկ ավելի ուշ՝ ֆրանսերենից¹:

Ի դեպ, նկատենք, որ, անկախ հնդեվրոպաբանության և առհասարակ լեզուների ծագման և պատմության հարցերում ունեցած յուրօրինակ տեսությունից, Ն. Մառը կելտական լեզուների (մասնավորապես բրետոներենի) և հայերենի առնչության վերաբերյալ հետևյալ միտքն է հայտնում. «Կելտական լեզուները, նրանց թվում նաև կենդանի բրետոներեն խոսքը, ինչպես հին գրական և ժամանակակից հայերեն լեզուները (փխ.՝ լեզուն – Վ. Հ.)՝ Կովկասում, ի հայտ են բերում հնչյունային խոսքի ստադիալ զարգացման անցման աստիճան Եվրոպայի նախասկզբնական ժողովրդի հաբեթական համակարգի և պրոմեթևսյան համակարգի լեզուների միջև»²:

¹ Հմնտ. *K.H. Jackson, Historical phonology of Breton*, Dublin, 1967: *R. Hemon. Historical morphology and syntax of Breton*, Dublin, 1975: *L. Fleuriot. Le vieux Breton. Elements d'une grammaire*, Paris, 1964:

² *Н. Я. Марр, Бретонская нацменовская речь в увязке языков Афреврозии (Из трехмесячной работы во Франции) // Н. Я. Марр, Избранные работы, т. IV, Л., ГСЭИ, 1937, с. 198 [= Նույնը՝ «Известия Государственной академии истории материальной культуры», т. 6, вып. 1, Л., 1930].*

ե) Կումբրերենը ևս մեռած լեզու է, որ գոյություն է ունեցել Բրիտանական կղզիներում: Նկատենք, որ այս լեզվի վերաբերյալ համեմատական, առավել ևս տիպաբանական լեզվաբանությանը շատ քիչ տվյալներ են հայտնի:

4. Կղզիների կելտական լեզուների գոյության ենթախմբի մեջ մտնում են, ինչպես վերը նշվեց, շոտլանդերենը, իռլանդերենը և մենկերենը: Առաջինն ունի երկու՝ արևմտյան և արևելյան բարբառներ, երկրորդը երեք՝ մունստերյան, կոննախտյան և ուլստերյան բարբառախմբեր, իսկ երրորդը երկու՝ հարավային և հյուսիսային խոսվածքներ:

ա) Շոտլանդերենը (այլ անվանումով՝ գելերեն, գելերեն, լեռնաշոտլանդերեն, էրերեն) տարածված է եղել Շոտլանդիայի հյուսիս-արևմուտքում, ինչպես նաև Հիբրիդյան կղզիներում, կանադական գավառ հանդիսացող Նոր Շոտլանդիայում, խոսողների թիվը՝ մոտ 100 հզր., ըստ ծագման կամ ըստ բնույթի իռլանդերենի մի բարբառն է. իռլանդացի առաջին բնակիչներն այստեղ՝ Շոտլանդիա են եկել մ. թ. 5-րդ դ., թեև լեզուն իռլանդերենից առանձնանում է ավելի ուշ՝ 11-13-րդ դդ.: Ըստ հնչյունական հատկանիշների՝ այն բաժանվում է բարբառային երեք խոշոր շրջանների՝ արևելյան, հարավարևմտյան և արևմտյան: Գրությունը հիմնված է լատիներենի այբուբենի վրա: Այս լեզվին բնորոշ են հին ձայնեղների իլացումը ($b > p$, $d > t$ և այլն), խուլերի վերածումը ասպիրատների ($t > s$ և այլն), նախաշունչ շփականների ի հայտ գալը, վանկի սկզբի փոփոխության (մուտացիայի) ենթարկված բաղաձայնների պարզեցումը և այլն: Ձևաբանական մակարդակում նկատելի է հոլովների կորուստը՝ բացի ուղղական և սեռական հոլովներից, ինչպես նաև համադրական բնույթի խոնարհման կրճատումը, վերլուծական «տևական» տիպի ձևերի ի հայտ գալը ձևաբանական համակարգում և այլն:

բ) Իռլանդերենը (ըստ լեզուն կրողների՝ գելերեն. գրությունը՝ է-ով) տարածված է Իռլանդիայում՝ որպես պաշտոնական լեզու, անգլերենին զուգահեռ, և Հյուսիսային Իռլանդիայում, մասամբ՝ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում: Խոսողների թիվը՝ մոտ 600 հզր., թեև իռլանդացիների ճնշող մեծամասնությունը (ավելի քան 7,5 մլն.) անգլախոս է: Առանձնացվում են բարբառախմբեր, որոնք ընդգրկում են ենթաբարբառներ և խոսվածքներ, և որոնց միջև առկա են որոշակի տարբերություններ՝ ընդհուպ անհասկանալիության աստիճանի:

Ներկայումս ընդունված է իռլանդերենի պատմությունը (մանրամասն) բաժանել մի քանի շրջանի. ա) հնագույն կամ օգամյան (4 - 6-րդ դ. սկիզբ), բ) հին կամ արխաիկ (6-րդ դ. կես - 8-րդ դ. սկիզբ), գ) դասական (8-րդ դ. կեսեր - 10-րդ

դ. սկիզբ), դ) միջին (10 -12-րդ դ. վերջ), ե) նոր (13-րդ դ. սկիզբ - 17-րդ դ.), գ) ժամանակակից (18-րդ դ. ի վեր)¹:

Հնագույն իռլանդերենի հնչյունական համակարգի համար հատկանշական են հե. շրթնաքմային k^h-ի առկայությունը, բաղաձայնների հակադրություն ըստ փափկության, ինչպես նաև շրթնայնացվածության, ընդ որում՝ վերջինս ավելի ուշ գրեթե իսպառ վերանում է, շեշտը սկզբնավանկային է: Գիրը մուտք է գործել մ. թ. 1-ին դ., օգամյան արձանագրությունները թվագրվում են 4-7-րդ դդ., իսկ լատինականը՝ 5- 6-րդ դ. սկզբերին, սակայն ձեռագիր գրական հուշարձանները երևան են գալիս ավելի ուշ՝ 11-12-րդ դդ.:

Այժմ իռլանդերենով կա հարուստ գրականություն, որ կարևոր աղբյուր է լեզվաբանական գրեթե ամեն կարգի ուսումնասիրության համար:

Այսպես, պահպանվել են հնդեվրոպական լեզուներին բնորոշ թեքականության գրեթե բոլոր հատկությունները: Անուններն ունեն չորս հոլովում, գոյականը՝ նաև երկակի թիվ (casus dualis): Թեև տեղի է ունեցել վերջնավանկի ձայնավորի անկում (ապոկոպ. անգլ. apocope), սակայն առանձին հոլովների ինչ-ինչ վերջավորություններ հաճախ որակապես հակադրվել են հին հիմքի վերջին բաղաձայնին [ø (զրո) - քմային - շրթնային հակադրություն]: Բայական համակարգը ներկայացնում է անհամեմատ ոչ-միակերպ վիճակ՝ կապված հատկապես սահմանական, ստորադասական (կոնյունկտիվ) եղանակների վերջավորությունների հակադրության հետ, նախադասության անդամներն ունենին ստորոցյալ - ենթակա - ուղիղ խնդիր (= VSO) շարադասություն, բառապաշարի եկամուտ բաղադրիչը (փոխառությունները) սկզբնապես հիմնականում եղել է լատիներենից, այնուհետև ֆրանսերենից (անգլանորմաներենից), իսկ մեծ մասամբ՝ անգլերենից²:

գ) Մենկերենը (կամ մեներենը, Մեն կղզու լեզուն) իր խոսվածքներով հանդերձ մեռած է. դեռևս նախանցյալ դարի կեսերին կղզու բնակիչներից միայն տարեցներն են տեղյակ եղել այդ լեզվից՝ իբրև մնացուկային (ռեիկտային) երևույթ: Տարբերում են մենկերենի պատմության երկու փուլ՝ հին (17-18-րդ դդ.) և ժամանակակից (19-20-րդ դդ.)³:

¹ Sté u A. A. Королев, Ирландский язык // «Большой энциклопедический словарь: Языкознание», М., Науч. изд. «Большая Российская энциклопедия», 1998, էջ 201:

² Sté u Նույն տեղում:

³ Հմնտ. В. Н. Ярцева. նշվ. աշխ., էջ 5:

5. Մայրցամաքային կելտական լեզուների խումբն ընդգրկում է համեմատաբար քիչ թվով լեզուներ: Նախ՝ այստեղ չեն զանազանվում ենթախմբեր, այլ նշվում են առանձին լեզուներ՝ գալլերեն (մայրցամաքային կելտական լեզու կամ բարբառ՝ մեռած), կելտիբերերեն (իսպանակելտերեն, կելտիբերերի լեզու, Պիրենեյան թերակղզու կելտական ցեղերի լեզու) և լեպոնտերեն: Այնուհետև՝ հիշյալ լեզուներից միայն գալլերենն է, որ ներառում է երկու բարբառ՝ բելգական և նարբոնյան, այլև գաղատների լեզուն (մեռած):

ա) Գալլերենն իրականում ներկայացնում է կելտական ցեղերի մի որոշակի բարբառային միասնություն, որը մ. թ. ա. 6-5-րդ դդ. զբաղեցնում էր Արևմտյան և Կենտրոնական Եվրոպան (բացառյալ Պիրենեյան թերակղզին և Հյուսիսային Իտալիան), այլև Փոքր Ասիան (ի դեմս գաղատական ցեղի): Այն այսօր մեռած լեզու է, պահպանվել են հատվածական արձանագրություններ մ. թ. ա. 3-րդ - մ. թ. 3-4-րդ դդ. (Էտրուսկերեն, հունարեն և լատիներեն գրերով), որոնք սուղ տվյալներ են, որքանով որ հնարավորություն չունեն ցույց տալու այդ լեզվի մեջ ենթադրվող բարբառային տարբերակվածությունը: Պարունակում է որոշակի հին (արխաիկ) գծեր, որոնք բացակայում են, օրինակ, կղզիների կելտական լեզուներում՝ ձայնավորների ձուլման (սինկոպի. անգլ.՝ syncope «հնչակորուստ») և անկման (ապոկոպի. անգլ.՝ apocope «հնչաաղում») բացակայություն, հին երկար և կարճ ձայնավորների հստակ հակադրում: Նկատվում են նաև ձևաբանական և շարահյուսական կառուցվածքի որոշակի տարբերություններ և այլն¹:

Այս ենթախմբի մեջ մտնում են գաղատերենը (գաղատների լեզուն), այլև բելգական և նարբոնյան բարբառները. գաղատերենն այսօր մեռած լեզու է: Հայտնի է, որ կելտ-գաղատների բնակության լայն տարածքներին հարող շրջաններում թե՛ նախկինում, թե՛ ավելի ուշ գոյություն են ունեցել զգալի թվով անվանումներ, որոնք առնչվում են գաղատական բոլոր ցեղերի ընդհանուր ինքնանվանմանը, օրինակ՝ *գել* և *Գելիա* անգլիացած ձևերը, որոնցով իրենց անվանում էին Իռլանդիայի կելտերը, *Գալեցիա* (այժմ՝ *Գալիսիա*) նահանգը հյուսիսարևմտյան Իսպանիայում, *Գաղատիան* Փոքր Ասիայում, *Գալատի* (հմմտ. ռուս.՝ *Գալաց*) քաղաքը Դանուբի հարավում, *Գալիցիա* (*Հին Գալիցիան*, *Գալիցիա* երկիր)՝ կենտրոն ունենալով հյուսիսարևելյան Մերձկարպատիայի *Գալիչ* քաղաքը²:

¹ Ste u A. A. Королев, Галльский язык // “Большой энциклопедический словарь: Языкознание”, էջ 92:

² U. Մելե, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978, էջ 274:

բ) Կելտիբերերենը այժմ մեռած լեզու է, որով խոսելիս են եղել Պիրենեյան թերակղզու կենտրոնական մասը զբաղեցրած կելտական ցեղերը՝ այստեղ թափանցած մ. թ. ա. 7-6-րդ դդ.: Գրավոր աղբյուրները բավականին սուղ են, եղածներն էլ՝ հատվածական, փոքր ծավալի, և դրանց որոշ մասը գրված է լատինական, մեծ մասը՝ իբերական գրերով, դժվարությամբ հարմարեցված այս լեզվին, որ և չի արտացոլում, օրինակ, հնչյունների ձայնեղ / խուլ հակադրությունը, ընդ որում՝ իբերականով գրվածներն ավելի հին են, քան լատինականով գրվածները, վերջիններս էլ հիմնականում վիմագիր են և այլն: Ունի բավականին հնագույն (արխաիկ) գծեր թե՛ հնչյունական և թե՛ ձևաբանական համակարգում, որն էլ ավելի է մեծացնում այդ լեզվի նշանակությունը ինչպես կելտական, այնպես էլ առհասարակ հնդեվրոպական լեզուների համեմատական ուսումնասիրության համար: Նախադասության անդամների շարադասությունը բավականին ազատ է, որն այլ բան չէ, քան հնդեվրոպական հնագույն հատկության պահպանման արտահայտություն: Բառապաշարում կան զգալի թվով հնաբանություններ (արխաիկ շերտ), որոնք այս կամ այն չափով պահպանված են նաև ցեղակից մյուս լեզուների մեջ, որ թերևս գալիս են հնդեվրոպական ընդհանրության շրջանից:

գ) Լեպոնտերենը ավանդված է մ. թ. ա. 4-րդ դ. Ցիսալպյան Գալլիայի (Իտալիայի հյուսիսի) Լուզանոյի շրջանում, որ մ. թ. սկզբներին դուրս է մղվել լատիներենի կողմից: Այս լեզուն պատկանում էր մայրցամաքային կելտական լեզուների շարքին, կամ էլ մեկ այլ դասակարգմամբ՝ կելտական լեզուների P- ճյուղին: Հայտնի է չորս տասնյակի հասնող արձանագրություններով (մահարձանների, սկիհների, դրամների վրա), որոնք հիմնականում հատուկ անուններ են պարունակում:

Քանի որ այդ արձանագրությունները գրված են էտրուսկյան այբուբենով, ուստի վերջինիս նման այս լեզուն չունի հատուկ նշաններ ձայնավորների երկարություն/ կարճություն (a / \bar{a} , e / \bar{e} , o / \bar{o} և այլն) տարբերակման համար, ունի a , o , u , e , i ձայնավորներ, պայթական բաղաձայնները երկշարք են՝ ձայնեղ / խուլ հակադրությամբ (b/p , d/t , g/k), ունի m , n , l , r , s , $s (= t)$ շփականներ: Քերականական կառուցվածքը թեքական (ֆլեկտիվ) տիպի է, հավանաբար չի ունեցել բարբառային տարբերակներ:

Ընդունված է նկատել, որ կելտական լեզուները մերձավոր ցեղակցության տեսակետից համեմատաբար մոտ են իտալյան լեզուներին, որի հիման վրա դրանք երբեմն միացվում են մեկ խմբի մեջ: Ա. Մեյեն կարծում է, որ կելտական

և իտալյան լեզուները միասին են առանձնացել ցեղակից մյուս լեզուներից՝ ներկայացնելով հնդեվրոպական միևնույն բարբառը: Այդպես նշվում է, որ, տվյալ դեպքում, օրինակ, «հատկանշական է նախահավելվածի լրիվ բացակայությունը իտալական, կելտական, գերմանական, բալթիական ու սլավոնական ամենահին բնագրերում»¹:

Բայց, ահա, թե ինչ է գրում Օ. Շիրոկովն այս առումով. «Իտալյան լեզուներին մոտ է եղել մ. թ. ա. V-I դդ. Վենետյան արձանագրությունների լեզուն: XIX դ. վերջին - XX դ. ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հիմք կա ենթադրելու իտալյան ճյուղի և կելտական ճյուղի վենետյան լեզվի հին ծագումնային սերտ առնչությունների (կոնտակտների) մասին: Իտալա-կելտական ծագումնային ընդհանրության մասին դրույթը դեռևս չի ենթադրում իտալա-կելտական միասնական նախալեզվի գոյություն, ճիշտ այնպես, ինչպես որ ժամանակակից համեմատաբանության մեջ հիմք չկա ենթադրելու բալթիկ-սլավոնական առանձին նախալեզվի գոյության մասին (չնայած բալթյան և սլավոնական ճյուղերի միջև հին ծագումնային կապերի անառարկելի առկայությանը) կամ նույնիսկ ընդհանուր արիական (հատկապես հնդիրանական) նախալեզվի մասին: Իտալա-կելտական, բալթիկ-սլավոնական, հնդ-իրանական ծագումնային զուգադիպումները լոկ ցույց են տալիս հնագույն սերտ շփումների գոյություն ընդհանուր հնդեվրոպական նախալեզվի համապատասխան բարբառների և բարբառային խմբերի միջև, նրանց զուգաբանությունների խաչաձևումը հին հնդեվրոպական բարբառային ամբողջականության (կոնտինուումի) մեջ»² :

Վ. Յարցևան ամենից առաջ առանձնացնում է գալլերենը, իռլանդերենը, մեներենը, շոտլանդերենը (երերենը), վալլիերենը (ուելսերենը կամ կիմրերենը), կոռներենը (կոռնուելերենը) և բրետոներենը³: Այնուհետև նշվում է, որ կելտագիտությունն ուսումնասիրողների մի մասն այն կարծիքին է եղել, որ «կելտական լեզուներում չկա որևէ այնպիսի բան, որ հնարավոր չլինի դուրս բերել հնդեվրոպական հիմք-լեզվի նորմայից», իսկ մյուս մասը կարծում է, որ «կելտական լեզուներում խառն են հնդեվրոպական և ոչ-հնդեվրոպական գծերը, և որ կելտական լեզուների շատ կողմեր կարելի է բացատրել միայն այլ լեզվի ենթաշերտի ազդեցությամբ», ընդ որում՝ կա՛մ ֆիննական, կա՛մ սեմաքամյան, կա՛մ էլ «միջ-

¹ *A. Meillet, Les dialectes indo-européens, Paris, 1908:*

² *Օ. Շիրոկով, Современные проблемы сравнительно-исторического языковедения, М., Изд. Московского ун.-та, 1981, էջ 9:*

³ *В. Н. Ярецва, նշվ. աշխ., էջ 5:*

երկրածովյան» լեզուներից եկող ազդեցություն»¹ : Նկատենք, որ Յարցևայի նշած տեսակետներից երկրորդի հետ մեթոդաբանական նմանություն ունի այն, որ հայերենի մեջ ևս ենթադրվում են նման «զծեր» (Գ. Ղափանցյանի, հետագայում նաև Գ. Ջահուկյանի աշխատություններում, թեև իրարից տարբեր):

6. Կելտական լեզուներն առանձնանում են նաև լեզվական՝ հնչյունական, բառապաշարային, ձևակազմական հատկանիշներով:

Այսպես, հնդեվրոպայան հետնալեզվային պայթական *k^h հնչույթը լեզուների մի մասում (բրիտերեն, լեպոնտիերեն) արտացոլվում է որպես, այսպես կոչված, P-լեզու, իսկ մյուս մասում (գոյդելերեն, կելտիբերերեն) որպես, այսպես կոչված, Q-լեզու. այս տեսակետից, օրինակ, գալլերենը հանդես է բերում միջին դիրք, այսինքն՝ համատեղում է թե՛ մեկի և թե՛ մյուսի հատկությունը:

Բառապաշարի, մանավանդ արմատի կազմության շատ իրողություններ հնարավոր է, տվյալ դեպքում, համեմատել հայերենի համանման միավորների հետ՝ հիմնված ոչ միայն հնչյունական, այլև իմաստային որոշակի ընդհանրությունների վրա, որոնք հավասարապես ժառանգորդական բնույթի են՝ անկախ հետագայում կրած փոփոխություններից:

Ինչպես նկատում ենք, կելտական լեզուներն ավելի տարբերակային են ոչ միայն իբրև առանձին, այլև որպես գրական և խոսակցական միավորներ՝ բարբառ, ենթաբարբառ, խոսվածք և ենթախոսվածք, որոնք հաճախ կոչվում են լեզուներ անվանումներով, և այդ ամենը, տվյալ դեպքում, ի համեմատություն հայերենի, որ չունի նման չափերի հասնող տարբերակում: Այլ կերպ ասած՝ ի տարբերություն հայերենի, որ հնդեվրոպական լեզուների մեջ հանդես է գալիս առանձին («միակի. մենալեզու») ճյուղով և համեմատության մեջ է առնվում հին գրական լեզվի (5-րդ դ.) նորմայով, կելտական ճյուղը ներկայանում է ո՛չ միայն առանձին լեզուներով (բարբառներով և այլն), որպիսով համեմատության բազմաձև գուգակցումը, բնականաբար, թեքվում է դեպի վերջինը՝ կելտականը (հին գրական հայերենի բարբառների տվյալները, որոնք առկա են տարբեր բնույթի գրավոր աղբյուրներում, առաջժմ մնում են ոչ ամբողջական ձևով ուսումնասիրված)²:

¹ *В. Н. Ярцева*, նշվ. աշխ., էջ 10: Հմնտ. հայերենի վերաբերյալ նույնպիսի ըմբռնման (կոնցեպցիայի) առկայությունը հայ լեզվաբանության մեջ՝ արտահայտված նույնիսկ հեղինակավոր ուսումնասիրողների աշխատություններում:

² Տե՛ս Գ. Բ. *Ջահուկյան*, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 245-277:

Շնորհիվ՝ համեմատության կելտական եզրի մեջ գերակայում է իռլանդերենը, իսկ մյուսները մասնակի տվյալներով են հանդես գալիս: Իռլանդականը, իր հերթին, ներկայանում է ոչ միայն հին կամ միջին, այլև նոր վիճակով, որ հայերենի հետ համեմատելիս, բնականաբար, ենթադրում է տարբերակված մոտեցում:

Լեզուներում, առհասարակ, զուգաբանական վերլուծությունը կատարվում է ոչ թե միակողմանի, այլ հավասարամեծ (isometric) բաշխման մեջ, անպայման հարաբերակցության նույն մակարդակի վրա: Այդ մոտեցումը կիրառելի է նաև հայ-կելտական զուգաբանությունների քննության դեպքում. կելտական լեզուների զուգաբանական միավորների քանակային մեծությունը ստեղծում է համեմատելի միավորների բազմազանություն, սակայն ոչ առավելություն՝ հավասարության մեջ. այլ կերպ ասած՝ հայերենի մեկ կամ առավելագույնը երեք (հնչյունական, բառային) միավորի դիմաց սովորաբար հանդիպում է կելտական լեզուների մեծ թվով՝ մինչև վեց միավոր, որ բնավ չի նշանակում, թե խախտվում է զուգադիպության նիշը:

Գլուխ երրորդ
ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԿԵԼՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ
ՕԱԳՈՒՄՆԱՅԻՆ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

1. Հայերենի և ցեղակից մյուս լեզուների համեմատական ուսումնասիրության պատմությունը կարելի է բաժանել երեք շրջանի՝ ա) իրանական (մարերենի բարբառ. 1836-1875 թթ.), բ) առանձին խմբի (ճյուղի) (1875 թ. առ այսօր) և գ) ոչ պակաս կարևոր կամ առանձնապես կարևոր (1970-ական թթ. ի վեր) լեզու համարվելու կամ լինելու նկատառումով: Առաջին շրջանում հայերենի տվյալները համեմատաբար քիչ են ներառվում լեզուների ծագումնային և ցեղակցային հարցերի քննության մեջ, քան երկրորդ շրջանում, իսկ երրորդում դրանց տրվում է առավել, նույնիսկ առանցքային նշանակություն¹:

Այս իրողությունը մասամբ նկատելի է նաև հայ-կելտական առնչությունների դեպքում: Հնդեվրոպական լեզուների ստուգաբանական բառարաններում հայերենի և կելտական լեզուների միջև հնարավոր համեմատություններն այստեղ բերվում են մինչև նախանցյալ դարի 30-ական թթ. եղած տվյալներով, որոնք հետագայում ամբողջանում են Յու. Պոկորնու և ավելի ուշ երևան եկած բառարաններում²:

Այնուհետև, տարբեր ընդգրկումներով համեմատական տվյալներ կան առանձին աշխատություններում, որոնցում, ի թիվս ցեղակից այլ լեզուների, անցկացվում է նաև համեմատություն հայերենի և կելտական լեզուների միջև՝ հիմնականում արմատաբանության, մասամբ հնչյունաբանության մակարդակում: Նման համեմատություն նշված շրջաններից առաջինում գրեթե չկա, կամ

¹ Э. А. Макаев, Общая теория сравнительного языкознания, էջ 155-156: Т. В. Гамкрелидзе. Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, էջ 5-17 և հջ.:

² St' u J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, I Band, Bern/München, 1959: C. Watkins, The American Dictionary of Indo-European Roots, Boston, 1985: J. Puhvel, Hittite Etymological Dictionary (Trends in linguistics. Documentation I. Editor W. Werner), vol. 1 (Words beginning with A), vol. 2 (Words beginning with E and I), Mouton Publishers, Berlin-New York - Amsterdam, 1984, vol. 3, 1991: J. Tischler, Hethitisches etymologisches Glossar, mit Beiträgen von G. Neumann und E. Neu, Lieferungen 5 und 6 (L-M), Teil II-III, Lieferungen 7 und 8 (Nund T, D/I), teil III, Lieferung 9 (T, G/2). Innsbruck, 1990-1993; B. C. Расторгуева, Д. И. Эдельман, Этимологический словарь иранских языков, М., Том 1-2, 2000-2003:

ունի աննշան դրսևորում, իսկ հետագայում այն ավելի մեծ չափերի է հասնում: Այսպես, Ն. Պետերմանը ժամանակին հայերենի (բաղաձայն, ձայնավոր և երկհնչյուն նշանակող) գրերի հնչյունական-արտասանական արժեքը քննելիս բառի կամ արմատի մակարդակում համեմատություններ է անցկացնում մի կողմից՝ հնդեվրոպական (սանսկրիտ, հունարեն, լատիներեն, պարսկերեն, զենդերեն), մյուս կողմից՝ այլ ցեղակցության (ասորերեն, արաբերեն, արամեերեն և այլն) լեզուների տվյալների միջև¹: Ավելին, գուգահեռ նշվում է նաև Է. Լիդենի, Ֆ. Բոպի և ուրիշների տեսակետն այս կամ այն հարցի վերաբերյալ, նաև ըստ այդմ համեմատաբար ճիշտ լուծումներ է գտնում գրավոր հայերենի հնչյունների բնութագրման համար²:

Ամենից առաջ նկատենք, որ հայերենի և կելտական լեզուների հնչյունական և բառային (բացառյալ՝ շարահյուսական) գուգաբանությունների հարցը մինչև այժմ չի եղել առանձին ուսումնասիրման առարկա: Կան հարցին միայն անուղղակիորեն վերաբերող աշխատանքներ, ընդամին՝ դրանք նույնպես երկու կարգի են՝ հայերենի կառուցվածքի, բաղադրիչներից մեկնումեկի՝ բառային կազմի, հնչյունաբանության համեմատական-գուգաբանական քննությանը, այլև լեզվի ընդհանուր պատմությանը նվիրված աշխատություններ:

Հնդեվրոպական մյուս լեզուների առնչությամբ հայերենի գրաված տեղի առումով գրվել են հատուկ ուսումնասիրություններ, որոնցում ամենից առաջ բառային գուգաբանությունների նյութի հիման վրա քննվել են մյուս լեզուների հետ հայերենի հնարավոր մերձավորության աստիճանին վերաբերող հարցեր:

Համեմատական լեզվաբանության մեջ ավանդաբար նշվում են հնդիրանական, բալթիկ-սլավոնական, իտալակելտական առավել մերձավոր առնչությամբ լեզուներ. Ա. Մեյեն ժամանակին հայերենի համար նշում է հայ-հունա-իրանաբալթիկ-սլավոնական մերձավորություն՝ ոչ այնքան բառային, որքան հնչյունական գուգահեռությունների հիման վրա. հմմտ. «...Ճիշտ է եզրակացնել, որ բառային կազմը հիմքեր չի տալիս, որպեսզի հայերենն ավելի շուտ համեմատենք հնդիրանականի և հունարենի, քան լետալավոնականի (իմա՝ բալթիկ-սլավոնականի – Վ. Հ.) հետ», այլն՝ «Հայերենի հին հնչյունական երևույթներն իրենց համաբանական ձևերն ունեն հատկապես հնդիրանականում (և մասնավանդ իրանականում), լետալավոնականում ու հունականում, սակայն ոչինչ մեզ

¹ H. Petermann, Grammatica linguae armeniacaе, Berolini, 1837, էջ 17-43:

² Նույն տեղում, էջ 20, 36, 37 հջ.:

թույլ չի տալիս հայերենն առանձնապես սերտ կապելու այս երեք բարբառներից մեկի հետ»¹:

Այդ առնչություններին վերաբերող նյութն ընդգրկող աշխատությունները ևս պայմանականորեն կարելի է բաժանել երկուսի՝ 1)մինչև 1970-ական թթ. կեսերը հայտնի աշխատություններ (Ա. Մէյե, Ն. Պեդերսեն, Ջ. Բոնֆանտե, Ն. Աճառյան, Գ. Ջոլտա, Վ. Պորցիգ, Է. Մակաս և ուրիշներ) և 2) 1970-ական թթ. կեսերից հետո երևան եկած աշխատանքներ (Է. Թումանյան, Մ. Աղաբեկյան, Մ. Հաննեյան, Ն. Սիմոնյան, Ն. Սուքիասյան, Լ. Սարաջևա, Ե. Խաչատուրովա, Ծ. Հարությունյան):

Այս երկրորդում, թերևս, առավել ուշադրության առարկա են Գ. Ջահուկյանի, այնուհետև Թ. Գամկրելիձեի և Վյաչ. Իվանովի աշխատանքները, որոնցում ոչ միայն եղած, այլև լրացուցիչ տվյալներ են գրանցված հայ-կելտական առնչությունների վերաբերյալ²:

2. Ըստ այսմ՝ հարկավոր է նախ անդրադառնալ Ա. Մէյեի ուսումնասիրությանը՝ ցեղակից լեզուների մեջ հայերենի մերձավորության վերաբերյալ, որին եթե մյուսներն անդրադառնում են ոչ ուղղակիորեն, ապա Աճառյանի աշխատանքներում այն ունի հենքային նշանակություն, և որին էլ հետևում են հետագա ուսումնասիրողները՝ այս կամ այն չափով հանդես բերվող մասնակի վերապահությամբ³:

Հայերենի բարբառային դիրքի հետ կապված՝ Ա. Մէյեն անցկացնում է մի շարք զուգահեռներ, որոնցից մի քանիսը անմիջական ձևով վերաբերում են նաև հայ-կելտականին:

¹ Ա. Մէյե, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 12-17:

² Հայ-հունական զուգաբանությունների հետ կապված հայերենի և ցեղակից մյուս լեզուների բառային զուգաբանությունների քննարկմանն անդրադարձած քիչ թե շատ հայտնի ուսումնասիրությունների մասին համեմատաբար մանրամասն տե՛ս Ա. Մ. Արտյունյան, *Армяно-греческие лексические изоглоссы* // Г. Б. Джаукян, Л. А. Сараджева, А. П. Арутюнян, *Очерки по сравнительной лексикологии армянского языка*, Ереван, 1983, էջ 221-240:

³ A. Meillet, *Position dialectale de l'arménien* // "Mémoires de la Société de linguistique de Paris", vol. IX, 1896, p. 149-155 (= Ա. Մէյե, Հայերենի բարբառային դիրքը // *Նույնի՝ Հայագիտական ուսումնասիրություններ*, Ե., 1971, էջ 11-17): A. Meillet, *Les dialectes indo-européens*, P., 1908: A. Meillet, *Введение в сравнительное изучение индоевропейских языков*, Էջ 109-149: Ն. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Ե., 1971-1979: *Նույնի՝ Հայոց լեզվի պատմություն*, I մաս, Ե., 1940: *Նույնի՝ Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. VI, Ե., 1971, էջ 463-590:

ա) «Օ ձայնավորը, որ ձգտում է ավելի բաց դառնալ ու շփոթվել a-ի հետ հնդիրանականում, լետաալավոնականում ու գերմանականում և շատ որոշակի կերպով պահպանվում է հունարենում և իտալակելտականում, հայերենում իր *o* երանգը պահում է մի քանի որոշակի դեպքերում, իսկ այլ դեպքերում դառնում է *u*, մինչդեռ *ō*-ն միշտ էլ *ā*-ից տարբեր է մնում»¹:

բ) Հին հայերենում ևս պետք է ընդունել բայի կերպային հակադրություն, որ բացառում է Մեյեն՝ այն ընդունելով բայթիկ-սլավոնականում, գերմանականացում և իտալակելտականում՝ հետևյալ մեկնաբանումով. «Կատարյալ և անկատար կերպի լետաալավոնական, գերմանական և իտալակելտական հակադրությունը կարծեք երևան չի գալիս հայերենում, որտեղ բայական նախածանցները հազվադեպ են, գրեթե բացառիկ: Բայց դրա փոխարեն այստեղ գտնում ենք ներկայի և անցյալ կատարյալի (իմա՝ ժամանակային – Վ. Հ.) հակադրություն, որ շատ է հիշեցնում հնդիրանականի և հունարենի հակադրությունը (հմմտ. *մի՛ բերեր* «*μή φέρε*» ներկա հրամայականը և *բեր* «*ἄνεγκε*» կատարյալ հրամայականը)»²:

գ) «Առաջին վանկում հնդել. *ǝ*-ն դառնում է *a* (օր.՝ *հայր*), ինչպես հունարենում, իտալակելտականում և գերմանականում, մինչդեռ այն *i* է դառնում հնդիրանականում և լետաալավոնականում. սակայն երկրորդ վանկում նույն ձայնավորը տղվում է, ինչպես իրանականում, լետաալավոնականում և գերմանականում (հայ. *դուստր*, գաթ. *dugəḏā*, հ.սլավ. *dŭšti*, լիտ. *duktē*, գոթ. *dauhtar*), մինչդեռ այն պահպանվում է սանսկրիտում, հունարենում և իտալակելտականում (սանսկր. *duhitā*, հուն. *θυγάτηρ*)»³:

դ) «Վանկի սկզբում *s*-ն դառնում է *h* հայերենում, ինչպես նաև իրանականում և հունարենում [կելտականում հնչյունական նույն անցումը բուն կելտական երևույթների մի ամբողջության մաս է կազմում, և այստեղ այն չպետք է հիշատակել, ինչպես արել է Հիրտը, *Indg. Forsch.*, IV, 44 (=“Indogermanischen Forschungen, հմ. IV, էջ 44)]»⁴: Այստեղ անհասկանալի է մնում կելտականի գնահատությունը («ամբողջության մաս կազմողը չպետք է հիշատակել»), որպիսով մերժվում է Հ. Հիրտի դիտարկումը:

¹ *Ա. Մեյե*, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 12:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 13:

⁴ Նույն տեղում:

ե) «Բարբառային ցեղակցությունների տեսակետից օգտակար է նշել, որ հայերենը նույն բառն ունի, ինչ հունարենը (իմա՝ հայ. այր «տղամարդ» - հուն. άνήρ - Վ. Հ.), և այն էլ՝ նույն ձևով (հնչյունային ā- նախահավելվածով), մինչդեռ լիտվերենը, գերմանականն ու կելտականը նույն գաղափարն արտահայտում են այլ բառով՝ լիտ. výras, գոթ. wairs, հ.իռլ. fer, իսկ սանսկրիտը երկու բառերն էլ ունի՝ nár- և vīrá-, ինչպես նաև իտալական լեզուները»¹:

զ) Հայ-կելտական առնչություն կարելի է տեսնել հե. *-wy- «հնչախմբի» w-ի՝ լեզուներում իբրև երկբարբառի բաղադրիչ կամ իբրև բաղաձայն հանդես գալու հետ կապված, այսինքն՝ «լեզուների մի մասում w-ն դառնում է երկբարբառի երկրորդ եզր (իմա՝ բաղադրիչ- Վ. Հ.)», «մյուս բարբառներում վանկավերջի հպական w-ն պահպանվել է որպես w, և այդպիսով հաջորդող պայթույթը կարողացել է պահպանվել. դա է տեղի ունեցել հնդկերենում, հայերենում, հունարենում և իտալակելտականում»²:

է) «Բառասկզբնային s-ն առնմանվել է բառամիջի k´-ին, որը հայ. սկեսուր-ի մեջ դարձել է սուլական. հմմտ. սանսկր. śvaśrī և լիտ. šešuras: Նույն առնմանումը կարծեք տեղի է ունեցել սկսանիսի-ի (*սկիսանիսի), սկիզբն-ի մեջ, որ պետք է համեմատել հուն. ἴκω, ἰκάνω, ἰκνέομαι -ի (առանց F-ի), հ.իռլ. rosíacht-ի «նա ձեռք բերեց» և սանսկր. vicáti-ի հետ, որոնք ենթադրում են հայ. *սկիս-ով վկայված *sweik¹- արմատը: Ջենդ. hvasura-ն ցույց է տալիս, որ *sv-ի անցումը hv-ին կատարվել է նախքան այս օրենքի գործելը, որը, հետևաբար, ներկայացված չէ իրանականում»³: Այստեղ ուշադրություն է գրավում հայերենի սկիզբն և հին իռլանդերեն rosíacht ձևերի զուգադրումը:

ը) «Գերմանական և հայկական ձայնդարձի (իմա՝ տեղաշարժի - Վ. Հ.) զուգահեռությունը պատահական է, որովհետև եթե ձայնեղների և «շնչեղ ձայնեղների» միաձուլում չի առաջացել հայերենում և գերմանականում, ինչպես այն տեղի է ունեցել իրանականում, լետապլավոնականում և կելտական լեզուներում, ապա դրա պատճառն այն է, որ պարզ ձայնեղները կորցրել են իրենց ձայնեղությունը. կիին, հ. սլավ. žena, տեւ «տևողություն», հմմտ. դոռ. дощъ, լատ. dūdum, dūrāre, հ. սլավ. davě»⁴: Նորագույն ուսումնասիրությունները ցույց

¹ Նույն տեղում: Կողմնակիորեն նշենք, որ այս կետում կելտականը համեմատաբար ավելի է մոտենում հայերենին, քան իտալականին:

² Նույն տեղում, էջ 14:

³ Նույն տեղում, էջ 14, այլև 47-48:

⁴ Նույն տեղում, էջ 15:

տվին, որ պայթական բաղաձայնների նման տեղաշարժ, իրոք, բացառելի է, որ ունի այլ մեկնաբանություն¹:

թ) Մեյեն հե. *bh-ի մասին, կապված լեզուներում նրա արտացոլումների հետ, թերևս, ունի այլ մոտեցում. գուգադրման մեջ բացառվում է կելտականը. «...հայերենը շատ հեռու է գերմանականից. պետք է ավելացնել նաև այն, որ նրա գործիականը բխում է bh-ով ձևից, ինչպես հնդիրանականի և հունարենի գործիականը, և ոչ թե m-ով մի ձևից, ինչպես լատալավոնականինը և գերմանականինը»²:

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք Մեյեի տեսության առնչությամբ վերն ասվածը, ապա կարելի է նշել, որ ցեղակից լեզուների մեջ հայերենի ունեցած դիրքի նշանակման համար բերված մեկուկես տասնյակից ոչ ավելի գուգադիպումների որոշակի մասը, իր հերթին, երևան է հանում հայ-կելտական առնչությունների սերտության աստիճանը՝ հիմնված նախընտրելի օրինակների վրա:

3. Է. Թումանյանը հայերենի «կենդանի» նշանակող հնդեվրոպական ծագման տերմինների ձևաբանական վերլուծության ընթացքում կողմնակիորեն գուգահեռներ է անցկացնում հայերենի և կելտական այս կամ այն լեզվի միջև³: Հետագայում ևս, հայերենում հնդեվրոպական անվան կառուցվածքի քննությանը նվիրված գրքի տարբեր մասերում, բուն ուշադրության առարկա խնդիրների քննարկման ընթացքում բերվում են հայերենի հետ համեմատվող ցեղակից այլ լեզուների, ընդ որում նաև կելտական լեզուներից օրինակներ⁴:

Ստորև դրանք բերում ենք թվարկումով (թվով՝ 80. էջերին հղումը համարում ենք ոչ անհրաժեշտ)⁵: Եվ քանի որ հայերենին գուգահեռ են կելտական լեզուներ

¹ J. Emonds, A reformation of Grimm's law // "Contributions to generative phonology", London, 1972: Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Лингвистическая типология и реконструкция системы и.-е. смычных // "Конференция по сравнительно-исторической грамматике и.-е языков", М., 1972, էջ 15-18: P. J. Hopper, Glottalized and murmured occlusives in Indo-European // "Glossa", 3, էջ 141-166: A. Haudricourt, Les mutations consonantiques (occlusives) en indo-européen // "Melanges linguistique offerts à E. Benveniste", P., 1975: О. С. Широков, Армяно-греческие этногенетические контакты по данным сравнительно-исторической фонологии // "Историко-филологический журнал", 1977, 1, 85-100: A. R. Bomhard, The Indo-European-Semitic hypothesis reexamined // "Journal of Indo-European Studies", 5, 1977, էջ 55-99:

² Ա. Մեյե, նշվ. աշխ., էջ 15-16:

³ Э. Г. Туманян, Морфологический анализ индоевропейских терминов, обозначающих животных, в армянском языке // "Вопросы языкознания", 1968, № 5, էջ 63-65:

⁴ Э. Г. Туманян, Структура индоевропейских имен в армянском языке, М., 1978:

⁵ Տե՛ս հեղինակի գրքի վերջում տրվող բառացանկը:

րի մեկ և մեկից ավելի (մինչև 6) ձևեր, ուստի կատարում ենք դրանց խմբավորում.

ա) Զուգաբանություններ հայերենի և կելտական լեզուներից մեկի հետ (թվով՝ 33).

աղկ(-աղկ) «աղբատ, վատ, խղճուկ» - հիռլ. *olc* «վատ» (< հե. **elg-*, **olg-*, **alg-*)¹,

ամիս - հիռլ. *mī* (< հե. **mēn-s*),

այլ - իռլ. *aile* (հե. **al-ǵo-s*),

ան- ծանոթ (< *ան-ծանալթ*) - իռլ. *in-gnad* (< հե. **ǵnōto-s*),

արջ - կիւր. *arth* (< հե. **rk-tó-s*),

բեր- (եւ) - հիռլ. *brith* (անորոշ դերբ.) «բերել, կրել, տանել» (< հե. **bher-*),

բերան - միռլ. *bern* «անցք, բացվածք» (< հե. **bher-*),

բոլլ - հիռլ. *bolach* (< հե. **bheūl*),

գիշեր - կիւր. *hwyr* «ուշ» (< հե. **ucs-*),

դուրզն [*դրոզ* «սայլ. անիվ» (փոխառյալ). հմմտ. ռուս. *дрога* «սայլի կողափայտ», *дрога* «սայլ, դրոզ», «դիակառք»] - հիռլ. *droch* «անիվ» (< հե. **dhreg*),

թիթեռն - հկիւր. *eterin* «թռչուն» (< հե. **pet-*, **petə-/* **ptē-*, **ptō-*),

լեզու - հիռլ. *ligur* «լեզու» (< հե. **dingua*),

լերկ - իռլ. *lergg* (< հե. **lerg-*),

լ(ի)-ք-անեւ - իռլ. *lēcicid* «լքում է» (< հե. **leǵ-k-*),

լս-եւ // *լու-* - հիռլ. *clo-th* «հայտնի» (< հե. **klutó-s*),

լուսին - հիռլ. *lūan* «լուսին» (< հե. **leuk-s*),

ծանալթ - իռլ. *gnāth* «ծանոթ, սովորական» (< հե. **ǵnōtó-s*),

ծիծառն - հիռլ. *gāir* «ճիչ» [< հե. **gǣr-* (կրկն.՝ **ǵoi-* *ǵar-on*)],

կին - հիռլ. *ben* (< հե. **g^uenā*), (եգ. սեռ.) *mná* (< հե. **g^un-ās*), (հոգն. սեռ.) *ban* (< հե. **g^uen-ōm*) (**g^uēnā*),

կոկորդ (**կոր-կորդ*) - հիռլ. *gāir* «ճիչ. ձայն» [< հե. **gǣr-* (**g^uer-*, **g^uerə-* «կով սալ. կոկորդ»)],

համ- (լատ. *com-*, գերմ. *ga-*) (?) - իռլ. *ro-mār* «շատ մեծ» (< հե. **pro-*)²,

հայր - իռլ. *athir* [սեռ. հոլ. *athar-* (< հե. **pətros*)] (**pətéer*),

(հ)գոր - իռլ. *so-nirt* «ուժեղ» (< հե. **su-*)¹,

¹ Հմմտ. *եղուկ, եղկ(ելի), ուղուկ* և այլն: Գ. Բ. *Ջահուկյան*, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 215:

² Հմմտ. *Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов*, նշվ. աշխ., էջ 357-358:

հուր - իռլ. *úr* «կրակ» (հմմտ. իւեթ. *pahhur*, (սեռ. հոլ.) *pahhuenaš* «կրակ», հուն. *πύρ* «կրակ») (< հե. **pūr-*),
մանր – իռլ. *menb* «փոքր» (< հե. **menvo-s*),
մեծ – միռլ. *mag-*, *maige* «մեծ» [**meġ(h)*],
միս - հիռլ. *mīr* «միս» (< հե. **mēms*, *mēs*),
մոյթ - միռլ. *methas* «սահմանազիծ» (< հե. **mē[i]t-*, **mōit-*, **mit-*),
նիստ - իռլ. *net* [< հե. **ni-zdo* (**sed-*)],
ոսն - հիռլ. *īs* «ներքև. տակը» (< հե. **pēd*, **pōd* «ոսն»),
որբ [**orbh(os)* «որբություն» - հիռլ. *orb(e)* «ժառանգ, ժառանգություն» (< հե. **orbhio* «որբ»),
որձ – միռլ. *uirgge* «ձու» (**orġhiā*),
ունկն «ականջ» - հիռլ. (չեզ. սեռ) *āu*, *ō* «ականջ» (**ausos*)[**ōus-*, **aus-*, **us-/aus-*],
-un-յզ (**su-g*, **su-cg*) - հիռլ. *su-gim* «ծծում եմ», *su-g* «հյութ» (< հե. **su-* «հոսել»)²:
 ք) Չուգաբանություններ հայերենի և կելտական լեզուներից երկուսի հետ (թվով 16).
առու (*ոռոգ-ել*, *առոգ-ել*) - հիռլ. *sruth* «առու, (ջրի) հոսք, հեղեղ», իռլ. *sruaimm* «հոսք»³ [< հե. **sreū-*, *sru-*(< **ser-*),
աստղ – կիմր. *seren*, կոռն. *sterenn* (< հե. **ster*),
գինի - հիռլ. *fin*, կիմր. *gwin* (< հե. **uēi-*, **uēiō-* «ծալել, ոլորել (որթատունկը)»,
եղն, *եղին* «եղնիկ»- կիմր. *elain(t)* «եղնիկ, այծյա՛ս նոխսագ», հիռլ. *elit* (**elġ-ti*) «քարայծ». հմմտ. հուն. *ἐλα-φος* (< հե. **el-*),
եստղ - կիմր. *sedd* (իզ. սեռ.) «(նստա)տեղ» (**sedā*, զալլ. *sedlon* «նիստ, նստարան» (< հե. **sed-*),
երեք – իռլ. *tōoir* (**trisoires*), կիմր. *tair* (< հե. **treġcs*),
լու-ելիք - հիռլ. *cluas* «ականջ» (< հե. **k̑loustā*), կիմր. *clūst* «ականջ. լսելիք» (< հե. **k̑leus-*, **k̑leu-*),
ծնօտ (**ծին-աւտ*) - հիռլ. *gi(u)n* «ծնտ», կիմր. *gēn* «այտ, ծնտ» (< հե. **gʷenəu-d-*)⁴,
հին - հիռլ. *sen* «հին. ծեր», կիմր. *hen* [< հե. **sen(o)*],

¹ Հայ. *հ-*ն դիտվում է փոխառություն (հարցականով), որը տարակուսելի է:

² Հեղինակը չի բերում արմատի **k-* և **g-* աճականով ձևերի համար հայերեն որևէ զուգահեռ. մենք հավանական ենք համարում զուգադրել - *un-յզ* արմատը (հմմտ. *ջրատոյգ*, *սուզակ* և այլն. տե՛ս վերը):

³ Ըստ այլ հեղինակների՝ իռլ. *srúaim* «գետ»: Տե՛ս *T. B. Гамкрелидзе. Вяч. Вс. Иванов*, նշվ. աշխ., էջ 227, 1194:

⁴ Հմմտ. *Գ. Բ. Ջահուկյան*, Հայոց լեզվի պատմություն, էջ 125:

(*h*)*nuł*, (սեռ .հոլ.) *hulnj*- իռլ. om (*ō փայնավորմամբ), կիւր. of (< հե. *om-),
-*ł* (մասնիկ) - նիռլ. dream, բրետ. dram «կապ` հանգույց» (*-mo-) (հմմտ. *dreks-mo-)¹,

մուխ «ծուխ» - հիռլ. mūch «ծուխ», բրետ. moug, mog «կրակ» [< հե. *(s)meukh-, (s)meug-, *(s)meugh- «ծխել, ծուխ»],

նոբ - գալլ. Novio-dūnum, հիռլ. nue (*neuos),

շուն - հիռլ. cú, (սեռ. հոլ. con), կիւր. ci, (հոգն. ք. cwn) (< հե. *kūōn, *kun-),

նուկ-ը «նուկոր» (*ostwer, ըստ Մէյէի, ost(h), ըստ այլոց և հեղինակի) - կիւր. as-g-wn, կոռն. as-c-orn «նուկոր» (< հե. *osk^uhu-, osk^uhuro-),

նստ [*o-zdos (<*sed)]- կիւր. asgwrn, կոռն. ackorn «նուկոր» (< հե. *ost-corn),

չոր-ք «չորս» - իռլ. cethcoir, կիւր. pedair (< հե. *k^uet^uores):

զ) Չուգաբանություններ հայերենի և կելտական լեզուներից երեքի հետ (թվով` 15).

ակն «աչք» - հիռլ. enech, մկիւր., մբրետ. enep (< հե. *ok^u-),

աղտ (*sal-d) «աղի կույտ». salann, կիւր. halen, հկոռն. haloin (< հե. *sal-),

աքաղաղ - հիռլ. cailech, կիւր. ceiliog, կոռն. celioc (< հե. *kel-, *k^l),

գեղսն - կիւր. gwlan, կոռն. gluan, բրետ. gloan (< հե. *ucl-, *uclə-),

գերան - հկոռն. gwern «կայմ» gwern-en «լաստենի», կիւր. gwernen «նավի կայմ», բրետ. gwernen, (իգ. սեռ) uernā (< հե. *uer-(e)nā «լաստենի, կայմ, հեծան»),

դուռն - կիւր., հբրետ., կոռն. dor (իգ. սեռ) (< հե. *dhuēr-, *dhuōr-, *dhur-, *dhur^o-),

ընդեր-ք - կոռն. ynter, իռլ. eter, etir, բրետ. entre «միջև» (< հե. *ent(e)ro-),

լի - հիռլ. il, lān, կիւր. llanw «հորդուս, հորձանք», (բայանուն) llenwi «լիացուս», կոռն. lanwes «լիցք, լիութուն» (*plēn-u-) (< հե. *pel-, *pelə-, *plē-),

կարթ «(ոտքի) ծովածք, ոտ» - հիռլ. gairr (եգ. սր. հոլ.), gairri (հոգն. հայց. հոլ.), կիւր. garr (իգ. սեռ.) «ծնկատակ, ծունկ», կոռն. gar «ոտք» (< հե. *ger-, gr^o-),

հարց (<հե. *pr̥k-skā) - իռլ. arco, կիւր. archaf, կոռն. arghaf [*pr̥sko (<*pr̥k-sko)],

հաւ «թռչուն» - կիւր. hwyad, հկոռն. hoet, բրետ. houad «բար» [<հե. *au-ɨ-ctos (?)],

մատն - հկիւր. maut, մբրետ. meut, նբրետ. meud «ձեռքի մեծ մատ» [<հե. *māt (?)],

¹ Հե. -mo- մասնիկը հանդիպում է առանձին, այլև *s-, *-t-, *-dh- մասնիկների հետ միասին. հմմտ. հայ. *մեղ-մ* (< հե. *mel-mo) առանձին, հուն. ὄλμος «ступка» (<*ol-smo-s, ὀλέω «աղում եմ») s-ի հետ միասին, նաև կելտականում և այլն: Sk' u Э. Г. Туманян, Структура индоевропейских имен в армянском языке, էջ 67: Հմմտ. Գ. Բ. Չախուկյան, նշվ. աշխ., էջ 137, 181 և հզ.:

նայ (< հե. *snā- + *-t-) «թաց, խոնավ» - հիւռլ. suām «լոռ», կիւր. nawf «լոռ», բրետ. neunvi «լոռալ» (< հե. *snā-),

քիւրտն - կիւր. chwys, կոռն. whys, բրետ. c'houez «քրտինք» (< հե. *suidro-),

քուն - հիւռլ. sūan, կիւր., կոռն. hun (< հե. *suepnos, *suepnos):

դ) Զուգաբանություններ հայերենի և կելտական լեզուներից չորսի հետ (թվով՝ 7).

սալ (< հե. *sēmā) [*սալա-ոն* (*sēm̥rom-)] - հիւռլ. sam (*semo-) «սամա», կիւր., կոռն. haf, բրետ. hañv «սամա» (< հե. *sem-),

սնուն (< հե. *-mŋ) - հիւռլ. ainmm, [(հոգն. ք.) anmann (*enmŋ)], հկիւր. anu, կոռն. hanow, բրետ. ano [< հե. *en(o)mŋ-, *(o)numŋ, *nōmŋ],

արար - իռլ. arathar, կոռն. aradar, սրբետ. arar, կիւր. aradr [< հե. *arātro(m)],

արծաթ - հիւռլ. arggat, կիւր. arian(t), կոռն. arghant, մրբետ. argat [< հե. *ar(ə)-g̥-, *r̥g̥i- «փայլուն. արծաթ»],

ձիւն - հկիւր. gaem, հկոռն. goyf, բրետ. goañv, գալլ. Giamon[ios] (գալլիական ձմռան ամսանուն) (< հե. *g̥hei-, *g̥hi- «ձյուն, ձմեռ»),

-մն (մասնիկ) - իռլ. gairm (ուղղ. հոլ.), կիւր., բրետ. garm «ճիչ» (հկելտ. *garsmen-) (< հե. *-men),

ողն (նաև *ոլոք/ոլոգ, ուլն, աղեղն*) - հիւռլ. uilenn «անկյուն», կիւր. elin, հկոռն. elin, բրետ. ilin (< *olīnā) [< հե. *ōl(e)-]:

ե) Զուգաբանություններ հայերենի և կելտական լեզուներից հինգի հետ (թվով՝ 5).

այգի - գալլ. ivo, հիւռլ. ēo (ար. սեռ), կիւր. ywen, հկոռն. hiuin, բրետ. ivin (yndh. բոլորի իմաստը՝ «կարմրածառ, գեղձի, կենի») (< հե. *oiuigā-),

այր - կիւր. ner «հերոս», հիւռլ. ner «վարագ, կինձ», նաև հիւռլ. nert, կիւր., կոռն. nerth «ուժ, զորություն» [< հե. *ner-(t), aner-],

բարձր - հիւռլ. brī, միւռլ. bri, (հայց. հոլ.) brig, կիւր. bera «կույտ», հկոռն. bern, բրետ. bern (< հե. *bhr̥g̥h-u),

մայր - իռլ. māthir, նաև իռլ., կոռն., կիւր., բրետ. mam «մայր» (< հե. *māté),

քոյր - իռլ. siur «քույր» (սեռ. հոլ. sethar) (*suesor), կիւր. chwaer, հկոռն. huir, մկոռն. hoer, hor, բրետ. c'hoar [< հե. *k̥e(h)ur (*suesor)]:

զ) Զուգաբանություններ հայերենի և կելտական լեզուներից վեցի հետ (թվով՝ 4).

եղբայր - հիւռլ. brāth(a)ir, կիւր. brawd, (հոգն. ք.) brodyr, հկոռն. broder, մրբետ. breuzr, սրբետ. breur, (հոգն. ք.) breudeur (< հե. *bhr̥áther),

լայն - հիռլ. lethan, կիւր. llydan , բրետ., կոռն. ledan «լայն» (*płt̥no), այլև կիւր. lled, կոռն. les «լայնք» (< հե. *płt̥o-no),

hugh «հացենի»- կիւր., հկոռն. onn-en, բրետ. ounn-enn «հացենի», կիւր. onn (հոգն. Թ.), յոռ (հկելտ. onnā < osnā), հիռլ. (h)uinnius (< հե. *ōu, ածանցյալ *ōs-en, *ōs-k-),

մեղր – հիռլ. mil [<*melit (*meli), (սեռ. հոլ.) mela] «մեղր», կիւր. , կոռն., բրետ. mel «մեղր» (< հե. *melit-), այլև հիռլ. mid, կիւր. medd (< հե. *medhu-):

Է. Գ. Թումանյանի աշխատանքում մեզ հետաքրքրող հարցի առնչությամբ ուշագրավ է մեկ այլ հանգամանք ևս. նրանում մեծ տեղ են տրվում կելտական լեզուների ձևերին ոչ միայն հայերենի հետ զուգահեռներ բերելիս (տե՛ս վերը), այլև առհասարակ լայն համեմատություն անցկացնելիս, որպիսով ավելի է մեծանում ստուգաբանության հավաստիության շեմը, իսկ դա թեմատիկայի առումով ունի էական նշանակություն:

4. Հայ-կելտական զուգաբանություններ ենք գտնում, ինչպես վերը նշեցինք, 1970-ական թթ. երևան եկած այլ աշխատություններում:

Այսպես, լույս է տեսնում «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր» ժողովածուն, որ ներառում է հայ-իտալյան բառային զուգաբանություններին, հայ-հնդիրանական լեզվական շփումներին, մարմնի մասերի հնդեվրոպական անվանումների հայերեն արտացոլումների տարածքային նկարագրությանը, հայ բարբառների հնդեվրոպական հնաբանություններին և հնդեվրոպական ծագման հայերեն բառի կազմում աճականի դրսևորմանը վերաբերող աշխատություններ, որոնցում կողմնակիորեն բերվում են նաև հայ-կելտական զուգահեռներ¹: Այստեղ դրանց անդրադառնալը համարում ենք անհրաժեշտ մեր ուշադրության առարկային վերաբերող բուն խնդիրների լուծման առնչությամբ:

ա. Լ. Ա. Սարաջևայի աշխատություններից մեկում, որում ուշադրության առարկա են մի կողմից՝ հնդեվրոպացիների շրջակա ֆիզիկական աշխարհի ընկալումը, մյուս կողմից՝ հայերեն և սլավոններեն ազգակցության տերմինների ծագումնային առնչությունը, որի քննության ընթացքում հանդիպում են նաև հայ-կելտական զուգահեռների օրինակներ. դրանք բերվում են բուն խնդրի քննարկմանը առավել մեծ հավաստիություն հաղորդելու նպատակով²:

¹ «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», պրակ 1, Ե., 1979:

² Լ. Ա. Սարաջևա, Опыт лексико-семантического анализа генетически общей лексики в древнеармянском и славянских языках // Г. Б. Джаукян, Л. А. Сараджева, Ц.

Նշենք դրանցից հասկապես հետևյալները.

ալիք «(ծովի) ալիք, սալիտակ (մազ)» - հիռլ. *liath* «գորշ, մոխրագույն» (< հե. *pel-),
անձող «ածուխ»- գաել. *aingeal* «լույս, կրակ» (< հե. *ang'olo. ըստ Ջահուկյանի),
բուռն «ուժեղ, բուռն» -հիռլ. *burach* «(ցուլի) բառաչ., մնչոց, գետինը փորելը
(կճղակով)» (< հե. *bher-),

բարձր - կիմր. *bre* «բարձունք, սար», իռլ. *bri* «սար» (< հե.*bhereg'h-),

եղբայր - հիռլ. *broder* [փիս. *bráth(a)ir* - Վ. Հ.] (< հե. *bhráter)¹,

լուսին - կիմր. *seren* «լուսաստու, աստղ» (< հե. *louk'o-, ըստ Աճառյանի). հմմտ.

լոյս - հիռլ. *log* (< հե. *leuk-) «բոց, լույս»,

կին - հիռլ. *ben, be* «կին» (< հե. *g^ucnā),

հայր -իռլ. *aite* «իննամակալ, դաստիարակ» (< հե.*pətēr),

հալ -հիռլ. *aue* «ազգական», վալլ. *ewythir* «մորեղբայր» (< հե. *auios),

հողմ - միռլ., բրետ. *anaoun* «մեղայների հոգիներ» [< հե. *an-(?)]. հմմտ. *հով*

(*հոգի*) - հիռլ. *animm*, հմմտ. լատ. *animus* (< հե. *anamon),

մայր - իռլ. *māthir* (< հե. *māter),,

մուխ - իռլ. *much* «ծուխ» (< հե. * smeukh)²,

ջեր(-մ, -մն) «տաք, շոգ» - իռլ. *gorm* «գորշ, մոխրագույն», կոռն. *gorm* «շագանա-
կագույն» (< հե. *g^uhor-m-en),

սկեսուր -կիմր. *chweger* (< հե. *suek'rūs),

փայլ - հիռլ. *less* (<* lanssu) (< հե. *plənd-ti) «լույս» [< հե. *(s)p(h)el-],

քոյր -հիռլ. *siur* (< հե. *suesor):

Լ. Ա. Մարաջևայի մեկ այլ աշխատության մեջ, որը ևս նվիրված է հայ-սլավոնական առնչություններին, գտնում ենք հետևյալ զուգաբանությունը³.

մրսիմ - կիմր. *braen* (<*mrakno- «թույլ, գառամյալ. նեխած») (< հե. *merk-). հմմտ. լատ. *marceō* «թուլանալ, ուժից ընկնել», *marcor* «թուլություն»:

բ. Հայ-իտալյան բառային զուգաբանությունների քննությանն է նվիրված Մ. Ա. Աղաբեկյանի աշխատությունը, որում, ի թիվս այլ լեզուների, բերվում են նաև կելտական ձևերի օրինակներ, հասկապես այն դեպքերում, երբ անդրա-

Арутюнян, Очерки по сравнительной лексикологии армянского языка, Ереван, 1983. էջ 117-193:

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 171:

² Ենթադրվում է հայ. *խ* - հիռլ. *ch* (հմմտ. հուն. *χ*) (*kh) (նույն տեղում, էջ 148);

³ *Л. А.Сараджева* Заметки по армяно-славянской этимологии // «Историко-филологический журнал», 1984, 1, էջ 157 :

դարձ է կատարվում նախկինում արտահայտված այն կարծիքների մանրամասներին, ըստ որոնց գոյություն ունի զգալի մերձավորություն իտալյան և կելտական լեզուների միջև¹ :

Ինչպես հեղինակն է նշում, ուսումնասիրությունը կատարված է «բառային մակարդակում և քերականական ձևերին անդրադարձել» է «բառի նախաձևը պարզելու նպատակով» Իսկ «ստուգաբանական ձևերի համար օգտվել» է Պոկոնու, Աճառյանի, Էռնուի և Մեյեի համապատասխան բառարաններից, այլև Ջահուկյանի, Ադայանի, Զոլտայի և ուրիշների աշխատանքներում «տեղ գտած ստուգաբանություններից»²:

Այս աշխատանքում բերվող բառային զուգաբանությունները, ըստ հեղինակի բնորոշման, երեք կարգի են՝ երկպլան ուժեղ, երկպլան թույլ և միապլան. ըստ այսմ էլ կարելի է խմբավորել աշխատանքի ընդհանուր վերլուծության մեջ առկա հայ-կելտական զուգաբանությունները:

1. Բառային երկպլան ուժեղ զուգաբանությունները, իրենց հերթին, երեք կարգի են՝ արմատի ձայնդարձի միևնույն աստիճանով միավորվող, ածանցով կամ աճականով հանդես եկող և տարածքային հակադրություն չունեցող, ըստ որի էլ առանձնացվում է երեք խումբ. երեքում էլ գտնում ենք հայ-կելտական բառային զուգաբանություններ:

ա) Արմատի ձայնդարձի նույն աստիճանով միավորվողներից հայ-կելտական առնչություն պարունակող բառային զուգաբանություններ են հետևյալ երկուսը.

հետ (հետոյ) «հետք» / *յետ* «հետ» - միռլ. ined (< *eni-pedo-) «հետք», գալլ. can-detum «տարածք, վայր» (< հե. *pēd-),

քան(ի) - հիռլ. pan, մկիմր. pan, բրետ. peban «որտեղի՞ ց, ինչո՞ւ», մկիմր. pann «որպես, ինչպես» (< հե. *k^hom-):

բ) Ածանցով կամ աճականով հանդես եկողներից հայ-կելտական առնչություն պարունակող բառային զուգաբանություններ են հետևյալները (թվով՝ 17).

ամպրոպ - միռլ. imrim «փոթորիկ» (< հե. *nebh- + -ro),

արար [*(h)ar- + *-trom] - միռլ. arathar, կիմր. aradr, կոռն. aradar (< հե. *ar-),

աւն (աւնոյ տէր) «սեփականություն» - հիռլ. āne «ունեցվածք», somme «հարուստ» (< հե. *op-),

¹ Մ. Ա. Աղաբեկյան, Հայ-իտալյան բառային զուգաբանություններ //«Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», պրակ 1, էջ 23-117:

² Մ. Ա. Աղաբեկյան, նշվ. աշխ., էջ 50:

գելու՛մ «ուլորել» - կիւր. gwawl «պատ. պատնէշ» (?) (< հե. *uel-),
ետղ (*տեղի*) - կիւր. sedd, գալլ. sedlon «նստելու տեղ» (< հե. *sed-),
երկար - հիւր. cundrad (*con-dūrad) «պայմանագիր» (< հե. *deu-, *dū-ā-, *dū-),
ըմբ- (*ըմբ-նստ, ամբ-*) - գալլ. ambi, կիւր. am-, (em-, ym-), հիւր. imb, imm- «շուր-
ջը» [< հե. *amb(h)-],

լուսին - միւր. lūan «լուսին», այլև գալլ. Leuzetius, loucetius «Մարսի անունը»,
հիւր. lōchet «կայծակ» [< հե. *louk-s, (*leuk-)],

հարաւունք «արտ, վարուցանք» - միւր. arbor «հացահատիկ», կիւր. erw
«դաշտ», կոռն. erw, ereu, մբրետ. eru «ակոս» (< հե. *ar-),

հեռի - հիւր. ire «հեռու» (*per-),

մէտ («կշեռքի նծարները դեմ-դիմաց նշող կետ՝ մեխ») // *մէտ* («մեջտեղ») -
հիւր. med «կշիռ» (< հե. *med-/*mod, *meid-),

միտ - հիւր. midiuր (կտր. remīdar) «մտածել» (< հե. *mēd-),

նայ - մկիւր. dienad (*dī-ro-natā) «ծովի մոնչյուն» [< հե. *(s)nā-],

նիստ - միւր. net, կիւր. nyth, կոռն. neid, բրետ. nes, neiz (< հե. *sed-),

տիւ - հիւր. in-dīu «այսօր», կիւր. diw, dyw (< հե. *dei-),

տոկամ - հիւր. doë (*dōwio-) «հանդարտ» (*dū-),

քուն - կիւր., կոռն., բրետ. hun, հիւր. sūna (< հե. *suo-):

զ) Տարածքային հակադրություն չունեցողներից հայ-կելտական առնչություն
պարունակող բառային զուգաբանություններ են հետևյալները (թվով՝ 9).

այրեմ - իւր. áith, (սեռ. հոլ.) atho, կիւր. odyu «վառարան, փուռ» (< հե. *āter-),

անուր - հիւր. āinne «օղակ. անցք» (< հե. *ā-nu-),

բարգ(-աւաճ) - միւր. barc «առատություն» [< հե. *b(h)arek¹-]¹,

թեղի - միւր. teile «լորի» [< հե. *(p)tel-],

թմուր (*թմրիլ, թմբիր, թմբրիլ*) - միւր. tām (*tomu-) «հիվանդություն, թուլութ-
յուն. մահ», մկիւր. taw «մահ» [< հե. *tem-),

հլոտել «հրել, առաջ մղել» - հիւր. ad-ella «այցելել», di-ella «շեղել», eblaid «քշել»
(< հե. *pel-),

մելուր (բրբռ.) «տխուր. տխրամած» - հիւր. mall «դանդաղ» (< հե. *mel-),

մնամ (**մինամ*) - հիւր. ainmne, հկիւր. amynedd «համբերություն» (< հե. *men-),

մոր (*մորի, մորենի*) - կիւր. merwydden «թութ», միւր. merenn «թութ» (< հե. *mor-):

¹ Ըստ Ջահուկյանի՝ փոխառություն իրան. աղբյուրից. հմմտ. տղդ. brγ'wcy «եր-
ջանիկ, ունևոր, բարգավաճ» (Տե՛ս «Ճայոց լեզվի պատմություն. նախագրային ժա-
մանակաշրջան», էջ 519):

Այս դեպքում կարելի է նշել հետևյալը:

1) Բերվող օրինակների համար սովորաբար չի նշվում հնդեվրոպական նախաձևը (այն, ըստ անհրաժեշտության, լրացնում ենք կողմնակիորեն):

2) *Հաւ* «թռչուն» \emptyset (զրո) ածանցով կազմության դեպքում նշվում է հայ-իտալա-արիական տարածք, իսկ «*-to ածանցով և կոնկրետ որևէ թռչուն նշանակող իմաստներով միավորվում է հունա-ալբանա-կելտական տարածքը», և ըստ այդմ բաց է մնում հայ-կելտական առնչության հարցը¹:

3) Բերվում է *հեռի* բառի զուգաբանությունը իռլանդերենի հետ (*հեռի* - հիռլ. *íre* «հեռու»), սակայն չի նշվում հայ-կելտական զուգաբանական տարածքի լինելու մասին²: Բերված հայ. *հեռի* - հիռլ. *íre* «հեռու» զուգաբանությանը, թերևս, կարելի է ավելացնել նաև հայ. (բրբռ.) *հեռու* «անցյալում, անցյալ (տարի)», այլև *հարի* «մինչև (որ)», *հուր(ի)* (հմմտ. *հուր-հավիտյան* «հավերժ, միշտ»), թերևս նաև *չուրի* «մինչև» (Ալշ., Նորատուս, Մարտունի. Ապարան և այլն) տարբերակները³:

4) *Բիր* (*բրես*) արմատից *-no ածանցով նշվում է «բերան, շրթունք, բացվածք» իմաստով զուգաբանություն՝ հայ-իռլանդական առնչություն պարունակող, սակայն առանց *բերան* բառի մատնանշման⁴:

2. Բառային երկալան թույլ զուգաբանությունները, իրենց հերթին, երկու կարգի են՝ ըստ ձևային և իմաստային դրսևորման հատկանիշի, որոնցից միայն երկրորդի դեպքում երբեմն առանձնացվում է հայ-կելտական առնչությամբ զուգաբանություն, այն էլ որոշ թեականությամբ՝ կապված, օրինակ, *անկիւն* բառի հե. *-ion ածանցով հավանաբար բաղադրված լինելու հետ. հայ. *անկիւն* – միռլ. *aigen* «տապակ» [հմմտ. հուն. *ἀγγεῖον* (**ἀγγεσ-ιον*) «աման»] (< հե. **ankiōn*):

3. Բառային միապլան զուգաբանությունները, որոնց մի մասն ունի հայ-կելտական առնչություններ, իրենց հերթին, երեք կարգի են՝ ըստ ածանց կամ աճական տարրով, արմատի ձայնդարձով և հետնալեզվային բաղաձայնի շրթնայնացմամբ հանդես գալու հատկանիշի: Ընդամին՝ արմատի ձայնդարձով հայ-կելտական առնչություն պարունակող զուգաբանություն չկա, իսկ վերջինով՝ մեկ-երկուսը:

ա) Ըստ ածանց կամ աճական տարածքային հատկանիշի հայ-կելտական առնչություն պարունակող զուգաբանություններ (թվով՝ 25).

¹ *Մ. Ա. Աղաբեկյան*, նշվ. աշխ., էջ 62:

² Նույն տեղում, էջ 63:

³ *Գ. Բ. Ջահուկյան*, նշվ. աշխ., էջ 143, 217:

⁴ Նույն տեղում:

ասիս – հիւնլ. *mī*, (սեռ. հոլ.) *mīs*, կիւր. *mis*, բրետ. *miz* (< հե. **mēn*-),
ասեղն (**ասիղն*) - հկիւր. *ocoluin*, մբրետ. *hygo(u)-len* [< հե. **ak-* (**ak̄-*)],
արծաթ – հիւնլ. *arg-*, կիւր. *arian(t)*, կոռն., բրետ. *argant* [< հե. **arg-* (**arġ-*)],
արմուկն - գալլ. *aramō* (**aramones*) «ճյուղավորում, երկարում» (< հե. **ar-*),
գարուն - հիւնլ. *errach* (**ferrach* > **uesrāko*) «գարուն» (<հե. **ues-*),
գեղձ «բուռն ցանկություն, տենչ» - ինլ. *fled*, կիւր. *gwledd* «հյուրասիրութ-
յուն, խնջույք», մկիւր., կոռն., բրետ. *guell* «ավելի լավ» (< հե. **uel-*),
գոյ - մկիւր. *gwest*, *kywest* «հասնաւոր», միւր. *foss* «մնալը» (< հե. **ġes-*),
թառամ (*թարշամ*) / *թոռում* (*թորշում*) - հիւնլ. *tirim* «չոր» (< հե. **ters-*),
իմանամ (*իմաստ*) - հիւնլ. *air-mitiu* «միտք» (< հե. **men-*)¹,
լիգուր - հիւնլ. *ligur*, կիւր. *llwy* [< հե. **leig(h)-* / **leiġ(h)-*] *լիք* «րիվ» - կիւր.
llwyr «լի» (< հե. **plē-*),
ծիւ - բրետ. *genel* «ծնվել» [< հե. **gen* (**g'en-*)],
հարց, *հարցանել* - կիւր. *archaf* «հարցնել», կոռն. *arghaf* «խնդրել», մբրետ.
archas «հրամայել» (< հե. **per-*),
ձմեռն (**ձիմեռն*) - հկիւր. *gaem* «ձմեռ», միւր. *gem-adaig* (< հե. **g(h)eim*),
մահ - կիւր. *marw*, հիւնլ. *marb* «մեռած» (< հե. **mer-*),
մեծ – միւր. *mag-*, *maige* «մեծ», կոռն. *mehin* «ճարպոս» [< հե. **meg-* (**meġ-*)],
որդի - կիւր. *erthyl* «վաղածին ձագ» (**por-*),
որոջ - հիւնլ. *heirp* (**erbhī*) «եղնիկ, այծ», միւր. *reithe* «ոչխար» (< հե. **er-*)²,
սայր - հիւնլ. *cath* «իմաստուն» (< հե. **ca-ti-ro*),
սիրտ - հիւնլ. *cride* «սիրտ, մեջուէղ, կենտրոն», կիւր. *craidd*, կոռն. *cre(y)s*,
բրետ. *kreiz* «մեջուէղ» (< հե. **kerd-*),
սլաք - հիւնլ. *cuil*, կիւր. *cylion-en* «մժեղ» (< հե. **kū-*),
սոր - գալլ. *καυρος*, կիւր. *cawr*, կոռն. *caur* «հսկա» [< հե. **kou-* (**kou-*)],
ցայտել (*ցայել*), (բրբռ.) *ցատկել* - կիւր. *y-sgadan*, միւր. *scatán* (< հե.
**skē-*),
ցոթել (բրբռ.), *ցոթկել* (բրբռ.), *ցրտկեցնել* - կիւր. *cerddaf* «գնալ, թափառել»,
հիւնլ. *fo-cerdaim* «նետել, զցել» (< հե. **skē-*),

¹ «Անհասկանալի հերթագայություն» է որակվում *ն/ւ* անցումը, այնինչ առկա է հիմքակազմական *թ (զրո)/-ան-* հակադրություն:

² Այս գուգաբանությունը քննվում է նախ *որթ* «հորթ» բառախմբում, այնուհետև՝ առանձին: Տե՛ս *Մ. Ա. Աղաբեկյան*, նշվ. աշխ., էջ 3, այլև էջ 96:

քոյր - հիռլ. *siur*, հկոռն. *huir*, մկոռն. *hoer*, *hor* (< հե. **suēs*-):

բ) Ըստ հետնալեզվային բաղաձայնի շրթնայնացման հատկանիշի հայ-կելտական առնչություն պարունակող գուգաբանություններ (թվով՝ 2).

աւծ- (*աւծանեւ*) - իռլ. *imb* «կարագ» (< հե. **ong^u*-),

կերակուր - մկիւր. *bread* «մեռելաորդ» (< հե. **g^uer-*):

Մ. Աղաբեկյանի մյուս ուսումնասիրությունը նվիրված է հնդեվրոպական լեզուների հնչյունաբանության հարցերին՝ հիմնված նոր փաստերի և երևան եկած տեսակետների վրա: Հայ-կելտական գուգադիպումներն այս դեպքում պակաս չափով են օգտագործված, մեկ-երկու եղածն էլ գրեթե նույնական է նախորդի մեջ բերվածի հետ ¹:

գ. Հայերենում մարմնի մասերի հնդեվրոպական անվանումների տարածքային նկարագրին նվիրված ուսումնասիրության մեջ Մ. Կ. Հաննեյանն առանձնացնում է գուգաբանությունների երկու կարգի տարածքներ՝ մեծ և փոքր, որոնցում հաշվի են առնված հայերենի և ցեղակից մյուս լեզուների տարածքային տարբերակվածության սահմանները, ընդ որում՝ բաշխված, այսպես կոչված, երեք կարգի՝ մեծ, փոքր և մեկուսացած տարածքների մեջ²: Նկատելի է, որ հայերենի և կելտական լեզուների բառային գուգաբանություններ են արժարժվում տարածքներից առավելապես առաջինում և երկրորդում, իսկ երրորդում («մեկուսացած տարածք»)՝ միայն մեկում, այն է՝ *մատն* (հայ., կելտ.):

Աշխատանքում համեմատաբար քիչ տեղ է հատկացվում հնչյունական գուգաբանություններին: Հեղինակը գրում է, որ իր «աշխատանքի մեջ քննության են առնվում Հ. Աճառյանի և Յ. Պոկոռնու բառարաններում, նաև Է. Աղայանի, Գ. Զուլտայի, Գ. Ջահուկյանի աշխատություններում եղած ստուգաբանությունները»³:

Դրանցից այստեղ ուշադրության ենք առնում հետևյալները.

ամորձի(ք) (< հե. **orǵhi-*), [*որձի-ք* (*orǵhi-ǰos*)] - միռլ. *uirgge*, նիռլ. *uirghe* (< հե. **orǵhiā*),

ատամն (< հե. **ɛdnt-mn̥*) - հիռլ. *dēt*, կիւր., բրետ. *dant*, կոռն. *dans* (**dnt-*) [*<* հե. *(*e*)*dont-*],

¹ Մ. Ա. Աղաբեկյան, Հայերենի համեմատական հնչյունաբանության հարցեր // «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», պրակ 2, Ե., 1998, էջ 49-144: Նույնի Հայերենի համեմատական ուսումնասիրության հարցեր, Ե., 2017:

² Մ. Կ. Հաննեյան, Մարմնի մասերի հնդեվրոպական անվանումների տարածքային նկարագիրը հայերենում // «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», պրակ 1, էջ 128-187:

³ Նույն տեղում, էջ 142:

արմուկն (< հե. *arə-mo-) - գալլ. aramō «երկճյուղ լինելը» (< հե. *arə-mo)¹,
բերան (< հե. *bher-) - հիռլ. bern «անցք, ճեղք», այլև «բերան» (< հե. *bher-),
գեղմն (< հե. *gēl-mn) - կիմր. gwlan, կոռն. gluan, բրետ. gloan «բուրդ. գեղմ» (<
հե. *el-no-),

եղունգն (< հե. *e-nongh-[*onogh]) – հիռլ. ingen, նկիմր. ewin, հկիմր. eguin,
կոռն. euuin, բրետ. ivin «եղունգ» (< հե. *ng̃hū-īā-),

երես (< հե. *prep- «երևալ, աչքի զարնել») – հիռլ. rīcht «ձև, երևակ», կիմր. «ե-
ղանակ, կերպ, նման լինելը» (< հե. *prep-),

ընդերք (< հե. *en-tro) - հիռլ. eter, etir, etar «միջև», կոռն. ynter, yetre «միջև»,
մկիմր. ithr «մեջք» (< հե. *enter-),

լեզու (< հե. *d̃ng̃hū-) - հիռլ. teng, tengae, մկիմր. tafawt, կոռն. tauot, tava,
բրետ. teod, մբրետ. teaut [< հե. *tamāto- (?)] (*d̃ng̃hūā-),

մարմին [< հե. *m̃l-mcno- (?)] - բրետ. mell «ոտքի կոճ, կճղակ, մատների
հոդ», կոռն. mel (հոգն. m̃. mellow «կոճիկ, կճղակ», կիմր. cym-mal «կազմ,
միակցություն, համակցում» (հիռլ. *melso-) (< հե. *mel-),

միս (< հե. *mēmso-) - հիռլ. mīr (*mē(m)s-ro-) «կտոր», «խայծ» (< հե. *mēmso-),

ողն (< հե. *olen-), *ուղն* (*ōlen) – հիռլ. uilenn «անկյուն», միռլ. uillind «ար-
մունկ. անկյուն» կիմր., կոռն. elin , բրետ. ilin (< հե. *olīnā) (*ol-no-?), նաև *իլ*
(*ēlo), *աղ-եղն* (հե. *ōlel-no-?) – կիմր. olwyn (*oleinā) «անիվ» (< հե. *ōlina «ար-
մունկ»),

ոսկր (< հե. *ost-ko-) - կոռն. ascorn, բրետ. skourm, կիմր. asgwrn (հոգն. m̃.
esgyrn) (< հե. *ost-ko),

ոտն (*pōd-) - հիռլ. īs «ոքնե բանի տակը» (*pēd-su «ոտնատակ՝ ներբան») (<
հե. *pōd-),

սիրտ, սրտ-ի (< հե. *kērd-, *kērd-i) - հիռլ. crīde, նիռլ. croidhe (< հե. *kred̃iom-),

փայծաղն [< հե. *sp(h)elg̃h(en)-] - հիռլ. selg, մբրետ. felc'h «փայծաղ» (< հե.
*splēg̃h-):

Սրանք քննվում են ըստ տարածքային սահմանափակման. մեկ տասնյակից
փոքր-ինչ ավելիի դեպքում է, որ նշվում է հայ-կելտական զուգահեռություն՝
առնչվող մյուս լեզուներից մեկ-երկուսի կամ մի քանիսի հետ¹:

¹ Աշխատանքի մեծ տարածքների ցանկից *արմուկն*-ը դուրս է մնացել (տե՛ս աղ-
յուսակ 2):

Դրանք են հետևյալները.

ատամն (հայ., լատ., օսկ., կելտ., գերմ.),

արմուկն (հայ., իրան., գերմ., լատ., կելտ., քալթ., սլավ.),

բերան (հայ., հուն., լատ., կելտ., արբ., քալթ., սլավ.),

գեղմն (հայ., հուն., լատ., կելտ., արբ., քալթ., սլավ.),

եղունգն (հայ., հնդկ., հուն., լատ., կելտ.),

երես (հայ., հուն., կելտ.),

իլ (նաև *աղ-եղն*) (հայ., հնդկ., կելտ., գերմ., քալթ., սլավ.),

ոլոք (հայ., հուն., լատ., կելտ., գերմ.),

ոսկր (հայ., կելտ., իրան.),

ոտն (հայ., լատ., ումբր., կելտ., արբ., թոխ.),

որձ-իք (հմմտ. *ամորձիք*) (հայ., կելտ., արբ.),

սիրտ (հայ., հուն., լատ., կելտ., իսթ., քալթ., սլավ.):

Նույն բնույթի է նաև Մ. Կ. Հաննեյանի մյուս աշխատությունը, որը նվիրված է հայերենի բառապաշարի երկու խումբ՝ 1) անասնապահական և 2) երկրագործական («գյուղատնտեսական») տերմինների տարածքային օրինակելի քննությանը²: Դրանցում ևս կողմնակիորեն բերվում են հայ-կելտական զուգահեռներ: Այստեղ այդ զուգահեռները ներկայացնում ենք ըստ 1-ինի և 2-րդի:

1. Առաջին խմբի զուգաբանություններ են հետևյալները.

եզն (< հե. *egʻh-) - իռլ. ag «կով» (< հե. *agʻh-),

էշ (?) (< հե. *ek^ho-s-) - հիռլ. ech, գալլ. epo- «ձի» (?) (< հե. *ek^ho-s-)³,

թառ («հավի» թառ) (< հե. *t̥syā-) – հիռլ. tirim «չոր, չորացած» (< հե. *t̥syā-m-),

կով - հիռլ. bo, կիմր. baw «կով» (< հե. *g^hou-)⁴,

¹ Մեկ-երկու դեպքում կատարում ենք լրացում՝ ըստ հեղինակի աշխատության տվյալների. օր. *ոլոք*-ի դեպքում նաև *իլ* «իլիկ» և *աղեղն* միավորները՝ վերցված առանձին:

² Մ. Կ. Հաննեյան, Հայերենի հնդեվրոպական բառապաշարի թեմատիկ-իմաստային մի քանի խմբերի տարածքային բնութագիրը (տնտեսական գործունեություն արտահայտող բառեր) // «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», պրակ 2, Ե., 1998, էջ 145-227:

³ Այս և մյուս՝ *ձի* անվանման ծագման հարցը մնում է չլուծված: Հմմտ. *Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов*, նշվ. աշխ., էջ 522, 541, 564:

⁴ Նշվում է նաև իռլ. heip «այծ», erb «կով» բառերը, որոնք հե. *bh-ածանցով կազմություններ են՝ զուգահեռ հայ. *որոջ* «ոչխարի ձագ» [*er(i-)] բառին (*Մ. Կ. Հաննեյան*, նշվ. աշխ., էջ 156-157): *Կոզի* «կովի (ստացվածք)» բառին զուգահեռ կելտականը նշվում է միայն աղյուսակում, այն էլ պարզ արմատի համընկումով (նույն տեղում, էջ 175):

hwi «թռչուն, հավք» (< հե. *(H)au̯ci-) - իռլ. ai, aoi «կարապ», կիւր. hwyad (<auietos) «բար» (< հե. *(H)au̯ci-no-/to-),

hni/h(i) «ոչխար (պահող)» (< հե. *ou̯i-(pā)) – հիռլ. oi «ոչխար» (< հե. *ou̯i-),

(h)nr̥θ (< հե. *por-th-) – կիւր. erthyl, erthylu «ժամանակից շուտ ծնվել» (< հե. *por-th-),

đh - հիռլ. ech, գալլ. epo- (< հե. *ek^ho-s-)¹,

ւարհ «էգ թռչուն» (< հե. *meryo-/*m̥riyā-) - կոռն. moroin «աղջիկ, կույս», կիւր. merch «դուստր» (< հե. *m̥erio-),

ւեղր – հիռլ. mil- (սեռ. հոլ. mela) «մեղր», գալլ. Meliddus (հատուկ անուն), միռլ. milittu- «քաղցր», վալլ. melyn «դեղնավուն» (< «մեղրի գույն») (< հե. *mel-),

ւեղր(ահյութ) «մեղր, հարբեցնող խմիչք» - հիռլ. medb «հարբեցնող», վալլ. mid «հարբեցնող» (< հե. *medhu-),

շուն - հիռլ. cú , սեռ. հոլ. con (< հե. *k^huon-, *kún-),

ոչխար – հիռլ. oi «ոչխար» (< հե. *ou̯i-)²,

որձ (< հե. *org^hhi-) – միռլ. uirgge «սաղմ. memb. vir.» (<հե. *org^hhi-/ *ig^h*hi-),

որոջ [< հե. *oro-, *-dh(yo)-(?)] – heirp «այծ», նաս er-b- «կով» (< *bh- ածանցով) (< հե. *oro-),

սագ (< հե. *ka̯a- «թռչուն») – հիբրեւ. couann, բրեւ. kaouen, kaouan, կիւր. cuan «մի տեսակ թռչուն» (< հե. *ka̯a-)³:

Մրանցից առավել հատկանշական են այն զուգաբանությունները, որոնք առնչվում են մյուս լեզուներից մեկ-երկուսի կամ մի քանիսի հետ.:

եզն (հայ., հնդկ., իրան., կելտ.),

թառ (հայ., կելտ., ալբ.),

կոզի «կովից ստացվածք» (հայ., իրան., գերմ., կելտ., բալթ.),

կով (հայ., կելտ., թոխ., գերմ., բալթ.),

հաւ (հայ., հուն., կելտ.),

¹ Չահուկյանը ծագած է համարում հե. *g^hei̯o-[g^hei̯-] արմատից (Տե՛ս «Հայոց լեզվի պատմություն», էջ 127): Աղյուսակում բխեցվում է այլ *g^hyo-s արմատից, թեև շարադրանքում համեմատությունն անցկացվում է այն համատեքստում, որ զուգաբանություն է առաջանում տվյալ դեպքում նաս կելտականի հետ:

² Չուգաբանությունների աղյուսակում սա բացակայում է:

³ Ցանկում չկա հայ. *ճուտ* «թռչնի ձագ. ճուտ» բառը, որն ըստ Չահուկյանի՝ «Ծագումն անհայտ է: Թերևս բնաձայնական կազմություն» (Տե՛ս «Հայերեն ստուգաբանական բառարան», էջ 497):

(*h*)*որթ* (հայ., հնդկ., հուն., սլավ., կելտ.),
հովհ(ւ) «ոչխար պահող» (հայ., խեթ., հնդկ., հուն., լատ., կելտ., գերմ., քալթ., սլավ.)¹,

մեղր (հայ., խեթ., հուն., լատ., կելտ., գերմ.),
որոջ (հայ., հուն., լատ., իտալ., կելտ., քալթ., սլավ.),
որձ (հայ., հնդկ., իրան., հուն., ալբ., կելտ., քալթ.),
սագ (հայ., լատ., կելտ., քալթ., գերմ.):

2. Երկրորդ խմբի են հատկապես հետևյալները².

այգի - հիմ. օօ, կիմր. *ywen*, հկոռն. *hiuin*, բրետ. *iwin* «կենի, կարմրածառ» [
հե. *oiu-iyā (*ci-)],

ստոզանեն, *ոռոզանեն* - հիմ. *sruaimm* «գետ, հոսանք» (< հե. *srow-),
ստոռ «լիքը, լավ աճած, տոուզ» - հիմ. *sāith* (< *sati*- ձևից) (< հե. *sad-),
արտ - իմ. (ad)-*aig* (< հե. *ag'-ro-),

արու (**արաւ*) (?), *հարու* (բրբռ.) [**arəw-ns-(*)ar(ə)-*] - հիմ. **arwens*, (հոգն.
ուղղ.) *arbanna*, միմ. *arbor* (**ar*) «հացաբույս, հացահատիկ» (< հե. **ar(ə)-*),

արոր (**արաւր*) (**arə-tro-m*) -միմ. *arathar*, կիմր. *aradr*, նբրետ. *arar*, կոռն.
aradar (< հե. **arə-tro-m*),

բեր(ք) - հիմ. *berim* «բերեն» (< հե. **bher-*),

բիր(հ), *բահ(ք)* - իմ. *bern* «ձեռք» (< հե. **bher-*),

երկան(ք) - հիմ. *brō*, (եգ. սեռ.) *brōn* «երկանք», իմ. *baru*, կիմր. *breuan* (նույ-
նը), կոռն. *brou* (նույնը), բրետ. *breo* (նույնը) (< հե. **g^hrāw-āna*),

լուծ - կիմր. *iaa*, կոռն. *iou* (< հե. **icū-n-*),

հարատունք - հիմ. *airim* «հերկել», միմ. *arbor* «հացահատիկ, հացաբույս» (<
հե. **arwɛ-*) (**ar(ə)-*),

մուլ- (*մլաղաց* «ջրաղացպան», *մամուլ*, *մլմլել* «շփել, քերել»), *մալ-* (*մալել*
«մանրել. փշրել») [
հե. **mol-*, մլ- (**mel-*)] - հիմ. *melim* «աղալ», կիմր. *malu* «ա-
ղալ», *blawt* «ալուր», բրետ. *mallaf* «աղալ» (< հե. **mel-*),

պեղեն - միմ. *belach* «ծերպ, ձեռք», նիմ. *bealach* «ճամփա. լեռնանցք» (< հե.
**bel-* «կտրել. փոս անել, փորել»),

¹ Սա, թերևս, ամենալայն տարածքն ընդգրկող գուգաբանության օրինակներից է, որ բացատրվում է հնդեվրոպական ժողովուրդների խաշնարածության զբաղմունքի տարածված լինելու հանգամանքով :

² Այս խմբի որոշ բառերի դեպքում (*եղան*, *կորկոտ* և այլն) շարադրանքում չեն բերվում կելտական ձևերը, թեև Աղյուսակում (2) դրանց համար կելտականի պոնակում դրվում է պլուս (+) ցուցիչը:

պտտուղ - հիռլ. *buiith* «լինել», *bōi* «եղավ» (?) (< հե. **bud-* «ուռչել»):

Մրանցից առանձնանում են այն զուգաբանությունները, որոնք առնչակից են մյուս լեզուներից մեկ-երկուսի կամ մի քանիսի հետ.

այգի (հայ., գերմ., հուն., լատ., կելտ., բալթ., սլավ.),

առոզանեն, ոռոզանեն (հայ., հնդկ., հուն., կելտ., գերմ., բալթ.),

արօս (**արաւս*) (?), (բրբռ.) *հարօս* (հայ., հուն., կելտ.),

արօր (**արաւր*) (հայ., հուն., լատ., կելտ., գերմ.),

բեր(ք) (հայ., հնդկ., իրան., հուն., փոյուգ., լատ., ալբ., գերմ., բալթ., սլավ., կելտ.),

բիր (հայ., իրան., ալբ., լատ., իսլ., կելտ.),

երկան(ք) (հայ., հնդկ., կելտ., գերմ.),

հարաւունք (հայ., հնդկ. հուն., կելտ., լատ.),

մուլ- / մալ- (հայ., հնդկ., թոխ., կելտ., իսեթ.),

պեղեն (հայ., հնդկ., կելտ.):

դ. Ն. Միմոնյանի աշխատությունը նվիրված է հայերենի բարբառների հնդեվրոպական հնաբանությունների ուսումնասիրմանը¹: Տեսական հարցադրմանը հետևում են բարբառներում առկա միավորների վերլուծությունը և համեմատություն ցեղակից լեզուների հետ: Վերջին դեպքում նկատի է առնվում նաև կելտական լեզուների նյութը:

Այսպես, հիշատակելով Լ. Մսերյանցի տեսական կարևորագույն դրույթներից մեկը, այն է՝ անհրաժեշտ է հայերենի բարբառները քննության առնել լայն պլանով (դրույթ, որ գալիս է Ք. Պատկանյանից), հեղինակը նշում է հետևյալը. «Հայ բարբառագիտության վերջնական նպատակը նա համարում էր հայ բարբառների (այդ թվում և գրաբարի) համադրական ուսումնասիրության միջոցով և համեմատական մեթոդի օգնությամբ ընդհանուր հայերենի վերականգնումը (ընդ որում, ընդհանուր հայերենը համարվում էր այն ժամանակաշրջանի լեզուն, որը նախորդել էր առանձին հայ բարբառների, այդ թվում և գրաբարի առաջացմանը, մի տեսակ միջին դիրք գրավելով մի կողմից՝ հնդեվրոպական նախալեզվի, մյուս կողմից՝ գրաբարի ու բարբառների միջև)»²:

¹ Ն. Մ. Միմոնյան, Հայ բարբառների հնդեվրոպական հնաբանությունները // «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», պրակ 1, Ե., 1979, էջ 188-325:

² Ն. Մ. Միմոնյան, նշվ. աշխ., էջ 195:

Բարբառային նյութի մանրամասն քննության վերջում Ն. Միմոնյանը հանգում է հետևյալ եզրակացությանը. «Հայ բարբառների հնդեվրոպական հնաբանությունների ուսումնասիրությունը մի անգամ ևս հաստատում է այն կարծիքը, որ հին հայերենը միատարր, միասեռ չի եղել հնդեվրոպական հնչյունական համակարգի տեսակետից. բարբառներում դրսևորվող առանձնահատկությունները, շեղումները գրաբարի հնչյունական օրինաչափություններից, ինչպես նաև հենց գրաբարում նկատվող զուգաձևությունները իրենց հիմքերն են ունեցել նախագրաբարյան բարբառային վիճակի մեջ»¹:

Ն. Միմոնյանը հայ-կելտական զուգաբանություններին առանձնապես չի անդրադառնում, սակայն որոշ դեպքերի համար ունի ուշադրության արժանի դիտարկումներ:

Անդրադառնանք դրանցից հատկապես հետևյալներին:

Ըստ Ն. Միմոնյանի՝ «հ.-ե. *ar(ə)ք- արմատը վկայված է նաև կելտական լեզուներում՝ միոլ. arbor (*arք) «հացաբույսեր, հացահատիկ», սեռ. arbe, որ ծագում է հին իռլանդերեն arչens ձևից. հոգնակի ուղղականի ձևն է arbanna: Ինչպես տեսնում ենք, միջին իռլանդերենի եզակի ուղղականի ձևը ծագում է *arք (r-ով), իսկ սեռականը՝ *arչens (ns-ով) հիմքից, այս երկրորդ հիմքից է կազմվել նաև հոգնակի ուղղականի arbanna ձևը: Այսպիսով, այս բառի իռլանդերենի հոլովման հարաբերություն առկա է հ.-ե. r/n-ով կազմված հիմքերի հերթագայությունը: Հ.-ե. այս արմատի r-ով հիմքն առկա է նաև հունարենում ἄρουρα [(< *ἄρο-Fρα < *ἄρο-Fap) < *aro-ք-)] «վարելահող» իմաստով: Մեզ թվում է, որ հայերեն *արաւս*-ը ևս կարելի է ծագած համարել հ.-ե. *ar(ə)ք- արմատի ns-ով աճած *ar(ə)ք-ns- ձևից, որն օրինաչափորեն հայերենում տալիս է *արաւս* (n-ի անկումով s-ից առաջ)² :

Հեղինակը գրում է. «Որոշակի բառը, ըստ Աճառյանի, հնդեվրոպական ծագում ունի և հ.-ե. մյուս լեզուներում պահպանված ձևերի հետ՝ լատ. rādō, rōdō, կիմր. rhathu, բրետ. raza և այլն, հանգում է հ.-ե. *rēd-, *rōd-, *rəd- արմատին: Չահուկյանը ենթադրում է արմատի *rodχo ձևը»³: Այնուհետև՝ գտնում է, որ «*դեղ* բառը կապում են հ.-ե. *dhal- «ծաղկել, կանաչել» արմատի *dhel- տարբերակի հետ: Հ.-ե. մյուս լեզուներում պահպանված են՝ հուն. θάλλω «ծաղկել, կանաչել»,

¹ Նույն տեղում, էջ 248:

² Նույն տեղում, էջ 221:

³ Նույն տեղում, էջ 226:

θαλλός «ընձյուղ, նոր ճյուղ», կիւր. dail «ճյուղ», հկոռն. delen «ճյուղ», հվգերմ. tola «ողկույզ, խաղողի որթ», toldo «ծառի կատարը՝ վերին մասը», նվգերմ. Dolde¹:

Ե. Ն. Մուքիասյանը, հայերենի և մյուս լեզուների արմատի կազմում հանդես եկող աճականի ուսումնասիրությանը նվիրված աշխատանքներում, հիմնվելով ամենից առաջ Ն. Աճառյանի (ըստ այդմ՝ Յ. Պոկոռնու և ուրիշների) բառարանի տվյալների վրա, անցկացնում է նաև հայ-կելտական գուգահեռներ² :

Դրանք երկու կարգի են՝ առանց հայերենի (որոնց, բնականաբար, չենք անդրադառնում) և հայերենին գուգահեռ բերվող:

Երկրորդ կարգի ձևերից են հետևյալները (ըստ մեկ կամ մյուս աշխատանքի, այլև միաժամանակ).

աղ (ան-ալ-ի) - հիռլ. salan, կիւր. halen (< հե. *sal-),

բոլլ «խումբ» - հիռլ. bolach (< հե. *bheñl-),

գեղձ(ալ) «փափագ(ել), տենչ(ալ)»- իռլ. fled, կիւր. gwled, բրետ. quell (< հե. *uel-),

եսոդ, տեղի - կիւր. sedda, գալլ. sedlon «նստելու տեղ» (< հե. *sed-),

լու- (ռ, ր, ս) - հիռլ. clū «հոշակ», cloor «լսել», կիւր. clüst «լսողություն» (< հե. *kleū-),

լքանեւ - հիռլ. léicid «թողնում է» (< հե. *leik-),

ծին (ծն-ունդ) - բրետ. genel «ծնվել» (< հե. *g'eno-),

քուն (քն-ոյ) - կիւր. կոռն. բրետ. svan, հիռլ. svefn (< հե. *swoþ-no-) և այլն:

Հեղինակի «Աճականը հայերենում» մենագրության «Բառարան-հավելված»-ում (էջ 135-240), ի թիվս այլ լեզուների հնարավոր համեմատելի ձևերի, տրվում են հայ-կելտական ինը տասնյակից ավելի գուգահեռներ (ստույգ՝ 94), որ ստորև բերում ենք նախ՝ իբրև մեկ ամբողջություն, այնուհետև՝ կատարում դրանց խմբավորում՝ նկատի ունենալով գուգաբանություն կազմող կելտական լեզուների քանակային կողմը:

Նախ՝ անդրադառնանք այդ ցանկին՝ ըստ մեր այս թեմայի հարկավորության. հարկ եղած դեպքում հնդեվրոպականի համար բերում ենք այն վերա-

¹ Նույն տեղում, էջ 240-241:

² Ն. Վ. Մուքիասյան, Աճականը հնդեվրոպական բառի կազմում (հայերենի նյութի հիման վրա) // «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», պրակ 1, Ե., 1979, էջ 249-324: Նույնի՝ Աճականը հայերենում, Ե., 1986: Վերջերս լույս է տեսել այդ աշխատության նմանահանությամբ (Ֆաքսիմիլե) տարբերակը:

կանգնումը, որ գուգաբանություն է ապահովում հայերենի և կելտականի համար (հմմտ. էջ- հիռլ. ðegi «հյուր» (< հե. *ei-gh-): Հ. Սուքիասյանը նախաձևի համար տալիս է ընդհանուր և հայերենի համար վերականգնելի տարբերակներ, ըստ Գ. Ջահուկյանի մեթոդիկայի, որ պարտադիր չէ գուգաբանական համեմատության դեպքում, այլ հիմնականում նշում ենք հավանական ընդհանուրը.

աղանի [ալալ-(u)ունք «Բույք (համաստեղություն)»] - գալլ. Alaunos, Alaunae (դիցանուն), բրետ. Alaunos (գետանուն), կիմր. Alun (անձնանուն) (< հե. *al-),

աղտ «աղ» - հիռլ. salann «աղի», կիմր. halen (նույնը) (< հե. *sal-),

ամիս - հիռլ. mī «ամիս», բրետ. miz «ամիս. լուսին», կիմր. mis (նույնը) (< հե. *mēn-),

անձուկ «նեղ» - հիռլ. cumcae «սրսնեղություն», cumung «նեղ», մբրետ. encq (նույնը) (< հե. *ang'h-),

ասեղն - մբրետ. hygo(u)len «հեսան», հկիմր. ocoluin «սրաքար» (< հե. *ak'-' / *ok'-),

ատաղձ - իռլ. fo-dálim «անջատել», delb «ձև. կերպ», dluigim «ձեղքել», միռլ. del «ճիպոտ. ձեռնափայտ», հկիմր. delu «պատկեր» (< հե. *del- / *dol- / dl-),

արածել - կիմր. trwyddo «պատռել, ծակել» (< հե. *trə-),

արծուի - հիռլ. reg-, rog(a)id «տարածել. երկարել», rī «արքա», recht «կարգ, օրենք», բրետ. reiz «կարգ, օրենք» (< հե. *reg'-),

աւղ «օղ» - հիռլ. feth «օղ», իռլ. ūar «ցուրտ», հկոռն. awit «օղ», auhel «եղանակ. օղ», oir «ցուրտ», մկիմր. awyð «քամու բնկում», բրետ. aial «քամի. շունչ», կիմր. avel «քամի. շունչ», oer «ցուրտ», gwynt «քամի» [< հե. *au- / *au(e)-],

(խայտա)բղէտ - կելտ. belo «պայծառ, փայլուն. սպիտակ», կիմր. ufel «կայծ, կրակ» [< հե. *bh(ē)lei-],

բողկ - հիռլ. bláth «ծաղիկ», գաել. bile «տերևիկ. ծաղիկ» [< հե. *bh(e)l- / *bh(o)l-],

բոյս - հիռլ. buith «լինել», bōi «եղավ» (< հե. *bheu-),

բով «բուրա. հնոց» - հիռլ. bān «ձերմակ» (< հե. *bho-),

գաղտնի - հիռլ. fell «կեղծիք» (< հե. *uel-),

գարշ «տհաճ» - հիռլ. gortae «քաղց», միռլ. goirt «ղառն» (< հե. *gher- / *ghor- / *ghr-),

գեղձ «փափագ, տենչ» - իռլ. fled «հյուրասիրություն», բրետ. quell «ավելի լավ», կիմր. gwled «խնջույք» (< հե. *uel-),

գեղձ «բաղեղ» - հիռլ. fillim «ծալել», կիւր. gwawl «սասունէջ», olwyn «անիվ» (< հե. * ucl-),

դայլ «կաթնախեծ» - հիռլ. dīnu «գառնուկ», denaff «ծծել», del «ստինք», միռլ. del «տիտ. ստինք», delech «կրթու (կով). կրթան», կիւր. dynu «ծծել» (< հե. *dhē- / *dhō-),

դեղձ - միռլ. deil «ճիպոտ», հկոռն. delen «ճյուղ», կոռն. déle «ճիպոտ, ճյուղ», քրեւ. delez «ճիպոտ», կիւր. dail «տերն. սաղարթ» (< հե. *dhāl- / *dhel-dh-),

դուրզն - հիռլ. droch «անիվ» (< հե. *dher- / *dhōr-),

եղծ - հիռլ. olc «վաս», մքրեւ. el-boet «քաղց», քրեւ. ol-argant «անփող (լինելը)», ol-buid «անսնունդ (լինելը)» (< հե. *el- / *ol-),

երհնջ - հիռլ. heirp «այծ(յամ)», erb(b) «կով», միռլ. reith «խոյ, (վայրի) ոչխար», նիռլ. earb, fearb «որսի կենդանի, կով» (< հե. *eri-),

էջ - հիռլ. òegi «հյուր» (< հե. *ei-gh-),

ընթանալ - հիռլ. sēt «ճանապարհ», քրեւ. hen (նույնը), մկիւր. hennydd «արբանյակ», hanter «հարևան», կիւր. hynt «ճանապարհ» (< հե. *sen-th-),

թանչ «(փոր)լուծ» - հիռլ. tām «կիսահալ ձյուն», tās «խմորել», քրեւ. teil «սաղ», tōaz «խմոր», կիւր. tail «կղկղանք», tōes «խմոր» (< հե. *tā-ni-),

թառամել - հիռլ. tīrim «չոր», կոռն. tir «երկիր, երկրագունք» (< հե. *ter- / *tor-),

թերթ - իռլ. en «թոշուն», հկիւր. eterin (նույնը), hedant «թոշել», կիւր. atar «թոշուն, հավք», etn «թոշուն», hedant «թոշող» (< հե. *pt-er-),

թուշ «այտ» - կիւր. tin «նստուկ» [< հե. *tēu- / *teu(ə)-],

լայն - գալլ. litano «լայն», հիռլ. lethan (նույնը), lam «ձեռք», lār «(սալլա)հատակ», իռլ. lethaim «տարածել», lethan «լայն», կոռն. ledan (նույնը), հքրեւ. litan (նույնը), քրեւ. ledan (նույնը), led «լայնություն», կիւր. llydan «լայն», llêd «լայնություն», lledu «տարածել», llaw «ձեռք», llawr «հատակ» [< հե. *pel- / *(p)lā- / *(p)lō-(t)-],

լիկ «լիճ. ավազան» - հիռլ. legaim «հալվել, լուծվել» (< հե. *lē-g-),

լիրբ - հիռլ. slemun «լարծուն», sligim «քսել, տրորել», միռլ. slemain «հարթ», կիւր. llyfn «հարթ, ողորկ» [< հե. *(s)lei- / *(s)li-],

լոռ - հիռլ. loathar, lothavi «ջրանցք», իռլ. locharair «անձրև», գալլ. lautro «բաղնիք», կոռն. gla «անձրև», կիւր. gwlaue «անձրև» (< հե. *lā- / *lē- / *lō-),

լոյծ - իռլ. lun «ոչխար» (< հե. *leu-g'-),

լսել - հիռլ. clunim «լսեմ», cloth «փառք», clu «հոշակ», cloor «լսեմ», claus «ա-կանջ», վգալլ. clust (տւյնը), կոռն. clewai «լսել», բրետ. klévout «լսել», կիմր. clywed «լսել», clüst «լսողութուն» (< հե. *k'lu-k'-),

խանս/խանդ - բրետ. cann «լիալուսին», condud «վառելափայտ», կիմր. cann «սայիտակ», cynneu «վառել» (< հե. *khan-d-),

խարջել - հիռլ. coirm «զարեջուր» [< հե. *k(h)r(ə)- / *k(h)or-],

խիլթ (*խոյ-լթ) (բրբո.) - իռլ. cūl «մեջք», բրետ. kīl «մեջք, թիկունք», կիմր. cil «թիկունք» (< հե. *kheu-lo-),

ծաղր - կիմր. gloew «փայլուն, հստակ» (< հե. *g'əḷō-),

կեղերջ «զանգաստ, տրտունջ» - հիռլ. -balt «մեռավ», կիմր. ballu «մեռնել» [< հե. *g^ucl(e)-],

կեղծ - միռլ. celg «նենգութուն. խորամանկություն» (< հե. *kel-g'-),

կենդանի - իռլ. biu, beo «կենդանի», bethu, beothu «կյանք», biad «ուտելիք, սնունդ», բրետ. beo «կենդանի», կիմր. byw (տւյնը) (< հե. *g^uei- / *g^ui-),

կեռ «թեք, ծուռ» - հիռլ. gairr «ծունկ», gau- «սուտ, կեղծիք» (< հե. *ger-),

կիծ «կծել» - հիռլ. gēr «սուր, կծու» (< հե. *gei-g'-),

կլափն «ներքին ծնտ» - հիռլ. gelid «ուտել, խժռել», gaile «ստամոքս», gelim «ուտել, լափել», միռ. gil «տզրուկ», հկոռն. ghel (տւյնը), բրետ. gélaouen (տւյնը), կիմր. gel (տւյնը) [< հե. *gel(ē)- / *gol(ə)-],

կոկորդ - հիռլ. brāgae «վիզ, ծոծրակ», հկոռն. briansen «կոկորդ», մկիմր. breuant «շնչափող» (< հե. *g^uer- / *g^uor-),

կոռնկ - հիռլ. gar «բղավել» (< հե. *ger- / *gor-),

կոռլթ «հանգույց. կապ» - նիռլ. qlacaim «բռնել» [< հե. *gel- / *g(o)lə-],

կուտ - միռլ. gūaire «մազ, բուրդ, խոպուպ» (< հե. *geu- / *gəu-),

հարաւունք «ցանքս. արտ» - միռլ. arbor «հացահատիկ», arathar «արոր», airim «վարել, հերկել», կոռն. erw, ereu «ակոս», aradar «արոր», մբրետ. eru «ակոս», կիմր. erw «դաշտ», aradr «արոր» [< հե. *ar(ə)- / *arā-],

հարկանել - հիռլ. orgaim «զարկել, սպանել», orgun «սպանելը», orcaid «խփել, սպանել» (< հե. *per- / *por-),

հարսն - հիռլ. (imm-chom-) arc «բարև, հարցուփորձ», միռլ. arco «աղաչում եմ», մբրետ. archas «հրամայել», հկիմր. archaf «հարցնել», կոռն. arghaf «խնդրել» (< հե. *per- / *por-),

հաղի - հիռլ. huinnius «հաղի», բրետ. ounn-en (տւյնը), կիմր. onnen (տւյնը) (< հե. *os- / *as-),

հեռ «հեռու» - հիռլ. *ire* «հետին», (on) *hurid* «անցյալ (տարի)» (< հե. *per- / *por-),

հերկ - հիռլ. *etrech* «ակոս», գալլ. *rica* «ակոս, վարել», հրեւտ. *rec* «հերկել», կիւր. *rhych* «ակոս» (< հե. *per- / *por-),

հորդել - գալլ. *ritu* «ծանծաղուտ» (< հե. *per- / *por),

հունչ - կիւր. *hanes* «պատմություն» [< հե. *s(y)en- / *s(y)on-],

ճնչել - միռլ. *gemel* «ձեռնակապեր, շղթաներ» (< հե. *gem- / *gom-),

մանր - հիռլ. *menb* «վոքր», նիռլ. *meanbh* «շատ քիչ» (< հե. *men-),

մեղկ - հիռլ. *melim* «աղալ», *meldach* «փափուկ», միռլ. *mell* «սխալ, վրիպում», բրեւտ. *malaff* «աղալ», կիւր. *malu* (նույնը), *blawt* «ալյուր» (< հե. *mel- / *mol-),

մեղր - հիռլ. *mil* «մեղր», *milis* «քաղցր», *mid* «մեղրաջուր», բրեւտ. *mel* «մեղր», *mez* «մեղրաջուր», կիւր. *mel* «մեղր», *medd* « մեղրաջուր» (< հե. *meli, նաև *medhu-*),

մեռանիլ - հիռլ. *marb* «մեռած», կիւր. *marw* (նույնը) (< հե. *mer- / *mor-),

միտ - հիռլ. *midieur* «մտածել», *mod* «կշիռ», իռլ. *midieur* «մտածել, կարծել», *mod* «կշիռ», կիւր. *meddwl* «հոգի, միտք» (< հե. *me- d- / *mē-d-),

մոյթ «նեցուկ» - միռլ. *methos* «պատնեշ» [< հե. *me(i)u-th-],

մորմ «շնիսաղող» - միռլ. *merenn* «թութ», կիւր. *merwydden* «թութ» [< հե. *mor(o)-],

մրջին / մրջին - իռլ. *moirb* «մրջուն», կիւր. *mor, myr* (նույնը) [< հե. *morui- / *mor(u)-],

մուղջ «խավար» - հիռլ. *múch* «ծուխ», կոռն. *mok* (նույնը), բրեւտ. *moug, mog* «կրակ», *moged* «ծուխ», կիւր. *mwg* (նույնը) [< հե. *(s)meu- / *mu-],

յագ «կուշտ. լի» - հիռլ. *sáith* «հագուրդ, կուշտ լինելը», *sathech* «կուշտ» (< հե. *sā-),

լեղ «լի, լեփ-լեցուն» - հիռլ. *il* «շատ», *lia* «ավելին», *lour* «բավական», *lān* «լի», կոռն. *lanwes* «լի լինելը», բրեւտ. *lano* «հեղեղ», կիւր. *llawer* «շատ», *llwyr* «ամբողջովին» (< հե. *pel- / *plē-),

յորդ - հիռլ. *riathor* «ջրվեժ», հկիւր. *reatir* (նույնը), կիւր. *rhaiadr* (նույնը) (< հե. *er-t- / *or-t-),

նայ «թաց, խոնավ» - հիռլ. *snām* «լոռ, լողալը», միռլ. *snāim* «լողալ», իռլ. *snuadh* «գետ», բրեւտ. *neuff* «լողալ», *naid* (նույնը), մկիւր. *díenad* «(ծովի) մոնչյուն», կիւր. *nawf* «լողալ», *naid* «ցատկ» (< հե. *snā- / *snō-),

նեարդ – հիռլ. snāthe «թել» (*snēu-),
ռլոք – հիռլ. less «երանք», uilen «արմունկ», uilen (նույնը), բրետ. ilin (նույնը),
 կիւր. elin (նույնը), olwyn «անիվ», elain «եղջերու» (< հե. *el- /*ol-),
ռլք – միռլ. ulach «աղմուկ, աղաղակ», իռլ. ulchaochan «բու», նիռլ. ulchaochan
 (նույնը) (< հե. *ol-bh-),
ռոնալ – հիռլ. rūn «գաղտնիք», միռլ. rucht «ռոնց, աղաղակ», կիւր. rhin
 «գաղտնիք» (< հե. *reu- / *rēu-),
ռսոռ – կիւր. asgwrn «ոսկր», կոռն. ackorn «ոսկր» ([< հե. *ozdo-),
ռրդի – կիւր. erthyl «(վիժված) ձագ», erthylu «վիժել» (< հե. *per- /*por-),
պինդ – միռլ. bunne «կապ» (< հե. *bhen-),
ջինջ – հիռլ. gonim «վիրավորել, սպանել», guin «վերք» [< հե. *g^hen(ə)-],
սաղարթ – միռլ. cail «նիզակ», celtair «(նիզակի) ծայր» (< հե. *k^hel-),
սիրտ – հիռլ. cride «սիրտ», իռլ. croidhe (նույնը), բրետ. kreiz «միջոց, մեջ-
 տեղ», կիւր. kraidd «սիրտ» (< հե. *k^her- / *k^hor-),
ստեղծել – հիռլ. tāu, ta «(եւ) եմ», cono-snaim «դադարել, ընկրկել» (< հե. *stel-),
ստերդ (*ստերջ*) «ամուլ» – գալլ. serth «հաստատուն, պինդ», իռլ. seirt «ուժ» (<
 հե. *ster-),
ստնգալ «(ջերր) պրկվել՝ ձգվել» – իռլ. técht «սնդագած», co-técim «մածնել»
 [< հե. *(s)ten-],
սուրբ – իռլ. cuanna «գեղեցիկ, նուրբ» (< հե. *k^heu- / *k^hu-),
սեն «շղարշ, քոռ» – կիւր. darn «կտոր» (< հե. *der-),
սիւ «օր, ցերեկ» – հիռլ. in-diu «այսօր», dia «աստված», denus «պահ, միջոց»,
 կիւր. diw, dyw «օր», duiu «աստված», բրետ. doué (նույնը) (< հե. *dei- /*di-),
սուր(ք) – հիռլ. dān «ընծա», կիւր. dawn «նվեր» (< հե. *dō-),
ցայտ (*ցայթ*) – հիռլ. focerdaim «նետել, շարտել», միռլ. scatan «հարինգ, (մի
 տեսակ) ձուկ», ceird «քայլելը», կիւր. cerddaf «գնալ, շրջել», ysyadan «հարինգ,
 (մի տեսակ) ձուկ» (< հե. *skhē- / *skeu-),
ցուել «ծվաստվել» – հիռլ. scothaid «կտրում է», միռլ. scothaid «սայր», մբրետ.
 squeigaff «կտրել» (< հե. *skei-),
փաղփ «փայլ. շողք» – իռլ. loinnreadh «փայլ», միռլ. lains «փայլուն, պայ-
 ծառ», lëss «լույս», կիւր. llathru «մաքրել» [< հե. *(s)p(h)el-],
փայծաղն – հիռլ. selg «փայծաղ», բրետ. felch (նույնը) [< հե. *sp(h)el-],
փեղկ – կիւր. ffochen «տաշեղ» [< հե. *(s)p(h)el-],
փոյթ – կիւր. ffwdan «շտապելը, փութալը» [< հե. *(s)p(h)eu-],

քերծել – հիռլ. scaraim «բաժանել», միռլ. cerb «հասնու, սուր», scripaim «քերել, քորել», կիմր. corr «հյուծված, գաճաճ» [< հե. *(s)ker-]:

Այնուհետև՝ ինչպես կարելի է նկատել, հայերենի տվյալ ձևի հետ զուգահեռ են կելտական լեզուների մեկ և մեկից ավելի (մինչև 5) ձևեր, և ըստ այդմ էլ կարելի է խմբավորել հիշյալ զուգաբանությունները՝ պարզելու զուգաբանական ներարկությունը (ինտենսիվությունը):

ա) Զուգաբանություն հայերենի և կելտական լեզուներից մեկի հետ (թվով՝ 35).

արածել - կիմր. trwyddo «պատռել, ծակել» (< հե. *trə-),

բոյս - հիռլ. buith «լինել», bōi «եղավ» (< հե. *bheu-),

բով «քուրա. հնոց» - հիռլ. bān «ձերմակ» (< հե. *bho-),

գաղտնի - հիռլ. fell «կեղծիք» (< հե. *uļ-),

դուրզն - հիռլ. droch «անիվ» (< հե. *dher- / *dhōr-),

էջ - հիռլ. ðegi «հյուր» (< հե. *ei-gh-),

թուշ «այտ» - կիմր. tin «նստուկ» [< հե. *tēu- / *teu(ə)-],

լիկ «լիճ. ավազան» - հիռլ. legaim «հավլել, լուծվել» (< հե. *lē-g-),

լոյծ - իռլ. lun «ոչխար» (< հե. *leu-g'-),

խարշել - հիռլ. coirm «զարեջուր» [< հե. *k(h)r(ə)- / *k(h)or-]

ծաղր - կիմր. gloew «փայլուն, հստակ» (< հե. *g'əld-),

կեղծ - միռլ. cēlg «նենգություն. խորամանկություն» (< հե. *kel-g'-),

կեն «թեք, ծուռ» - հիռլ. gairr «ծունկ», gau- «սուտ, կեղծիք» (< հե. *ger-),

կիծ «կծել» - հիռլ. gēr «սուր, կծու» (< հե. *gei-g'-),

կոռնկ - հիռլ. gar «բղավել» (< հե. *ger- / *gir-),

կուղթ «հանգույց. կապ» - նիռլ. qlacaim «բռնել» [< հե. *gel- / *g(o)lə -],

կուտ - միռլ. gūaire «մազ, բուրդ, խոպոպ» (< հե. *geu- / *gəu-),

հարկանել - հիռլ. orgaim «զարկել, սպանել», orgun «սպանելը», orcaid «խփել, սպանել» (< հե. *per- / *por-),

հեն «հեռու» - հիռլ. ire «հետին» (on) hurid (< հե. *per- / *por-),

հորդել - գալլ. ritu «ծանծաղուտ» (< հե. *per- / *por-),

հունչ - կիմր. hanes «պատմություն» (< հե. *s(y)en- / *s(y)on-],

ճնկել - միռլ. gemel «ձեռնակապեր, շղթաներ» (< հե. *gem-/*gom-),

մոյթ «նեցուկ» - միռլ. methos «պատնեշ» [< հե. *me(i)u-th-],

յագ «կուշտ. լի»-հիռլ. sāith «հագուրդ, կուշտ լինելը», sathēch «կուշտ» (< հե. *sa-),

նեարդ - հիռլ. snāthe «թել» (< հե. *sneu-),

որդի - կիւր. *erthyl* «(վիժված) ձագ», *erthylu* «վիժել» (< հե. *per- / *por-),
պինդ - միռլ. *bunne* «կապ» (< հե. *bhen-),
ջինջ - հիռլ. *gonim* «վիրավորել, սպանել», *guin* «վերք» [< հե. *g^uhen(ə)-],
սաղարթ - միռլ. *cuil* «նիզակ», *celtair* «(նիզակի) ծայր» (< հե. *k^uel-),
ստեղծել - հիռլ. *tāu, ta* «(եւ) եմ» *cono-snaim* «դադարել, ընկրկել» (< հե. *stel-),
ստնգալ «(ջղերը) պրկվել՝ ձգվել» - իռլ. *técht* «պնդացած», *co-técim* «մածնել»
[< հե. *(s)ten-],

սուրբ - իռլ. *cuanna* «գեղեցիկ, նուրբ» (< հե. *k^ueu- / *k^uu-),

տեռ «շղարշ, քող» - կիւր. *darn* «կտոր» (< հե. *der-),

փեղկ - կիւր. *fflochen* «տաշեղ» (< հե. *(s)p(h)el-),

փոյթ - կիւր. *ffwdan* «շտապելը, փութալը» [< հե. *(s)p(h)eu-]:

բ) Չուգաբանություն հայերենի և կելտական լեզուներից երկուսի հետ
(թվով՝ 19).

աղտ «աղ» - հիռլ. *salann* «աղի», կիւր. *halen* «աղի» (< հե. *sal-),

անձուկ «նեղ» - հիռլ. *cumcae* «սրտնեղություն», *cumung* «նեղ», մբրետ. *encq*
«նեղ» (< հե. *ang^h-),

ասեղն - մբրետ. *hygo(u)len* «հեսան», հկիւր. *ocoluin* «սրաքար» (< հե. *ak^u-/*ok^u-),

արծուի - հիռլ. *reg-, rog(a)id* «տարածել. երկարել», *rī* «արքա», *recht* «կարգ,
օրենք», բրետ. *reiz* «կարգ, օրենք» (< հե. *regⁱ-),

(խայտա)բղէտ - կելտ. *belo* «պայծառ, փայլուն. սպիտակ», կիւր. *ufel* «կայծ,
կրակ» [< հե. *bh(ē)lei-],

բողկ - հիռլ. *bláth* «ծաղիկ», գաել. *bile* «տերնիկ. ծաղիկ» [< հե. *bh(e)l- /
*bh(o)l-],

գարշ «սհաճ» - հիռլ. *gwrtae* «քաղց», միռլ. *goirt* «դառն» (< հե. *gher- / *ghor- /
*ghr-),

գեղձ «բաղեղ» - հիռլ. *fillim* «ծալել», կիւր. *gwawl* «պատնէշ», *olwyn* «անիվ»
(< հե. *uel-),

թառասել - հիռլ. *tírím* «չոր», կոռն. *tir* «երկիր, երկրագունդ» (< հե. *ter- / *tor-),

խանտ / խանդ - բրետ. *cann* «լիալուսին», *condud* «վառելափայտ», կիւր.
cann «սպիտակ», *cynneu* «վառել» (< հե. *khan-d-),

կեղերջ «գանգատ, տրտունջ» - հիռլ. *-balt* «մեռավ», կիւր. *ballu* «մեռնել» [<
հե. *g^uel(e)-],

կուղթ «հանգույց. կապ» - նիռլ. *qlacaim* «բռնել» [< հե. *gel- / *g(ō)lᵛ-],

մանր - հիռլ. mend «փոքր», նիռլ. meanbh «շատ քիչ» (<հե. *mənu-r-),
մեռանիլ - հիռլ. marb «մեռած», կիւր. marw «մեռած» (<հե. *mer-/ *mor-),
մորմ «շնխաղող» - միռլ. merenn «թուր», կիւր. merwydden «թուր» [<
հե.*mor(o)-],

մրջին / *մրջիմ* - իռլ. moirb «մրջուն», կիւր. mor, myr «մրջուն» [< հե.
*morui- / *mor(u)-],

ոստղ - կիւր. asgwrn «ոսկր», կոռն. ackorn «ոսկր» (<հե. *ozdo-),

ստերդ «ստերք» - գալլ. serth «հաստատուն, պինդ», իռլ. seirt «ուժ» (< հե.
*ster-),

տոր(ք) - հիռլ. dān «ընծա», կիւր. dawn «նվեր» (< հե. *dō-),

փայծաղն - հիռլ. selg «փայծաղ», բրետ. felch «փայծաղ» [< հե. *sp(h)el-],

զ) Չուգաբանություն հայերենի և կելտական լեզուներից երեքի հետ
(թվով՝ 25).

աղանի [*ալա-(u)ունք* «Բույք (համաստեղություն)» - գալլ. Alaunos, Alaunae (դիցանուն), բրետ. Alaunos (զետանուն), կիւր. Alun (անձնանուն) (<
հե. *al-),

ամիս - հիռլ. mī «ամիս», բրետ. miz «ամիս. լուսին», կիւր. mis «ամիս. լու-
սին» (< հե. *mēn-),

ատաղձ - իռլ. fo-dálim «անջատել», delb «ձև. կերպ», dluigim «ճեղքել», միռլ.
del «ճիպոտ. ձեռնափայտ», հկիւր. delu «պատկեր» (< հե. *del- / *dol-),

զեղձ «փափագ, տենչ» - իռլ. fied «հյուրասիրություն», բրետ. quell «ավելի
լավ», կիւր. gwled «խնջույք» (< հե. *uel-),

դալ «կաթնախեժ» - հիռլ. dīnu «գառնուկ», denaff «ծծել», del «ստինք», միռլ.
del «սիտ. ստինք», delech «կթու (կով). կթան», կիւր. dynu «ծծել» (< հե. *dhē- /
*dhə-),

եղծ - հիռլ. olc «վատ», մբրետ. el-boet «քաղց», բրետ. ol-argant «անփող (լինե-
լը)», ol-buid «անսնունդ (լինելը)» (< հե. *el- / *ol-),

երինջ - հիռլ. heirp «այծ(յամ)», erb(b) «կով», միռլ. reith «խոյ, (վայրի) ոչ-
խար», նիռլ. earb, fearb «ոքսի կենդանի, կով» (< հե. *eri-),

թանչ «(փոքր)լուծ» - հիռլ. tām «կիսահալ ձյուն», tāis «խմորել», բրետ. teil
«աղբ», tōaz «խմոր», կիւր. tail «կղկղանք», tœo «խմոր» [< հե. *tā-ni-],

թերթ - իռլ. en «թռչուն», հկիւր. eterin «թռչուն», hedant «թռչել», կիւր. atar
«թռչուն, հավք», etn «թռչուն», hedant «թռչող» (< հե. *pt-er-),

լիրբ - հիռլ. slemum «լպրծուն», sligim «քսել, տրորել», միռլ. slemain «հարթ», կիւր. llyfn «հարթ, ողորկ» [$<$ հե. *(s)lei- / *(s)li-],

խիլթ (բրբռ.) ($<$ **խոյ-լ-թ*) - իռլ. cūl «մեջք», բրետ. kíl «մեջք, թիկունք», կիւր. cil «թիկունք» ($<$ հե. *kheu-lo-),

կենդանի - իռլ. biu, beo «կենդանի», bethu, beothu «կյանք», biad «ուսելիք, սնունդ», բրետ. beo «կենդանի», կիւր. byw «կենդանի» ($<$ հե. *g^hei- / *g^hi-),

կոկորդ - հիռլ. brāgae «վիզ, ծոծրակ», հկոռն. briansen «կոկորդ», մկիւր. breuant «շնչափող» ($<$ հե. *g^her- / *g^hor-),

հացի - հիռլ. huinnius «հացի», բրետ. ounn-en «հացի» կիւր. onnen «հացի» ($<$ հե. *-os- / *as-),

մեղր - հիռլ. mil «մեղր», milis «քաղցր», mid «մեղրաջուր», բրետ. mel «մեղր», mez «մեղրաջուր», կիւր. mel «մեղր», medd «մեղրաջուր» ($<$ հե. *meli-, *medhu-),

միտ - հիռլ. midiur «մտածել», mod «կշիռ», իռլ. midiur «մտածել, կարծել», mod «կշիռ», կիւր. meddwl «հոգի, միտք» ($<$ հե. *me-d- / *mē-d-),

յորդ - հիռլ. riathor «ջրվեժ», հկիւր. reatir «ջրվեժ», կիւր. rhaiadr «ջրվեժ» ($<$ հե. *er-t- / *or-t-),

ուրբ - հիռլ. less «երանք», uilen «արմունկ», uilen «անկյուն», բրետ. ilin «արմունկ», կիւր. elin «արմունկ», olwyn «անիվ», elain «եղջերու» ($<$ հե. *el- / ol-),

ոռբ - միռլ. ulach «աղմուկ, աղաղակ», իռլ. ulchaochan «բու», նիռլ. ulchaochan «բու» ($<$ հե. *ol-bh-),

ոռնալ - հիռլ. rūn «գաղտնիք», միռլ. rucht «ոռնոց, աղաղակ», կիւր. rhin «գաղտնիք» ($<$ հե. *reu / *rēu-),

տիւ «օր, ցերեկ» - հիռլ. in-diu «այսօր», dia «աստված», denus «պահ, միջոց», կիւր. diw, dyw «օր», duiw «աստված», բրետ. doué «աստված» ($<$ հե. *dei- / *di-),

ցայտ/ցայթ - հիռլ. focerdaim «նետել, շարտել», միռլ. scatan «հարինգ (մի տեսակ ձուկ)», ceird «քայլելը», կիւր. cerddaf «գնալ, շրջել», ysvadan «հարինգ (մի տեսակ ձուկ)» ($<$ հե. *skhē- / *skeu-),

ցոնել «ծվասովել» - հիռլ. scothaid «կտրում է», միռլ. scothaid «սայր», մբրետ. squeigaff «կտրել» ($<$ հե. *skei-),

փաղփ «փայլ. շողք» - միռլ. lainn «փայլուն, պայծառ», lēss «լույս», իռլ. loinnreadh «փայլ», կիւր. llathru «մաքրել» [$<$ հե. *(s)p(h)el-],

քերծել - հիռլ. scaraim «բաժանել», միռլ. cerb «հատու, սուր», scripaim «քերել, քորել», կիւր. corr «հյուծված, գաճաճ» ($<$ հե. *(s)ker-):

դ) Զուգաբանություն հայերենի և կելտական լեզուներից չորսի հետ (թվով՝ 7).

ընթանալ - հիռլ. *sēt* «ճանապարհ», բրետ. *hen* «ճանապարհ», մկիմբ. *hennydd* «արբանյակ», *hanter* «հարևան», կիմբ. *hynt* «ճանապարհ» (< հե. **sen-th-*),

հարաւունք «ցանքս. արտ» - միռլ. *arbor* «հացահատիկ», *arathar* «արոք», *airim* «վարել, հերկել», կոռն. *erw, ereu* «ակոս», *aradar* «արոք», մբրետ. *eru* «ակոս», կիմբ. *erw* «դաշտ», *aradr* «արոք» [< հե. **ar(ə)- / *arā-*],

հերկ - հիռլ. *etrech* «ակոս», գալլ. *rica* «ակոս, վարել», հբրետ. *rec* «հերկել», կիմբ. *rhych* «ակոս» (< հե. **per- / *por-*),

մեղկ - հիռլ. *melim* «աղալ», *meldach* «փափուկ», միռլ. *mell* «սխալ, վրիպում», բրետ. *malaff* «աղալ», կիմբ. *malu* «աղալ», *blawt* «այլուր» (< հե. **mel- / *mol-*),

մուղջ «խավար» - հիռլ. *múch* «ծուխ», կոռն. *mok* «ծուխ», բրետ. *moug, mog* «կրակ», *moged* «ծուխ», կիմբ. *mwg* «ծուխ» [< հե. *(s)*meu- / *mu-*],

լեղց «լի, լեփ-լեցուն» - հիռլ. *il* «շատ», *lia* «ավելին», *lour* «բավական», *lān* «լի», կոռն. *lanwes* «լի լինելը», բրետ. *lano* «հեղեղ», կիմբ. *llawer* «շատ», *llwyr* «ամբողջովին» (< հե. **pel- / *plē-*),

սիրտ - հիռլ. *cride* «սիրտ», իռլ. *croidhe* «սիրտ». բրետ. *kreiz* «միջոց, մեջտեղ», կիմբ. *kraidd* «սիրտ» (< հե. **k'er- / *k'or-*):

ե) Զուգաբանություն հայերենի և կելտական լեզուներից հինգի հետ (թվով՝ 5).

դեղձ - միռլ. *deil* «ճիպոտ», հկոռն. *delen* «ճյուղ», կոռն. *déle* «ճիպոտ, ճյուղ», բրետ. *delez* «ճիպոտ», կիմբ. *dail* «տերև. սաղարթ» (< հե. **dhāl - / *dhel-dh-*),

լոռ - հիռլ. *loathar, lothavi* «ջրանցք», իռլ. *locharair* «անձրև», գալլ. *lautro* «բաղնիք», կոռն. *gla* «անձրև», կիմբ. *gwlaue* «անձրև» (< հե. **lā- / *lē- / *lo-*),

լսել - հիռլ. *clunim* «լսեն», *cloth* «փառք», *clu* «հոչակ», *cloor* «լսեն», *claus* «ականջ», վգալլ. *clust* «ականջ», կոռն. *clewai* «լսել», բրետ. *klévout* «լսել», կիմբ. *clywed* «լսել», *clüst* «լսողություն» (< հե. **k'lu-k'-*),

կլափն «ներքին ծնոտ» - հիռլ. *gelid* «ուտել, խժոել», *gaile* «ստամոքս», *gelim* «ուտել, լափել», միռլ. *gil* «սոզրուկ», հկոռն. *ghel* «սոզրուկ», բրետ. *gélaouen* «սոզրուկ», կիմբ. *gel* «սոզրուկ» [< հե. **gel(ē)- / *gol(ə)-*],

հարսն - հիռլ. (imm-chom-) arc «բարև, հարցուփոքր», միռլ. arco «աղաչում եմ», մբրետ. archas «հրամայել», հլիմբ. archaf «հարցնել», կոռն. arghaf «խնդրել» (< հե. *per-/*por-):

զ) Չուգաբանություն հայերենի և կելտական լեզուներից վեց և ավելիի հետ (թվով՝ 3).

աւղ «օղ»- հիռլ. feth «օղ», իռլ. ūar «ցուրտ», հկոռն. awit «օղ», auhel «եղանակ. օղ», oir «ցուրտ», մկիմբ. awyð «քամու բռնկում», բրետ. aial «քամի. շունչ». կիմբ. awel «քամի. շունչ», oer «ցուրտ», gwynth «քամի» [< հե. *au- / *au(e)-],

լայն - գալլ. litano «լայն», հիռլ. lethan «լայն», lam «ձեռք», lār «(սալա)հատակ», իռլ. lethaim «տարածել», lethan «լայն», կոռն. ledan «լայն», հբրետ. litan «լայն», բրետ. ledan «լայն», led «լայնություն», կիմբ. llydan «լայն», llêd «լայնություն», lledu «տարածել», llaw «ձեռք», llawr «հատակ» [< հե. *pel- / *(p)lā-],

նայ «թաց, խոնավ» - հիռլ. snām «ող, լողալը», միռլ. snāim «լողալ», իռլ. snuadh «գետ», բրետ. neuff «լողալ», naid «լողալ», մկիմբ. diénad «(ծովի) մոնչյուն», կիմբ. nawf «լողալ», naid «ցատկ» (< հե. *snā- / *snō-):

Բերված բառային զուգաբանությունների վերաբերյալ կարելի է նշել հետևյալը.

ա) հայերենի հետ զուգորդվում են մասամբ մեկ, մեծ մասամբ՝ երկու, երեք, չորս և ավելի կելտական ձևեր.

բ) կելտական, ինչպես նաև հնդեվրոպական նախալեզվի ձևերը նշանակվում են ըստ ավանդական համեմատաբանության մեջ ընդունված նշանակումների (ինչպես որ նախորդ ուսումնասիրությունների մեջ էր).

գ) առանձնապես կարևոր է արմատի կազմում աճականի առանձնացումը, որ ստեղծում է լրացուցիչ հնարավորություն հայ-կելտական համեմատության համար:

Ն. Սուքիասյանի աշխատության տվյալների հիման վրա կարելի է քննության առնել արմատի յուրօրինակ բաղադրիչ աճականի հնչյունական-բառակազմական մասնակցությունը համեմատվող լեզուներում, որոնք երկու կարգի են՝ միայն մեկում կամ մյուսում և միաժամանակ երկուսում հանդիպող. հմմտ. *կ/ց* (հե. *g). օր. *լի-կ* «լիճ. ավազան» - հիռլ. le-gaim «հալվել, լուծվել» (< հե. *lē-g-) և այլն.

1) միայն մեկում կամ մյուսում հանդիպող՝ *խիլթ* (**խոյ-լ-թ*) (բրբռ.) - իռլ. cūl «մեջք», բրետ. kil «մեջք, թիկունք», կիմբ. cil «թիկունք» (< հե. *kheu-lo-) և այլն,

2) միաժամանակ երկուսում հանդիպող՝ լոյծ - իոլ. lun «ոչխար» (< հե. *leu-g'-), իսանտ/ իսանդ - բրետ. cann «լիալուսին», condud «վառելափայտ», կիմր. cann «սպիտակ», cynneu «վառել» (< հե. *khan-d-), հոռդել - գալլ. ritu «ծանծաղուտ» (< հե. *per- / *por-t-), միտ - հիոլ. midiuր «մտածել», mod «կշիռ», իոլ. midiuր «մտածել, կարծել», mod «կշիռ», կիմր. meddwl «հոգի, միտք» (< հե. *me- d- / *mē-d), մոյթ «նեցուկ» - միոլ. methos «պատնեշ» [< հե. *me(i)u-th-] և այլն:

գ. Ե. Գ. Խաչատուրովայի՝ հայ-հնդկիրանական առնչություններին նվիրված աշխատանքում համեմատաբար քիչ են հանդիպում մեզ հետաքրքրող հարցի հետ կապված կոնկրետ օրինակները¹: Նախ՝ նա գրում է հետևյալը. «Հայերենը չունի առանձնակի սերտ կապեր հնդեվրոպական լեզուների որևէ խմբի հետ, ուստի այն փոքրաթիվ համընկումները, որոնք հաստատված են եղել հնդեվրոպական լեզուների ուսումնասիրության ընթացքում, ձեռք են բերում խիստ կարևոր նշանակություն հաստատելու համար հայերենի առնչակցությունը հնդեվրոպական մյուս լեզուների հետ: Այդ համընկումները կարող են դիտարկվել իբրև հնաբանություն կամ նորագոյացություն: Եթե հնաբանությունները հետաքրքրություն են ներկայացնում որոշակի լեզուների միայն ծագունային առնչությունների տեսանկյունից, ապա ընդհանուր նորագոյացությունները հիմնական փաստարկ են բարբառային տարածքի հաստատման համար»²:

Այնուհետև, բերվում է հետևյալ գուգաբանությունը,

«երկան, (սեռ. հոլ.) երկանի «երկանք», հինդկ. grāvan «սոմա ճզմել- հյույժ հանելու քար», հիոլ. bro «ջրաղաց», լիտվ. girnos, հսլավ. žrāny». չկա այս բառի նախաձևի վերականգնման համար միասնական կարծիք. ըստ Մեյեի՝ հե. *g^herū-na, ըստ Պեդերսենի՝ հ.-ե. *g^hraun³ : «Ջրաղաց»-ի մյուս անվանումը գալիս է ոչ թե «երկանք»-ից, այլ «աղալու, մանրելու» գործընթացից. հուն. μολη, լատ. mola, իոլ. meil «ձեռքի աղաց», բրետ. meil «ջրաղաց» (< հե. *melā -ից)⁴:

է. Ծ. Ռ. Հարությունյանի աշխատանքը լույս է տեսել մեկ այլ ժողովածուի մեջ, որում հայ-հունական առնչությունների քննության բերումով տեղ են գտել

¹ *Е. Г. Хачатурова, Древнейшие армяно-индоиранские языковые контакты // «Вопросы сравнительной грамматики армянского языка», (выпуск 1), Ереван, 1979, էջ 325-375:*

² *Е. Г. Хачатурова, նշվ. աշխ., էջ 328:*

³ Նույն տեղում, էջ 360:

⁴ Նույն տեղում:

նան հայերենին և կելտական լեզուներին վերաբերող օրինակներ (շուրջ երկու տասնյակ)¹.

ազանիս – կելտ. Aulavius, Aulia, Aulo (տեղանուններ) (< հե. *aṷ-, *aṷ-es-, *aṷ-s- «գիշերել, քնել»)²,

աղ – հիոյ. sail (< հե. *salı-)³,

անձուկ (< *anghu-) – կիմր. e(h)ang (*eks-angu-) (< հե. *ṅḡhu-),

աւձ – միոյ. esc-ung (< *angu-) «օձաձուկ» (< հե. *ang^uis),

երթ – հիոյ. erg (< հե. *er-, *ser-),

երկն «ծննդան ցավ՝ երկունք» – իոյ. idu «ցավ», (հոգն. թ.) idoin «(երկունքի) ցավեր» (< հե. *ed- «ուտել, խժռել»)⁴,

էփեւ – կիմր. pobi, կոռն. pobas «այրել», բրետ. «եփել, թխել. վառարան, հնոց» (< հե. *seph-/*eph-),

թեղի – միոյ. teile (< հե. *tel-, ըստ Աճառյանի),

խախանք – հիոյ. gel «զինջ, սպիտակ», glan «մաքուր» (< հե. *k^ha-),

ձիւն – կիմր. gem, միոյ. gem-adaig (< հե. *ḡhiōm),

սի – կելտ. cumme (< *kom-smiṷo) «նույնպիսի, միևնույնը» (< հե. *sm-ıṷo),

ոզնի – միոյ. esc-ung (< *angu-) «օձաձուկ» (< հե. *ang^uis),

որս – միոյ. orc «խոճկոր» (< հե. *porkos),

ռունգն – հիոյ. srennim (< *srenknā-mi) «խնչել», միոյ. srāimm «խոխոսալ», հիոյ. srōn «քիթ», նբրետ. fron [< *sroknā(?)] «քթանցք» (< հե. *srung^h-, *sring^h-),

տիւ – հիոյ. in diu «այսօր», կիմր. diw, dyw «օր» (< հե. *deıcy⁵),

տոկաս «համբերել, դիմանալ» – հիոյ. doe «դանդաղ. լուռ» (< հե. *dou-). հմմտ. հիոյ. cundrad (< *con-dured «սպանան. սպանանազիր») (< հե. *dya-)⁶:

¹ Ц. Р. Арутюнян, Армяно-греческие лексические изоглоссы // Г. Б. Джаукян, Л. А. Сараджева, Ц. Р. Арутюнян, Очерки по сравнительной лексикологии армянского языка, Ереван., 1980, էջ 221-354:

² Հմմտ. «Էփիզենիան Ավիխում» ողբերգության *Ավլիս* տեղանունը:

³ Ի դեպ՝ հեղինակը, ոչ անկախ Է. Բենվենիստի դիտարկումից, որին հղում է տրվում վերջինիս հայ. *ալանի*, հուն. λι- / λα- (< *saln) համեմատության բերումով, ուշադրություն է հրավիրում *ալանի* բառի նոր ստուգաբանության վրա:

⁴ Տե՛ս նաև *ուտել*:

⁵ «Վ. Դրեսլերը հիոյ. amm «ժամանակ. պահ» <*(ə)mmV- (առնմանությամբ՝ *mm- > -mm-) համարում է նույն հարացույցի մի ռեզիկտը, ինչ հայ. *ալր* (օր) [awr] – հուն. ἡμαρ» (Ц. Р. Арутюнян, նշվ. աշխ., էջ 275):

⁶ Առանց հայերեն որևէ ձևի նշանակման (նույն տեղում, էջ 281):

gnul (gl-hly) - բրետ. *kolen* (< *koli-gno) «(երկու-երեք տարեկան) շուն» (< հե. *sk^uel-, *skel-, *kel-),

nulul - իռլ. *idu* «ցավ, տանջանք», (հոգն. թ.) *idoiu* «երկունքի ցավ(եր)» (հմմտ. հուն. *ὀδύνη*) (< հե. *ed-) և այլն¹:

5. Ի վերջո նկատենք, որ հայերենի և կելտական լեզուների առնչություններին առանձին անդրադառնալը կարևոր է տարբեր մակարդակի զուգաբանությունների միջոցով դրանց ժառանգորդական գծերի պահպանման և նորի ձեռքբերման տեմպերի տեսանկյունից՝ կապված ոչ միայն ծագումնային (գենետիկական), այլև տարածքային (արեալային) խնդիրների հետ:

Այնուհետև, սկսած 3. Շմիդտի հայտնի տեսությունից՝ հնդեվրոպական լեզուների առանձնացումը կետրոնականի և եզրայինի, որում հայերենը դրվում է կենտրոնականի, իսկ իտալյան և կելտական լեզուները եզրայինի մեջ, որպիսով հայերենի և կելտական լեզուների առնչությունների հարցի քննարկումը, մի տեսակ, ավելի է դժվարանում, ըստ այդմ՝ դառնում ավելի հետաքրքիր: Հետագայում այդ հարցի քննարկումը կրում է բանավիճային բնույթ՝ առավելապես իտալյան-կելտական առնչությունների գծի վրա²: Նման պայմաններում հայերենի և կելտական լեզուների (թեկուզ մասնակի՝ մի մասի) քննությունը, կարելի է ասել, կողմնակիորեն առաջադրում է նոր խնդիրներ:

Աշխատանքում քննում ենք միայն հնչյունական և բառային (բառապաշարային) զուգաբանությունները՝ իրենց արտահայտության (դրսևորման) և բովանդակության (իմաստային՝ թեմատիկ բաշխման) պլանների մեջ:

¹ Նշվում է, որ այն «ներկայացնում է հատուկ կարևորություն հայ-հունա-կելտական բարբառային առնչության յուրահատկության ուսումնասիրման համար» (նույն տեղում, էջ 282):

² Տե՛ս *Е. А. Глебова*, Изучение пространственных изоглосс западного континуума индоевропейских диалектов и проблема кельто-италийских древних диалектальных связей // *“Современные методы сравнительно-исторических исследований (Материалы VIII Международной научно-практической конференции по сравнительно-историческому языкознанию. 25-27 сентября 2013 г.)”*, М., 2013, էջ 120-129:

ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայ-կելտական հնչյունական զուգաբանությունները, ի թիվս մյուս լեզուների միջև գոյություն ունեցածի, դասական համեմատաբանության մեջ առանձնացվում են ըստ հնդեվրոպական բարբառների վերաբերյալ Ա. Մեյլեի տեսության¹: Ամբողջովին հետևելով այդ տեսության դրույթներին՝ Հ. Աճառյանը իր աշխատություններում անդրադառնում է հայերենի տվյալների մանրամասն քննությանը՝ կազմելով նաև ցանկեր, մանավանդ՝ հնչյունաբանության և արմատաբանության մակարդակում²: Հնչյունական ցանկերի ավելի ուշ կատարված լրացումները (Գ. Ջահուկյանի և ուրիշների կողմից), կարելի է ասել, մասնակիորեն են փոխում իրերի բուն դրվածքը³:

Ելնելով այդ աշխատանքներում կուտակված նյութի հնարավորություններից, ինչպես նաև նկատի ունենալով հնդեվրոպական լեզուների համեմատական-տիպաբանական ուսումնասիրությունների մեջ հայերենին և կելտական լեզուներին վերաբերող նյութը՝ մեր աշխատանքի այս մասում փորձ է արվում ուրվագծել հայ-կելտական առնչությունները զուգաբանությունների («զուգակցությունների») ձևով⁴: Մինչև օրս չունենք նման զուգաբանություններին նվիր-

¹ A. Meillet, Les dialectes indo-européens, P., 1908: Հմմտ. A. Meյe, Введение в сравнительное изучение индоевропейских языков, էջ 109-149:

² Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Ե., 1971-1979: Նույնի՝ Հայոց լեզվի պատմություն, I մաս, էջ 23-99: Նույնի՝ Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. VI, էջ 463-590:

³ Գ. Բ. Դճաւկյան, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967: Նույնի՝ Опыт семантической классификации и ареального распределения индоевропейской лексики армянского языка // Գ. Բ. Դճաւկյան, Լ. Ա. Տարաճեւա, Շ. Ք. Արուտյոյան, նշվ. աշխ., էջ 5-116: Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987: Յ. Գ. Կումանյան, Древнеармянский язык, М., “Наука”, 1971: Նույնի՝ Структура индоевропейских имен в армянском языке, М., “Наука”, 1978: Հ. Վ. Ստրախույան, Աճականը հայերենում, Ե., 1986 (2-րդ հրատ., Ե., 2016):

⁴ St u A Concise comparative Celtic Grammar by H. Lewis and H. Pedersen, Göttingen, 937 (= րու. թարգմ.՝ Գ. Լյուիս և Խ. Քեդերսեն, Краткая сравнительная грамматика кельтских языков, М., 1954, էջ 25-198): “Кельты и кельтские языки”, М., 1974: В. П. Калыгин, А. А. Королев, Кельтские языки // “Сравнительно-историческое изучение языков разных семей: Задачи и перспективы”, М., “Наука”, 1982, էջ 71-90: Կ. Բ. Գամքրելիճե, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы (Реконструкция и историко-типологический

ված առանձին աշխատանք, կան կողմնակի դիտարկումներ՝ որևէ թեմայի առնչությամբ:

Աճառյանի աշխատություններում վերլուծությունը կատարվում է հնչյունական առնչությունների («օրինաչափությունների») ընդհանուր սահմանման, այլև մասնավոր դեպքերի (ընդհանուր կանոններից շեղումների՝ «դիտողությունների») մատնանշման ձևով, որոնց հետևում են համապատասխան ցանկերը («օրինակները»՝ գրեթե սպառիչ), ինչպես նաև համեմատվող լեզուներում հնչյունական անցումների աղյուսակի («համադրական տախտակի») կազմումով: Նման մանրամասն աշխատանքը, ինչ խոսք, ամբողջական լինելով հանդերձ, տեղ ունի որոշ լրացումների և տարբեր օրինակների մատնանշումով ճշգրտումների, հատկապես հայ-կելտական առնչությունների դեպքում:

Աճառյանը, Մեյեի հետևությամբ բերում է այդ հատկանիշները, որոնցից հնչյունական են 2-8-րդ կետերը. դրանցից միայն 2-րդը, 3-րդ և 6-րդն են հատկացվում նաև հայ-կելտական առնչություններին¹:

Ստորև բերում ենք հնչյունական այն հատկանիշները, որոնց առկայության (պլյուս) հիման վրա Գ. Ջահուկյանի կողմից առանձնացվում են հայ-կելտական զուգաբանությունները (հեղինակը դրանք բերում է առանց համապատասխան օրինակների) .

1) Հատկանիշները, որոնք առանձնացվում են պլյուսով (+).

ա) *b, *d, *g / *p, *t, *k հակադրության պահպանում,

բ) *p- > h, (-f), կամ զրո (ø) (f շփականը նշվում է միևնույն-պլյուսով),

գ) *pt, *kt և պայթականներից կազմված այլ բաղաձայնախմբերի պարզեցում կամ առաջին տարրի շփականացում),

դ) *r / *l հակադրության պահպանում,

ե) *-m > *-n,

զ) *u- > *g (w).

է) *o / *a հակադրության պահպանում,

ը) *ə > *a²:

анализ праязыка и протокультуры), т.1- 2, Тбилиси, 1984: Языки мира: Германские языки. Кельтские языки. М., “Academia”, 2000, с. 388-462 և այլն:

¹ Տե՛ս նաև *Աճառյան*, Հայոց լեզվի պատմություն, էջ 24-27: Աճառյանի թվարկման մեջ չի նշվում կելտականը (հմմտ. հե. *sent «հին» > հայ. *հին* – կիմբ. hēn), թեև ունի բառերի ցանկում (նույն տեղում, էջ 60-61):

² Տե՛ս նաև *Գ. Բ. Ջահուկյան*, Հայոց լեզվի պատմություն, էջ 93:

2) Հատկանիշները, որոնք առանձնացվում են պլյուսով-մինուսով (\pm) կամ հակառակը, այլև բերվում են հարցականով (?).

ա) * λ - > աղմկավոր բաղաձայն (յ, յ, հ և այլն),

բ) *e -ի երանգի պահպանում,

գ) C α C > CC (իմա՝ միջձայնավորային ը-ի անկում. - Վ.Հ.)¹ :

Հայերենում ևս այս դեպքում նկատելի է երկու կարգի արտացոլում, մի կողմից՝ հետնալեզվային պայթական, մյուս կողմից՝ հպաշփական [իմմտ. *քառորդ, քառեակ և չորք, չորրորդ (<չոր-իր), կին և ծին, ծնել, գայլ և (բրբռ). ջել, քոյր և (բրբռ.) չիր(ա), մօրաքոյր և (բրբռ.) մօջիր* և այլն]:

Այնուհետև, Գ. Ջահուկյանի ցանկում եղած և վերը բերված զուգաբանությունների 1-ին խմբից 5-ը (1-ին, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ կետերում) և 2-րդ խմբից 1-ը (2-րդ կետում), որ համարվում են «համեմատաբար էական և հին ընդհանրություններ (բուն զուգաբանությունները)»՝ նշանակված աստղանիշով, առավել «հավաստի և կարևոր» են տվյալ դեպքում հայ-կելտական հնչունական զուգադիպումների վերաբերյալ պատկերացումներ ունենալու համար²:

Ըստ Գ. Ջահուկյանի ուսումնասիրության տվյալների՝ հայ-կելտական հնչունական զուգաբանությունները կազմում են ընդհանուր թվի (27) մի մասը, ընդ որում՝ առկայություն (+)՝ 8, բացակայություն (-)՝ 16, մասնակի առկայություն պլյուս-մինուսով (\pm)՝ 1, մինուս-պլյուսով (\ominus)՝ 1, միայն մեկ դեպքում զուգաբանության առանձնացումը հարցական (?) է³:

2. Հայ-կելտական հնչունական զուգաբանությունները բերում ենք ոչ միայն ըստ այդ հիմնական կանոնների, այլև դրանց առնչությամբ կատարում մասնակի ճշգրտումներ և լրացումներ, որքան թույլ է տալիս նյութի ավելի մանրամասն, լրացուցիչ տվյալների վրա հիմնված քննությունը: Նկատենք, որ դասական համեմատաբանության մեջ առանձնացվող օրինակների մեծ մասը, թերևս, վերաբերում է ընդհանուրին, սակայն կան նաև զգալի թվով բացառություններ, որոնք ոչ այլ ինչ են, քան, կարելի է ասել, շեղումներ այդ ընդհանուր կանոններից: Հետագա շարադրանքում, բնականաբար, հաշվի են առնվում թե՞ մեկը և թե՞ մյուսը:

ա. *Պարզ (կարճ) ձայնավորներ:*

¹ Նույն տեղում :

² Նույն տեղում, էջ 92 :

³ Նույն տեղում, էջ 93 :

ա) Հայ. *w* – կելտ. *a* (< հե. *a). օր.՝ *աղ* (*աղծ, աղտ*) – իռլ. *salann* «աղ», վալլ. *halen* (< հե. *sāl-), *արօր* (**արալր*) – հիռլ. *airim* «վարել[ւ, միռլ. *arathar* «գուրթան, արոր», վալլ. *aradr*, հկոռն. *aradar* (< հե. *Har-H-t^[h]ro-m), *արսուր* (**արսալսր*) – բրեւ. *dacrou* (< հե. *drak’ru), *սս* (*սսհկ*) «տարի» – հիռլ. *sam* (< հե. *sama), *սս* «ժայռ» – հիռլ. *ad-bal* (< հե. *bal, bāl), *մսյր* – հիռլ. *máthar* (< հե. *māté^r) և այլն¹:

Մակայն նկատում ենք շեղում. կելտականում՝ *e* (կամ *i, u*). օր.՝ *աղկաղկ* – հիռլ. *elc* (< հե. *alg), *սսբող* – հիռլ. (*ime*) (< հե. *ambhō), *մօրուք* (**մարուք*) – հիռլ. *smech* (< հե. *smek^[h]-r-/smek^[h]-r-), *մսծնուլ* – բրեւ. *meza* (< հե. *mag), *հսցի* – հիռլ. *huinntus* (< հե. *ask’^hio) և այլն:

բ) Հայ. *ե* – կելտ. *e* (< հե. *e), սովորաբար բառի բոլոր դիրքերում. օր.՝ *սսեղն* – բրեւ. *ebil* (< հե. *ak’^hin), *բերան* – հիռլ. *bern* (< հե. *bher-am), *բերել* – հիռլ. *berim* (< հե. *bher-), *ելանել* – գալլ. *el* (< հե. *el-), *չորք* – հիռլ. *ceth(a)ir*, (իգ. u.) *cethéoir* «չորս» (< հե. *k^[h]et^[h]ue/or), *սեղել* – հիռլ. *belach* (< հե. *bel), *վեր* (*վերայ*) – գալլ. *ver* (< հե. *uper), *սեղ* (*եղ*) – գալլ. *sedlon* (< հե. *sedlo) և այլն:

Մակայն կա շեղում ընդհանուր կանոնից, կելտականում՝ *a, ei, i*. օր.՝ *դեղ* – միռլ. *deil* (< հե. *dhel), *եւ* – հիռլ. *am* (< հե. *ésmi), *ցելուլ* (*ցեղ*) – հիռլ. *scailt* (< հե. *sk’^hel), *բերել* (*բորել*) – հիռլ. *scaraim* [< հե. *(s)qer], *բերթել* (*բերծել*) – հիռլ. *scrissid* [< հե. *(s)qer] և այլն. այդպես նաև՝ կա՛մ հայերենում, կա՛մ կելտականում. *մէջ* – հիռլ. *medón* (< հե. *mēdyo), *մսենն* – հիռլ. *gam* (< հե. *g’^heiem-er) և այլն²:

Մասնակի երևույթ է ռնգայինից առաջ **e*-ի դիմաց հայ. *ի*, իսկ կելտ. *u* կամ *i*. օր.՝ *ի* (նի.) – հիռլ. *in* [< հե. *in (en)], *կին* – հիռլ. *ben, bé*, (սեռ. h.) *mná* «կին», վալլ. *ben-yw* «կանացի, կնոջ» (< հե. *k’^hen), *հինգ* – հիռլ. *cóic*, բրեւ. *pemp* (< հե. *p^[h]enk^[h]o «հինգ»), *սինդ* – կելտ. *binda* (< հե. *bhendh-) և այլն³:

գ) Հայ. *ո* – կելտ. *o* (< հե. *o). սովորաբար բառասկզբում և բառամիջում. օր.՝ *որք* – հիռլ. *osbe* (< հե. *orbho), *ուրթ* – հիռլ. *ocht n-* [< հե. *ok^[h]t^[h]ō(u)], *սլոկել* – հիռլ. *lomm* (< հե. *lob), *տոկալ* – հիռլ. *doe* (< հե. *dowə-ko) և այլն, իսկ բառավերջում կելտականն ունենում է նաև *e*. օր.՝ *ո, ուլ* – հիռլ. *co-te* (< հե. *k^ho-), *սս, սոյն* – հիռլ. *ce* (< հե. *k’^ho-):

¹Քանի որ զուգաբանությունների առանձնացումը կատարվում է ըստ Աճառյանի ցանկերի, ուստի, բնականաբար, պահպանվում է բառ(արմատ)ների նույն տառադարձությունը՝ բացառելով ակնհայտ վրիպակները:

²Տե՛ս չ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. VI, էջ 464-468:

³Կելտական լեզուները, ոչ հունարենի և հայերենի, այլ մյուս լեզուների նման չունեն նախահավելվածային ձայնավոր տարրի գործածություն:

Այսուհանդերձ, նկատում ենք նաև շեղում ընդհանուր կանոնից՝ կելտա-կանում *u*, *a* կամ այլ ձայնավոր հնչյուն. օր.՝ *որձ* – միռլ. *uirgge* «(ամ)որձիներ» (< հե. **or* *ǵ^{hi}i*), *որորս* – հիռլ. *arman* (< հե. **orm*), *աղբատ* – հիռլ. *liach* (< հե. **oligo*), *ազանիլ* – հիռլ. *fuan* (< *upo-ou-no-*. Pok. 1959, 346) (< հե. **ues-*) և այլն:

Այս կետում, ոչ անկախ նախորդ ուսումնասիրողներից, Աճառյանը, օրինակ, ունի մի քանի «դիտողություն»: Հատկապես հայ-կելտական առնչության առումով ուշագրավ է այն, որ՝

1) «նախալեզվի *o* ձայնավորից հետո գտնված *p*-ն դառնալով *z*, նախորդ *o*-ի հետ միասին կազմում է *mz*», իսկ կելտականում մնում է նույնը, կամ փոխվում. հմմտ. հայ. *ուլթ* – հիռլ. *ocht* (< հե. **ok'to* (<**opto*), *քուն* – հիռլ. *súan* (< հե. **swopno*), մեկ-երկու բացառությամբ՝ *աւն* «ինչք, ունեցվածք» – հիռլ. *āne* (< հե. **opnos*), *որով(այն)* – հիռլ. *crī* (< հե. **qrop-*),

2) ըստ Հյուբշմանի՝ «*o* դառնում է *mz*, երբ ռնգականից հետո ... կա նաև առանց բաղաձայնի», այլև որ բերվող օրինակում կելտականը, ի տարբերություն սահմանվող կանոնի, ունի *i* ձայնավոր հնչյուն. *աւն* (*անանիլ* և այլն) – հիռլ. *sine* (< հե. **pson*)¹:

Աճառյանը միաժամանակ կարծում է, որ, ի լրացումն Մեյեի և Պեդերսենի դիտարկումների (իմա՝ **o*-ն հայերենում նախահունչ դիրքում «երբեմն մնում է *o* (*n*), երբեմն էլ դառնում է *u*»), ժամանակին ավելի մանրամասն ուշադրության է առել Մ. Գրամոնը, որ սահմանելի է հետևյալ կետերում. որին էլ հարկ կա անդրադառնալու հայ-կելտական առնչության առումով.

1. **o*-ն հայերենում բառասկզբում կամ առանձին վանկ կազմելիս վերածվում է *u*-ի. իսկ կելտականում (ավելացնենք)՝ *u*, *e*, *ai*, *hugh* – հիռլ. *huinnius* (< հե. **ask'hio*), *անէծ(ք)* – հիռլ. *sned* (< հե. **neid*), *ատամն* – հիռլ. *dēt* (< հե. **dŋ-mn*), *անուն* – հիռլ. *ainm* (< հե. **nōmŋ*),

2. **o*-ն հայերենում «բառասկզբում և բաղաձայնի հետ միասին վանկ է կազմում, մնում է *n*», իսկ կելտականում (ավելացնենք)՝ *ui*, *e*. (*ամ)որձի(ք)* – հիռլ. *uirgge* (< հե. **org'hi*), *որդի* – հիռլ. *erthyl* (< հե. **portiyo*),

3. հայերենում «երկրորդ վանկում գտնվում է *n*, առաջին վանկում էլ լինում է *n*», իսկ կելտականում (նկատենք) ոչ միշտ է այդպես, այլ նաև՝ *e*, *a*. *որորս* – հիռլ. *arman* (< հե. **orm*), *ուլնք(ուլնք)* – հիռլ. *less* (< հե. **oleq*), *որորկ* – հիռլ. *lorg* (< հե. **lorg²*) և այլն,

¹ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 471:

4. հայերենում նախահունչ շեշտված *n*-ն չի փոխվում, իսկ կելտականում՝ *a*, *u*. *nulyp* – կոռն. *ascorn* (< հե. **ostw-er*), *որձ* – հիռլ. *uirgge* (< հե. **org'hi-*)¹:

դ) Հայ. *ա* – կելտ. *a* (< հե. **ə*). սովորաբար հանդիպում է բառամիջում. օր.՝ *բալ* «մշուշ» – հիռլ. *ball* (< հե. **bhəl, bhal*), *հայր* – հիռլ. *athir* (< հե. **p^[h]ʰt^[h]er*), *յատակ* – հիռլ. *in-ad* (< հե. **pəd*), *ջանք* – կիմր. *iās* [< հե. **γə-(ú)*], *ցախ* – կիմր. *cainc* (< հե. **sk'ə-kho*) և այլն²:

Կան բացառություններ հիշյալ ընդհանուր կանոնից, կելտական՝ *o*, *e*, *w*, *aw*. օր.՝ *գան* «ծեծ» – հիռլ. *gonim* «սպանել» (անց. կտր. 3-րդ դ. *geguin*), *ցուն* «վերք» (< հե. **g^[h]en*), *դայլ* «կաթնախեծ» – հիռլ. *debaid* «ծծում է», հիռլ. *dínu* «(կաթնակեր) գառ», միռլ. *delech* «(կթու) կով, (բրբռ.) կթան», միռլ. *del* «ծծիչ» (< հե. **d^[h]eH(i)-*), *թարախ* (?) – կիմր. *trwnc* (< հե. **tər-*), *մանր* (*մանուկ*) – հիռլ. *menb* (< հե. **mənu*), *նայ* – հիռլ. *snaudh* (< հե. **snə-t*) և այլն:

ե) Հայ. *ա* – կելտ. *e* (< հե. **ə*). այս կրճատ («ամփոփ») ձայնավորի որակական գնահատությունը տալիս է Մեյեն. «որոշ համապատասխանություններ կարծես ստիպում են ենթադրել **ə*-ի հետ միասին այլ կրճատ ձայնավոր, մեր կողմից **o* նշանակումով, որը կարող էր հերթագայվել **ě*-ի, **ö*-ի հետ և որը ներկայանում է լատիներենում և հայերենում որպես *ա*, հունարենում՝ *ι*, գերմաներենում՝ *u*³: Հմմտ. *մարի* «(էգ) թռչուն» – կիմր. *mereh* (< հե. **m^ori*);

բ. *Բաղադրյալ (երկար) ձայնավորներ:*

ա) Հայ. *ա* – կելտ. *ā* (**ā*). հանդես է գալիս բառի բոլոր դիրքերում, մանավանդ բառամիջում, ինչպես նաև ձևաբանական կազմում (բացառիկ օրինակով). օր.՝ *աղ* (*աղտ*, *աղծ*) – հիռլ. *salann* (< հե. **sal-*), *այրել* (*գայրանալ*) – հիռլ. *āith* (< հե. **ātei*), *եղբայր* – հիռլ. *bráth(a)ir* (< հե. **bhrāter*), *դա* – հիռլ. *-d* (< հե. **tā*), *թանալ* – հիռլ. *tām* (< հե. **tā, *tān*), *մայր* – հիռլ. *māthir* (< հե. **māter*), *նա* – հիռլ. *nau* (< հե. **nāu*), *տամուկ* – հիռլ. *dān* (< հե. **dā-mo- + nily*), *ծիծառն* – հիռլ. *gairm* (< հե. **g'ār*), *յագենալ* – հիռլ. *sāith* (< հե. **saw*), *ստանալ* – հիռլ. *cono-snaim* (< հե. **stá- + ū*) և այլն:

¹ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 471-472: Հմմտ. *M. Grammont, Notes de phonétique générale. VI. Arménien classique // "Mémoire de la Société de linguistique de Paris", 20, 2018:*

² Խեթերենի տվյալները ցույց տվեցին, որ հե. **ə* -ն ունի ձայնորդի, քան ձայնավորի արժեք, համարժեք իւթ. Կ-ին (տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 477): Որոշ դեպքերում այստեղ և այլ տեղերում տալիս ենք հնդեվրոպական նախաձևի նորագույն վերականգնումը:

³ *A. Meïe*, նշվ. աշխ., էջ 126-127:

Կան զգալի թվով բացառություններ հիշյալ ընդհանուր կանոնից, կելտական՝ eu, a, au, ū, ē, i. օր.՝ *երկան* – կիմր. breuan (< հե. *g²rāwana), *լայն* – հիռլ. lethan (< հե. *plātno), *մասն* – կիմր. maut (< հե. *māt), *տրամ* («պինդ») – հիռլ. dron «ամուր», կիմր. dūr (< հե. *t'e/oru-, *t're/ou-), *լալ* («լաց լինել») – միռլ. lēn (< հե. *plā), *կեալ* – հիռլ. biu (< հե. *g²iya) և այլն: Նկատելի է բացառության լայն ընդգրկում, որ, անշուշտ, կելտական առանձին լեզուներում ներկայացող բարբառային տարբերություններ են:

բ) Հայ. *ի* – կելտ. ē կամ ī (*ē). հե. երկար *ē ձայնավորը, ի տարբերություն նախորդի՝ երկար *ā ձայնավորի, որ կելտականում, և առհասարակ ցեղակից մյուս լեզուներում հարաբերակցվում էր միայն մեկ ձայնավորի հետ, այստեղ, ընդհանուր կանոնի համաձայն, արտացոլված է իբրև երկար *ē (անշեշտ) կամ ī (շեշտված) ձայնավոր. օր.՝ *դնել* (**դինել*. *ըն-տիր*) – գալլ. dede (< հե. *dhē), *սիրտ* – հիռլ. crīde (< հե. *k'erdī), *լի* (*լնուլ*) (< *p^[h]leH-₁₀-s) – հիռլ. lán «լեցուն. լի», հիռլ. līnaim (< հե. *p^[h]līH-(no)- «լի, լեցուն»), *լկիլ* («հալչել») – հիռլ. legaim (< հե. *lēg), *միտք* – հիռլ. mīdiur (< հե. *mēd), *լիլ* – հիռլ. lia (< հե. *plē), *ստիկնք* – հիռլ. sīne (< հե. *pstēn) և այլն¹:

Այս ընդհանուր կանոնից, որ սահման է հաստատում գալլերենի և կելտական մյուս լեզուների միջև, թերևս գրական, քան բարբառային լեզվի աստիճանի վրա գտնվող հարաբերակցություն է, այնուամենայնիվ նկատելի է նաև շեղում, կելտականում՝ a, ū, o, երկբարբառային ao, ei և այլն. օր.՝ *զիլ* (*զլ-որ*) – կիմր. olwyn (< հե. *wēl), *թրիք* (?) «(խոշոր եղջերավորների) թորանք» – բրետ. stroñk (< հե. *tēr-), *ծին* – հիռլ. gein (< հե. *g'ēn), *մի* (արգելական) – հիռլ. samail (< հե. *mē), *ձիր* – հիռլ. gor (< հե. *g'hēr), *տիրիլ* // *տիլ* – բրետ. ataot (< հե. *stēl), *ցիլ* // *քիլ* – հիռլ. cūil (< հե. *sk'ēwo):

գ) Հայ. *ու* – կելտ. ū (անշեշտ) կամ ā (շեշտված) (*ō). հե. *ō ձայնավորը ևս կելտականում, ինչպես նաև լիտվերենում [ū (անշեշտ) կամ ā (շեշտված). հմմտ. dūti «տուրք» < հե. *dō-ro-, հայ. *տուրք*, հուն. δῶρον «տուրք», վալլ. dawn (նույնը) և այլն²], իբրև ընդհանուր կանոն, զուգահեռ է ցեղակից մյուս լեզուների մեկ կամ մյուս ձայնավորի հետ. *կռունկ* – կիմր. garan (< հե. *gurōng), *տուր* (*տլուլ*) – հիռլ. cath (< հե. *k'ō-ro), *անուն* – հիռլ. anim (< հե. *nōm), *թուր* – հիռլ. tarathar (< հե. *tō):

Այս դեպքում ևս կան շեղումներ ընդհանուր կանոնից, կելտական՝ o. օր.՝ *բուր* (**բուլ-ուր*) – հիռլ. bolach (< հե. *bhōl), *դուրգն* – հիռլ. droch (< հե. *dhrōgh),

¹ Նույն տեղում էջ 127:

² Տե՛ս նույն տեղում, էջ 127: Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 119:

թրթուր (**թուր-թուր*) – բրետ. *kontron* (< հե. **tōr*), *հուս*– հիռլ. *om* (< հե. **ōmo*), *նուկ* (*նուկ* «վիզ», *նուկալ* «լալ. լաց լինել») – կիւր. *elin* (< հե. **ōl*, **ōlen*)¹, *նուեղ* – կիւր. *esu* (< հե. **ōd*), *նուր* (*նուր-նուր*) – հիռլ. *irar* (< հե. **ōr*), *մամուլ*, *մաղաց* (< *մ-աղաց*) – հիռլ. *melim* (< հե. **mōl*), *տրտունջ* – հիռլ. *dord* (< հե. **dōrd*), *շուն* – կելտ. *cú*, նաև *con* (տվյալ դեպքում՝ երկրորդը) (< հե. **k' uon*):

Ուստի ձայնավորների համակարգում զուգաբանական համընկումը կարելի է սահմանել իբրև կանոն, իսկ բացառությունը՝ շեղում այդ կանոնից (անկանոն). և գրեթե յուրաքանչյուր զուգաբանություն սահմանելի է ըստ իդեալի, սակայն ոչ ըստ իրականի: Դասական համեմատաբանությունը (Մեյե, Աճառյան և հետագա ուսումնասիրողներ) այս հարցում նպատակ է ունեցել ամենից առաջ սահմանել կանոններ՝ համեմատության եզրեր գտնելու լեզուների ցեղակցության մեկնաբանման նպատակով:

գ. Ձայնորդներ:

Սրանք հնդեվրոպական լեզուների վանկի կազմում մյուս բաղադրիչ միավորների հետ գտնվում են լրացական բաշխման հարաբերության մեջ՝ հանդես գալով իբրև ձայնավոր, բաղաձայն կամ երկբարբառի (երկհնչյունի) բաղադրիչ:

1) Հե. **y* (**յ*) ձայնորդը, իբրև ձայնավոր, հանդիպում է հայ-կելտական հետևյալ տիպի զուգաբանություններում:

ա) Հայ. *յ* – կելտ. *i*. սա երկու կարգի է՝ կապված ձայնորդ-ձայնավորի երկար (*ī*) կամ կարճ (*i*) լինելու հետ. ըստ այդմ՝ լինում է երկու տեսակ արտացոլում.

1. հայ. *յ* – կելտ. (**յ*). օր.՝ *աղբատ* – հիռլ. *liach* (< հե. **oliqo-*), *անիծ* – հիռլ. *sned* (< հե. **gnid*, **knid*), *երի* – գալլ. *are* (< հե. **pri*), *կեալ* – հիռլ. *biu* (< հե. **g²iya*), *ի* (նխ.) – հիռլ. *in* (< հե. **in*, **en*), *ի* (*ի-ք*, *ի-նյ*) – հիռլ. *cid* (< հե. **k²i*), *լիբբ* (*լպիբծ*, *լպիբշ*) – կիւր. *llyfr* (< հե. **slibr*), *լիք* (*լքանել*, *ե-լիք*) – հիռլ. *lëicim* (< հե. **liq*), *կի* – հիռլ. *bi* (< հե. **g²iv*)², *հուցի* (ծառը) – հիռլ. *huinnius* (< հե. **ask 'hio*), *հովի* – հիռլ. *oí* «ոչխար» (< հե. **Hoūi-p^haH-*), *տիգ* – հիռլ. *dega* (< հե. **dig 'h*), *մի* («մեկ») – հիռլ. *smaíl* (< հե. **smio*), *տի* – հիռլ. *die* «օր» (< հե. **t'iu-*), *կեալ* – հիռլ. *biu* (< հե. **g²iya*), *նիստ* (*նստել*) – հիռլ. *net* (< հե. **nizdo*), *նքոյր* – հիռլ. *nithio* (< հե. **nik-*). *քիրտն* – կիւր. *chwys* (< հե. **swidro*) և այլն:

¹ Բառը չկա Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» գրքի ցանկում, այլ գտնում ենք հեղինակի «Լիակատար քերականության» մեջ բերվող օրինակներում:

² Ստուգաբանությունը պատկանում է Հ. Պեդերսենին:

2. հայ. *ի* – կելտ. (**ī*). օր. *իի* (*իի-ակ*) – հիռլ. dia «աստված», հիռլ. *ded-* (ներկ. ժմ. *ru-deda*, անց. ժմ. *con-ro-deda* «վերանալ, կորսվել, անհայտանալ»), հիռլ. *duine* «մարդ» («մահկանացու»), հիռլ. *dith* (< հե. **tʰe-*, նաև **dʰe-* «կորչել, կորսվել», «մեռնել»), *իիել* – հիռլ. *dinim* (< հե. **dhē*, **dhi*), *ցին* (թոչուն) – հիռլ. *scailt* (< հե. **kʷino*, **ksino*), *քսան* (< **qhsan*) – հիռլ. *fiche* «քսան» [< հե. **xi-kʰi*-(*iH*)-]:

բ) Հե. **y* (**ī*)-ն, իբրև բաղաձայն, կելտական որոշ լեզուներում (գալերեն, բրետոներեն, իռլանդերեն) բառակզրում կամ բառամիջում, երկու ձայնավորների, այլև բաղաձայնի և ձայնավորի միջև պահպանվում է, իսկ հայերենում բառակզրում **l*, **n*, **r* ձայնորդներից, նաև **d*, **dh* պայթականներից հետո դառնում է ջ, կամ՝ սղվում, բայական վերջավորությունների դեպքում վերածվում է լծորդ ձայնավորի, **k*²-ի, *g*²-ի հետ կապակցվելիս՝ վերածվում ջ-ի կամ ճ-ի, **s*-ից հետո դառնում է յ, մեկ-երկու բառում՝ բառակզրում տալիս է շ և այլն¹: Օր. *էրէք* – հիռլ. *tri* (ար. *u.*), *téoir* (իգ. *u.*) «երեք» (< հե. **tʰrei-* «երեք»), *լիկ* (*լիճ*) – հիռլ. *legaim* (< հե. **lēgiā*, **leg-*)², *լուծ* – կիմր. *iau-* (< հե. **yugʷo*), *ձսեն* – հիռլ. *gam* (< հե. **gʷheiem-er*), *սէջ* – հիռլ. *medón* (< հե. **médyo*), *ողջ* – կիմր. *holl* (< հե. **olyo*), *ջին* (*ջնել*) // *ջինջ* (*ջնջել*) – հիռլ. *gonim* (< հե. **g²hen*. **g²hen-ye*)³:

2) Հե. **w* [(*)*ū*, **ū*] ձայնորդի ցեղակցային արտացոլումների մասին Աճառյանը գրում է. «Հնդեվրոպական նախալեզվի *w* ձայնորդի ձայնափոխությունների (իմա՝ հնչյունափոխությունների – Վ. Հ.) օրենքները շատ բարդ են. սրա պատճառն այն է, որ *w* ձայնի (իմա՝ հնչյունի – Վ. Հ.) արտաբերությունն ունի երկու կողմ. մի կողմից՝ լեզվի մեջքը մոտենում է քիմքի վերջի մասին, մյուս կողմից՝ շրթունքները կլորանում և մոտենում են իրար: Երբ զարգանում է առաջին կողմը, այսինքն՝ լեզուն ավելի է մոտենում քիմքին, *w* դառնում է *g^w*, հետո *g*, այսպես է բառակզրում հայերենի մեջ և մասամբ պարսկերենում. նույնպես և՛ բրետոնական լեզվի մեջ, ուր դառնում է *gw*: Երբ զարգանում է երկրորդ կողմը, այսինքն՝ շրթունքներն ավելի են մոտենում իրար, *w* դառնում է *b*, ինչպես ունենք բառակզրում պարսկերենի մեջ՝ որոշ դեպքերում»⁴: Եվ այս ծիրի մեջ, «երբ իռլանդերենը *w* ձայնի դեմ դնում է *f*, իսկ բրետոնականը *gw*, ուրեմն

¹ Տե՛ս Վ. Աճառյան, Լիակատար քերականություն, հ. VI, էջ 485-486:

² Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան,, էջ 279:

³ Հմմտ. հայ. *գան* «ծեծ. նեղություն»:

⁴ Վ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 487: Հմմտ. Մ. Ա. Աղաբեկյան, Հնդեվրոպական * *u* բաղաձայնը հայերենում // «Պատմա-բանասիրական հանդես», 1981, 4, էջ 95-108: *Նույնի*՝ Հայերենի համեմատական ուսումնասիրության հարցեր, Ե., 2017, էջ 12- 34:

հին կելտական լեզուն ունեցել է *w* ձայնորդը¹: Եվ ըստ այսմ՝ «հնդեվրոպական նախալեզվի *w* ձայնորդի իբրև բաղաձայն ներկայացրած ձևերն են ... հայերեն *g, z, ...* իռլանդերեն *f*²:

Ըստ այս հիմնունքի առանձնանում են հետևյալ զուգաբանությունները.

ա) Կարճ տարբերակ. հե. **u* > հայ. *ni* – կելտ. *u* (*o, õ, a, au, ou i, ū, ú, e, é*). օր.՝ *անձուկ* – հիռլ. (*cum*)*ung* (< հե. **ang’hu*), *արտասուք* – ֆրետ. *dacrou* (< հե. **drak’ru*), *բուծ (այծի)* – հիռլ. *bocc* (< հե. **bhug’o*), *դու* – հիռլ. *tū* (< հե. **tu, *tū*), *դուլ* («դադար») – հիռլ. *dál* (< հե. **dhul*), *դունն* – հիռլ. *dorus* (< հե. **dhur*), *դի (դիակ)* < **դուի-ակ*, *ուի* տղամուկ) – հիռլ. *dith* (< հե. **dhuī*), *եղուկ* – հիռլ. *lucht* (< հե. **lug²*), *թանձր* – հիռլ. *técht* (< հե. **tŕg’hú³*), *թուփ* – ֆիռլ. *tomm* (< հե. **tum*), *լու (լուր, լսել)* – հիռլ. *cloor* [< հե. **k’lu(-s)*], *լուսնայ* – հիռլ. *luac* (< հե. **plu*), *լուծ* – կիմր. *iau* (< հե. **yug’o*), *լուն* – հիռլ. *clunim* (< հե. **k’lus-r*), *խուղ (հիղ)* – հիռլ. *cŭll* (< հե. **qul*), *կուլ (կլանել)* – հիռլ. *gelim* (< հե. **g²ul*), *կրունկ* – հիռլ. *garan* (< հե. **gurōng*), *հերու* – հիռլ. *hurid* (< հե. **peruti*), *հուր* – հիռլ. *ūr* (?) (< հե. **puro*), *մանր (մանուկ)* – հիռլ. *mend* (< հե. **mənu*), *մուր (մուրճ, մրուր)* – ֆիռլ. *mūr* (< հե. **mutro*), *մուրկ (մրկել)* – հիռլ. *múch* (< հե. **smug-ro*), *ունկն* – հիռլ. *au, õ* (< հե. **ōsn, usn + k’lū*), *ուր* (< **ու-ր*) – կիմր. *cwi* (< հե. **k²u-r*), *պղպջակ (*պուղ)* – հիռլ. *bolach* (< հե. **bul*), **պուղ* («*vulva*») – հիռլ. *ball* (< հե. **bul-sk’*), *պուտ (բշտիկ)* – կիմր. *bothell* (< հե. **bud*), *պուտ* («ծիլ») – կիմր. *bothell* (< հե. **bud*), *ռունգն(?)* – հիռլ. *srōn* (< հե. **srung*), *սկեսուր* – կիմր. *chwegr* (< հե. **k’wek’urā*), *սուրբ* – հիռլ. *cuanna* (< հե. **k’ubhró*), *տրամ* («պինդ») – կիմր. *dūr* (< հե. **dru-rā-mo*), *վեր (վերայ)* – գալլ. *ver* (< հե. **uper*):

բ) Երկար տարբերակ. հե. **ū* > հայ. *ni* – կելտ. *u* (*w, ū*). օր.՝ *կու, կոյ* – հիռլ. *budr* (< հե. **gūto*), *ռնայ* (< **ռունայ*) – հիռլ. *rūn* (< հե. **rē*), *քուք* («ողբ») – կիմր. *cwyn* (< հե. **k²ū*):

գ) Հե. **w* ձայնորդի հետ կապված կա ևս մի ուշագրավ երևույթ, որ մասնակիորեն արտացոլված ենք գտնում նաև հայ-կելտականում.

1. հայ. *g* – կելտ. (կիմր., կոռն., ըստ Մեյեի, Աճառյանի՝ ֆրետ.) *gw* (< **w* < **gw*). օր.՝ *գարուն* – կիմր. *guiannum* (< հե. **vesr*), *գեղ(եցիկ)* – կիմր. *gweled* (< հե. **wel-*),

¹ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 487:

² Նույն տեղում:

³ Հմմտ. *V. G. Hambardzumyan, Armenian and Indo-European: Essays on Comparative Lexicology of the Armenian Language (Comparative-Typological Variativity)*, Yerevan, 2014, էջ 117-120:

գեղձ «իղձ» - կոռն. guell (< հե. *wel-), գեղսն - կիւր. gwlan (< հե. *welmo), գեղաւն- կիւր. guern (< հե. *verna). գիլ (գլ-որ) - կիւր. olwyn (< հե. *wēl).

2. հայ. լ, վ - կելտ. w (?) (մեծ մասամբ՝ u). հւր - հիւր. fein (< հե. *sewe-), հաւ («պապ») - հիւր. haue (< հե. *awo), կոյլ (սեռ, հոլ. կոյլու) - հիւր. bó (< հե. *g²ov), հո- վիլ - հիւր. ði (< հե. *ovi-pā), վեց - հիւր. sé (< հե. *k' swek' s), տելել - հիւր. doe (< հե. *dewə), տիւ (տի) - կոռն. diw (< հե. *diw), քիւ - հիւր. cūil (< հե. *skēwo°), օղ («եղա- նակ») - կիւր. auhel (< հե. *aw-gho), օթ («հագնել») - հիւր. fuan (?) (< հե. *éw-ti):

դ) Հե. *w-ի դիմաց հայերենն ունի գ, իսկ կելտականը՝ w [ø, f, (i/o ?)]. օր.՝ ա- գանիլ («հագնել») - հիւր. fuan (?) (< հե. *éw-ti)¹, այգի - հիւր. (eo) (< հե. *oiwā), ա- նազաստ - հիւր. fuan (?) (< հե. *éō, *óvō), լոզանալ - հիւր. lōathar (< հե. *lov), յազ (յազենալ) - հիւր. sāith (*sāw), սազ - կիւր. cuan (< հե. *k' awa), տարալ - հիւր. drochta (< հե. *dṛwa- + լ), տորգ - հիւր. drochta (< հե. *dorw), օզնել (օզ-ուտ) - կիւր. awyr (< հե. *auw):

ե) Երկու ձայնավորների միջև՝ հե. *w > լ (վ) - կելտ. w [ó (< հե. *ow (?)]. օր.՝ կոյլ (կոյլու) - հիւր. bó (< հե. *g²ov), տիւ - կիւր. diw (< հե. *diw):

զ) Հե. *(k')w > հայ. շ (?) - կելտ. ø (?). օր.՝ էշ - հիւր. ech (< հե. *k' wo), շոււ - հիւր. cú, con (< հե. *k' won):

է) Հե. *(d)w > հայ. ըկ - կելտ. (d)aw (-o/ōe). օր.՝ երկայն (երկար) - հիւր. doel (< հե. *dwā), երկնչել (երկիւղ) - հիւր. dōel (< հե. *dwi), երկու - հիւր. dāu (< հե. *dwō)²:

ը) Հե. *(st)w > հայ. (*ստգ >) սկ(ո) - կելտ. sco. օր.՝ ոսկր (ոսկոր), ոսկեր - կիւր. ascorn (< հե. *ostw-er):

թ) Այլևայլ բնույթի, որոնց գուագորումը ենթադրում է ավելի մանրամասն (մասնավոր) քննություն. օր.՝ երկան - կիւր. breuan (*g²rāwanā), ին - հիւր. nōi (< հե. *énwo), նոր - հիւր. nūe (< հե. *novro), չորք (չորեքսասն) - հիւր. cethir (< հե. *k²etwor-es), տոկալ - հիւր. doe (< հե. *dowə-ko), քիւսն - կիւր. chwys (< հե. *swidro), քոր - հիւր. sius (< հե. *swōsōr), քու - հիւր. súan (< հե. *swopno):

3) Հե. *r (r, r̄) ձայնորդի հայ-կելտական գուագրանական արտացոլումները համեմատաբար պակաս տեսակի են, թեև ընդգրկման առումով՝ ավելին են (ուստի կրավարարվենք տեսակների մեջ ոչ բոլոր օրինակների մասնանշու-

¹ Հմմտ. օթ («հագնել») - կելտ. fuan (?) (*éw-ti) (նույն տեղում, էջ 80):

² Ստուգաբանությունը (*dw > ըկ), որքան էլ ընդունված է, հավաստի չէ, վերանայելի է: Տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Հայերենի բառաբանական և ստուգաբանական ուսում- նասիրություններ, Ե., 2012, էջ 102: V. G. Hambardzumyan, նշվ. աշխ., էջ 112-114:

մով): Սովորաբար արձանագրվում է հե. *r > հայ. p - կելտ. r հարաբերակցությամբ, ընդ որում, իբրև կարճ ձայնավոր, տալիս է հայ. *ար* - կելտ. ri զուգակցություն, իսկ իբրև երկար ձայնավոր՝ հայ. *ար* - հիռլ. ara (rā). հմմտ. *մայր* - հիռլ. máthir <հե. *māter), *սիրտ* - հիռլ. cride (< հե. *k' r̥d-):

ա) Հե. *r (կարճ) կամ *r̥ (երկար) > հայ. *ար* - կելտ. (a, o, e, ei, i)r. օր.՝ *արբենայ* - հիռլ. srub (< հե. *sr̥bh), *արջ* - հիռլ. art (< հե. *r̥kthos), *բարձ* (*բարձր*, *բերձ*) - կիմր. bry (< հե. *bhr̥g' h), *կարթ* - հիռլ. gerbach (< հե. *gʷr̥bti), *կարծր* - հիռլ. garg (< հե. *gʷr̥g'), *հար* (*հարկանել*) - հիռլ. orgaim (< հե. *pr̥, *pr̥gʷ), *հարց* - հիռլ. arc (< հե. *pr̥k' -sk'), *սար* («լեռ») - բրետ. kern (< հե. *k' r̥), *սպաննայ* - հիռլ. seir (< հե. *spr̥), *տարգալ* - հիռլ. drochta (< հե. *dr̥wa-+ ɹ), *բարբ* - հիռլ. cerb [< հե. *(s)kr̥p] և այլն:

բ) Հե. *r (բաղաձայն) > հայ. p (-ն > ոն)- կելտ. r. օր.՝ *արգանդ* (*արգահատիղ*) - կիմր. arffed (< հե. *arqʷ), *այրել* - հիռլ. āith (< հե. *ātēr), *արգել* - հիռլ. aircthe (< հե. *arqʷ), *արծաթ* - հիռլ. argat (< հե. *arg' -ato), *արտասուք* - բրետ. dacron (< հե. *drak' ru), *արօր* (**արալր*) - հիռլ. arathar (< հե. *aratrum), *բերան* - հիռլ. bern (< հե. *bher-ano), *բերել* - հիռլ. berim (< հե. *bher), *բիր* (*բահ*, *բարհ*) - հիռլ. bern (< հե. *bher), *բորբ(ոք)* - կիմր. berwi (< հե. *bho-bhr-o), *բորենի* - կոռն. bofer (< հե. *bhoro), *դուռն* - հիռլ. dorus (< հե. *dhur), *դուրզն* - հիռլ. droch (< հե. *dhrōgh), *էրբայր* - հիռլ. bráthir (< հե. *bhr̥ātēr), *երկան* - կիմր. breuan (< հե. *gʷr̥āwanā), *ծիծառն* - հիռլ. gairm (< հե. *g' ar), *կեր* (*կերակուր*) - կիմր. breuad (< հե. *gʷer), *կորկոտ* (?) - հիռլ. gro (< հե. *gʷo-gʷrod), *տեսանել* - հիռլ. derc (< հե. *derk'), *տոռն* - հիռլ. drochta (< հե. *doru), *տրտուտ* - հիռլ. dord (< հե. *drom) և այլն:

4) Հե. *l (*l̥, *r̥) ձայնորդի հայ-կելտական զուգաբանական արտացոլումները ևս, ինչպես նախորդինը, համեմատաբար պակաս տեսակի են, թեև այս դեպքում նույնպես ընդգրկման առումով՝ ավելին են (տալիս ենք ոչ բոլոր օրինակները): Սովորաբար արձանագրվում է իբրև բաղաձայն հե. *l̥ > հայ. *աղ* (օր.՝ *աղալ*) - իռլ. li (< հե. *al), *լի* (*լնուլ*) - հիռլ. linaim, իռլ. lān (< հե. *plē-yo):

ա) Հե. *l̥ > հայ. *աղ* / *ալ* - կելտ. (i, el), la. *առաստաղ* - կելտ. taile (< հե. *stel). օր.՝ *աստաղձ* - հիռլ. del (< հե. *dl), *աքաղաղ* - հիռլ. cailech (< հե. *kl̥-), *գալար* - հիռլ. fillim (< հե. *vl̥), *գաղել* - հիռլ. fell (< հե. *vl̥), *գաղձն* - հիռլ. fillim (< հե. *vl̥), *գաղտ(նի)* - հիռլ. (fell) (< հե. *vl̥), *դալար* (*դալուկն*) - հիռլ. deil (< հե. *dh̥l), *դաղձն* - միռլ. deil (< հե. *dh̥l), *հաղ* (*հեղ*) - հիռլ. ebla (< հե. *pl̥, *pel), *մալել* - հիռլ. melim (< հե. *ml̥), *մաստաղ* (*մատողաջ*) - հիռլ. meldach (< հե. *ml̥d-), *պալար* - հիռլ. bolach (< հե. *bl̥- + ար), *քաղել* - կիմր. chwalu (< հե. *ql̥):

բ) Հե. l > հայ. *լ*, մասամբ՝ *ղ* (բառասկզբում) – կելտ. l(a/á, u, e, ó). օր.՝ *աղանձ* – հիռլ. lann (< հե. *lŋdh), *էղուկ* – հիռլ. lucht (< հե. *lig²), *լիք* (*լքանել*) – հիռլ. láicim (< հե. *liq), *լկիլ* – հիռլ. legaim (< հե. *lég), *լոգանալ* – հիռլ. lōathar (< հե. *lov), *լոյծ* (*լուծանել*) – հիռլ. lun (< հե. *leug', loug'), *լոյս* – հիռլ. lóche (< հե. *louk'ó), *լոյս* (*լուտալ*) – հիռլ. láidhim (< հե. *loud), *լոյց* (*լուցանել*) – հիռլ. luach-te (< հե. *louk's), *լորց* – գաել. loirc (< հե. *lord-sk'ó), *նորոկ* – հիռլ. lorg (< հե. *lorg²), *նորք* – հիռլ. tluch (< հե. *lok²), *պոլոկել* (*պլոկել*) – հիռլ. lomm (< հե. *lob):

գ) Հե. l > հայ. *լ* *կամ* *ղ* (ձայնավորների միջև, բառավերջում՝ ձայնավորից հետո) – կելտ. (a/á, ai, ol, e/ei), la, [ø (?)]. օր.՝ *բալ* («մշուշ») – հիռլ. ball (< հե. *bhól, *bhal), *բուր* – կիմր. bal (< հե. *bhōl), *բուր* – հիռլ. bolach (< հե. *bhol- + nr), *բոդ* (*բոդկ*, *բոդիկ*) – հիռլ. blath (< հե. *bhol), *դալ* (*դալլ*) («կաթնախեժ») – հիռլ. del (< հե. *dhōi-l), *դեղ* (*դեղք*, *դեղին*, *դեղձ*) – վիռլ. deil (< հե. *dhel), *դուլ* («դադար») – հիռլ. dál (< հե. *dhul), *էլանել* – գալլ. el (< հե. *el), *կեղ* – հիռլ. balt (< հե. *g²el), *տոդ* (*տոդուք*) – բրետ. staot (< հե. *stol), *ցելուլ* (*ցեղ*) – հիռլ. scailt (< հե. *sk'el) և այլն:

5) Հե. *m (*մ, *մ) ձայնորդի հայ-կելտական զուգաբանությունները բազմազան են և՛ տեսակով, և՛ քանակապես. ընդհանուր առմամբ այն տալիս է հայերենում *աւ* (բացի մեկ-երկուսից. հմմտ. *dom > *տուն*), իսկ կելտականում՝ *m*, *ama* կամ *mā*. կան այս ընդհանուր կանոնից շեղումներ, որոնք մասնակի բնույթի են:

Այդպիսին են ամենից առաջ հետևյալները:

ա) Հե. *m (բառամիջում) հայ. *ւ*, կելտականում ևս՝ *m*. օր.՝ *աւէն* (*աւենայն*) – semain (< հե. *sm̥mo), *աւսկ* – հիռլ. nem (< հե. *m̥bhó), *աւսպոսկ* – կելտ. imrim (< հե. *m̥bhró), իսկ բառի վերջում՝ հայ. *ն*, իսկ կելտականում՝ *ø* (զրո). *էլթն* – հիռլ. secht (< հե. *septm̥), *տասն* – հիռլ. deich (< հե. *dék'm̥):

բ) Հե. *m (բաղաձայն՝ բառասկզբում) > հայ. *ւ* – կելտ. *m*. օր.՝ *աւիս* – հիռլ. mis (< հե. *mēns), *աւել* (*ալալել*) – հիռլ. melim (< հե. *ml̥), *աւծնուլ* – բրետ. meza (< հե. *mag'), *աւյր* – հիռլ. máthir (< հե. *māter), *աւյրի* (ծառ) – գալլ. materis (< հե. *māter), *աւնր* (*աւնուկ*) – հիռլ. menb (< հե. *m̥ənu), *աւտաղ* (*աւտղաշ*) – հիռլ. meldach (< հե. *ml̥d-), *աւծ* – հիռլ. maige (< հե. *meg'a), *աւեղ* (*աւեղալ*) – հիռլ. meldach (< հե. *mel), *աւեղր* (սեռ. հոլ. *աւեղու*) – կիմր. mel (< հե. *mel), *աւեղք* (*աւեղանչել*) – հիռլ. meil (< հե. *mel), *աւեռանիլ* – հիռլ. marb (< հե. *mer), *աւջ* – հիռլ. medón (< հե. *médyo), *աիս* – հիռլ. mīr (< հե. *mēmso), *աիսք* – հիռլ. mediur (< հե. *mēd), *ալ-աղաց* (*աւաւուլ*) – հիռլ. melim (< հե. *mōl), *աուր* (*աուրձ*, *աբուր*, *աբրիկ*) – վիռլ. mūr (< հե. *mutro):

զ) Հե. *m (բաղաձայն՝ բառամիջում և բառավերջում) > հայ. *մ* – կելտ. m. օր.՝ *սալ* (*սալիկ*) – հիռլ. sam (< հե. *sama, *sōmā), *անուն* – հիռլ. ainm (< հե. *nōmŋ), *սալբ-նղջ* – հիռլ. (imb) (< հե. *ambhó), *ատամն* – հիռլ. dēt (< հե. *dŋ-mn), *գեղմն* – կիմր. gwian (< հե. *velmŋ), *եկ (եկն)* – միռլ. beim (< հե. *g²ā, g²em), *եւ* – հիռլ. am (< հե. *ésmi), *եքետուն* – հիռլ. tricha (< հե. *trik’omtə), *թոււմ* – միռլ. tomm (< հե. *tum), *հողմ* – հիռլ. animm (< հե. *onəmo), *հում* – հիռլ. om (< հե. *ōmo), *ձմեռն* – հիռլ. gam (< հե. *g’heiem-er), *նղորմ* – հիռլ. arman (< հե. *orm), *ջերմ* – հիռլ. gor (< հե. *g²hermo):

ը) Հե. *sm (բառասկզբում) > հայ. *մ* – կելտ. sm, m. օր.՝ *մի* [*մէն, միայն, մի-մեանք, միւս* (**մեւս*)] – հիռլ. smail (< հե. *smio), *մուխ* («ծուխ», *մխել*) – հիռլ. múch (< հե. *smuqh), *մուրկ (մրկել)* – հիռլ. múch (< հե. *smug’-ro), *մորուք* (**մաւրուք*) – հիռլ. smech (< հե. *smakru):

ե) Հե. *sm (բառամիջում) > հայ. *մ* – կելտ. am. օր.՝ *եւ* – հիռլ. am (< հե. *ésmi):

6) Հե. *n (*ŋ, *ñ) ձայնորդի հայ-կելտական զուգաբանական արտացոլումները, ինչպես մասամբ մյուսների դեպքում, նախկինում (Մեյե, Աճառյան և ուրիշներ) ներկայացված են ընդհանուր գծերով, այնինչ՝ Աճառյանի ցանկերի տվյալների մանրամասն համեմատությունից պարզվում է, որ հայերենին զուգահեռ կելտական լեզուների օրինակները հանդես են բերում այդ ձայնորդի տարբերակների՝ որևէ ձայնավորի հետ կապակցման մասնակիություններ:

Նշենք դրանցից հետևյալները:

ա) Հե. *ŋ > հայ. *ան* – կելտ. (i, a, o, u, ai)n, (e, ē)n, im, ø. օր.՝ *ան* (ժխտ. մասնիկ) – հիռլ. ingnad (< հե. *ŋ), *աղանձ* – հիռլ. lann (< հե. *lŋdh), *անուն* – հիռլ. ainm (< հե. *nōmŋ), *ասեղն* – բրետ. ebil (< հե. *ak’lŋ), *ատամն* (**ատանմն*) – հիռլ. dēt (< հե. *dŋ-mn), *գեղմն* – կիմր. gwian (< հե. *velmŋ), *գերան* – կոռն. guern (< հե. *verŋnā), *թանձր* – հիռլ. técht (< հե. *tŋg’hú), ինն – հիռլ. nōi (< հե. *énwŋ), *խանդ* (**խանձ, խազ*) – բրետ. condud (< հե. *khŋd), *ծան* [*ծանեալ, ծանօթ* (**ծանալթ*), *ճանաչել*] – հիռլ. gninim (< հե. *g’ŋ), *հասանել* – հիռլ. do-icim (< հե. *ŋkē), *պապանձիլ* – հիռլ. bunne [*և* հե. *bŋdh-(bh)], *սան* – հիռլ. sine (< հե. *psŋ). *քսան* – հիռլ. fiche (< հե. *wík’ŋti), *օճանել* – հիռլ. imb (< հե. *ŋg²):

բ) Հե. *n (բաղաձայն՝ բառասկզբում) > հայ. *ն* – կելտ. in, n(o, a, e, i). օր.՝ *եղունգն* – հիռլ. ingen (< հե. *noghlo), *մերկ* (< **ներկ*) – հիռլ. nocht (< հե. *neg²-ro), *նաւ* – հիռլ. nau (< հե. *nāu), *նիստ* – հիռլ. net (< հե. *nizdo), *նրոյր* – հիռլ. nithio (< հե. *nik-):

զ) Հէ. *n (բաղաձայն՝ բառամիջում և բառավերջում) > հայ. ն – կելտ. (a, o, e, i, y)n, (ā, ē, ai, ei)n, ām, ne, ø (կան զգալի թվով զուգահեռներ). օր.՝ *անիծ* – հիռլ. sned (< հե. *gnid- / *knid), *անձուկ* – հիռլ. (cum)ung (< հե. *ang’hu), *աւն* («ունեցվածք») – հիռլ. āne (< հե. *opnos), *գան* (*գանել*) – հիռլ. gonim (< հե. *g²həni), *գուն* («ջանք») – հիռլ. fine (< հե. *won, wōn), *դոն* – հիռլ. indile (< հե. *dhon), *եղն(իկ)* – կիւր. elain (< հե. *éino), *ընթանալ* – կիւր. hynt (< հե. *senth), *թան* [*թանալ*, *թանչ*, *թաց*, *թօն* (**թան*)] – հիռլ. *tām (< հե. *tā, *tān), *ի* (նիւ.) – հիռլ. in (< հե. *in / *en), *լայն* – հիռլ. lethan (< հե. *plātno), *ծին* (*ծնանիկ*, *ծնէրէկ*) – հիռլ. gein (< հե. *g’en), *կին* – հիռլ. ben (< հե. *g²en), *կռունկ* – կիւր. garan (< հե. *gurōng), *հին* – կիւր. hēn (< հե. *seno), *հուն* – հիռլ. ēs (< հե. *pont), *շուն* – հիռլ. cú, con (< հե. *k’wōn), *հողմ* – հիռլ. animm (< հե. *onəmo), *մանր* (*մանուկ*) – հիռլ. menb (< հե. *mənu), *նայ* («թաց, խոնավ») – հիռլ. snuadh (< հե. *snə-t), *ողն* (սեռ. հոլ.՝ *ողին*) – կիւր. elin (< հե. *olen), *ուլն* («վիզ») – կիւր. elin (< հե. *olen), *ունկն* – հիռլ. au, ō (< հե. *ōsn, usn + կն), *ջինջ* (*ջնջել*) – հիռլ. gonim (< հե. *g²hen-ye), *ռունգն* – հիռլ. srōn (< հե. *srungħ), *ստինք* – հիռլ. sine (< հե. *pstēn), *սուն* [*սնանիկ* (*սին*, *սուն*)] – հիռլ. sine (< հե. *psen, *pson, *psn), *քուն* (*քունք*) – հիռլ. súan (< հե. *swopno), *օձ* (**աւձ*) – հիռլ. –ung (< հե. *ang²hi) և այլն:

դ. Երկբարբառներ:

Նման միավորների զուգաբանական արտացոլումները պայմանավորված են լեզուների զարգացման ներքին հիմունքներով, ուստի զուգաբանական քննության տվյալները, թերևս, չունեն այն ինտենսիվությունը, որ նկատելի է ձայնավորների և եռաբաշխ (տրիֆունկցիոնալ) ձայնորդների առանձնակի (ինքնակա) արտացոլումների դեպքում է:

Այնուամենայնիվ, նկատում ենք հետևյալ դեպքերը (ըստ ձայնավորի միավորման):

1) Հէ. *e (i, u, r, l, m, n) > հայ. *ի* (**է* [**էյ*]), *ոյ*, *էն*, *էր*, *ին*, *ին* – կելտ. ē (ia), ō (ūa), er, el, (em), (en), ընդ որում՝ նկատելի են առնչակցության հետևյալ տիպերը.

ա) հե. *ei > հայ. *ի* (**է* [**էյ*]) – կելտ. e, i, ði . օր.՝ *դէզ* – հիռլ. dign (< հե. *dheig^oh), *զէտ* (*զիտել*) – հիռլ. ro-fetar- (< հե. *weid), *զիւտ* (*զսանել*) – հիռլ. finnaim (< հե. *weid, woid), *լէզ* (*լիզել*) – հիռլ. ligim (< հե. *leig^oh), *սէր* (*սիրել*) – հիռլ. cōim (< հե. *k^oei-ro)¹,

¹ Թերևս բացառություն է հե. *ei > հայ. *էւ* – կելտ. iw զուգահեռը՝ *սիւ* – կելտ. diw (*diw), որ բացատրելի է նախագրայինի մեջ (հմմտ. *տէւել* և այլն):

բ) հե. *eu > հայ. *ոյ* – կելլւ. e, u (w), ui (ūi). օր.՝ *բոյս* (*բուսենել) – հիւնլ. buith (< հե. *bhu, *bheu), *լոյծ* (լուծենել) – հիւնլ. lun (< հե. *leug', *loug°), *խոյլ* («ուռուցք») – հիւնլ. cūil (< հե. *kheul), *մոյթ* – հիւնլ. methos (< հե. *meuthi), *փոյթ* (փութայլ) – կիւր. ffwdan (< հե. *speut),

գ) հե. *eu > հայ. (բաց վանկում) *ել* (*իւ*) – կելլւ. eu, ēi, u, oe (?). օր.՝ *առելծ* (*առիւծ*) – հիւնլ. rucht (< հե. *reug°), *դեղելիլ* – միւնլ. dumacha (< հե. *dheu), *իւր* – հիւնլ. fein (< հե. *sewe), *տելել* – հիւնլ. doe (< հե. *dewə),

դ) Հե. *eu > հայ. *աւ* – կելլւ. au, ua (?), օր.՝ *օղ* (*աղ «կոշիկ») – հիւնլ. fuan (?) (< հե. *eu-dh), *օր* [*աւր «հազն(վ)ել»] – կիւր. aauthel (< հե. *ew-ti):

Իսկ մյուս *են*, *եղ*, *ին*, *իղ* միավորները հին գրական հայերենում չունեն երկհնչյունի արժեք, որպիսին, թերևս հավանական է, չէին նախագրային հայերենում, որ հատուկ քննության նյութ է:

2) Հե. *o (i, u, r, l, m, n) > հայ. *է*, *ոյ*, *ոբ*, *ոդ*, *ոս*, *ուն* – կելլւ. oe, ō(ūa), or, ol, (om), (on). Մակայն եղած օրինակներն այլ պատկեր են ներկայացնում.

ա) հե. *ou > հայ. *ոյ* – կելլւ. ó, āi, ua, ou և այլն. հմմտ. *լոյս* – հիւնլ. lóche (< հե. *luok°o), *լոյտ* (լուտայլ) «անարգանք. թշնամանք» – հիւնլ. laidhim (< հե. *loud). *լոյց* (լուցանել) – հիւնլ. luach-te (< հե. *louk°s), *լուսան* – հիւնլ. lug (< հե. *louk°), *ոյծ* (ուծանայլ «սառչել») – հիւնլ. ōcht (< հե. *oug°),

բ) հե. *ou > հայ. *այ* (բառասկզբում), *է* (բառամիջում՝ շեշտված), *ի* (անշեշտ) – կելլւ. oi, eo և այլն. հմմտ. *այտ* (այտնույլ) «ուռչել. այտուցվել» – հիւնլ. óil (< հե. *oid), *այգի* – հիւնլ. (eo) (< հե. *oiwā) և այլն:

Մյուս *ոբ*, *ոդ*, *ոս*, *ուն* միացությունները գրական հայերենում երկհնչյունային չեն, թերևս այդպիսն եղել են նախագրային շրջանում:

3) Հե. *a (i, u, r, l, m, n) > հայ. *այ*, *աւ*, *ար*, *աղ*, *ամ*, *ան* – կելլւ. ae, ō (ūa), ar, al, am, an. այս դեպքում ևս եղած օրինակներն այլ պատկեր են ներկայացնում.

ա) հե. *ai > հայ. *այ* – կելլւ. a, ai, ae. օր.՝ *այծ* – հիւնլ. ag (< հե. *aig°), *այլ* – կելլւ. aile (< հե. *ailo), *գայլ* – հիւնլ. fael (< հե. *vailo),

բ) հե. *au > հայ. *աւ* (*օ*) – կելլւ. u, aw. օր.՝ *յօղ* – հիւնլ. fuan (?) (< հե. *au-dh), *օզնել* (*օզուտ*) – կիւր. awyr (< հե. *auw) և այլն: Մյուս *ար*, *աղ*, *ամ*, *ան* միավորները հին գրականում ունենին ոչ երկհնչյունի գործառույթ:

Ե. *Բաղաձայններ:*

Հնդեվրոպական լեզուների հնչյունական իրողություններից թերևս ավելի լայն քննության առարկա են եղել բաղաձայնները՝ իրենց ամեն տեսակի դրսևորումների մեջ, և դա միանգամայն բնական է, որքանով լեզուների ցեղակ-

ցային տարբերակման առաջին հերթին երևացող դրսևորումներից են հնչյունական համակարգի այդ միավորները: Ավելին, նման միավորները հաճախ եղել են ցեղակից լեզուների դասակարգման (խմբերի առանձնացման) հիմքային հատկանիշ, այսինքն՝ ներքին բաշխվածությամբ պայմանավորված առանձնացումների [հմմտ. լեզուների centum / satəm, decem / taihun, գլոտալ (էլեկտիվ. ծեր-պաձայնային), հետնալեզվայինների բաշխում և այլն]:

Դրանք հետաքրքիր են նաև հայ-կելտական զուգաբանական արտացոլումների տեսանկյունից, որոնց էլ անդրադառնում ենք ստորև՝ առանձին-առանձին:

1. *Խուլեր:*

1) Հե. *p > հայ. *h, l, j, ɸ* (զրո) – կելտ. *ɸ* (զրո). հմմտ. հե. *pətéer > հայ. *հայր* – հիմլ. *athir*, հե. *epi > հայ. *ել* – հիմլ. *iar*:

ա) Բառասկզբում հե. *p > հայ. *h, l, j, ɸ* (զրո) – կելտ. *ɸ* (զրո). օր.՝ *հաղ* (*հեղ*) – հիմլ. *ebla* (< հե. *p_l, *p_{el}), *հար* (*հարուլ, հարկանել*) – հիմլ. *orgaim* (< հե. *p_r, *p_rg), *հարցանել* – հիմլ. *arc* (< հե. *p_rk-sk), *հալ* («*ծայր*») – հիմլ. *aoi* (< հե. *awei), *հեռի* – հիմլ. *fre* (< հե. *per), *հետ(p)* (*յետ*) – հիմլ. *(in)ad* (< հե. *pedo), *հերկ* (*հերկել*) (?) – Բրետ. *rec* (< հե. *perg), *հերու* (< **հերուլ*) – հիմլ. *hurid* (< հե. *peruti), *հինգ* – Բրետ. *pemp* (< հե. *penk²e), *հոյ(ակասայ)* – Բրետ. *ozech* (< հե. *poti «տեր, իշխան»), *հուն* («գետի անցնելը») – հիմլ. *ēu* (< հե. *pont), *հուր* – հիմլ. *ūr* (?) (< հե. *puro):

բ) Բառասկզբում հե. *p > հայ. *ɸ* (զրո) – կելտ. *ɸ* (զրո). օր.՝ *առ* (նիս.) – հիմլ. *ar* (< հե. *par-), *երա(խայրի)* – հիմլ. *re* (< հե. *pra-), *երես* – հիմլ. (*richt*) (< հե. *prepsā), *երելիլ* – հիմլ. *richt* (< հե. *prep-), *երի* – գալլ. *are-* (< հե. *pri), *ոտն* (ոտք) – հիմլ. *(in)ad* (< հե. *pod), *որդի* – հիմլ. *erthyl* (< հե. *portyǝ):

գ) Նույնը նկատում ենք հե. *pl, *pt, *ps հնչախմբի դեպքում, օր.՝ *ալիք* [«(սպիտակած) մազեր»] – հիմլ. *liath* (< հե. *p_lios), *թեր* (*ընթեր, թերի, թերթ*) – միմլ. *teile* (< հե. *pter), *լալ* – միմլ. *lēn* (< հե. *plā), *լայն* – հիմլ. *lethan* (< հե. *plātno), *լի* (*լնուլ*) – հիմլ. *linaim* (< հե. *plē-yo), *լուանալ* – հիմլ. *luac* (< հե. *plu), *սան* – հիմլ. *sine* (< հե. *psn), *սուն, սնանիլ* (*սին*) – հիմլ. *sine* (< հե. *psen, *pson, *psn):

դ) Երբեմն նկատելի է հե. *p > հայ. *j* – կելտ. *ɸ* (զրո). օր.՝ *յատակ* – հիմլ. *inad* (< հե. *pǝd-), *յիսուն* – հիմլ. *cōica* (< հե. *penk²ēk 'omtǝ), *յղի* – հիմլ. *lia* (< հե. *plē), *յոլով* («շատ. բազում») – հիմլ. *il* (< հե. *pol-):

օղ «կոշիկ» - հիռլ. *fuan* (?) (< հե. *eu-dh),
օղ «եղանակ» - կիւր. *auhel* (< հե. *aw-dho)
օթ «հագնել» - հիռլ. *fuan* (?) (< հե. *ew-ti),
օծանել - հիռլ. *imb* (< հե. *ng²),
օձ - հիռլ. -ung (< հե. *ang²hi, ang'hi):

Հայտնի է, որ այդ ցանկը, հետագա ուսումնասիրությունների համար ունեցել է ելակետային նշանակություն, թեև որոշ դեպքերում մոցվել են անհրաժեշտ ճշգրտումներ, ինչպես նաև արվել լրացումներ:

Այսպես, ցանկին ժամանակին անդրադարձել է նաև Գ. Ջահուկյանը իր հայտնի հոդվածներում և հետագայում՝ «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ¹: Նախքան Աճառյանի ցանկի (աղյուսակի) վերաբերյալ Ջահուկյանի դիտարկումներին անդրադառնալը՝ ամենից առաջ նշենք հետևյալը:

1) Աճառյանի բերած բնիկ 713 արմատից 342-ում նշանակվում է հայ-կելտական զուգաբանություն (կեսից պակաս):

2) Ցանկում կելտական տվյալ ձևի դիմաց երբեմն հանդես է գալիս հայերեն մեկից ավելի համարժեք, ընդամին՝ հայերենի համար երբեմն վերականգնված է լինում հնդեվրոպական ոչ նույն կամ նույնպիսի արմատ. հմմտ.

ա) ազանիլ «հագնվել» - հիռլ. (?) (< հե. *évn̄, *ónv̄) // *առագաստ* - հիռլ. (?) (< հե. *évn̄, *ónv̄), *օղ* «կոշիկ» - հիռլ. (?) (< հե. *u-dh) // *օթ* «հագնել» - հիռլ. *fuan* (?) (< հե. *ew-ti),

բ) մատաղ (*մատղաջ*) - հիռլ. *meldach* (< հե. *m̄ld-) // *մեղկ* (*մեղմ*) - հիռլ. *meldach* (< հե. *mel-) և այլն,

գ) ականջ - հիռլ. *au, ō* (< հե. *aus) // *ունկն* - հիռլ. *au, ō* (< հե. *ōsn, usn+կն),

դ) բերան - հիռլ. *bern* (< հե. *bher-ano) // *բիր* - հիռլ. *bern* (< հե. *bher),

ե) գալ(ար) - հիռլ. *fillim* (< հե. *v̄l̄) // *գաղձն* - հիռլ. (*fillim*) (< հե. *v̄l̄), *գելուլ* - հիռլ. *fillim* (< հե. *velu) // *գեղձ* «բաղեղ» - հիռլ. *fillim* (< հե. *vel),

զ) գաղել - հիռլ. *fell* (< հե. *v̄l̄) // *գաղտ* - հիռլ. (*fell*) (< հե. *v̄l̄d) // *գող* - հիռլ. *fell* (< հե. *wol),

¹ Գ. Բ. Ժաուկյան, Опыт сравнительной классификации и ареального распределения индоевропейской лексики арманского языка // Գ. Բ. Ժաուկյան, Լ. Ա. Տարաճեա, Ը. Ք. Արտյոնյան, Очерки по сравнительной лексикологии армянского языка, Ереван, 1983, էջ 5-116: Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 105-222:

է) *դալ, դայլ* - հիռլ. del (< հե. *dhñi-l) // *դալ-ար, դալ-ուկն* - հիռլ. deil (< հե. *dhəi-l) // *դաղձն* - միռլ. deil (< հե. *dhl) // *դեղ (դեղբ, դեղին, դեղձ, դեղձան)* - միռլ. deil (< հե. *dhel),

ը) *երես* - հիռլ. (richt) (< հե. *prepsā) // *երնիլ* - հիռլ. richt (< հե. *prep-),

թ) *լիբր* - կիմբ. llyfr (< հե. *slibr) // *լպիթ, Լպիթ* - կիմբ. llyfr (< հե. *slibr),

ժ) *մալել (մլմլել)* - հիռլ. melim (< հե. *ml) // *մա-մուլ* - հիռլ. melim (< հե. *mōl) // *մլ-աղաց* - հիռլ. melim (< հե. *mōl),

ժա) *մուխ, մխալ* - հիռլ. múch (< հե. *smuqh) // *մուրկ, մրկել* - հիռլ. múch (< հե. *smug-ro),

ժբ) *յատակ* - հիռլ. in-ad (< հե. *pəd-) // *նուն* - հիռլ. (in)ad (< հե. *pod),

ժգ) *պալար* - հիռլ. bolach (< հե. *b!+ար) // *պղպղակ* - հիռլ. bolach (< հե. *bul) // *ձ»Օ»լ* - հիռլ. belach (*bel),

ժդ) *պապանձիլ* - հիռլ. bunne [< հե. *bŋdh-(bh)] // *պինդ* - հիռլ. bunne [< հե. *bhendh (bh)],

ժե) *սան* - հիռլ. sine (< հե. *psŋ) // *սուն, սնանիլ (սին, սան)* - հիռլ. sine (< հե. *psen, *pson, *psŋ) // *ստինք* - հիռլ. sine (< հե. *pstēn)¹,

ժզ) *տարգալ «գալ»* - հիռլ. drochta (< հե. *dŋwa+l) // *տոռն (սանդի)* - հիռլ. drochta (< հե. *doru) և այլն:

3) Գրեթե նույնպիսի հարաբերակցություն է նկատվում նաև հայերենի և համեմատելի մյուս լեզուների՝ սանսկրիտի, իրանական լեզուների, հունարենի, լատիներենի, լիտվերենի, հին սլավոնական և գերմանական լեզուների որոշ ձևերի դեպքում և այլն:

4) Զուգաբանությունների մեծ մասն ունի *կելտ.* (= կելտերեն, կելտական, իմա՝ հիռլ. = հին իռլանդերեն և այլն), ի ս կ մյուս մասը՝ նույն ճյուղի այլ լեզուներ (= բրետներեն, կոռներեն, միջին իռլանդերեն և այլն) նշումը, այսինքն՝ հիմնականում բերվում են հին իռլանդերենի տվյալները:

Ստորև բերում ենք այդ ցանկը՝ ըստ տվյալ ճյուղի մեջ ներկայացվող առանձին լեզուների հետ հայերենի ունեցած հարաբերակցության:

ա. Հայերենի և հին իռլանդերենի (*կելտ.* = կելտական, կելտերեն նշումով) միջև, որն ընդհանուրի մեծ մասն է (թվով՝ 256). դա, թերևս, ամենից առաջ բացատրվում է այդ լեզվի համեմատաբար լայն ուսումնասիրված լինելու հանգամանքով, հին իռլանդերեն գրական հուշարձանները թվագրվում են 7-10-րդ դ.

¹ Ցանկում առանձնացումն ավելի քան այլ հիմունք է ենթադրում:

կետերը: Բացի այն, որ հնչյունական մակարդակում դրանց միջև նկատելի է ուժանակի մոտիկություն, իմաստային կողմն, ըստ այդմ, առավել ևս ուշագրավ պիտի լինի հետազոտողի համար:

Աճառյանի ընդհանուր ցանկի այդ մասը հետևյալն է.

ազանիլ «հազնել» - հիմլ. fuan (?) (< հե. *évō, *ónō),
ալիք «(սպիտակած) մազ» - հիմլ. liath (< հե. *plios),
ածել (*յածել*) - հիմլ. -aig (< հե. *ag'ō),
ականջ - հիմլ. au, ō (< հե. ōus-),
աղ (*աղծ*, *աղտ*) - հիմլ. salann (< հե. *sāld),
աղանձ - հիմլ. lann (< հե. *lŋdh),
աղկաղկ - հիմլ. elc (< հե. *alg),
աղբատ - հիմլ. liach (< հե. *oliqo-),
ամ (*ամիկ*) - հիմլ. sam (< հե. *sama, *sōmā),
ամբ(ողջ) - հիմլ. (imb) (< հե. *ambhō),
ամէն - հիմլ. samain (< հե. *sŋmo),
ամիս - հիմլ. mis (< հե. *mēns),
ամսյ - հիմլ. nem (< հե. *ŋbhó),
ամսրոսյ - հիմլ. inrim (< հե. *ŋbhró),
այգի - հիմլ. (eo) (< հե. *oiwā),
այլ (*աղաւաղ*) - հիմլ. aile (< հե. *alyos, *alios),
այծ - հիմլ. ag allaid (?) (< հե. *aig' -),
այտ (*այտնույ*) - հիմլ. óil (< հե. *oid),
այր (*արահետ*, *արու*, *արի*) - հիմլ. (< հե. *rŋsen, *aner),
այրել (*զայրանալ*) - հիմլ. āith (< հե. *ātēr),
(ան)-դունդ - հիմլ. bond (< հե. *bhudhos),
անիծ - հիմլ. sned (< հե. *gnid-, *knid),
անձուկ - հիմլ. (cum)ung (< հե. *ang'hu),
անուն - հիմլ. ainm (< հե. *nōmŋ),
ար (նախդիր) - հիմլ. ar (< հե. *par, *perə),
արագաստ - հիմլ. fuan? (< հե. *évō, *ónō),
արաստաղ - հիմլ. tailc (< հե. *stel),
արիծ - հիմլ. rucht (< հե. *reug' -),
արոզանել/արու - հիմլ. sruth (< հե. *srov),

ասել - հիւնլ. ai (< հէ. *ag'),
ատաղձ - հիւնլ. del (< հէ. *dl),
ատամն - հիւնլ. dēt (< հէ. *d̥n-mn),
ատեան - հիւնլ. saidim (< հէ. *sed, *səd),
արբ - հիւնլ. srub (< հէ. *sr̥bh),
արգել - հիւնլ. aircthe (< հէ. *arq),
արծաթ - հիւնլ. argat (< հէ. *arg' -ato),
արջ - հիւնլ. art (< հէ. *r̥kthos),
արօր - հիւնլ. arathar (< հէ. *aratrom),
ան «ինչք ունեցվածք» - հիւնլ. āne (< հէ. *opnos),
աքաղաղ - հիւնլ. cailech (< հէ. *k̥l-),
բալ «մշուշ» - հիւնլ. ball (< հէ. *bhəl, bhal),
բահ//բարհ - հիւնլ. bern (< հէ. *bher),
բեկանել - հիւնլ. boingim (< հէ. *bheg, *bheng],
բերել (բերրի) - հիւնլ. berim (< հէ. *bher-),
բերան - հիւնլ. bern (< հէ. *bher-ano),
բիր - հիւնլ. bera (< հէ. *bher),
բոլոր - հիւնլ. bolach (< հէ. *bhol + որ),
բող (բողիկ, բողբոջ, բողկ) - հիւնլ. blath (< հէ. *bhol),
բոյս - հիւնլ. buith (< հէ. *bhewə, *bhū),
բոց - հիւնլ. bān (< հէ. *bho-sk),
բուծ - հիւնլ. boc (< հէ. *bhug' o),
գալ(ար) - հիւնլ. fillim (< հէ. *v̥l),
գաղել - հիւնլ. fell (< հէ. *v̥l),
գաղձն - հիւնլ. (fillim) (< հէ. *v̥l),
գաղտ - հիւնլ. (fell) (< հէ. *v̥ld),
գալլ (կենդանի) - հիւնլ. fael [< հէ. *vailo (?)],
գան - հիւնլ. gonim (< հէ. *g²həni),
գելուլ - հիւնլ. fillim (< հէ. *velu),
գեղձ «բաղէղ» - հիւնլ. fillim (< հէ. *vel),
գետ - հիւնլ. usca (< հէ. *vedo),
գէտ, գիտեմ (գանգիտել) - հիւնլ. ro-fetar (< հէ. *weid, *woid),
գիշեր - հիւնլ. fescor (< հէ. *weqero),
գիւտ, գտանել - հիւնլ. finnaim (< հէ. *weid, *woid),

գող - հիւնլ. fell (< հէ. *wol),
գոյ - հիւնլ. foss (< հէ. *wes, *wos),
գուն «ջանք» - հիւնլ. fine (< հէ. *won // *wōn),
դա (*այդ, դոյն, աւաղիկ*) - հիւնլ. - d (< հէ. *to-, *tā-),
դալ/դալլ - հիւնլ. del (< հէ. *dhəi-l),
դալ-ար, դալ-ուկն - հիւնլ. deil (< հէ. *dhǫ),
դէգ - հիւնլ. digen (< հէ. *dheig h),
դի // *դիակ* - հիւնլ. dith (< հէ. *dhuī-),
դիէլ - հիւնլ. dínim (< հէ. *dhē, *dhi),
դոն «հաւց. գարդը» (?) - հիւնլ. indile (< հէ. *dhon),
դու - հիւնլ. tū (< հէ. *tu, *tū),
դուլ - հիւնլ. dál < հէ. *dhul),
դուռն - հիւնլ. dorus (< հէ. *dhur),
դուրգն - հիւնլ. droch (< հէ. *dhrōgh),
էգն - հիւնլ. ag (< հէ. *eg h-),
էդբայր - հիւնլ. bráthir (< հէ. *bhrātēr),
էդուկ - հիւնլ. lucht (< հէ. *lug²),
էդունգն - հիւնլ. ingen (< հէ. *noghlo),
էմ - հիւնլ. am (< հէ. *ésmi),
էրա(խայրի) - հիւնլ. re (< հէ. *pra-),
էրէս - հիւնլ. (richt) (< հէ. *prepsā),
էրէսուն - հիւնլ. tricha (< հէ. *trík omtə),
էրնիլ - հիւնլ. richt (< հէ. *prep-),
էրէք - հիւնլ. tri (< հէ. *trēyes),
էրկ-այն (էրկ-ար) - հիւնլ. doe (< հէ. *dwā-),
էրկու (կրկին) - հիւնլ. dāu (< հէ. *dwō),
էւ, էւս - հիւնլ. iar (< հէ. *épi),
էոթն - հիւնլ. secht (< հէ. *septm),
էշ - հիւնլ. ech (< հէ. *ek wo),
ընթէռնուլ - հիւնլ. torann (< հէ. *ter),
թան (թանալ, թանչ, թոն) - հիւնլ. tām (< հէ. *tā, *tān),
թանձր - հիւնլ. técht (< հէ. *təg hū),
թառաս (թարշաս) - հիւնլ. tirim (< հէ. *tars, *tṛs),
թէկն - հիւնլ. tóeb [< հէ. *(s)teig²no],

թուր - հիւնլ. tarathar (< հէ. *tōr),
ի (*իք, ինչ, հի, իրաւ, իսն, զի, իր*) - հիւնլ. cid (< հէ. *kʷi),
ի (սախտիիր) - հիւնլ. in (< հէ. *in , *en),
ինն - հիւնլ. nōi (< հէ. *énwn),
իւր - հիւնլ. féin (< հէ. *sewe-),
լայն - հիւնլ. lethan (< հէ. *plātno),
լէզու - հիւնլ. tenga (< հէ. *dngʷ hū),
լէրկ - հիւնլ. lerg (< հէ. *lergʷ),
լէզ, լիզել - հիւնլ. ligim (< հէ. *leigʷ h),
լի, լինուլ - հիւնլ. līnaim (< հէ. *plē-yo),
լիք, լքանել - հիւնլ. lēicim (< հէ. *liq),
լկիլ - հիւնլ. legaim (< հէ. *lēg),
լոգանալ - հիւնլ. lōathar (< հէ. *lov),
լոծ, լուծանել - հիւնլ. lun (< հէ. *leugʷ , *lougʷ),
լոյս - հիւնլ. lóche (< հէ. *loukʷ o),
լոյս, լուտալ - հիւնլ. lāidhim (< հէ. *loud),
լոյց, լուցանել - հիւնլ. luach-te (< հէ. *loukʷ s),
լուանալ - հիւնլ. luac (< հէ. *plu),
լուն - հիւնլ. clunim (< հէ. *kʷ lus-r),
լուսան - հիւնլ. lug (< հէ. *loukʷ),
լսել (*լուր, հլու*) - հիւնլ. cloor (< հէ. *kʷ lu-s),
խոյլ - հիւնլ. cūl (< հէ. *qheul),
խուղ (*հիւղ*) - հիւնլ. cūil (< հէ. *qul),
ճան, ճանաչել - հիւնլ. gninim (< հէ. *gʷ n),
ճիծառն - հիւնլ. gairm (< հէ. *gʷ ār),
ճին (*ճնանիլ, ճնէբել*) - հիւնլ. gein (< հէ. *gʷ en),
կարթ - հիւնլ. gerbach (< հէ. *gʷ ǝbti),
կարծր - հիւնլ. garg (< հէ. *gʷ ǝrgʷ),
կեալ - հիւնլ. bíu (< հէ. *gʷ iyā),
կել - հիւնլ. -balt (< հէ. *gʷ el),
կին - հիւնլ. ben < հէ. (*gʷ en),
կիւ - հիւնլ. bi (< հէ. gʷ iv),
կոյ, կու - հիւնլ. budr (< հէ. *gūto),
կով - հիւնլ. bó (< հէ. *gʷ ov),

կորկոս (?) - հիւնլ. gro (< հե. *g²o-g²rod),
կուլ, կլանել - հիւնլ. gelim (< հե. *g²ul),
հաղ, հեղ - հիւնլ.- ebla (< հե. *pl̥, *pel),
հայր, հորու, յորայ - հիւնլ. athir (< հե. *pətēr-),
հասանել - հիւնլ. do-icim (< հե. *ɲk'),
հար (հարկանել, հարուստ, զարկ) - հիւնլ. orgaim (< հե. *pr̥, *pr̥g),
հարսն // հարց - հիւնլ. -arc (< հե. *pr̥k', *pr̥k'-sk'),
հազի - հիւնլ. huinnius (< հե. *ask'hio),
հաւ - հիւնլ. aoi (< հե. *awei),
հաւ «պապ» - հիւնլ. haue (< հե. *awo),
հեծանել - հիւնլ. saidim (< հե. *sed),
հեռի - հիւնլ. ire (< հե. *per),
հետ(ք) (յետ) - հիւնլ. (in)ad (< հե. *pedo),
հեր(ու) - հիւնլ. hurid (< հե. *peruti),
հողմ - հիւնլ. animm (< հե. *onəmo),
հովիւ - հիւնլ. ōi (< հե. *owi+pā),
հում - հիւնլ. om (< հե. *ōmo),
հուն - հիւնլ. ēs (< հե. *pont),
հուր - հիւնլ. ūr (?) (< հե. *puro),
ձառ - հիւնլ. garb (< հե. *g'h̥rs),
ձիւր - հիւնլ. gor (< հե. *g'h̥er),
ձսեռն - հիւնլ. gam (< հե. *g'heiem-er),
մալել (մլմլել) - հիւնլ. melim (< հե. *m̥l̥),
մա-մուլ - հիւնլ. melim (< հե. *mōl-),
մայր (մառ, մայրան, մօրու) - հիւնլ. máthir (< հե. *māté' r),
մանր (մանուկ) - հիւնլ. menb (< հե. *mənu),
մատաղ (մատղաղ) - հիւնլ. meldach (< հե. *m̥l̥d-),
մեծ - հիւնլ. maige (< հե. *meg'a),
մեղ-ք - հիւնլ. mell (< հե. *mel),
մեղկ, մեղմ - հիւնլ. meldach (< հե. *mel-),
մեռանիլ - հիւնլ. marb (< հե. *mer),
մերկ - հիւնլ. nocht (< հե. *neg²-ro),
մէջ - հիւնլ. medón (< հե. *médyo),
մի «մեկ» (մէն, միայն, միսեանք, միւս) - հիւնլ. semail (< հե. *smio),

միս - հիբլ. mīr (< հե. *mēmso),
միտք - հիբլ. mediur (< հե. *mēd),
մլ-աղաց - հիբլ. melim (< հե. *mōl),
մնալ - հիբլ. ainmne (< հե. *men),
մոյթ - հիբլ. methos (< հե. *meuthi),
մոր-ենի - հիբլ. merenn (< հե. *moro),
մուխ, միսալ - հիբլ. múch (< հե. *smuqh),
մուրկ, մրկել - հիբլ. múch (< հե. *smug-ro),
մրջիւն - հիբլ. moirb [< հե. *(mormo) (?)],
մորուք - հիբլ. smeck (< հե. *smakru),
յագենալ - հիբլ. sāith (< հե. *sāw),
յատալ - հիբլ. in-ad (< հե. *pəd-),
յեռուլ - հիբլ. sreth (< հե. *ser-s),
յիսուն - հիբլ. cōica (< հե. *penk²ēk'omt),
յղի - հիբլ. lia (< հե. *plē),
յուլ - հիբլ. il (< հե. *pol-),
յոդ - հիբլ. fuan(?) (< հե. *au-dh),
նայ - հիբլ. snuadh (< հե. *snə-t),
նաւ - հիբլ. nau (< հե. *nāu),
նիստ, նստել - հիբլ. net (< հե. *nizdo),
նոր - հիբլ. nūe (< հե. *nevros),
նքոյր - հիբլ. nithio (< հե. *nik-),
շուն - հիբլ. cú, cun (< հե. *k'wōn),
ո, ով(նսն, որ, ոք) - հիբլ. co-te (< հե. *kwo),
ոլոք(ոլոզ) - հիբլ. less (< հե. *oleq),
ողող «լաց» (ոլուլալ) - հիբլ. ulach (< հե. *ol),
ողորկ - հիբլ. lorg (< հե. *lorg²),
ողորս - հիբլ. arman (< հե. *orm),
ողորքել - հիբլ. -tluch (< հե. *lok²),
ոյծ «զով» - հիբլ. ōcht (< հե. *ouǵ'),
որ - հիբլ. err (< հե. *orso),
որնալ - հիբլ. rūn (< հե. *rū),
ոտն - հիբլ. (in)ad (< հե. *pod),
որբ - հիբլ. orbho (< հե. *orbe),

որդի - հիւնլ. erthyl (< հէ. *portiyo, porthu),
որձ - հիւնլ. uirgge (< հէ. *org'hi),
որովայն - հիւնլ. cri (< հէ. *qrop + այն),
ուրթ - հիւնլ. ocht (< հէ. *ok' tō > optō),
ունկն - հիւնլ au, ō (< հէ. *ōsn, usn + կն),
ուրուր - հիւնլ. irar (< հէ. *ōr),
չորք - հիւնլ. cethir (< հէ. *k²etwor-es),
պալ «ժայռ», *պաղ-անձաւ*, *պղպղաքար* - հիւնլ. albal (< հէ. *bal, *bāl, *bļ),
պալար - հիւնլ. bolach (< հէ. *bļ + ար),
պասանձիլ - հիւնլ. bunne [< հէ. *bŋdh-(bh)],
պեղել - հիւնլ. belach (< հէ. *bel-),
պինդ - հիւնլ. bunne [< հէ. *bhendh (bh)],
պղպջակ - հիւնլ. bolach (< հէ. *bul),
պոլոկել - հիւնլ. lomm (< հէ. *lob),
պու(ղ)ց («vulva») - հիւնլ. ball (< հէ. *bul-sk'),
ջեր - հիւնլ. gor (< հէ. *g²her),
ջին, ջնել // ջինջ, ջնջել - հիւնլ. gonim (< հէ. *g²hen // *g²hen-ye),
ռունգն (?) - հիւնլ. srōn (< հէ. *srungħ),
սա (այս, սոյն, սստ. աւասիկ) - հիւնլ. cē (< հէ. *k' o),
սան - հիւնլ. sine (< հէ. *psŋ),
սանդուղ (?) - հիւնլ. scendim (< հէ. *sqand + ուղ),
սէր, սիրել - հիւնլ. cōim (< հէ. *k' ei-ro),
սիրտ - հիւնլ. cride (< հէ. *k' ērdi),
սլ-աք - հիւնլ. cuil (< հէ. *k²ul + աք),
սոր - հիւնլ. cūa (< հէ. *k'ovro),
սուն, սնանիլ (սին, սան) - հիւնլ. sine (< հէ. *psen, *pson, *psŋ),
սուր (սուր) - հիւնլ. cath (< հէ. *k' ō-ro),
սուրբ (սպրիկ) - հիւնլ. cuanna (< հէ. *k' ubhró),
սպանակ - հիւնլ. seir (< հէ. *spr),
ստանակ - հիւնլ. cono-snaim (< հէ. *sta + ն),
ստեղծել - հիւնլ. tailc (< հէ. *stel+δ),
վեց - հիւնլ. sé (< հէ. *k' swek' s),
տալ (բայ) - հիւնլ. dān (< հէ. *dā, *dō),
տասն - հիւնլ. deich (< հէ. *dek'm-),

տարգալ - հիւնլ. drochta (< հե. *drwa-լ),
տեսանել - հիւնլ. derc (< հե. *derk'-),
տնել - հիւնլ. doe (< հե. *dewə),
տիգ - հիւնլ. dega (< հե. *dig'h-),
տոկալ - հիւնլ. doe (< հե. *domə-ko),
տոռն «(սանդի) թակիչ՝ ծեծիչ» - հիւնլ. drochta (< հե. *doru-),
տրտունջ - հիւնլ. dord (< հե. *dörd-),
g(?) - հիւնլ. ad (< հե. *ad-sk'-),
ցելուլ (ցեղ) - հիւնլ. scailt (< հե. *sk'el),
ցիւ - հիւնլ. cūil (< հե. *sk'ēwo),
փայծաղն - հիւնլ. selg [< հե. *sphelg'հո (?)],
քար - հիւնլ. carn (< հե. *kar),
քարք - հիւնլ. cerb [< հե. *(s)kɹp],
քերել (քորել) - հիւնլ. scaraim [< հե. *(s)qer],
քերթել, քերծել - հիւնլ. scrissid [< հե. *(s)qer + թ, ծ],
քիւ - հիւնլ. cūil (< հե. *skēwo),
քոյր - հիւնլ. siur (< հե. *swésōr),
քուն (քունք) - հիւնլ. súan (< հե. *swopno),
քսան - հիւնլ. fiche (< հե. *wīk'դի),
ոդ «կոշիկ» - հիւնլ. fuan(?) (< հե. *eu-dh),
ոթ «հագնել» - հիւնլ. fuan (?) (< հե. *ew-ti),
օճանել - հիւնլ. imb (< հե. *ոց²),
օճ - հիւնլ. -ung (< հե. ang²hi, ang'hi):

բ. Ցանկում բերվում է նաև մոտ մեկուկես տասնյակ (թվով՝ 14) համընկում հայերենի և միջին իռլանդերենի միջև, որն արդեն ուշ շրջանի է, թվագրվում է 10-րդ դ. վերջին տասնամյակներից մինչև 13-րդ դ. սկիզբները. նկատելի են հայերենի հետ հետևյալ զուգաբանությունները.

դաղձն - միւնլ. deil (< հե. *dhl-),
դեղնիլ - միւնլ. dumacha (< հե. *dheu),
դեղ (դեղք, դեղին, դեղձ, դեղձան) - միւնլ. deil (< հե. *dhel),
եկ, եկն - միւնլ. bēim (< հե. *g²ā, *g²em),
երերալ - միւնլ. tarrach (< հե. *tres),
թեղի - միւնլ. teile (< հե. *tel),
թեքել - միւնլ. tal (< հե. *tek²),

թումբ - միռլ. tomm (< հե. *tum),
լալ - միռլ. lēn (< հե. *plā),
մուր, մուրճ - միռլ. mūr (< հե. *mutro),
ցայտել - միռլ. ceird (< հե. *sk'at),
փայլ (փաղփաղիլ, փողփողել) - միռլ. lainn (< հե. *sphel-, *phel),
քակոք - միռլ. cacc (< հե. *kakka-),
քաք - միռլ. cace (< հե. *kakka)¹:

գ. Հայերենի և կիմրերենի միջև առանձնացվում է շուրջ հինգ տասնյակ (թվով՝ 48) զուգաբանություն, որ երկրորդն է հին և միջին իռլանդերենի համեմատությամբ, մյուսների դեպքում այդ թիվն ավելի պակաս է: Կիմրերենը (= վալլիերեն. ուելսերեն) համեմատաբար լավ է ուսումնասիրված՝ իր թե՞ պատմության և թե՞ քերականական կառուցվածքի տեսանկյունից. նկատվում են հետևյալ զուգաբանությունները,

արգահատիլ, արգ(անդ) - կիմր. arffed (< հե. *arq²),
բաննալ (բարձ, բարձր, բերձ) - կիմր. bry (< հե. *bhrǵ'h),
բլուր - կիմր. bal (< հե. *bhōl + ուր),
բորբ(ոք) - կիմր. berwi (< հե. *bho-bhr-o),
գարուն - կիմր. guiannuin (< հե. *vesr),
գեղ(եցիկ) - կիմր. gweled (< հե. *vel),
գեղմն - կիմր. gwian (< հե. *velmǵ),
գիլ, գլոր - կիմր. olwyn (< հե. *wēl),
եղն(իկ) - կիմր. elain (< հե. *éino),
երկան - կիմր. breuan (< հե. *g²rāwanā),
երկն (երկնչել) - կիմր. dōel (< հե. *dwi),
ընթանալ - կիմր. hynt (< հե. *senth),
թարախ(?) - կիմր. trwnc (< հե. *tər-),
թաւ - կիմր. tyfu (< հե. *təw),
թեր (ընթեր. թերթ, թերի) - կիմր. atar (< հե. *pter),
լիրբ - կիմր. llyfr (< հե. *slibr),
լուծ - կիմր. iau (< հե. *yug'o),
լպիրծ//լպիրշ - կիմր. llyfr (< հե. *slibr),
ծնօտ - կիմր. gen (< հե. *g'en),

¹ Միջին իռլանդերենի ձևը ուղղելի է՝ ըստ *քակոք*-ի համար բերվող ձևի. միռլ. cacc, ոչ՝ cace: Հմմտ. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, էջ 539 և 567:

կէր, կուր (ընկէր) - կիւր. breuad (*g²er),
կռունկ (կրկին. էրկու) - կիւր. garan (< հե. *gurōng),
հին - կիւր. hēn (< հե. *seno),
մատն - կիւր. maut (< հե. *māt-),
մարի - կիւր. merch (< հե. *m^orī)¹,
մէր (մէրու) - կիւր. mel (< հե. *mel),
նդն - կիւր. elin (< հե. *olen),
նղ - կիւր. holl (< հե. *olyo),
նսկր - կիւր. ascorn (< հե. *ostw-er),
նրոճալ (?) - կիւր. rhathu (< հե. *rod),
նւն «վիզ» (նւրուկ) - կիւր. elin (< հե. *ōlen, *ōl),
նստել - կիւր. esu (< հե. *ōd),
նր (նւրեմն, նւրէք, հան-նր) - կիւր. cwt (< հե. *k²u- +p),
պուտ «բշտիկ» - կիւր. bothell (< հե. *bud),
պտուկ «ծիլ» - կիւր. bothell (< հե. *bud),
ջանք (ջա-ն-ք) - կիւր. iās (< հե. *yǝ- +ն),
սագ - կիւր. cuan (< հե. *k'awā),
սկէսուր - կիւր. chwegr (< հե. *k'wek'urā),
տեն «կաշի», «քող» - կիւր. darn (< հե. *der-s),
տիւ (տի) - կիւր. diw (< հե. *dei-),
տրաւ «պիւնդ» - կիւր. dūr (< հե. *dru-ra-mo),
ցախ - կիւր. cainc (< հե. *sk'ǝ-kho),
փեղկ - կիւր. fflochen (< հե. *sphelg),
փոյթ - կիւր. ffwdan (< հե. *speut),
քաղել - կիւր. chwalu (< հե. *qł),
քիւրտն - կիւր. chwys (< հե. *swidro),
քուր «ողբ» (քրուիլ, քրքուիլ «հառաչել», քրքանք «ծիծաղ») - կիւր. cwyn (< հե. *ku),
օգնել, օգուտ - կիւր. awyr (< հե. *aw),
օղ «եղանակ» - կիւր. auhel (< հե. *aw-dho):

դ. Կոռներեն (= կոռնուէլերեն) լեզվից, իբրև գուգորդում հայերենի, ընդհանուր ցանկում բերվում է մեկ տասնյակից պակաս (թվով՝ 5) գուգաբանություն,

¹ Հմմտ. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 284:

որ մանավանդ պայթական բաղաձայնների համեմատության տեսանկյունից բավականին տպավորիչ է (հմմտ. *b // p, g // q, k // ǵ*). դրանք հետևյալներն են.

աստղ - կոռն. seren (< հե. *ster, *stel),
բորենի - կոռն. bofer (< հե. *bhero, *bhorō),
զեղձ «փղձ» - կոռն. guell (< հե. *vel-),
զերան - կոռն. guern (< հե. *verṇā),
կեր, կուր (ընկեր) - կոռն. breuad (< հե. *g²er):

ե. Բրետոներենի և հայերենի միջև զուգորդելի միավորների թիվն անցնում է մեկ տասնյակից (թվով՝ 13).

ասեղն - բրետ. ebil (< հե. *ak´lŋ),
արտասուք, արտուք - բրետ. dacrou (< հե. *drak´ru),
թրթուր - բրետ. kontron (< հե. *tōr),
թրիք (?) - բրետ. strońk (< հե. *tēr-),
խանդ (խանձ, խազ) - բրետ. condud (< հե. *khŋd-),
հերկ (?) - բրետ. rec (< հե. *perg),
հինգ - բրետ. pemp (< հե. *penk²e),
հոյ-ակապ - բրետ. ozech (< հե. *poti)¹,
մածնուլ - բրետ. meza (< հե. *mag´),
սար - բրետ. kern (< հե. *kr),
տիղմ (տիլ) - բրետ. staot (< հե. *stēl),
տոդ, տոդուք - բրետ. staot (< հե. *stol),
ցիտ, ցտել - բրետ. skeja (< հե. *sk´id):

զ. Գալլերենին զուգակից հայերենը կազմում է մեկ տասնյակից պակաս առնչություն (թվով՝ 6).

դնել (ընտիր) - գալլ. dede (< հե. *dhē),
ելանել (ելուզակ, էլունդն) - գալլ. el (< հե. *el-),
երի - գալլ. are- (< հե. *pri),
մայր-ի - գալլ. materis (< հե. *māter),
վեր, վերայ - գալլ. ver (< հե. *uper),
սեղ, ստղ - գալլ. sedlon (< հե. *sedlo):

է. Գալլերենի հետ, ըստ ընդհանուր ցանկի, հայերենն ունի ընդամենը մեկ զուգարանություն.

¹ Տե՛ս չ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 80 (ծանոթ.):

լորց- գաել. loirc (< հե. *lord-sk' o):

5) «Արմատական բառարանում» կելտական լեզուների գուգահեռներն ավելին են, քան որ բերվում է այս ցանկում. այս կամ այն լեզվի մեկ ձևի դիմաց տեղ են գտնում մի քանի լեզուների ձևեր. հմմտ. ցանկում՝ *ցելուլ (ցել)* - հիռլ. scailt (հե. *skylel), բառարանում՝ իռլ. scailim «բաժանել, ցրվել», scailt «ձեռք», կիմր. chwalu, կոռն. scullye «ցրվել» և այլն:

Այս դեպքում էլ հիշենք, որ թեև գուգահեռ ձևերն անխտիր քաղված են Վալդեի և Պոկոռնու բառարանից, սակայն ցանկում հեղինակը բավարարվել է միայն մեկ լեզվի տվյալի նշումով: Դա բառային գուգաբանությունների քննությունը մի տեսակ դարձնում է ավելի սահմանափակ, քան որ կարելի էր ավելին անել, այն է՝ կելտական լեզուների ներքին համեմատության ճանապարհով վերականգնել մի ընդհանուր նախաձև և այդ վերջինը գուգաբանական քննության մեջ դնել հայերենի հետ. քանի որ գուգաբանական ցանցի խտությունը կարող է վկայել համեմատության հավաստիությունը:

Դա նման է այն բանին, որ հայերենի գրական ձևի կողքին նշվեին նաև բարբառային տարբերակները՝ իբրև առանձին միավորներ, այնուհետև դրանք ևս հաշվի առնվեին գուգաբանությունների անցկացման դեպքում¹: Սա կելտականի դեպքում բավականին վիճելի խնդիր է, քանի որ վերջինիս տարբերակվածությունը առավելապես լեզվի մակարդակում է, քան որ կարելի է դրանք բարբառներ համարել: Ուստի բավարարվում ենք բառացանկի միայն եղած տվյալներով՝ մյուսները թողնելով հետագային, մի կողմից՝ կելտական լեզուների ընդհանուր պատմության առանձին ուսումնասիրության, մյուս կողմից՝ հայ-կելտական բառային գուգաբանությունների ավելի լայն քննարկման համար:

6) Ցանկը, ինչպես արդեն վերը նշվեց, կազմված է Ա Վալդեի և Յ. Պոկոռնու բառարանի տվյալների հիման վրա, շատ քիչ դեպքերում է, որ հնդեվրոպական այս կամ արմատն իր արտացոլումն է գտել ութ ճյուղի (խմբի) լեզուներում. «713 բառերից 166 հատը ընդհանուր է, այսինքն՝ գտնվում է նաև մյուս բոլոր վեց (իմա՝ ար., հուն., լատ., բալթ.-սլավ., գերմ. և կելտ.) ճյուղի լեզուների մեջ»².

¹ Եվ պատահական չէ, որ, օրինակ, Գ. Ջահուկյանի ցանկում մեծ տեղ է տրվում հայերենի բարբառային իրողություններին: Նման առնչությանն ավելի վաղ անդրադարձել է Ն. Միմոնյանը (տե՛ս «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», էջ 188-248):

² Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, I մաս, էջ 84:

հե. *plios > հայ. *ալիք* «մազ, հեր», հինդկ. *palita*, պրսկ. *pourusa*, հուն. *polios*, լատ. *palleo*, լիտվ. *pilkas*, հւլավ. *plavъ*, գերմ. *fahl*, կելտ. *lioiaith*,

հե. *mens > հայ. *ամիս*, հինդկ. *mas*, հայրսկ. *maha*, հուն. *meis*, լատ. *mensis*, լիտվ. *menesis*, հւլավ. *mesecъ*, գերմ. *menods*, կելտ. *mis*,

հե. *mbho > հայ. *ամսյ*, հինդկ. *nabhas / ambu*, պրսկ. *nabah*, հուն. *nephos*, լատ. *nebula/nimbus*, լիտվ. *debesis*, հւլավ. *небо*, գերմ. (հոլ.) *nebul*, կելտ. *nem* և այլն:

Հ. Աճառյանի ցանկում համեմատաբար քիչ են այն օրինակները, որոնք հայերենից բացի այս կամ այն կերպ արտացոլված են ցեղակից լեզուներից երկուսում, և դրանցից մեկը կելտականն է: Նման գուգադիպությունը ևս, ի տարբերություն բացառյալի (էքսկլյուզիվի), նույնպիսի պայմանով կոչում ենք միջանկյալ կամ ներառյալ (ինկլյուզիվ) գուգաբանություն:

Ըստ այդմ՝ կարելի է առանձնացնել հետևյալ խմբերը:

ա) Հայերենը արիականի (հնդիրանականի) և կելտականի հետ (թվով՝ 5 բառ).

ամ «տարի»- սանս. *samā*, իրան. *hama*, կելտ. *sam* (< հե. **sama*, **soma*),

գիւտ (*գտանել*) «գտնելը» - սանս. *vid, vindnti*, իրան. *vindaiti*, կելտ. *finnaim* (< հե. **veid*, **void*),

եզն - սանս. *ahí*, իրան. *azi*, կելտ. *ag* (< հե. **eg'h*),

պէղէլ - սանս. *bila*, կելտ. *belach* (< հե. **bel*),

սուրբ (*սպրիկ*) - սանս. *ṣubhira*, կելտ. *cuanna* (< հե. **cubro*):

բ) Հայերենը հունականի և կելտականի հետ (թվով՝ 1 բառ).

ռունգն «քթանցք, ռունգ» - հուն. *ῥόυγος*, կելտ. *sron* (< հե. **srung*):

գ) Հայերենը բալթիկ-սլավոնականի և կելտականի հետ (թվով՝ 1 բառ).

թէկն (*թիկունք*) «թիկունք» - լիտվ. *steigara*, հւլավ. *stęgno*, կելտ. *tgeb* [< հե. *(s)teiguno]:

դ) Հայերենը իտալականի և կելտականի հետ (թվով՝ 2 բառ).

թէղի «մի տեսակ ծառ» - լատ. *tilia*, միռլ. *teile* (< հե. **tel*),

ողորքէլ [< *ողորք* «աղաչանք, հաճելի և համոզիչ (խոսքեր)»] «խղճալ, հաճել» - լատ. *loquor*, կելտ. *-tluch* (< հե. **loku*):

ե) Հայերենը գերմանականի և կելտականի հետ (թվով՝ 5 բառ).

բլուր - հիւլ. *bali*, կոռն. *bal* (< հե. **bhol* +-*ur*),

դուլ «դադար» (հմմտ. *ան-դուլ* «անդադար») - հիյուս. *duol*, կելտ. *dal* (< հե. **dhul*),

լկիլ «ջուր դառնալ. (սկսել) հալչել» - նրգերմ. *lecken*, կելտ. *legaim* (< հե. **leg*),

ողջ - գերմ. *aila*. կոռն. *holi* (< հե. **olyo*),

տիգ «(մի տեսակ) մակաբույժ՝ պարագիտ» - գերմ. (սաքս.) *ticia*, կելտ. *dega* (< հե. **digʰ*) «մակաբույժ»:

Նախորդից փոքր-ինչ ավելին են այն օրինակները, որոնցում հնդեվրոպական տվյալ արմատն իր արտացոլումն ունի, հայերենից բացի, ցեղակից լեզուներից երբեքում, և դրանցից մեկը կելտական ճյուղի այս կամ այն լեզուն է:

ա) Հայերենը հունականի, գերմանականի և կելտականի հետ (թվով՝ 1 բան).

դալ(ար) / դալ(ուկն) - հուն. *θαλερος*, հրգերմ. *tolun*, կելտ. *deil* (< հե. **dhl-*):

բ) Հայերենը հունականի, իտալականի և կելտականի հետ (թվով՝ 1 բան).

հաղ, հեղ «անգամ», հուն. *παλλο*, լատ. *pello*, կելտ. *-ebla* (< հե. **pl*, **pel*):

Վերջապես, նշվում է հայերենը միայն կելտականի հետ (թվով՝ 6 բան), ընդ որում՝ 3-ը հին իռլանդերենի (կելտ.) հետ, 2-ը՝ կիմրերենի, 1-ը՝ կոռներենի.

արգ(ահաստիլ) «գթալ, խղճալ» - հիռլ. *arffed* (< հե. **arqu-*),

արգ(անդ) «զավակատուն» - կիմր. *arffed* (< հե. **arq²-*),

գերան - կոռն. *guern* (< հե. **vernna*),

լերկ - կելտ. *lerg* (< հե. **lergu*),

մատն - կիմր. *maut* (< հե. **mat*),

ողորկ - կելտ. *lorg* (< հե. **lorgu*)¹:

Վերջիններիս վերաբերյալ հարկ կա նշելու հետևյալը:

ա) *Արգահաստիլ* և *արգանդ* բառերն այլ բան չեն, քան նույն *արգ-* (< հե. **arqu-*) բաղադրող հիմքով սերված ձևեր, որպիսով ստացվում է, թե ստուգաբանորեն 6-ի փոխարեն ունենք 5 արմատ:

բ) Ցանկում հանդիպում են նաև բառեր, որոնք ևս զուգահեռ են միայն կելտական լեզուների հետ. հմմտ. *ողորմ* «զութ. ողորմ» - կելտ. *arman* (< հե. **orm*):

գ) Եվ ըստ այսմ՝ ունենում ենք նույն քանակի բառեր, սակայն ճշգրտված՝ նախորդ երկու կետի հիմունքով:

Ի դեպ՝ հետագայում Գ. Ռ. Ջոլտան դրանցից միայն *լերկ*, *ողորկ* և *մատն* բառերին է անդրադարձել հայ-կելտական զուգաբանությունների վերաբերյալ իր ուսումնասիրության մեջ, որն էլ ավելի ուշ, ի թիվս Ջոլտայի կողմից առանձնացվող զուգաբանությունների, առանձին քննության առարկա է դարձել Է. Ա. Մականի աշխատանքներից մեկում²:

¹ Նույն տեղում, էջ 90: Հմմտ. Գ. Բ. *Ջահուկյան*, Հայոց լեզվի պատմություն, էջ 159:

² *G. R. Solta*, նշվ. աշխ., էջ 467-468: Զ. Ա. *Макаев*, Армяно-кельтские изоглоссы, էջ 51-62:

Այնուհետև, Աճառյանը հիշյալ 342 գուգաբանությունները բաժանում է 22 իմաստային (թեմատիկ) խմբերի, ընդ որում՝ մեկ-երկու դեպքում (կենդանիներ, երկրագործություն նշանակող խմբերում) առանձնացվում են նաև ենթախմբեր: Այդուհանդերձ, այն չի կարելի համարել լրիվ և սպառիչ, որովհետև՝ 1) անհամեմատ մեծ թվով արմատներ առանց ավելի կոնկրետ խմբավորման բերվում են 21-րդ խմբում՝ իբրև «սովորական կյանքի բառեր», որը թերևս ուներ ավելի մանրամասնելու կարիք, և որը միանգամայն հնարավոր էր, 2) բերված 342-ից մոտ 100-ը ենթադրում է հայ-կելտական գուգաբանություններ, 3) շուրջ 7 տասնյակ բառ առհասարակ դուրս է մնացել իմաստային (թեմատիկ) խմբերից:

Լշենք դրանցից հատկապես հետևյալները:

ա) Բնության և նրա «գորությանց մասին». *ամսց, ամայրոսց, անդունդ, աստղ, բալ «մշուշ», բլուր, գետ «ջուր», թան (թանալ «հոսել»), լոյս, հողմ, ջեր, սար, տիղմ, օղ («եղանակ»):*

բ) Մարդ և մարդու մարմնի մասեր. *ալիք («մագ»), ականջ, այտ, աստամն, արտաստոք, բերան, բուտ, եղունգն, երես, լեզու, ծունգն (ծունր), մատն, միս, մօրուք, ոլոք (ոլոգ), ողն, ոսկր, ոտն, որովայն, ուլն («վիզ»), ունկն, պալար, պուտ («բշտիկ»), պտուկ («ծիլ»), ռունգն (?), սիրտ, ստինք, փայծաղն, քիրտն և այլն:*

գ) Հիվանդության և հարակից անվանումներ. *լորց, խոյլ, թարախի (?), յղի:*

դ) Ընտանի և վայրի կենդանիներ, սողուններ. *այծ, անիծ, առիծ, արջ, աքաղաղ, բորենի, գայլ, եզն, եղն(իկ), էշ, թրթուր, լուսան, կով, կռունկ, հաւ, մարի, մրջին, շուն, ուրուր, սագ, տիգ, քարբ, օձ:*

ե) Ընտանիք. *եղբայր, կին, հայր, հարսն, հաւ («պապ»), որդի, սկեսուր, քոյր:*

զ) Երկրագործություն («ցյուղատնտեսություն»). *այգի, առոգանել (առու), արօր, բահ/բարհ, բիր, բող (բողկ), դալար/դալուկն, բոյս, գեղձ («բաղեղ»), դաղձն, դեղ (դեղբ, դեղին և այլն), դէգ, թեղի, հացի, հերկ (?), մայրի, մորենի, ցախ:*

է) Անասնապահություն. *գեղմն, դիել, թրիք (?), կոյ / կու, հովիւ, որձ, որոճալ (?), քակոր:*

ը) Արհեստագործություն. *ասեղն, դուրգն, երկան, կարթ, փեղկ, քերթել:*

թ) Շինություն. *առագաստ, առաստաղ, աստաղձ, գերան, դուռն, հոյ(ակապ), սանդուղ (?), ցիւ, քիւ:*

ժ) Հագուստ և զարդարանք. *ագանիլ («հագնվել»), օղ («կոշիկ»), օթ («հագնել»), օճանել:*

ժա) Ուտելիք և ըմպելիք. *աղանձ, դալ/դայլ, դոն («հաց», «մի տեսակ զարդ»), կեր / կուր, կորկոտ (?), մեղր (մեղու), ուտել:*

ժբ) Առունին տնտեսություն. *լոզանալ, լոյց (լուցանել), լուանալ, հոււմ, մուր (մուրճ, մրուր, մրրիկ), մուրկ (մրկել), նքոյր («մաղ»), տարգալ, տոռն (սանդի):*

ժգ) Թիվ և չափ. *երեսուն, երեք, երկու (կրկին), եօթն, ինն, հինգ, մի (մէն, միայն, միսեանք, միս), յիսուն, յոլով, ութ, չորք, վեց, տասն, քսան:*

ժդ) Մետաղներ և հանքեր («հանածոներ»). *արծաթ, քար:*

ժե) Ճանապարհի վերաբերյալ. *առագաստ, նաւ:*

ժզ) Ժամանակ և տեղ. *ամ (ամիկ), ամիս, ատեան, գարուն, գիշեր, հեռի, հերու, ձմեռն, յատակ, սլաք, տիւ (տի):*

ժէ) Դերանուններ, շաղկապներ և նմաններ. *ամէն, այլ (աղաւաղ), առ (նախդիր), դա (այդ, դոյն, աւաղիկ), դու, եւ/եւս, ի (իք, ինչ, հի, իրաւ, իմն, զի, իր), ի (նախդիր), իւր, ո/ով (ումն, որ, ոք), ուր (ուրեմն, ուրեք, հան-ուր), սա (այս, սոյն, սատ, աւասիկ), ց[(?), նախդիր]:*

3. Մեզ հետաքրքրող հարցի առումով մյուս կարևոր աշխատանքը Գ. Ռ. Ջոլտայի ուսումնասիրությունն է, որում առանձին քննության առարկա են նաև հայ-կելտական զուգաբանությունները: Ավելի ուշ այդ հարցին մասամբ անդրադառնում է Է. Ա. Մականը՝ նկատի ունենալով Ջոլտայի կողմից առանձնացված թվով 9-ը զուգաբանությունները, ընդ որում՝ կարծում է, որ այդ նյութը «ամեննին էլ անխոցելի չէ հայերենի և կելտական լեզուների տեսակետից»¹ :

Գ. Ջահուկյանը գրում է. «Մականը հատուկ ուսումնասիրություն է նվիրել հայ-կելտական զուգաբանությունների հարցին, որտեղ փորձում է բացատրել հայ-կելտական մերձավոր շփումների առկայությունը»² : Այս գնահատության մեջ թերևս ավելին է ասված, քան իրականում կա, որովհետև առանձին տեղ է տրվում Մականի կատարածին, այնինչ՝ Ջոլտայից քաղած միայն ինը բառարմատի վրա է հիմնված նրա վերլուծությունը, ավելին՝ հայ-կելտական առնչությունները ենթադրում են ավելի լայն քննարկում, քան որ կատարված է տվյալ դեպքում:

Այդուհանդերձ՝ անդրադառնանք այդ զուգաբանություններին, միաժամանակ նշենք մեր նկատառումները՝ որոշ ճշգրտումներով կամ լրացումներով:

Հարկանեմ «խփել, հարվածել» - հիդլ. *orgaim* «խփում եմ, հարվածում եմ». Մականը դնում է Ջոլտայի նշած սահմ. ներկայի 1-ին դ. *orgaim*, իսկ իր շարադ-

¹ Զ. Ա. Макаев, *նշվ* աշխ., էջ 51-62]:

² Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 89: Հեղինակը նկատի ունի Է. Մականի «Армяно-кельтские изоглоссы» աշխատությունը (Տե՛ս «Кельты и кельтские языки», М., 1974):

րանքում՝ *orcaid* «սպանում է, ավերում է» ձևը: «*Հերկ*-ի միացումը *հարկանեւ*-ին ժամանակին առաջարկել է Մեյեն¹ . անհավաստի է կապը *perk'- «պատռել, հերկել. ակոս» արմատի հետ (*perk- > **հերս*): Պարզ չէ *հերձեւ* բայի կապը սրանց հետ»²: Մեյեի առաջարկը միանգամայն ճիշտ է, մանավանդ եթե ընդունենք հնդեվրոպական դիցարանի ամպրոպային աստծու գործառույթը: Իսկ Ջահուկյանի թերահավատությունը վերանում է, երբ համեմատում ենք մի կողմից՝ ոչ միայն *հերկեւ*, *հարկանեւ*, *հերս* և *հերձեւ*, այլև *հարսն* «ամուսնու ուզածը՝ առնակին (որ պիտի պտղակալի)», *հարցանեւ* «հարս ուզել՝ առնել», *փորձ* (*փորձեւ*), *փեսա* (< **փերձա*) «հարս ուզող» (?), *որոտ* «կայծակ» («երկինքը պատռող՝ կիտող») (?), իսկ մյուս կողմից՝ հնդեվրոպական ժողովուրդների ամպրոպային աստծու ժայռին, նաև ծառին (կաղնուն) հարվածելու առասպելը. հմմտ. հինդկ. Parjanya-, սլավ. Perunǔ, լիտվ. Perkūnas, հիալ. Fjörgyn, մանավանդ որ հայտնի է հիալ. Fjörgyn (*Տոբ* ամպրոպ-աստծու մոր անունը) համեմատվում է գոթ. *faîrguni* «սար(ահարթ)», նախակելտ. *perkunia, կելտ. (լատ. ձևով) Hercunya (*silva*) և այլն ձևերի հետ³ :

Մակաևը գտնում է, որ «հ.-ե. **per*-ը **perg*- աճականով ներկայանում է հայերենում, բալթիկ-սլավոնականում, այբրանականում, խեթականում, կելտականում և չի կարող դիտվել որպես հայ-խեթա-թոխարա-կելտական զուգաբանություն»⁴ :

Պուրզն «(բրուտի) անիվ» - հիռլ. droch «անիվ» զուգաբանությունը չի ընդունում Մակաևը՝ պատճառաբանելով, որ հայ. *ղուրզն* արմատն ամենից առաջ առնչվում է հուն. *προχος*-ին, որ նշանակում է ոչ միայն սովորական «անիվ», այլև «բրուտի անիվ», այնինչ՝ հիռլ. droch-ն ունի «անիվ» իմաստը՝ առհասարակ, և հայ. *ղուրզն*-ը ենթադրում է ձայնդարձի երկար աստիճան և դրափոխություն:

Այստեղ թերևս առարկելի է այն, որ՝ 1) ըստ Գ. Ջահուկյանի՝ հայ. *ղուրզն*-ը ծագում է հե. *dhōrgh- (?) [< հե. *dhregh-] ձևից և իմաստի առումով էլ զուգահեռ է հիռլ. droch «անիվ» բառին, 2) հե. *r-ի դիմաց սովորական *ար*-ի կողքին ունի *ուր*. հմմտ. *dhrg'h- (*dherg'h- / *dhreg'h-) > *դարձ*, *դառնամ* (**դարձնամ*) և *dhōrgh (< *dhregh-) > *ղուրզն*, 3) *ղուրզն*-ից բացի, այս դեպքում համեմատելի է

¹ A. Meillet, Les dialectes indo-européens, էջ 129:

² Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 186:

³ T. B. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, նշվ. աշխ., էջ 613- 615:

⁴ Э. А. Макаев, Армяно-кельтские изоглоссы // “Кельты и кельтские языки”, М., 1974, էջ 51-62:

նան հայ. (փոխառություն) *ηρησ* «մի տեսակ սայլ (թերևս՝ երկանիվ)» բառը. հմմտ. ռուս. *дроза* «սայլի կողափայտ», *дросу* «անթափք սայլ, դրոգ», «դիակառք», 4) հուն. *προχος* ձևի հետ համեմատությունը, առավել ևս հայ-կելտական զուգաբանության բացառման հիմք ընդունելն այնքան էլ համոզիչ չէ, որքան վերը նշված լրացուցիչ փաստերի առաջ քաշելը¹:

Հայ-կելտական զուգաբանությունը հիմնավորվում է թե՛ հնչյունական և իմաստային համապատասխանությամբ, թե՛ հայերենի լրացուցիչ օրինակի հաշվով, և վերջապես զուգաբանության համար որոշակի հիմք է հանդիսանում արմատի ամենանախնական իմաստի՝ «պտույտ, պտտվել, շուռ գալ» արտացոլումը հիշյալ լեզուներում:

Երեւիւմ «երևալ, ի տես ելնել» - հիռլ. *richt* «տեսք, ձև». սա չի ընդունում Մականը՝ ոչ անկախ Յ. Պոկոռնուց, այլև Հ. Լյուիսի և Հ. Պեդերսենի այն հավաստի ստուգաբանությունից, որի համաձայն հիռլ. *richt* («տեսք, ձև») ծագում է հե. **prptu* արմատից, այնինչ հայ. *երեւիւմ*-ը բխեցվում է հե. **prep-* (նաև երես < **prep-s-a*) ձևից: Նկատենք, որ անճշտությունը գալիս է Լյուիսից և Պեդերսենից, քանի որ հին իռլանդերեն և հայերեն ձևերն առաջինը նրանք են զուգադրել՝ իռլ. *richt* «ձև» (վալլ. *rhith* < հե. **prptu-*, հմմտ. հուն. *πρεπο* «առանձնանում եմ») - հայ. *երեւիւմ* «երևում եմ», *երես* (*-*ps-*) «երես, դեմք», և ըստ այդմ էլ Ջոլտայի կողմից առանձնացվում է նման զուգաբանություն: Եվ քանի որ Մականն այս հանգամանքը հաշվի չի առել, հետագայում Ջահուկյանի ցանկում, թերևս այդ նկատառումով, այն չի դիտվում հայ-կելտական զուգաբանություն:

Բերան «բերան, բացվածք» - միռլ. *bern* «հանված՝ տաշված մաս, փոս» զուգաբանությունը Մականն անհավանական է համարում, նախ՝ կարծելով, որ արմատի նման կազմություն հանդիպում է հե. լեզուների մեծ մասում (հմմտ. լիտ. *burna* «բերան, կում», բուլղ. *бърна* «շուրթ, շրթունք», այլ. *brime* «անցք, բացվածք», հվգերմ. *bora* «բացվածք»), այլև խանգարում է «բացվածք» - «բերան» իմաստային անցումը, և գտնում է, որ այն, ոչ անկախ այս հարցում Վ. Պորցիգի հայտնած կարծիքից, վերաբերում է հե. բառապաշարի հուզական-արտահայտչական կողմին:

Ըստ Գ. Ջահուկյանի՝ հայ. *բերան* (< հե. **bher-* արմատ, հոմանիշ՝ **os-*) պիտի ծագած լինի հե. **bherono-* արմատից (հմմտ. **bher* > հայ. *բիր, բրեն, բրիչ, բրչես*) և զուգահեռներ ունի ոչ միայն կելտական, այլև սլավոնական և բալթյան լեզու-

¹ Տե՛ս Վ. Գ. *Համբարձումյան*, Հայ-կելտական բառային զուգաբանությունների հարցի շուրջ // «Լեզու և լեզվաբանություն», 1-2 (13), 2015, էջ 16-17:

ներում, թերևս՝ նաև հունարենում, այլ կերպ ասած՝ անհավահական չի համարում Ջոլտայի առանձնացրած հայ-կելտական գուգաբանությունը¹: Ավելի հավանական է թվում *բերան* բառի ծագումը կապել հայ. *բե-* // *բռ-* < *p^[h]oH(i)- «շուրթն, շրթունք. ընպեմ, ումպ» արմատի հետ²:

Մատն «մատ» - հկիմբ. *maut* «ձեռքի մեծ մատը» գուգաբանությունը նույնպես հավաստի չի կարելի համարել: Մականը գրում է, որ Ջոլտան ինքն է նշում, որ նման գուգադիպումը, որ առաջինը Մեյեն է նկատել, ամբողջովին կասկածելի է, այն է՝ «այս դեպքում հանդես է գալիս հայ-կելտական հազվադեպ գուգաբանություններից մեկը»: Մականը մերժում է այն հիմունքով, որ նախ՝ հկիմբ. *maut*-ն «ունի կեղծ որակափոխություն (*мутація*)», երկրորդ՝ *մատն* ձևում, ընդհանուր կանոնին հակառակ, շնչեղի փոխարեն առկա է պարզ ատամնային խուլ հնչյուն: Այս վերջինի դեպքում էլ Մականը տողատակում գրում է հետևյալը. «Հ. Աճառյանն իր «Հայերեն արմատական բառարան»-ում (հհ. 1-7, Երևան, 1928-1935) ջանում է փրկել Ա. Մեյեի տվյալ գուգադրությունը՝ մատնացույց անելով առ այն, որ որոշ դեպքերում *ն*-ին նախորդող դիրքում սպասելի շնչեղ *թ*-ի փոխարեն հանդես է գալիս *տ* պարզ խուլ բաղաձայն» (հ. 4, էջ 871 և հջ.)³:

Հետագայում Ջահուկյանը չի անդրադառնում այս դիտողությանը, այլ հետևում է Աճառյանի հայտնած տեսակետին՝ տալով հետևյալ ձևակերպումը. «*Մատն*-ի մեջ **-t*-ի արտացոլումը որպես *-տ* բացատրվում է *-ն*-ի հարևանությամբ. հմմտ. *ակն* [ՀԱԲ, 3, 270]»⁴: Իսկ ավելի ուշ գրում է, որ «**t*-ն *ն*-ի մոտ մնացել է *տ*, ինչպես **k*-ն *ակն* բառում չի շնչեղացել). համեմատվում է հ.կիմբ. *maut*, ն.կիմբ. *bawd*, մ.բոետ. *meut* (< *mō-to) «բութ մատ» բառերի հետ, որոնք կասկածով հասկացվում են *mō- «չափ» արմատին (որպես չափ):- Աճ. ՀԱԲ, 3, 270»⁵:

Ողորկ, լերկ «հարթ, հավասար, մերկ» - հիռլ. *lerg* «հավասար» գուգադրումը առաջարկել է Է. Լիդենը, որը ժամանակին ընդունվել է Յ. Պոկոռնու, իսկ ավելի ուշ՝ Հ. Աճառյանի և Գ. Ջահուկյանի կողմից, թեև այն անընդունելի է եղել Հ.

¹ Հմմտ. Մ. Կ. *Հաննեյան*, Մարմնի մասերի անվանումների տարածքային նկարագիրը հայերենում // «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», էջ 145, այլև 156:

² Վ. Գ. *Համբարձումյան*, Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ, էջ 111-112:

³ Զ. Ա. *Մակաբ*, նշվ. աշխ., էջ 56:

⁴ Գ. Բ. *Ջահուկյան*, Հայոց լեզվի պատմություն, էջ 180:

⁵ Գ. Բ. *Ջահուկյան*, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 514:

Պետերսոնի համար: Աճառյանը հայ. *ողորկ*-ը հանգեցնում է հ.-ե. *lorgu-, իսկ *լերկ*-ը՝ *lergu- արմատին, ընդ որում՝ իբրև բացառյալ (էքսկլյուզիվ), այսինքն՝ միայն հայերենի և կելտական լեզուների տվյալներով հաստատվող զուգաբանություն: Պետերսոնը *ողորկ*-ի համար ընդունում է Լիդենի ստուգաբանությունը, իսկ *լերկ*-ի դեպքում կարծում է, թե այն *մերկ*-ի հետ ռիթմական համահնչության հետևանքով առաջացած կազմություն է: Եվ Մակաևը, հիմնվելով Պետերսոնի հիշյալ կարծիքի վրա, գրում է, թե «տվյալ զուգադրությունն ամբողջովին կասկածելի է»¹ :

Մուխ «ծուխ, մուխ» - հիռլ. much «ծուխ» զուգահեռը նույնպես մերժում է Մակաևը՝ հիմք ընդունելով Պոկոռնու այն կարծիքը, որ հայ. *մուխ*-ը, կելտականից բացի, զուգահեռներ ունի նաև հունարենում, գերմանականում, (հավանաբար նաև բալթյան և արևելասլավոնական լեզուներում), այլև հնչությային մակարդակում շարժական *օ*-ի (հմմտ. հուն. smucho «մարմրում եմ», հանգլ. smeocan, «ծխել, ծուխ արձակել», լիտվ. smaugti «շնչահեղձ լինել»), երկու լեզուներում առանց *օ*-ի (հմմտ. հայ. *մուխ*, հիռլ. much) լինելը, որ նա՛ն Ջոլտան է նշում, դեռևս ոչինչ չի նշանակում. հնդեվրոպական *sm : *m հարաբերակցությունը չեզոքացել է հոգուտ *ւ*-ի հայերենում:

Ավելացնենք, որ հայ. *մուխ*-ի հետ համեմատելի են նաև իռլ. much «ծուխ», վալլ. mwg, կոռն. mok, բրետ. moug, mog «կրակ», maged «կրակ» ձևերը: Ի դեպ, Մակաևը մերժում է Ջոլտայի կարծիքը նաև այն նկատառումով, որ միայն հայերենում և կելտականում է հե.*kh > հայ. *խ*, կելտ. ch (*smuekh > հայ. *մուխ*, կելտ. much)՝ առարկելով նաև Պեդերսենին, որը ժամանակին ցույց էր տվել, որ գերմանականում ունենք հետնալեզվային ձայնեզ *g* (հմմտ. *smeug, սաքս. smugan), և դա, իրոք, տեղին չէ, որովհետև Պեդերսենն ամենայն հավանականությամբ պիտի նկատի ունեցած լինի նաև այն, որ կելտական լեզուներից, օրինակ, բրետոներենում ևս ունենք հե. *kh > *g* արտացոլում (տե՛ս վերը):

Մեղ(ք) «մեղք, մեղանչելը» - միռլ. mell «մեղք», mellaim «խաբում եմ, կեղծում եմ» զուգադրությունը ևս չի ընդունում Մակաևը՝ համարելով այն «զուրկ ամեն մի հիմքից», որովհետև կարծում է, որ զուգահեռներ կան նաև իրանական, գերմանական և բալթյան լեզուներում: Թե՛ Մակաևը և թե՛ Ջոլտան ելնում են Պոկոռնու բառարանի տվյալներից, սակայն այն տարբերությամբ, որ Ջոլտան, ինչպես որ Պոկոռնին, բալթիկ-կելտական համապատասխանության համար ենթադրում է իլլիրականի առկայություն՝ որպես միջնորդի, ապա հայերենի դեպ-

¹ Յ. Ա. Макаев, նշվ. աշխ., էջ 59 :

քում էլ կարելի է ընդունել իլլիրա-թրակյան միջնորդավորության հնարավորություն:

Ոյծ «սառը» - հիռլ. *ocht, uacht* «սառը, ցուրտ» առնչության դեպքում ևս, ըստ Մականի, Ջոլտան դիմում է իլլիրերենի հնարավոր միջնորդավորությանը, որը դարձյալ մերժելի է, քանի որ հաստատված է, որ հայ. *ոյծ*-ը ծագում է հե. **eug*'- / **oug*'- տարբերակային արմատից:

Իբրև վերն ասվածի ամփոփում՝ կարելի է նշել հետևյալը:

ա) Հայ. *դուրզն* բառին պետք է ավելացնել հայ. *դրոզ* «սայլ, մի տեսակ երկանիվ փոխադրամիջոց» :

բ) Հայերեն հետնալեզվային ձայնեղին համապատասխանում է ձայնեղ բաղաձայն՝ *կ/զ*, շրթնային ձայնեղին նույնպիսի ձայնեղ՝ *բ/պ*. *դ/դ*, իսկ հպաշփական խուլին՝ սովորական խուլ՝ *ծ/տ* և այլն:

գ) Մականը կարծում է, որ հայերենի և կելտական լեզուների միջև առնչություն հնարավոր է, եթե նկատի առնենք հայերի և գաղատների շփումները Փոքր Ասիայում և Բալկանյան թերակղզում, որը բացառվում է, քանի որ այլ բան են ասում հնդեվրոպական լեզուների նախնական բնակության վայրի վերաբերյալ վերջին տասնամյակներին հայտնված տեսության տվյալները:

դ) Հայ-կելտական բառային գուգաբանությունները քանակով ավելին են, քան որ առանձնացվում են Ջոլտայի կողմից և քննության առնվում Մականի հիշյալ աշխատանքում:

Ամփոփենք, որ հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների, տվյալ դեպքում՝ հայ-կելտական առնչությունների հարցը արդի համեմատական լեզվաբանության առանցքային հարցերից է՝ թե՛ ծագումնային ընդհանրության և թե՛ տիպաբանական հավաստիության (վերիֆիկացիայի) տեսանկյունից:

4. Հետագայում հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների բառային գուգաբանությունների հարցը դառնում է հատուկ ուսումնասիրության առարկա Գ. Ջահուկյանի աշխատություններում: Նկատենք, որ նախ՝ Հ. Աճառյանի ցանկի, նաև Յու. Պոկոռնու բառարանի, այլև կողմնակի աղբյուրների տվյալների վերաբերյալ Գ. Ջահուկյանը կատարում է մի շարք կարևոր ճշգրտումներ և լրացումներ, ըստ այդմ՝ ներկայացնում նոր ցանկ, այնուհետև՝ Կ. Դ. Բաքի բառարանի օրինակով՝ կատարում է բառային միավորների իմաստային (թեմա-

տիկ) դասակարգում, ավելացնում նոր խումբ («դերանվանական և սպասարկու բառեր ու մասնիկներ»)¹:

Նախ, բառային զուգաբանությունների աղյուսակը կազմված է բոլորովին նոր՝ «հնչյունական և քերականական աղյուսակների համար ընդունված ձևով», այնուհետև նշվում է առարկություն Աճառյանի կազմած աղյուսակի վերաբերյալ՝ գտնելով, որ նրանում (ըստ իր ձևակերպման)՝ «չկան բառերի և արմատների առանձնացման որոշակի սկզբունքներ», «ցեղակից լեզուներից բերված զուգահեռները միշտ չէ, որ անհրաժեշտ գաղափար են տալիս հայերեն բառերի հետ դրանց ունեցած մերձավորության աստիճանի մասին», «աղյուսակն ինքնին ճշգրիտ գաղափար չի տալիս զուգադիպումների քանակի մասին», «բառացանկերն ունեն ճշտման և լրացման կարիք՝ ստուգաբանական նոր հետազոտությունների արդյունքներով, այդ թվում՝ բարբառային տվյալներով»²: Առավել տեղին է նկատառումներից վերջինը, մանավանդ՝ երևույթի ավելի ամբողջական ուսումնասիրության տեսանկյունից:

Այնուհետև, Ջահուկյանը նշում է այն սկզբունքները, որոնք ընկած են բառային զուգաբանությունների աղյուսակի կազմման հիմքում: Դրանք ունեն առանցքային նշանակություն ոչ միայն առհասարակ, այլև մեզ հետաքրքրող հարցի պարզաբանման տեսակետից: Այդ առումով կարելի է նշել հետևյալը:

ա) Ջահուկյանի ցանկն ընդգրկում է Պակոռնու և Աճառյանի բառարաններից դուրս մնացած, ինչպես նաև հետագայում տարբեր ուսումնասիրողների կողմից քննության առնված հայերեն բառեր:

բ) Ցանկում մեծ տեղ է տրվում հայերեն բարբառային միավորներին:

գ) Ի տարբերություն Աճառյանի ցանկի՝ հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների միջև «զուգաբանությունները գնահատվում են ըստ մերձավորության աստիճանի»։ դրանց մեծ մասը ցանկում ունի պլյուս (+), մնացած մասը պլյուս-մինուս (±) կամ պլյուս-հարցական (+?) նշան: Եվ ըստ այդմ էլ առանձնանում է երեք խումբ:

¹ G. B. Djahukian, On the position of Armenian in the Indo-European Languages (on the areal characteristics of the Armenian Language) // "First International Conference on Armenian Linguistics: Proceedings", New York, 1980: Г. Б. Джаукян, Опыт семантической классификации и ареального распределения индоевропейской лексики армянского языка // Г. Б. Джаукян, Л. А. Сараджева, Ц. Р. Арутюнян, Очерки сравнительной лексикологии армянского языка, էջ 5-116: Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 105-204:

² Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 108:

դ) Ցանկում մինուս (-) է գնահատված բացակա զուգաբանությունը՝ հետևյալ հիմունքով. «... հայերենին զուգահեռ բառամիավորների բացակայությունը կենդանի ներկայացուցիչներ ունեցող լեզվախմբերում բոլոր դեպքերում նշվում է մինուսով (-) [*միհնուս*-ի ավելացումը - Վ.Ն.], միայն մեռած լեզուներով ներկայացվածներում՝ առանց որևէ նշանի. այս դեպքում նկատի է առնվում, որ կարելի է հավաստիորեն խոսել զուգահեռ միավորների ոչ թե բացակայության, այլ վկայված չլինելու մասին. իհարկե, այսպիսի նշանակումը պայմանականություն ունի, եթե նկատի առնենք, որ կենդանի լեզուների վերաբերյալ մեր տվյալները ևս լրիվ լինել չեն կարող, և որ գրավոր ուշ ավանդում ունեցող լեզուներում սկզբնական շատ բառաձևեր կարող են կորած լինել»¹:

Մտորել բերում ենք Աճառյանի կազմած ցանկի այն մասը, որը վերաբերում է հայերենին և կելտական լեզուներին, և որն առնված է Ջահուկյանի ցանկի մեջ: Այլ կերպ ասած՝ բացառում ենք այն միավորները, որոնք վերջինիս մեջ բերվում են մինուս (-) նշանով: Կարելի է ենթադրել, որ Ջահուկյանը, հավանաբար, հաշվի է առնում այս բնագավառում գիտության նոր ձեռքբերումները, նկատի ունենում իր ուսումնասիրությունների տվյալները, այլև դրանց որոշ մասի, ըստ իր կարծիքի, ոչ հավաստի լինելը:

Մենք ևս, ըստ հնարավորին, դրանք համեմատում ենք ցեղակից լեզուներում առկա ձևերի հետ և նշում նախալեզվի համար վերականգնվող այն ձևերը, որոնք առաջարկվում են հատկապես վերջին ժամանակներս երևան եկած նման աշխատություններում (Ջահուկյանի ցանկում կելտական ձևերը չեն նշվում, տալիս ենք կողմնակի աղբյուրների հիման վրա):

ա. Չուգաբանություններ, որոնք ցանկում ունեն այլուս (+) նշանը, այսինքն՝ ներկայացնում են «համեմատաբար ակնհայտ, կազմությամբ բացահայտորեն համընկնող և իմաստային առումով նույնական կամ մերձավոր ... զուգահեռները»².

ածեւ (*յ-ածիւ*) «բերել» - հիռլ. *aig* (< հե. **ag'*-),

ամբ(ողջ) - կելտ. (*imb*)- (< հե. **ambhi*-),

ամիս - հիռլ. *mis* (< հե. **menot*, **mēnesos*),

ամպ - հիռլ. *nem* [< հե. **enebh*- (?), **embh*-],

ամպրոպ - հիռլ. *inrim* [< հե. **enebh*-(?), **embh*-],

այգի - հիռլ. (*eo*) (< հե. **ei*-),

¹ Նույն տեղում, էջ 110:

² Նույն տեղում:

այլ (աղաւաղ) - հիւնլ. aile (< հե. *al-),
(ան)-դունդ - հիւնլ. bond [< հե. *bhudh-m(e)n, *bhudh-mo, *bhudh-no, *bhundho-]¹,
անիծ - հիւնլ. sned (< հե. *knid-, *k'nid-),
անձուկ - հիւնլ. (cum)ung (< հե. *ang'h-),
անուն - հիւնլ. ainm [< հե. *(e-)n(o)mn],
առեւծ / առիւծ - հիւնլ. rucht (< հե. *reu-),
ատաղձ - հիւնլ. del (< հե. *del-),
ատեան - հիւնլ. saidim (< հե. *sed-),
արգահատիս, արգ(անդ) - կիւր. arffed [< հե. *ark^u-(?)],
արջ - հիւնլ. art (< հե. *r̥k' -þo-s-),
արօր - հիւնլ. arathar [< հե. *ar(ə)-],
ա-քաղ-աղ (բրբ. ա-քլ-ար) - հիւնլ. cailech (< հե. *kel-),
բեկանեւ - հիւնլ. boingim [< հե. *bh(e)ng-],
բեր, -ոյ (-ի), բեր-րի - հիւնլ. berim (< հե. *bher-),
բերան - հիւնլ. bern (< հե. *bher-),
բոբջակ, պոպջակ - հիւնլ. bolach (< հե. *bhul // *bul),
բոլոր (< բոլ-որ) - հիւնլ. bolach (< հե. *bhel-),
բող (բող-իկ, բող-բոջ, բող-կ), բոլուկ «խոզերի խումբ» (բրբո.), *բողկուկ*
 «թթու դրած՝ մի ուտելի բոլս» (բրբո.) - հիւնլ. blath (< հե. *bhel-),
բուծ - հիւնլ. bān (< հե. *bhau-, *bhu-),
բուծ, բուտ - հիւնլ. bocc (< հե. *bhug'o-s-),
գայլ «գայլ (կենդանի)» - հիւնլ. (fael) (< հե. *uai-),
գարուն - կիւր. guannuin [< հե. *uesr-, (սեռ. հոլ.) *ues-n-es},
գեղ, գեղոյ, գեղ(եղիկ) - կիւր. gweled (< հե. *uel-),
գեղձ «իղձ, փափազ» - կոռն. guell (< հե. *uel-),
գերան - բրեւտ. gwern «լաստենի», միւլ. fern «լաստենի», «կայմ», հկոռն.
 guern «կայմ», guern-en «բարտի» (< հե. *uer-ɣnā- «գերան», «բալկա», «կայմ»),
գէտ, գիտ-եւ (գան-գիտ-ել, գիտ-ուն, առ. ե-գիտ) - հիւնլ. ro-fetar [< հե.
 *u(e)idi-],
գուն «ջանք» (հմնտ. *գուն- / ջան-ք*) - հիւնլ. fine (< հե. *uen-),
դա (այդ, դոյն, աւաղիկ) - հիւնլ. - d (< հե. *to-, *tā-),

¹ Հմնտ. Վ. Գ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 139-140:

դայլ, դալ «կարճախիտ» - հիւնլ. del [< հե. *dhē(i)-],
դեղ (*դեղք, դեղին, դեղձ, դեղձան, դեղձն*) - վիւնլ. deil (< հե. *dhāl-, *dhel-),
դի, դիակ - հիւնլ. dith (< հե. *dheu-),
դիւտ - հիւնլ. dinim [< հե. *dhē(i)-],
դու - հիւնլ. tū (< հե. *tu),
դուլ - հիւնլ. dnl (< հե. *dheu-),
դուռն - հիւնլ. dorus (< հե. *dhuer-, *dhur-),
դուրզն - հիւնլ. droch (< հե. *dhregh-),
էզն - հիւնլ. ag (< հե. *agʻh-),
էլանէտ (*էլուզակ, էլունդն*) - գալլ. el (< հե. *el-),
էղբայր - հիւնլ. brathir (< հե. *bhráter),
էղն(իկ) - կիւր. elain (< հե. *el-),
էտ - հիւնլ. am (< հե. *es-),
էտդ, (սեռ. հոլ.) *էտեղ, (տեղ, տեղի)* - գալլ. sedlon (< հե. *sed-),
էրէտուն - հիւնլ. tricha (< հե. *trei-),
էրէր(իւ) - վիւնլ. tarrach (< հե. *tres-, *ters-)¹,
էրէք - հիւնլ. tri (< հե. *trei-),
էրկան - հիւնլ. breuan (< հե. *g^uer-),
էւ (*էւս*) - հիւնլ. iar [< հե. *(e)pi],
էօթն (< *էաւթն*) - հիւնլ. secht (< հե. *septm -),
ընթանաւ - կիւր. hynt (< հե. *sent-),
թան [*թանաւ, թանչ, թօն* (< *թաւն*)] - հիւնլ. tām (< հե. *tā-, *tāi-, *tāu-),
թէր (*ընթէր. թէրթ, թէրի*) - կիւր. atar (< հե. *pet-),
թումք - վիւնլ. tomm (< հե. *tēu-, *tēuə -),
թուր - հիւնլ. tarathar (< հե. *ter-),
թրթուր - քրեւ. kontron (< հե. *ter-),
ի (*իք, ինչ, հի, իրաւ, իսն, զի, իր*) - հիւնլ. cid (< հե. *k^uo- *k^ue-, *k^uu-),
ի (*յ*) - հիւնլ. in (< հե. *en-),
լայն - հիւնլ. lethan (< հե. *plāt-),
լէրկ - հիւնլ. lerg (< հե. *lerg-),
լկիտ - հիւնլ. legaim (< հե. *leg-),
լոյծ (*լուծանէտ*) - հիւնլ. lun (< հե. *leugʻ-, *leug-),
լոյս (*լուսոյ*) - հիւնլ. lóche (< հե. *leuk-, *leukʻ-),

¹ Աճառյանի ցանկում *էրէրաւ*:

լոյտ (*լուտ-աւ*, *լուտ-անք* «նախաստիք») - հիւնլ. *laidhim* (< հե. *leud-),
լորց-ք - գաւէլ. *loira* (< հե. *lerd-),
լուծ - կիւմր. *iau* (< հե. *jeu-),
լպիրծ, *լպիրշ*, (բրբռ.) *լպոտիլ* - կիւմր. *llyfr* (< հե. *lei-, *slei-),
լսեւ (*լուր*, *հլու*) - հիւնլ. *cloor* (< հե. k'leu-),
խանստ // *խանդ* (*խանծ*, *խանձ*, *խագ*) - բրեւտ. *condud* (< հե. *kand-),
ծան-աչեւ / *ճան-աչեւ* - հիւնլ. *gninim* (< հե. *g'en-),
կարթ - հիւնլ. *gerbach* (< հե. *ger-),
կարծր - հիւնլ. *garg* (< հե. *garəg'-),
կեղ - հիւնլ. *-balt* (< հե. *g^uel-),
կին - հիւնլ. *ben* (< հե. *g^uena),
կիւ - հիւնլ. *bi* [< հե. *g^uiu-, *g(i)eu-],
կով - հիւնլ. *bó* (< հե. *g^uou-),
կուլ, *կլանել* - հիւնլ. *gelim* (< հե. *gel-, *g^uel-),
կռունկ - կիւմր. *garan* (< հե. *ger-),
հաղ, *հեղ* - հիւնլ. *-ebla* (< հե. *pel-),
հար (*հարկանել*, *հարուստ*, *զարկ*) - հիւնլ. *orgaim* (< հե. *per-),
հեղի - հիւնլ. *ire* (< հե. *per-),
հետ(ք) (*հետոյ*) - հիւնլ. *(in)ad* (< հե. *ped-),
հերկ(եւ) (?) - բրեւտ. *rec* (< հե. *per-),
հեր(ու) - հիւնլ. *hurid* (< հե. *per-),
հին - կիւմր. *hēn* [< հե. *sen(o)-],
հինգ - բրեւտ. *pemp* (< հե. *penk^ue-),
հող - հիւնլ. *animm* [< հե. *an(ə)-],
ձառ «սոգեղ, ծուռ, կոշտ» - հիւնլ. *garb* (< հե. *g'hrs),
ձիթ, *ձրեւ* - հիւնլ. *gor* (< հե. *g'her-),
մածնու - բրեւտ. *meza* (< հե. *mag'-),
մայր, *մաւր* (*մառ*, *մայրան*), (բրբռ.) *մերան*, *մորու* - հիւնլ. *mathir* (< հե. *māter),
մայրի - գալլ. *materis* (< հե. *māter),
մանր (*մանու*), *մանուկ* - հիւնլ. *menb* (< հե. *men),
մատաղ (*մատոյ-աշ*) - հիւնլ. *meldach* (< հե. *mad-),
մատն (**մայթ-ն*) - կիւմր. *maut* (< հե. *mē-),
մեղ-ք, (*մեղաց*) - հիւնլ. *mell* (< հե. *mel-),

մեղ-ը (*մեղու, -աց*) - կիւր. mel (< հէ. *meli-t),
մէջ - հիւ. medgn (< հէ. *medh-i, -io-),
միս (*մսոյ*) - հիւ. mīr (< հէ. *memso-),
մոր (*-ի, -ենի*) - հիւ. merenn (< հէ. *moro-),
մրջ-իւն (*մրջիւն*) - հիւ. moira (< հէ. *mor^ui-, *morm, *mouro-),
զան, զանի «ծեծ» - հիւն. gonim «սպանում եմ», (անց. կտր. 3-րդ դ.) geguin,
 guin «վերք», կիւր. ym-wan «մարտնչել. պայքարել» [< հե. *g^hhen(օ)-],
գերան, - բրետ. gwern «կայմ. լաստենի», հկոռն. guern «կայմ», guern-en
 «բարդի», միւն. fern «կայմ, լաստենի» (< հե. *uer-n-).
գոյ, գոյի - հիւն. fescor (< հե. *ues-),
գուն «ջանք» (հմմտ. *ջան-ք*) - հիւն. fine (< հե. *uen),
դուրգն - հիւն. droch (< հե. *dhregh),
եւ - հիւն. am (< հե. *es-),
թեքել - միւն. tal (< հե. *tek-, *tek'-ի-),
ի-ր - հիւն. [< հե. *k^ho-, *k^he-, *k^hu-],
լոզանալ - հիւն. lōathar (< հե. *lou-, *louə -),
լուանալ - հիւն. luac (< հե. *pleu-),
լպիրծ, լպիրջ, (բրբռ.) *լպիրտ* - կիւր. llyfr (< հե. *lei-, *slei-),
ծամ «ծուռ. շեղ» (*ծամածուռ*) [հմմտ. *կամ* (*կամակոր*)] - հիւն. camb, կիւր.,
 կոռն. cam «շեղ. թեք» [< հե. *(s)kamb-]¹,
կիծ, կծանեւ - հիւն. gēr «կծու. թթու» (< հե. *geig' - «կծել»)²,
հաս-անեւ - հիւն. do-icim (< հե. *enek'-),
հար (*հար-կ-անեւ, հար-ուստ, գ-ար-կ*) - հիւն. orgaim (< հե. *per-),
հիռ «պտույտ, շրջան, գալար» - միւն. cor «պտույտ» [<հե. *(s)ker-],
հոյ-ակապ - բրետ. ozech (< հե. *poti-s),
մալեւ, մա-մուլ (**մալ-մուլ*) (?) «սեղմել. ճզմել»- հիւն. melin (< հե. *mel-),
(յ)աւղ (*օղ*), *գ-աւղ, գաւղի* - հիւն. fuan (?) (<հե. *au-, *eu-),
նք-ոյր (*նգ-ոյր*) «մաղ» - հիւն. nithio (< հե. *neik-),
պ(ն)լոկել, լոպ-կել, լպուկ, (բրբռ.) *լպոկել* - հիւն. bolach (< հե. *leup-,
 *leub(h)-),
ջան-ք (*ջան-աւ*) - կիւր. iās (< հե. *iā-, *iō-),
ջին, ջն-եւ - կելս. gonim [< հե. *g^hhen(օ)-],
սանդուղ (< *սանդ-ուղ*) (?) - հիւն. scendim (< հե. *skand-)(?),
ստեղծ-անեւ - հիւն. taile (< հե. *stel-),
տալ «հանձնել» - հիւն. dān (< հե. *t'οH-),

¹ Աճառյանի և Ջահուկյանի ցանկերը չունեն (տե՛ս *Г. Б. Джаукян*, նշվ. աշխ., էջ 257):

² Ջահուկյանը բառը տարբեր նախաձևերի է հանգեցնում, ընդ որում՝ նաև գու-
 գակցվող կելտական ձևերը (հմմտ. *Г. Б. Джаукян*, նշվ. աշխ., էջ 153 և 174):

տեն «շղարշ, քող» - կիւր. *darn* «կտոր» (< հե. *der-),
տնտղիլ «ուռչել. փքվել» - հիւ. *tuthe* «ուռուցք» (< հե. *tēu-, *tū-),
տոռն «(սանդի) թակիչ՝ ծեծիչ» - հիւ. *drochta* (< հե. *deru-),
ցայտեմ, ցայթեմ - միւ. *ceird* (< հե. *skēt-),
ցիտ-, ցտ-եմ «ճանկռել՝ մարմինը, երեսը և այլն» - բրետ. *skeja* (< հե. *skei-),
փոյթ, -ոյ - կիւր. *ffwdan* [< հե. *(s)p(h)eu-d-],
քեր-եմ, քոր-եմ - հիւ. *scaraim* [< հե. *(s)ker-],
քեր-թ-ել, քեր-ծ-ել - հիւ. *scrissid* [< հե. *(s)ker-]:

10. Շարժում. տեղափոխություն, փոխադրում,
 նավագնացություն

Այի «լիսեռ, առանցք, երկանաքար՝ ճախարակ» - հիւ. (< հե. *el-),
ածեմ (յ-ածիմ) «բերել» - հիւ. -*aig* (< հե. *ag'-),
աղկաղկ - հիւ. *elc* (< հե. *elg-),
առ(ագ)աստ - հիւ. *fuan* (?) (< հե. *eu-),
*բառն-ամ (*բարձն-ամ)* - կիւր. *bry* (< հե. *bhereg'h-),
բեր, բերոյ, բերեմ - հիւ. *berim* (< հե. *bher-),
դեղեւիմ - միւ. *dumacha* (< հե. *dheu-),
դուլ - հիւ. *dāl* (< հե. *dheu-),
ել-անեմ (ել-ոյգ, ել-ուզանեմ) - գալլ. *el* (< հե. *el-),
եղ-ծ, եղ-ծանեմ - բրետ. *ol*, մբրետ. *el* «պակասություն. կարիք» (< հե. *el-),
եկ, եկն - միւ. *beim* (< հե. *gūā-, *gūem-),
եւմ - հիւ. *am* (< հե. *es-)¹,
երեւիմ - հիւ. *richt* «ձև» (< հե. *p^[h]r-ep^[h]-),
եր-եր (երեր-ամ, երեր-իմ) - միւ. *tarrach* (< հե. *tres-, *ters-),
էջ (իջանեմ) - հիւ. *ōegi* «հյուր». «իջևանող(?)» [< հե. *ei-(ghi)-],
ընթ-անամ - հիւ. *sēt* «ճանապարհ», կիւր. *hynt* (< հե. *sent-),
ըն-կլ-նում - հիւ. *tām* (< հե. *gel-, *g^uel-),
թամբ, -աց - կիւր. (< հե. *temp-),
թեղ, թեղի «(կալսածի) կույտ», *թեղել* (բրբռ.) «(կալսածը) կույտի վերածել»
 - միւ. *teile* (< հե. *tel-),

¹ Ջահուկյանը դնում է բառիմաստային (թեմատիկ) ցանկի 9-րդ խմբում, որ ավելի ճիշտ կլիներ, եթե դրվեր 10-րդում. մենք թողնում ենք 9-ում, բերում նաև 10-ում:

թիւ- (*թոշիւ*), թրթրիւ- հիւլ. (< հե. *pter-),
 լպգտալ, լպստիլ (բրբռ.) – կիւր. llyfl (<հե. *lei-, *slei-),
 լու-ծ, լծոյ (<*ieu-k'om «լուծ»), - կիւր. iau, վալլ. iau (< հե. *ieu-),
 հեծ-անիւ- հիւլ. saidim (< հե. *sed-),
 հետ(ք), հետոյ//յետ - հիւլ. (in)ad (< հե. *ped-),
 հլոտել (բրբռ.) (?) «հրել, առաջ մղել» - հիւլ. ad-elle «այցելել», di-elle «շեղել», eblaid «քշել» (< հե. *pel-),
 նաւ , նաւաստի (?) - հիւլ. náu (< հե. *naHú -):

11. Ունեցվածք, սեփականություն և առևտուր

Աղբատ - հիւլ. liach «խեղձ, թշվառ» (< հե. *leig-, *leik-),
 արծաթ, արծաթոյ - հիւլ. argat (< հե. *Hark'-),
 աւգ-նել (*օգ-նել*), աւգ-ուտ (*օգ-ուտ*) - կիւր. awyr (< հե. *au-)¹,
 աւն «ինչք, ունեցվածք» (?) - հիւլ. āne (<հե. *op-),
 գիւտ, գտանել- հիւլ. finnaim [< հե. *u(e)idi-],
 գոդ, գոդ-ութիւն - հիւլ. fell «խաբէություն» [< հե. *uol- (< *el-)]²,
 գ-երծ-անել - հիւլ. selg «որս» [< հե. *selg'-(?)],
 ձիւր, ձր-ել - հիւլ. gor (< հե. *g'her-),
 ռոտնել - կիւր. rhathu «հոկէլ, կոկէլ, հարթել», բրետ. rása «ածիլել» (< հե. *ereu-),
 ստանալ - հիւլ. cono-snaim (< հե. *stā-),
 տաւ, տուր (*տուր-ք*) - հիւլ. dan (< հե. *de-):

12. Տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ

Աճել - կիւր. aeron «ծառապտուղ» [< հե. *ōg-(?), *auēg-],
 ամբ(*ոնջ*) - հիւլ. (imb) (< հե. * ambhi-),
 անդունդ, անդնոյ - հիւլ. bomd (< հե. *bhundho-)³,

¹ Կիւրերէնի ձևը, թերևս, մեծացնում է հայ. *աւգն*- արմատի բնիկ, քան իրանական ծագման լինելու հավանականությունը (տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 272, 551-552: Հմմտ. Դ. Льюис, X. Педерсен, նշվ. աշխ., էջ 364):

² Նշվում է նաև 21-րդ խմբում (Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 155, այլև 222):

³ Օրինակը բերում ենք ըստ դասական համեմատարանության. բառն ունի ավելի հավաստի ստուգաբանություն՝ հե. *(e)no- / (o)no- > հայ. *ան-դ* («ցուցական դերանուն հեռավոր առարկայի համար». Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 71), որից արմատի կրկնությամբ (*ա/ու* ձայնդարձով)՝ *անդ-ունդ* «ավելի քան այն կողմ».

անձուկ - հիբլ. (cum)ung (< հե. *ang'h-),
անուր, անրոյ - հիբլ. ainne (< հե. *āno-),
առագաստ - հիբլ. fuan (?) (< հե. *eu-),
-բերձ (բարձ-ը) - հիբլ. bri «սար» (< հե. *b^herg^{h-}),
բոլ-որ - հիբլ. bolach (< հե. *bhel-),
գաղեմ (գեղեմ, գողեմ) «ծածկել, քողարկել» - հիբլ. fell (< հե. *el-),
դէզ - հիբլ. digen (< հե. *dheig'h-),
դնել (ըն-տիր) - գալլ. dede (< հե. *dhe-),
դուլ, դլ-ամ (դղամ) «դադար» - հիբլ. dál (< հե. *dheu-),
էտոյ, էտեղ (տեղի) - գալլ. sedlon (< հե. *sed-),
էրկ-այն (էրկ-ար, -ոյ) - հիբլ. doe [< հե. *deu-),
թանձր - հիբլ. techt (< հե. *tengh-),
թաւ - հիբլ. tyfu (< հե. *tēu-, *teuə-, *tūō),
թաք-չ-իմ (առք. թաք-էայ) - հիբլ. toeb [< հե. *pet-),
թեր (ըն-թեր, թեր-թ, թեր-ի) - հիբլ. atar (< հե. *pet-),
լայն - հիբլ. lathan, կիւր. llydan, կոռն., բրետ. ledan «լայն» (< հե. *plāt-),
լիք- (լք-անեմ) - հիբլ. leicim (< հե. *leiku-),
կոր - հիբլ. cor «շրջան» (< հե. *geu-),
հեռ-ի - հիբլ. ire (< հե. *per-),
մած-ն-ում (մած-ում) «մածուցվել. պնդանալ» - բրետ. meza (< հե. *mag'-),
մանր, մանու (ման-ուկ) - հիբլ. menb (< հե. *men-),
մեծ, մեծաց - հիբլ. maige [< հե. *meg'(h)-],
մէջ, միջոյ - հիբլ. medón (< հե. *medh-, medh-io-),
մնամ - հիբլ. ainmne (< հե. *men-),
յոյով - հիբլ. il (< հե. *pel-),
նիստ, նստոյ (նստիմ) - հիբլ. net (< հե. *sed-),
ողջ, ողջոյ, (ամբ)-ողջ - հիբլ. holl (< հե. *solo-),
տոյ, տրոյ - հիբլ. cja (< հե. *k'ēu-),
վեր, վերոյ, (ի) վեր, վերայ - գալլ. ver (< հե. *uper-),
տող «ուղիղ շարք», տող-ուք (?) - բրետ. staor (< հե. *del-):

ավելի խորք» (տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Հայերենի բառարնական և ստուգաբանական ուսումնասիրություններ, էջ 140) :

13. Քանակ և թիվ

Ասէն (*ասէնայն*) - հիւնլ. samain (< հե. *sem-),
էրէսուն - հիւնլ. tricha (< հե. *t^[h]ri-k^[h]omt^[h]),
էրէք - հիւնլ. tri (ար. սեռ), teoir (իգ. սեռ) «էրէք» (< հե. *t^[h]rei - «էրէք»),
էրկու - հիւնլ. dāu, do, (իգ. սեռ) di [< հե. *t^oo- (<*t^oo-)],
էւթն, *էսւթն* (*էօթն*) - հիւնլ. secht (< հե. *sep^[h]t^[h]m),
էւթանասուն - հիւնլ. sechtmogo (< հե. *sep^[h]t^[h]m-k^[h]omt^[h]),
էւթներորդ - հիւնլ. sechtim-ad (< հե. *sep^[h]t^[h]-mo-),
ինն, *ըննունք* - հիւնլ. noi n- [< հե. *neu(e)n-],
իննսուն - վիւնլ. nochts (< հե. *neuñ- k^[h]omt^[h]-),
լի - հիւնլ. lan «լի, լեցուն» (< հե. *p^[h]leH-io-s),
հինգ (*հինգ-երորդ*) - հիւնլ. cóic, բրեւ. pemp- (< հե. *p^[h]enk^[h]oe),
սեծ - հիւնլ. maige, mochtae (< հե. *mek'H-),
սի, *սիոյ* (*սիոջ*) «սեկ» (*սէն*, *սիայն*, *սէս*) - հիւնլ. samail (< հե. *sem-),
յիսուն - հիւնլ. cōica (< հե. *p^[h]enk^[h]oe- k^[h]omt^[h]-),
յուրկ - հիւնլ. il (< հե. *pel-),
ողջ, *ողջոյ*, (*սւք*)-*ողջ* - հիւնլ. holl (< հե. *solo-),
ութ - հիւնլ. ocht [< հե. *ok^[h]t^[h]o(u)],
ութսուն - հիւնլ. ochtmoga (< հե. *ok^[h]t^[h]o- k^[h]omt^[h]-),
չոր-(*իր*), *չորրորդ* - հիւնլ. cethramad (< հե. *k^[h]oet^[h]-ur-t^[h]o),
չորք - հիւնլ. ceth(a)ir, (իգ. սեռ) cetheoir (< հե. *k^[h]oet^[h]ue/or-),
վարսուն - վիւնլ. sesca (< հե. *s^oek^[h]s- k^[h]omt^[h]-),
վեց - հիւնլ. se (< հե. *s^oe k^[h]s-),
վեց-երորդ - հիւնլ. sessed (< հե. *s^oek^[h]-t^[h]o-),
տասն - հիւնլ. deich n- (< հե. *t^oe k^[h]m),
քառասուն - հիւնլ. cethorcho (< հե. *k^[h]oet^[h]u̅- k^[h]omt^[h]-),
քսան (< **գիսան*) - հիւնլ. fiche (< հե. *u̅- k^[h]mt^[h]-(iH-)-):

14. Ժամանակ

Ամ, *ամաց*, (*ամ-իկ*) - հիւնլ. sam (< հե. *sem-),
ամիս, *ամսոյ* - հիւնլ. mí «ամիս», «լուսին» (< հե. *mēns), (սեռ. հնլ.) mis (< հե. *mēnsos) [< հե. *me(H)-n- [< *meH- «չափել, որոշել (ժամանակը)»],
գարուն - հիւնլ. errach, կիւր. guiannuin [< հե. *ues-ŕ-, (սեռ. հնլ.) *ues-n-es],
գիշեր, *գիշերոյ* - հիւնլ. fescor (< հե. *uesperos, *uek'eros),

հաղ (հեղ) «անգամ» - հիւնլ. -ebla (< հե. *pel),
հեր(ու) - հիւնլ. hurid (< հե. *per-),
հին, հնոյ - հիւնլ. sen, կիւր. hēn [< հե. *sen(o)-],
ձսէռն (հմմտ. *ձիւն*) - հիւնլ. gam (< հե. *g^[h]eim-s),
մատաղ (մատոյ-աջ) - հիւնլ. meldach (< հե. *mad-),
տիւ (տի) «օր» - հիւնլ. die, կիւր. diw (< հե. *t'iu-),
տոկաս - հիւնլ. doe [< հե. *dowo-go-(?)],
տեւեւ «մնալ» - հիւնլ. doe (*dowyo-) «դանդաղ» (< հե. *t'eu-):

15. Զգայական ընկալումներ

Աղի, ան-ալի - հիւնլ. salann «աղ» (< հե. *sal-),
աղն, աղունք - հիւնլ. mjō «ալուր» (< հե. *mel-),
աղք-ատ - հիւնլ. liach (< հե. *leig/k-),
բութ - հիւնլ. bān (< հե. *bhau-, *bhu-),
գաղջ - հիւնլ. (< հե. *uelk-, *uelg-. հմմտ. *uel-),
գան-, գանեւ «ծեծել» - հիւնլ. gonim «սպանում եմ», geguin «սպանեց», guin
 «վերք» (< հե. *g^[h]oen-). *ջնեւ* (< ջին «ծեծելու փայտ») «(փայտով) ծեծել»,
դեղին, դեղձան, դեղբ - միւնլ. deil (< հե. *dhel-),
եղեռն - հիւնլ. ingen (< հե. *el-)
¹,
երեւիւ - հիւնլ. richt (< հե. *prep-),
թան-աւ - հիւնլ. tām (< հե. *tā-, *tāi-, tāu-),
լաւ «լաց լինել» - միւնլ. lēn (< հե. *lā, *lel-, *lul-),
լիժ (բրբռ.) «ողորկ» - կիւր. llyfr (< հե. *lei-, slei-),
լսեւ (լուր, լրոյ, հ-լու) - հիւնլ. cloor (< հե. *k'leu-),
կարծր - հիւնլ. garg(g) «բիրտ, վայրենի» (< հե. *garəg'-),
կեղծ (?) - միւնլ. celg «նենգություն, խորամանկություն» (< հե. *kel-g'-),
հուն-չ - կիւր. hanes «սպանություն» [< հե. *(s)uen- / *(s)uon-],
ձառ «ոգեղ, ծուռ» - հիւնլ. garb (< հե. *g'her-, g'her-s-),
ճանաչեւ (*ճանաչեւ) - հիւնլ. gninim (< հե. *gen-),
մեղկ (մեղմ), (բրբռ.) *մղ-մեղ* «մեղմ» - հիւնլ. meldach «բնուշ» (< հե. *mel-),

¹ Հմմտ. Վ. Գ. *Համբարձումյան*, Հայերեն *եղեռն* բառի ծագումը և տիպարանությունը // «Լեզու և լեզվաբանություն», 2016, 1(14), էջ 40-49 [տե՛ս նաև “Геноцид как духовно-нравственное преступление против человечества” // ”Материалы международной научной конференции (Москва, 23-24 октября, 2015 г.)”, М., 2017, էջ 187-196:

նայ - հիռլ. *snuadh* {< հե. **snə* -, **snə*-(t-)},
նոք, -ոյ - հիռլ. *nue* (< հե. **neos*-),
ոդորկ - հիռլ. *lorg* (< հե. **lerg*-),
ոյծ «ցուրտ, զով» - հիռլ. *ōcht* (< հե. **oug*'-),
պինդ - հիռլ. *belach* (< հե. **bhendh*-),
ջեր - հիռլ. *gor* (< հե. **g^uher*-),
ջերս, ջերսոյ - միռլ. *grith* «արև. շոգ» (< հե. **g^uhorti*),
սուն // սին, սն-անիլ, սան - հիռլ. *sine* (< հե. **p^sen*-),
տեսանեմ - հիռլ. *derc* (< հե. **derk*'-),
տրաս «ամուր, պինդ» - կիմր. *dūr* (< հե. **deru*-),
փայլ, փայլեմ (փաղ-փաղ-իմ, փող-փող-եմ) - միռլ. *lainn* {< հե. *(s)p(h)el-]:

16. Զգացմունք (ֆիզիկական որոշ դրսևորումներով). խառնվածքային,
 բարոյական և գեղագիտական ըմբռնումներ

Ատեմ (ատեսալ) - վալլ. *cawdd* «զայրույթ. ատելություն» (< հե. **odi*-),
արգ-(ահատիլ), արգ-(անդ) - կիմր. *arffed* (< հե. **arq^u*-),
արտասուք - հիռլ. *der*, բրետ. *dacrou*, վալլ. *deigr* (հոգն. *p. dagrau*) (< հե.
 **dak*'ru-),

գարշ, գարշելի «զզվելի. պիղծ» - միռլ. *goiri* «դատը», հիռլ. *gortae* «քաղցր» (<
 հե. **ghers*-)(?),

գեղ, գեղոյ, գեղ-եցիկ - հիռլ. *gweled*, բրետ. *guelel* «տեսք» (< հե. **uel*-),
գեղձ, գեղձ-իմ (գեղձ-ալ) «տեն(չալ), փափագ(ել)» - կոռն. *guell* (< հե. **uel*-),
եղուկ (եղկեմ) (?) - հիռլ. *lucht* (< հե. **leug*'-, **leug*-),

երկ-նչ-իմ - հիռլ. *dōel* (< հե. **dyei*-),
լոյտ (լուտ-ալ, լուտ-անք) «նախատել, կշտամբել» - հիռլ. *laidhim* (< հե.
 **leud*-),

խանտ [խանդ (խանձ, խանծ)], խագ - բրետ. *condud* (< հե. **kand*-),

ձառ «սզեղ, ծուռ, կոշտ» - հիռլ. *garb* (< հե. **g^her*-)¹,

մեղ-ք, մեղաց - հիռլ. *mell* (< հե. **mel*-),

ողող-անամ, (բրբռ.) ոլուլ-ալ «լալ, ողբալ» (?) - հիռլ. *ulach* (< հե. **el*-, **ul*-),

¹ Այս արմատը չկա Գ. Ջահուկյանի բառիմաստային (թեմատիկ) ցանկում, ինչպես նաև աղյուսակում, թեև մեկ այլ դեպքում նշվում է նրա ծագումը՝ իբրև բնիկ միավոր (< հե. **g^her*- / **g^her*-s «սևեռել, հառել, փշաքաղվել. փայտանալ»): Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 54:

նղորմ - հիւնլ. arman (< հե. *el-),
ւէր, սիրոյ, սիրել - հիւնլ. cōem, cōim «սիրելի» (< հե. *k'ei-),
սպառնամ - հիւնլ. seir [< հե. *(s)p(h)er-],
տրամ «ամուր, պինդ» - հիւնլ. dron «ամուր», կիւր. dur (< հե. *t'e/oru-, *t're/ou-),
քուք, քուքոյ «ողբ» - հիւնլ. cwyn (< հե. *kāu-, *kēu-):

17. Մտածողություն, միտք

Գէտ, գիտ-եմ (է-գիտ. գ-ան-գիտ-ել, գիտ-ում) - հիւնլ. ro-fetar [< հե. *y(e)idi-],
իմանամ, իմաստ - հիւնլ. menme «շունչ՝ ոգի», «միտք», do-moiniur «ծիշտ է», (< հե. *men-),
լոյծ-, լուծանեմ - հիւնլ. lun (< հե. *leug', *leug-),
*ճանաչեմ (< *ծանաչեմ)* - հիւնլ. gninim (< հե. *gen-),
միտ-ք, մտաց - հիւնլ. midiat «խորհել», «դատել», mess «դատաւարություն», med «կշեռք» (< հե. *met'-),
ուսանիմ - հիւնլ. toucc «հասկանալ» (< հե. *euk-):

18. Չայնական արտահայտություն, խոսք.

ընթերցանություն և գիր

Անուն - հիւնլ. ainm [< հե. *(e-)n(o)mn],
ասել - հիւնլ. ai (< հե. *eg'),
գոչեմ «կանչել. ձայնել» - հիւնլ. foccul «խոսք» (< հե. *yēk^[h]o- «խոսել. խոսք ասել»),
ըն-թեռ-նում - հիւնլ. torann (< հե. *tor-),
լում - հիւնլ. clunim (< հե. *k'leu-),
հարց, հարցանեմ - կիւր. archaf «հարցնել», կոռն. arghaf «խնայել», մբրետ. archas «հրամայել» (< հե. *per-),
նղորել «աղաչել» - հիւնլ. -tluch (< հե. *el-)(?),
ռնամ - հիւնլ. rūn (< հե. *reu-):

19. Տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ. հասարակական հարաբերություններ

Արգել - հիւնլ. aircthe (< հե. *arek-),
*լիպոզ (բրբռ.) // լիրբ, լպիրծ, լպիրշ (*լիոպ-) // լկ-ուսվիլ, -սսվիլ, -տի (բրբռ.)* - կիւր. llyfr (< հե. *lei-, *slei-),

ցեղ, ցեղի - հիւնլ. scailt [< հե. *skeli-, *(s)kel-]:

20. Ռազմական գործ

Թուր, թրոյ - հիւնլ. tarathar (< հե. *ter-),

սլ-աք - հիւնլ. cuit (< հե. *k'u-),

սուր (սլուր) - կելտ. cath (< հե. *k'ei-):

21. Օրէնք

Ատեան (> ստեն) - հիւնլ. saidim (< հե. *sed-),

գող, գող-եւ - հիւնլ. fell «խաբէութիւն» (< հե. *el-):

22. Կրոն և նախապաշարմունք

Աստուած - հիւնլ. dia (< հե. *t'eju-o-),

արգել - հիւնլ. aircthe (< հե. *arek-),

թովեւ - մկիւր. tut (*teu-to) «կախարդ. թովող» (< հե. *teu-),

սուրբ (սպոհկ) - հիւնլ. cuanna (< հե. *k'eu-):

23. Դերանվանական և սպասարկու բառեր ու

մասնիկներ

Ամբ-, ամբ-ողջ - հիւնլ. (imb) (< հե. *ambhi «շուրջը, երկու կողմից»),

այլ, -ոյ (այդ-աւ-այդ) - հիւնլ. aile (< հե. *al-),

ան- (ժխտ. մասնիկ՝ «ատանց». հմմտ. *ան-անուն*) - հիւնլ. an- (< հե. *ne, *ŋ-),

ան- «վրա. դեպի» - հիւնլ. an- (< հե. *an-),

ար (նխ.) - հիւնլ. ar (< հե. *per-),

դ-, -դ (դ-ա, այ-դ, աւա-դ-իկ) - հիւնլ.- d (< հե. *to-, *tā-),

դու - հիւնլ. tū (< հե. *tu),

ել(ւ) - հիւնլ. iar [< հե. *(e)pi],

ի (յ) (նխ.) - հիւնլ. in (< հե. *en-),

ի (իք, իմն, ինչ, ի-րաւ, ի-ր, զ-ի, հ-ի) - հիւնլ. cid (< հե. *k^uo-, *k^ue-, *k^uu-),

իւր, իւրոյ - հիւնլ. fein [< հե. *se-, *s(e)ue-],

ո, ով (ո-մն, ո-ր, ո-ք) - հիւնլ. co-te (< հե. *k^uo-, *k^ue-, *k^uu-),

ու, (հեր)ու - հիւնլ. hurid [< հե. *(per-)-ut-i],

ուր (ուր-եմն, ուր-եք, ուր-ումն, հան-ուր) - հիւնլ. cwi (< հե. *k^uo-, *k^ue-, *k^uu-),

ս-ս (այ-ս, ս-ս-տ, աւս-ս-իկ) - հիւնլ. ce (< հե. *k'-, *k'e-, *k'ei-),

ց- (?) - հիւնլ. ad (< հե. *ad-)¹:

¹ Չափուկյանի կողմից առանձնացվող 23-րդ բառիմաստային (թեմատիկ) խումբը («Դերանվանական և սպասարկու բառեր ու մասնիկներ») այս դեպքում, բնականաբար, դուրս է մտնում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայերենի և կելտական լեզուների փոխհարաբերության հարցը նախկինում եղել է պատմահամեմատական լեզվաբանության, իսկ վերջին ժամանակներս նաև լեզվաբանական տիպաբանության ընդհանուր ուսումնասիրության առարկա՝ այդ բնագավառի գրեթե սկզբնավորումից ի վեր: Այդ լեզուների տվյալներն այս կամ այն չափով նկատի են առնվել տարբեր բնույթի աշխատություններում՝ բուն հարցերի քննության բերումով, այդ հարցերին զուգահեռ: Մինչև օրս չունենք այդ լեզուների կամ դրանց որևէ ոլորտի (հնչյունաբանություն, բառապաշար և այլն) վերաբերյալ առանձին (մանավանդ՝ զուգաբանական-տարբերակային) որևէ ուսումնասիրություն: Սույն աշխատությունը, թերևս, ինչ-որ չափով լրացնում է այդ բացը:

2. Հիշյալ լեզուները, իրենց առանձին դրսևորումներով, ժամանակագրորեն գրեթե համընկնում են. դրանցով հայտնի գրավոր աղբյուրների ներքին սահմանը մ. թ. 1-ին հազարամյակն է, դրանք այս կամ այն դրսևորմամբ ներկայանում են մինչև այժմ կենդանի լեզուներով, որոնք կրում են ոչ միայն ժառանգորդական գծեր, այլև ունեն նոր ձեռքբերումներ («ինովացիաներ»)՝ ներքին զարգացման և իրարից տարբեր լեզուների հետ ունեցած շփումների արդյունքում: Թե՛ կելտականում և թե՛ հայկականում գրավոր հուշարձանների («գրչությունների») ժամանակային սահմանը 8-9-րդ դդ. են, թեև դրանք, ըստ բովանդակության, վերաբերում են ավելի վաղ ժամանակների:

Նախապատմական ժամանակաշրջանում, նաև հետագայում կելտական լեզուները շփումներ են ունեցել միայն այսպես կոչված «արևմտյան» խմբակցության (հնդեվրոպական տիպի) լեզուների հետ, այնինչ՝ հայերենը նույն ընթացքում առնչվել է «արևելյան» խմբակցության հնդեվրոպական լեզուներից (իրանական և այլն) բացի, ուրիշ՝ ոչ հնդեվրոպական լեզուների հետ: Եվ ստացվում է այնպես, որ հայերենի հնչյունական համակարգի, բառապաշարի, քերականական կառուցվածքի շատ երևույթների քննությունը կարող է հարուցել որոշակի դժվարություններ:

3. Հայերենը պատմական ժամանակաշրջանում ներկայանում է, անկախ ընդգրկման ծավալից, գրական միակերպ նորմավորվածությամբ, որին հիմք են հանդիսացել առանցքային բարբառները, ինչպես նաև բնութագրվում է որպես բարբառային-ժառանգորդական մեկ ամբողջություն («կոնտինուում»), կել-

տականը հայտնի է դառնում բարբառային (ենթաբարբառային և այլն) տարբերակվածությամբ՝ ընդհուպ առանձին լեզուների աստիճանի: Եվ՝ մեկ, և՛ մյուս դեպքում իրենց դերն են ունեցել արտալեզվական հանգամանքները. առաջինի դեպքում արտաքին ուժերի հարուցած տիրապետողական հանդարտություն՝ իբրև յուրօրինակ գոյության մի ձև, երկրորդի դեպքում՝ հակամարտ ուժերի անզիջում մրցակցություն՝ անջատողական հետևանքներով:

Որակական առումով զուգաբանության մի եզրում հին գրական հայերենն է իր՝ այսօր ոչ այնքան բավարար չափով ուսումնասիրված բարբառներով, իսկ մյուս կողմում կելտական լեզուներն են՝ իրենց սոցիալական, տարածքային և գործառական լայն տարբերակվածությամբ, ընդ որում՝ նման անհավասար դրվածքի մեջ անգամ այդ լեզուներն ունեն համեմատելի ակնհայտ համապատասխանություններ, մանավանդ իբրև ընդհանուր հնդեվրոպական ժառանգության արտահայտություն:

4. Հին գրական հայերենին, այլև նրա հետագա վիճակին՝ միջին գրականին նվիրված նոր ուսումնասիրություններն ավելի վստահելի օրինակ են տալիս ընդհանուր լեզվի պատմական զարգացման օրինաչափությունների մեջ հնագույն (արխաիկ) գծերի պահպանման վերաբերյալ, մանավանդ՝ հնչյունական համակարգի բնութագրի հետ կապված. օր.՝ պայթական ձայնեղ – խուլ («տեղաշարժի»), շնչեղ – ոչ շնչեղ հնչյունների հարաբերակցության, հետնալեզվայինների շրթնայնացման կամ քմայնացման, կոկորդային և նախակոկորդային բաղադրիչների առկայության և որակական տարբերության հարցերի վերաբերյալ և այլն: Այսպես նաև նկատվում են նոր դիտարկումներ հայերենում ձայնավորների շրթնայնացմամբ պայմանավորված փոփոխությունների առումով: Հայերենում վերջին ժամանակներս երևան եկած նման դիտարկումները հնարավոր բազա են ստեղծում ընդհանուր համեմատության՝ ոչ միայն կելտական, այլև հնդեվրոպական մյուս լեզուների հետ:

5. Կելտական լեզուները և բարբառները գրեթե ամբողջովին տարածված են Եվրոպայի արևմտյան մասում, ներկայանում են գրական, ինչպես նաև բարբառային (ենթաբարբառային, խոսվածքային և այլն) տարբերակներով. վերջիններս հաճախ բնութագրվում են իբրև առանձին լեզուներ: Տարբերակվածությունն այնպիսին է, որ ավանդաբար առանձնացվող երկու՝ կղզիների և մայրցամաքային խմբերի մեջ ներառվում են *ենթախմբեր*, *բարբառախմբեր*, *խոսվածքների խմբեր* և այլն: Նման առանձնացման հիմքում ընկած են հնչյունական, բառապաշարային, ձևակազմական էական, տարբերակիչ հատկանիշ-

ներ. հմմտ. հե. *k^u հնչույթը լեզուների մի մասում (բրիտերեն, լեպոնտիերեն) արտացոլվում է որպես P-լեզու, իսկ մյուս մասում (գոյդելերեն, կելտիբերերեն) որպես Q-լեզու. այս տեսակետից, օրինակ, գալլերենը հանդես է բերում միջին դիրք, այսինքն՝ համատեղում է թե՛ մեկի և թե՛ մյուսի հատկությունը:

Հնչունական համակարգի, բառապաշարի, մանավանդ արմատի կազմության շատ իրողություններ հնարավոր է, տվյալ դեպքում, համեմատել հայերենի նույնպիսի միավորների հետ՝ հիմնված որոշակի ընդհանրությունների, նկատելի բացառություն հանդիսացող շեղումների վրա: Դրանք կա՛մ գալիս են հնդեվրոպական ընդհանուր հիմք-լեզվից, կա՛մ նոր ձեռքբերումներ են:

6. Հայերենի և կելտական լեզուների առնչությունների հարցը առաջին անգամ է դառնում առանձին ուսումնասիրության առարկա, նախկինում եղել են այս կամ այն չափով համեմատության եզրեր երկու տիպի լեզուների միջև: Այդ առնչություններին վերաբերող նյութը գտնում ենք հնդեվրոպական ստուգաբանական բառարաններում, առանձին ուսումնասիրություններում՝ երևան եկած ոչ միայն նախկինում, այլև 1970-ական թթ. կեսերից հետո:

Նկատի ունենք հատկապես հայ-իտալյան բառային զուգաբանություններին, հայ-հնդիրանական լեզվական շփումներին, մարմնի մասերի հնդեվրոպական անվանումների հայերեն արտացոլումների տարածքային նկարագրությանը, հայերենի բարբառների հնդեվրոպական հնաբանություններին և հնդեվրոպական ծագման հայերեն բառի կազմում աճականի դրսևորմանը վերաբերող և մյուս ուսումնասիրությունները, որոնցում կողմնակիորեն բերվում են նաև հայ-կելտական բառային զուգահեռներ: Վերջիններս նկատի ենք ունենում մեր աշխատանքում արծարծվող բուն խնդիրների լուծման նպատակով:

Ավելին, նման առնչություններին առանձին անդրադառնալը կարևոր է տարբեր մակարդակի զուգաբանությունների միջոցով դրանց ժառանգորդական գծերի պահպանման և նորի ձեռքբերման տեմպերի տեսանկյունից՝ կապված ոչ միայն ծագումնային (գենետիկական), այլև տարածքային (արեալային) խնդիրների հետ:

7. Չուգադրվող լեզուների արմատի կազմում հնչունների դրսևորումների մանրամասն քննությունից պարզվում է, որ դրանք նախկինում ամենից առաջ սահմանվել են ընդհանուր օրինաչափությունների նկատառումով, այնինչ կան անհամեմատ մեծ թվով բացառություններ, որոնք կարելի է բնութագրել իբրև շեղումներ այդ օրինաչափություններից: Դրանք կարևոր օրինակներ են հայ-կելտական հնչունական զուգաբանությունների առանձնացման տեսանկյունից:

1) Ձայնավորների զուգաբանական համընկումը և սահմանվել է իբրև կանոն, իսկ բացառությունը՝ շեղում այդ կանոնից («անկանոն»). դասական համեմատաբանության բուն ուշադրության կենտրոնում, ինչպես նշվեց, եղել են օրինաչափությունները:

ա) Ձայնավորական, ձայնորդային և «երկինյունային» զուգաբանությունները, որոնք նախկինում բնութագրվել են իբրև ընդհանուր օրինաչափություններ (Շ. Հյուբշման, Ա. Մեյե, Շ. Աճառյան, Գ. Ջահուկյան և ուրիշներ), մեր այս աշխատանքում դառնում են առանձին քննության առարկա, և ըստ այդմ՝ ուրվագծվում է ավելի իրական պատկեր լեզվական ցեղակցության վերաբերյալ՝ անկախ դրանց ինքնուրույն զարգացման ընթացքում ունեցած ակնհայտ տարբերություններից:

բ) Պարզ («կարճ») ձայնավորների զուգաբանություններն ունեն ավելի մեծ ընդգրկում, քան բաղադրյալ («երկար») ձայնավորներինը:

գ) Ձայնորդների լայն գործածությունը բացատրվում է նրանց գործառական յուրահատկություններով, ինչպես նաև արմատի կազմության մեջ ունեցած մասնակցության չափի տարբերությամբ:

2) Երկինյունների ենթահամակարգում զուգաբանություններն ավելի քիչ են, քան որ լեզուներում կարելի է հանդիպել առհասարակ:

3) Բաղաձայնների համակարգում զուգաբանությունները, իբրև ընդհանուր հնդեվրոպական երևույթի արտացոլում, այս դեպքում ևս ունեն լայն ընդգրկում, ընդ որում արմատի կազմում ունեցած բոլոր դիրքերում (տե՛ս կից օրինակներ):

ա) Պայթական բաղաձայններն ունեն լայն ընդգրկում, որ յուրահատուկ է հնդեվրոպական լեզուների առնչություններին առհասարակ, և դա այս դեպքում նույնպես նկատելի է.

հե. *p, *t, *k (*k^u) խուլերը հանդես են գալիս որոշակի համընկումներով, ընդ որում արմատի տարբեր դիրքերում. հե. *p > հայ. *h, ւ, յ, օ (զրո)* – կելտ. *ø* (զրո). հե. *pətēr > հայ. *հայր* – հիռլ. *athir*, հե. *epi > հայ. *ել* – հիռլ. *iar*, այլև հե. *ter- > հայ. *ընթեռնուլ* – հիռլ. *torann*, հե. *ātēr > հայ. *այրել (զայրանալ)* – հիռլ. *āith*, հե. *penk^ue > հայ. *հինգ* – ֆրետ. *pemp*, հե. *qrop- > հայ. *որով (+այն) (?)* – հիռլ. *cri*.

հե. *b, *d, *g (*g^u) ձայնեղները նույնպես ունեն զուգադրման որոշակի տարածություն, ընդ որում մասնակի դրսևորումներով, քան որ կարելի է սահմանել իբրև ընդհանուր օրինաչափություններ, եթե դիտարկում ենք ըստ այնմ, թե,

իրո՞ք, հայերենում կատարվել է բաղաձայնական տեղաշարժ (որ առարկելի է հատկապես վերջին ժամանակներս), օր.՝ հե. *b > հայ. *պ* – կելտ. b. հե. *sleib- > հայ. *լպ/րթ* – իռլ. *lobre*, հե. *d > հայ. *տ* – կելտ. d. հե. *ped- (*pod-) > հայ. *տուն* – հիռլ. (in)ad, հե. *g' > հայ. *ծ* – կելտ. g. հե. *g' nē- > հայ. *ճանաչել* (**ճան*-) – հիռլ. *gninim*, հե. *g^u > հայ. *կ* – կելտ. g (ø). հե. *alg^u- > հայ. *աղկ-աղկ* – հիռլ. *elc*.

հե. *bh, *dh, *gh (*g^uh) շնչեղ ձայնեղները նույնպես հանդես են գալիս ակն-հայտ սարքերակմամբ, ընդ որում ավանդական՝ բաղաձայնական տեղաշարժի դրսևորման մեջ ունեն մեծ թվով օրինակների մասնակի դրսևորումներ. հե. *bh > հայ. *բ* – կելտ. b. հե. *bhəl (*bhal) > հայ. *բալ* («մշուշ») – հիռլ. *ball*, հե. *ambhō > հայ. *ամբողջ* – հիռլ. (imb), հե. *dh > հայ. *դ* – կելտ. d. հե. *dhəi-l – հայ. *դալ* (*դալլ*) – հիռլ. *del*, հե. *g^oh > հայ. *ձ* – կելտ. g, ø, ch. հե. *ang^ohu > հայ. *անձուկ* – հիռլ. (cum)ung, հե. *g^oh > հայ. *գ* – կելտ. g. հե. *dheig^oh > հայ. *դէգ* (*դիգել*) – հիռլ. *digen*, հե. *g^uh > հայ. *ջ* – հիռլ. g. հե. *g^uher > հայ. *ջեր* – հիռլ. *gor*, հե. *g^uhen-ye > հայ. *ջինջ* (**ջնջել*) – հիռլ. *gonim*.

հե. *ph, *th, *kh շնչեղ խուլերը հանդես են գալիս պակաս ընդգրկումով. հե. *ph > հայ. *փ* – կելտ. f(f), ø (զրո). հե. *sphelgu > հայ. *փեղկ* – կիմր. *fflochen*, հե. *th > հայ. *թ* – կելտ. t, tj. հե. *senth > հայ. *ընթանալ* – կիմր. *hynt*, հե. *kh > հայ. *խ* – կելտ. k (c). հե. *skə-kho* > հայ. *ցախ* – կիմր. *cainc*:

զ)Շփական բաղաձայններից առանձնապես տարբեր է հե. *s-ի արտացոլումը թե՞ հայերենում և թե՞ հնդեվրոպական մյուս լեզուներում, որպիսին նկատելի է նաև հայ-կելտական զուգաբանությունների մեջ. հե. *seno «հին» > հայ. *հին* – հիռլ. *sen*, գալլ. *seno-*, բրետ. *hen* «հին. ծեր»:

Հատկանշական են հետևյալ դեպքերը. հե. *s > հայ. *հ(յ)* (բառասկզբում, ձայնավորից առաջ՝ *հ*-ն կարող է ընկնել) – կելտ. s (h). հե. *sed > հայ. *հեճանել* – հիռլ. *saidim*. հե. *s > հայ. ø (զրո) – կելտ. s. հե. *sāld > հայ. *աղ* (*աղտ*, *աղծ*) – հիռլ. *salann*, հե. *sama, *s^oma > հայ. *ամ* (*ամիկ*) – հիռլ. *sam*.

հե. *s > հայ. ø (զրո) [բառամիջում, երկու ձայնավորի միջև կամ բառավերջում ձայնավորից հետո՝ անցնելով *հ*-ից. *s > [*h] > ø (զրո). հմմտ. հե. *bos > *բո* (<*բոհ*)> *բոկ* (*իկ*), *բոբիկ*] – կելտ. s (ch, r). հե. *wos > հայ. *ոյ* – հիռլ. *foss*, հե. *tres > հայ. *եր-եր-ալ* – միռլ. *tarrach*, հե. *swésor > հայ. *քոյր* – հիռլ. *siur*.

հե. *ns, *ms > հայ. *ս* (ռնգայինի անկումով) – *կելտ. s*. հե. *mēnso > հայ. *ամիս* – հիռլ. *mís*, հե. *mēmso > հայ. *միս* – հիռլ. *mīr*.

հե. *ps (>*s) > հայ. *ս* – կելտ. ch (?). հե. *prepsā > *երես* – հիռլ. (*richt*) (?).

հե. *sl, *sm, *sn, *sr հնչակապակցությունների s բաղադրիչը հայերենում բառասկզբում ընկնում է, և *r-ն ստանում է ձայնավոր հավելված («հենարան») – կելլտ. ll (?), s(m), sn, sr. հե. *srov > հայ. *սրու (սրոզանել)* – հիռլ. sruth, հե. *slibr > հայ. *լիբր (լիպրծ, լիպրշ)* – կիմր. llydfx, իսկ բառամիջում ընկնում է – կելլտ. ø (m, n). հե. *vesr > հայ. *գարուն* – կիմր. guiannuin.

հե. *rs > հայ. *ռ* (բառասկզբում), *ռ/րշ* (բառամիջում) – կելլտ. ir, ar, er (sr). հե. *tars (*trs) > հայ. *թառամ (թարշամ)* – հիռլ. tirim.

հե. *sk° (*sk°h) > հայ. *ց* – կելլտ. (s)c, ø (զրո). հե. *bho-sk > հայ. *բոց* – հիռլ. bān, հե. *lord-sk°o > հայ. *լորցք* – գաելլ. loire, հե. *leuk-sk° > հայ. *լոյց (լուցանել)* – հիռլ. luach-te.

հե. *k'ss > հայ. *ց* – կելլտ. ch (s, sk). հե. *louk-sk° > հայ. *լոյց (լուցանել)* – հիռլ. luach-te, հե. *(k)suck's > հայ. *վեց* – հիռլ. sé, հե. *(s)k°ǣ-no > հայ. *ցին (թոչուն)* – քրեւ. skeja (?).

հե. *sw (բառասկզբում) > հայ. *ք* – կելլտ. ch (s). հե. *swidro > հայ. *քիրտն* – հիռլ. chwys, հե. *swēsōr > հայ. *քոյր* – հիռլ. siur, հե. *swopno > հայ. *քուն (քունք)* – հիռլ. súan և այլն:

Այս կետում օրինաչափությունների և շեղումների մի մասի օրինակով անգամ կարելի է հավաստել, թե ինչ նշանակություն ունի հե. *s-ի քննությունը հայ-կելլտական հնչյունական զուգաբանությունների մեջ ընդհանուր հնդեվրոպական առնչությունների տեսանկյունից:

Եղած տվյալների համեմատությունից կարելի է եզրակացնել, որ աճականը, այնուամենայնիվ, արմատակազմական գործառույթից բացի ունեցել է նաև բառային-(քերականական) գործառույթ, որ տվյալ դեպքում գտնում ենք հայ-կելլտական բառային համեմատության մեջ:

Դրանք վերաբերում են հետևյալ կարգի հնչյուններին.

շնչեղ ձայնեղներին, ընդ որում՝ *շրթնային* [հե. *bh > հայ. *ւ* – կելլտ. u // հայ. *բ* – կելլտ. f (m/g, ø)]. *առաջնալեզվային* [հե. *dh > հայ. *դ* – կելլտ. th (t, δ, ø) // հայ. *ձ* – կելլտ. ø (z) // հայ. *դ* – կելլտ. ø // հե. *dh > հայ. *դ* – կելլտ. t // հայ. *դ* – կելլտ. th (t) // հայ. *տ (ջ)* – կելլտ. th (t)], *հետնալեզվային* [հե. *gh > հայ. *գ* – կելլտ. ch // հայ. *ջ* – կելլտ. g // հայ. *ջ* – կելլտ. ch (g) // հե. *g'h > հայ. *ձ* – կելլտ. ø // հե. *g'h > հայ. *ձ* – կելլտ. wl (wy)].

պարզ ձայնեղներին, ընդ որում՝ *առաջնալեզվային* [հե. *d > հայ. *տ* – կելլտ. ø // հե. *d > հայ. *ձ* – կելլտ. d (ø) // հե. *d > հայ. *տ (դ)* – կելլտ. d (ø) // հե. *d > հայ. *տ* – կելլտ. d // հե. *d > հայ. *տ* – կելլտ. gw (k) // հե. *d > հայ. *տ* – կելլտ. d (z) // հե. *d >

հայ. ծ – կելլտ. b (ø) // հե. *d^u > հայ. ի – կելլտ. d (ø, w)], *հետնալեզվային* [հե. *g > հայ. ի – կելլտ. g // հե. *g > հայ. ի – կելլտ. ch (c) // հե. g' > հայ. ծ – կելլտ. dd // հե. *g' > հայ. ծ – կելլտ. c (ø) // հե. *g' > հայ. ծ – կելլտ. g].

պարզ խուլերին, ընդ որում՝ *չրթնային* [հե. *p > հայ. ու (ւ) – կելլտ. d (t, z)], *առաջնալեզվային* [հե. *t > հայ. յ – կելլտ. th (d, w, a-ի երկարացում) // հե. *t > հայ. յ – կելլտ. d (dh, d, f, ø) // հե. *t > հայ. ղ – կելլտ. th], *հետնալեզվային* [հե. *k > հայ. u – կելլտ. th (ø) // հե. *k' > հայ. u – կելլտ. th (s, w, ø) // հե. *k' > հայ. u – կելլտ. c (ch, gh)].

չնչեղ խուլերին, ընդ որում՝ *չրթնային* [հե. *ph > հայ. կ – կելլտ. ch // հե. *ph > հայ. թ – կելլտ. d // հե. *ph > հայ. ի – կելլտ. d (ø, u)]. *առաջնալեզվային* [հե. *th > հայ. թ – կելլտ. t (ø) // հե. *th > հայ. թ – կելլտ. th // հե. *th > հայ. տ (թ) – կելլտ. // d (t)].

շփականներին և ձայնորդներին, ընդ որում՝ *շփական (սուլական)* [հե. *s > հայ. շ – կելլտ. t // հե. *s > հայ. տ – կելլտ. m (ø) (?). *թառամել* – հիռլ. tırım «չոր», կոռն. tir «երկիր, երկրագունդ» (*tr-s-)], *ձայնորդ* [հե. *u > հայ. լ – կելլտ. b (w, u, d) // հե. *u > հայ. լ (ու) – կելլտ. u (w) // հե. *(e)r > հայ. ղ – կելլտ. er (ar) // հե. *r > հայ. ղ – կելլտ. l // հե. *l > հայ. շ – կելլտ. l (n) // հե. *l > հայ. ղ – կելլտ. th (l) // հե. *l > հայ. շ – կելլտ. l // հե. *n > հայ. ն – կելլտ. m (ø)]:

Աճականի ոլորտի գուգաբանությունները նույնպես բավականին տեղին օրինակներ են համեմատելի լեզուների պատմության համար:

8. Հայ-կելլտական բառային գուգաբանությունների քննության դեպքում նկատի ունենք ոչ միայն նախկինում եղած, այլև վերջին տասնամյակներում երևան եկած նման աշխատությունների ընդգրկած նյութը՝ իբրև ընդհանուր համեմատության մասնակիություն:

ա) Եթե բացառենք հնդեվրոպական լեզուների ընդհանուր ստուգաբանական բառարանների տվյալները, որոնք լավագույնս օգտագործված են հայերենի նյութի քննության ընթացքում, ապա մեզանում առաջինը Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» (I մաս) աշխատության մեջ է, որ ի թիվս մյուս լեզուների բերվում է համեմատելի ամբողջ նյութը՝ առկա հայերենի և կելլտական լեզուների միջև: Ըստ այդմ՝ Աճառյանի կազմած ցանկը դառնում է ելակետ (հիմք) հետագա գրեթե բոլոր նույն բնույթի ուսումնասիրությունների համար:

բ) Ըստ Աճառյանի՝ ընդհանուր հնդեվրոպական արմատների մոտ մեկ երրորդն է առկա հայերենում, իսկ դրանցից էլ միայն կեսն է, որ համեմատության

եզր ունի հայերենի և կելտականի (իռլանդերենի, կիմրերենի, կոռներենի, բրետոներենի, գալլերենի) միջև: Այդ ցանկը հեղինակը բերում է իր ժամանակի հնդեվրոպական վերականգնումների նշանակումների ձևով (մենք ևս տալիս ենք նույն կերպ՝ թերևս չխաթարելու դրվածքի պատմական կողմը):

Այնուհետև, որ խիստ կարևոր է, Աճառյանը կատարում է տվյալների առնչության սերտության հաշվարկ, անցկացնում դրանց իմաստային (թեմատիկ) իմբավորում (22 խումբ): Քանակի առումով, ինչպես նաև համեմատության հաճախակիությամբ (հնտենսիվությամբ) գերակշռում են հայ-իռլանդական զուգաբանությունները, որ մասամբ բացատրելի է վերջինիս գրական հուշարձանների քանակով:

Նկատելի է նաև այն, որ հեղինակի «Արմատական»-ում այդ կարգի տվյալներն ավելին են, քան որ գտնում ենք այս ցանկում, և դրանք ներառված են հետագայում երևան եկած ուսուղմնասիրություններում (օր.՝ Գ. Ջահուկյանի կազմած ցանկերում):

զ) Է. Մականի անդրադարձը հայ-կելտական առնչություններին, որքան էլ կարևոր և յուրօրինակ, ընդգրկում է սահմանափակ թվով զուգաբանություններ, որոնց, ի դեպ, հատուկ անդրադարձել է Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ:

դ) Հետագայում Գ. Ջահուկյանը իր առանձին աշխատություններում բերում է հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների համեմատության մի այնպիսի ցանկ, որ բոլորովին տարբեր է Աճառյանի կազմածից ընդգրկման (քանակի), նշանակման (հատուկ նիշերի օգտագործում՝ պլյուս, մինուս և այլն) և համալրման (հայերենի բարբառային նյութի ընդգրկում) առումով: Նշանակումը պլյուս-մինուսով, ինչ խոսք, դժվարացնում է զուգաբանությունների առանձնացման ճշգրտությունը (օրինակների մեջ):

Գ. Ջահուկյանը ընդգրկել է ոչ միայն Աճառյանի ցանկի տվյալները (որոշակի ճշգրտումներով, ավելի հավաստի վերականգնումով և այլն), այլև նկատի է ունեցել հետագայում նույն բնույթի ուսումնասիրությունների տվյալները: Մեծ չափով տեղ է տրված հայերենի բարբառային նյութին, որ ժամանակին քննության առարկա էր եղել հեղինակի «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ:

Հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների միջև «զուգաբանություններն այս դեպքում գնահատվում են ըստ մերձավորության աստիճանի»: Եվ ըստ այդմ էլ առանձնանում է երեք խումբ՝ ա) զուգաբանություններ, որոնք ցանկում

ունեն պյուս (+) նշանակում. հե. *aig' (<*ag'-) - հայ. *ածել* (*յ-ածել*) «բերել» - հիռլ. *aig* և այլն, բ) զուգաբանություններ, որոնք ցանկում ունեն պյուս-մինուս (±) նշանակում. հե. *bhel- > հայ. *բլուր* (<*բլ-ուր*) - կիմր. *bal* և այլն, ինչպես նաև՝ գ) զուգաբանություններ՝ պյուս-հարցական (?), նշանակումով. հմմտ. հե. *au- > հայ. *ազանիս* «գիշերել» - հիռլ. *fuan* և այլն:

Գ. Ջահուկյանի ցանկում բացառվում են՝ մինուսով (-) են նշանակված Հ. Ա- ճառյանի ցանկի զգալի թվով զուգաբանություններ, որոնց հավաստիությունը պարզելու դժվարություններ կան. հմմտ. հե. *pel- > հայ. *ալիք* «(սպիտակ) մազ» - կելտ. *liath* և այլն:

ե) Հետագայում երևան եկած աշխատություններից, թերևս, ավելի համեմատելի միավորներ գտնում ենք Թ. Վ. Գամկրելիձեի և Վյաչ. Վս. Բվանովի հայտ- նի աշխատության մեջ. օր.՝ *աղ* - հիռլ. *salann* «աղ». հմմտ. թոխ. *U sāle*, թոխ. *F saliye*, հուն. *ἄλς* «աղ», լատ. *sāl*, գոթ. *salt* «աղ», հրգերմ. *salz* (գերմ. *Salz*), հւլավ. *soln* և այլն (<հե. *sal-). դրանք երկու կարգի են՝ հիմք-լեզվի հետ միատեղ կամ առանձին-առանձին համեմատվող:

Հեղինակները նման համեմատություն անցկացնում են կողմնակիորեն, ել- նելով իրենց աշխատության բնույթից, այսինքն՝ հայ-կելտական առնչություն- ները նկատելի են ընդհանուր համեմատության կամ տիպաբանական գնահա- տության ընթացքում: Դրանք մեծ թիվ են կազմում, ներառում են նաև նոր հա- մեմատություններ, դրանցում չի հանդիպում հայ-կելտական որևէ բացառիկ զուգաբանության:

զ) Նկատի ունենալով թեմային վերաբերող նյութի մանրամասն քննությու- նը, ինչպես նաև տարբեր աշխատությունների տվյալները՝ հայերենի բառա- պաշարի (հատկապես խոսակցական-բարբառային շերտի) զգալի թվով միա- վորներ փորձել ենք համեմատության մեջ դնել ցեղակից լեզուների հնարավոր ձևերի հետ, ընդ որում նաև իբրև հայ-կելտական առնչության օրինակ: Ըստ այդմ բերված մի քանի տասնյակից ավելի միավորների ծագումնային հավաս- տիությունը, չի բացառվում, ունի հետագա ճշգրտումների կամ լրացումների կարիք:

9. Քննության առնված զուգաբանությունների բառիմաստային (թեմատիկ) խմբերի առանձնացումը կատարվում է համեմատական լեզվաբանության մեջ ընդունված բաշխումով:

ա) Խմբերում ներկայացվում է դրանց հիմնական մասը, քանի որ մյուս մասի, առանձնապես մինուս (-) նշանակում ունեցողների վերաբերյալ առայժմ չունենք համեմատության բավարար հիմքեր:

բ) Ընդգրկվածները հավասարաչափ չեն, ոչ էլ հավասարաթեք, որ վկայում են երկու լեզուների ժառանգորդական միավորների բովանդակության պլանի (իմաստաբանություն) իրական բաշխվածության մասին. կարելի է առանձնացնել երեք կարգի ամբողջություն. առավել չափով ընդգրկում ունեցող (հմմտ. խումբ՝ 1, 3, 4, 5, 8, 9, 10, 12, 15), միջին չափով ընդգրկում ունեցող (հմմտ. խումբ՝ 2, 6, 7, 11, 13, 14, 16) և պակաս չափով ընդգրկում ունեցող (հմմտ. խումբ՝ 18, 18, 19, 20, 21, 22):

գ) Երբեմն նույն բառի (արմատի) իմաստային տարբերակները, իբրև հնդեվրոպական ընդհանուր ժառանգություն, ինչպես Գ. Ջահուկյանի ցանկում է, այստեղ ևս բերվում են տարբեր խմբերի մեջ. օր.՝ *ազ-(անիս)* «վրան առնել. հագնել» - հիռլ. *fuan* (?) (< հե. *eu-) (խումբ 6) և *ազ-(անիս)* «գիշերել»- հիռլ. *fuan* (?) (< հե. *au-) (խումբ 7). (*զ-զենում* (< *ues-nu-), (*զ-զեստ* «հագնել. հագուստ» - հիռլ. *fuan* (< հե. *ey-) և այլն:

10. Հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների միջև պատմականորեն գոյություն ունեցող լեզվական (հնչյունական, բառարմատային, ձևաբանական և այլն), ինչպես նաև արտալեզվական (մշակութային, առասպելական, հոգևոր և այլն) զուգադիպումների մանրամասն քննությունը հումանիտար գիտության արդիական խնդիրներից է: Հայ- կելտական առնչությունների վերաբերյալ ներկա ուսումնասիրությունը մի առանձին փորձ է այդ համապարփակ բնագավառում, որ ենթադրում է գիտական աշխատանքի ուրույն հեռանկարներ:

АРМЯНСКИЙ И КЕЛЬТСКИЕ ЯЗЫКИ (Сравнительно-типологическая вариативность)

Введение. - Изучение отношений между армянским и кельтскими языками с точки зрения истории индоевропейских языков имеет некоторое заслуживающее внимания значение. Ранее это было предметом только сравнительно-исторического языкознания, а в последнее время еще лингвистической типологии. Тем самым до сих пор у нас нет отдельного (в особенности сравнительно-вариативного) изучения отношений этих языков или какой-либо из их областей (фонетика, словарный запас и т. д.). Эта работа, можно сказать, как-то восполняет этот пробел.

Подход Р. Ачаряна к диалектной (ареальной) дифференциации армянского и других индоевропейских языков имеет форму словесных параллелей («изоглоссов»), на основе теории А. Мейе о выделении индоевропейских диалектов, а также о характеристике диалектной позиции армянского языка среди индоевропейских. Этот подход сохраняется в дальнейшем.

Данные армянского языка нами используются на основании литературных памятников 5-го в. (н. э.), дошедших до нас, как известно, не ранее, чем рукописными перениманиями с 9-го в. Не исключено, что они со временем «канонизировались» общей нормой литературного языка. Другими словами, в течение промежуточного периода (6-8 вв.) вследствие различных «писаний» имели место языковые изменения, особенно как отклонения от литературной нормы 5-го века. И сегодня благодаря обширной филологической и текстологической работе можно иметь научное представление о состоянии языка не только 5-го века, но и дописьменного периода его функционирования.

Наша работа написана в первую очередь на доступном материале классической компаративистики, особенно в полном освещении фактического материала, а также о возможном использовании новых подходов и теорий по армянскому языку. А по некоторым вопросам были нами предложены такие разъяснения или были даны комментарии, которые могут в некоторой степени способствовать более вероятному и относительно окончательному решению вопросов.

Данная работа содержит различные главы об отдельных и соотносительных характеристиках исследуемых языков. Первая глава посвящена литературному армянскому языку и его диалектам, вторая – кельтским языкам и их диалектам. Третья глава посвящена вопросу о происхождении сравниваемых языков, Четвертая глава – фонетическому, а следующие две главы (5-6-ая) – лексическим спискам и смысловым («тематическим») изоглоссам. Более того, если фонетические изоглоссы рассматриваются

здесь с точки зрения закономерностей, а также в исключениях, то лексика армянского и кельтских языков является предметом особого внимания главным образом согласно спискам существующих изоглоссов..

В конце приведены основные выводы.

Глава 1. Древнеармянский литературный язык и диалекты. - Внутренние границы письменных памятников армянского и кельтских языков, как известно, относятся к первому тысячелетию нашей эры (8-9-е века), однако по существу они относятся к более ранним временам. Они также присутствуют в живых языках сегодня, не только наследственными чертами, но и новыми приобретениями («инновациями») в результате развития и взаимодействия с другими языками.

Если в доисторические, как и в более поздние времена, кельтские языки находились в основном в контакте с так называемой «западной» группой (индоевропейского типа) языков, то в тот же период армянский язык был связан кроме языков «восточной» группы (индоевропейскими - греческий, иранский и т. д.) еще с другими (неиндоевропейскими) языками. И оказывается, что изучение многих аспектов армянской фонетической системы, словарного запаса и грамматической структуры может представлять определенные трудности.

Древнеармянский литературный язык, как известно, изучен достаточно, чего нельзя сказать о диалектах древнего и среднего периода его истории; диалекты нового периода были в центре особого внимания. Однако важно еще прояснить вопрос о связи между самым литературным языком и его диалектной основой, а также, разумеется, диалектов дописьменного периода в целом. Еще надо иметь в виду, что древнеармянский литературный язык находился в контакте с другими языками в связи церковно-христианских отношений (заимствования и кальки с сирийского, греческого и т. д.), встречающиеся в словаре, грамматике и разных стилях переводческой литературы.

Одним из центральных вопросов в истории армянского языка является, так сказать, детальное изучение письменных оригиналов, которое, скорее всего, прояснит относительно не только языковой статус древних, но и более поздних времен в отношении между литературным языком и его диалектов. Наиболее заметный диалектный материал литературных памятников может быть рассмотрен не только отдельно (в синхронии), но и в диахронии, вплоть до дописьменного периода истории языка. У нас имеются исследования, в которых предметом изучения являются диалекты главным образом среднеармянского, иногда - древнеармянского языка.

Труды по исследованию взаимоотношения среднеармянского литературного языка и его диалектов, а также изучение диалектов отдельно, являются лучшим примером для нового рассматривания многих фактов в плане фонетики (гласные различного качества,

согласные – глухие, прегортанные или фарингализованные, придыхательные и т. д.), перенесенных с индоевропейского на армянский язык.

Имеется в виду, что армянский, как отдельный индоевропейский язык, отличается значительным числом диалектной дифференциацией. Это наследие общего индоевропейского, а также достижение в своем собственном развитии.

Данные диалектов дописьменного и письменного периодов армянского языка имеют особое значение при изучении внешних сравнений, в данном случае отношений армянского с кельтскими языками. Об отношениях между литературным армянским и его диалектами также можно иметь широкое представление на основе существующих изменений лексики. Так, лексическое изучение состава корня, средства и способов суффиксации и элементов составления корней в историческом ходе развития армянского языка выявляют не только определенные совпадения с другими родственными языками (в данном случае кельтскими языками), но и очевидные различия.

Древнармянские литературные памятники, хотя и подлежат канонизации, тем не менее содержат различия («отклонений» от общей нормы) в фонетике, образовании сложных или аффиксальных слов, которые, кстати, ранее частично были включены в область истории языка и сравнительного изучения.

Глава 2. Кельтские языки и диалекты. – Одной из ветвей индоевропейских языков являются кельтские языки, которые в настоящее время распространены в Западной Европе, более того ирландский распространен в Ирландии, валлийский и шотландский – в Великобритании, бретонский – во Франции, и до недавнего времени живой язык мэнский – на острове Мэн (Великобритания). Количество носителей этих языков, согласно демографическим данным 70-х годов прошлого века, составляет от двух с половиной до трех миллионов, причем коммуникативная функция в основном происходит на двух языках, прежде всего на родном языке, а иногда на английском или французском.

Традиционно существуют две группы: островная и континентальная со своими подгруппами: *подгруппы*, в первом два – британская и гойдельская, вторая не имеет подгруппы; *отдельные языки*, британская подгруппа островных языков: пиктский, валлийский, корнский, бретонский и кумбрийский, гойдельская подгруппа: шотландский (гаэльский / гэльский), ирландский и мэнский, континентальная группа: галльский, кельтиберский и лепонтийский; *группа диалектов*: на валлийском – на юге и севере, на ирландском – в Мюнстере, Коннахте и Ольстере; *диалекты*: в южной диалектной группе валлийского – гвинет-гломорганский и дивидский, на севере – гвинейская и поуисская; в то время как в ирландской группе нет диалектов; *группа говоров*: прилегающий ваннскому диалекту группа говоров нижнего ваннского и группа говоров верхнего ваннского; *говоры*: в британской подгруппе – плугресканский говор третерского диалекта, в гойдельской под-

группе южные и северные говоры менского языка. В отдельных говорах кельтских языков не выделяются субговоры.

Такое разделение основано на внешней и внутренней обусловленности языков.

Континентальная группа, в отличие от других, включает относительно немного языков. Они также отличаются своими фонетическими, лексическими и морфологическими особенностями. Многие реалии словарного запаса, особенно состава корня, в этом случае можно сравнить с аналогичными и армянскими единицами, основанными не только на фонетических, но и на семантических общностях, которые в равной степени наследственны.

Глава 3. Вопрос генетических отношений армянского и кельтских языков. - История сравнительного изучения армянского и других родственных языков охватывает три периода: армянский как язык иранской группы ("ветвь" - диалект мидийского языка. 1836-1875), язык самостоятельной группы (отдельная "ветвь" - с 1875 до настоящего времени) и не менее важный или важный язык (с 1970-х годов).

Охват материала об отношениях между армянским и кельтскими языками качественно отличается, если сравнивать данные традиционных и сравнительно-типологических работ, появившихся позже (с середины 1970-х годов). Во втором мы имеем в виду именно работы Г. Б. Джаукяна, Т. В. Гамкредидзе и Вяч. Вс. Иванова, Э. Г. Туманяна: ср. *աղկ* (*-աղկ*) [aɬkɑk] 'бедный, плохой, жалкий' - др.-ирл. *olc* 'плохой' (< и.-е. **elg-*, **olg-*, **alg-*), *առու* (*առու-կ*, *առու-կ*) [aɾu (oɾogel, aɾogel)] 'ручей', 'орошать' - др.-ирл. *sruth* 'поток', 'наводнение', ирл. *sruaímm* 'поток' [< и.-е. **sreu-*, *sru-* (<**ser-*)], *աղբայր* [eɬbaɾ] 'брат' - ирл. *bráthir*, др.-ирл. *bráth(a)ir*, кимр. *brawd*, (мн. ч.) *brodyr*, др.-корн. *broder*, ср.-брет. *breuzi*, н.-брет. *breur*, (мн. ч.) *breudeur* (< и.-е. **bráther*) и т. д.

Традиционные материалы встречаются в работах, на которые мы ссылаемся. Материал посвящен армяно-италийским изоглоссам, армяно-индоиранским языковым параллелям, названиям частей тела, скотоводческим, земледельческим ("сельскохозяйственным") терминам, индоевропейским архаизмам армянских диалектов и проявлениям детерминативов в составе слова индоевропейского происхождения: ср.

- *ալիք* [alik^ε] 'волна (о море)', 'седина' - др.-ирл. *liath* 'серый' (< и.-е. **pel-*) и т. д. *հետ* (*հետոյ*) [het (hetoy)] 'след' / *յետ* [yet] 'после' - ср.-ирл. *ined* (**eni-pedo-*) 'след', галл. *capdetum* 'пространство, место' (< и.-е. **rēd-*), *աղբայր* [amɾop] 'гроза' - ср.-ирл. *imrim* 'шторм, буря' (< и.-е. **nebh-* + -*ro*), *աղբիւ* [aɾem] 'сжечь' - ирл. *áith*, (род. п.) *atho*, кимр. *odup* 'духовка' (< и.-е. **ater-*), *ամիս* [amis] 'месяц' - др.-ирл. *mī*, (род. п.) *mīs*, кимр. *mis*, брет. *miz* (< и.-е. **mēn-*) и т. д.

- *էգ* [ezn] 'вол' (< и.-е. **eg'h-*) - ирл. *ag* 'корова' (< и.-е. **ag'h-*), *այգի* [aɾgi] 'сад' - др.-ирл. *co*, кимр. *uwen*, др.-корн. *hiuin*, брет. *iwin* 'тис' [< и.-е. **oiu-ijā* (**ci-*)] и т. д.

- *аршши* [araws] 'пар; поле под паром' - ср.-ирл. arbor (*ar̥ʷ) 'злаки; зерно' (род. п. arbe < др.-ирл. ar̥c̥ns, им. мн. ч. arbanna) – [< и.-е. *ar(ə)̥-]. *аррдиш* [oroʃal] 'жевать' - кимр. rathu, брет. raza (< и.-е. *rēd-, *rōd-, *rəd-) и т. д.

- *э̄р* [ēj] 'страница; остановка' - др.-ирл. oēgi 'гость' (< и.-е. *ei-gh-), *ашин* [alt] 'соль' - др.-ирл. salann 'соленый', кимр. halen (тот же) (< и.-е. *sal-), *иуш* [amis] 'месяц' - др.-ирл. mī 'месяц', брет. miz 'месяц; луна', кимр. mis (тот же) (< и.-е. *mēn-) и т. д.

- *ауиуиу* [aganim] 'одеваться; одеться' – кельт. Aulavius, Aulia, Aulo (топонимы) (< и.-е. *au-, *au-es-, *au-s-'ночевать; спать'), *аш* [at] 'соль' – др.-ирл. sail (< и.-е. *sal̥-) и т. д.

Наконец, важное значение имеет имманентное рассмотрение отношений между армянским и кельтскими языками с точки зрения сохранения их наследственных признаков, приобретения новых темпов развития посредством сравнений на разных уровнях, связанных не только генетическими, но и территориальными (ареальными) проблемами.

